вероятности дестабилизировать ситуацию в регионе Закавказья, то есть в регионе Южного Кавказа. Это, по мнению западных аналитиков, одновременно будет бить по двум целям – с одной стороны, по Ирану путем дестабилизации ситуации на севере Ирана, в так называемом Южном Азербайджане, на который претендует апшеронский султан. Далее будут предприняты действия по дестабилизации ситуации на арцахско-азербайджанской границе, да и на армяно-азербайджанской, а уже потом по всему периметру Южного Кавказа с целью создать там пояс нестабильности. Создавая взрывоопасную обстановку в нашем регионе, по мнению авторов этой затеи, они тем самым будут отвлекать Россию в этом направлении. Вы, Константин Иосифович, очень правильно упомянули о резкой активизации военных действий, которые сейчас происходят в южном подбрюшье России, в регионе Центральной Азии.

Далее дестабилизация или одновременно, или в возможно короткие сроки будет переведена в сторону Среднеазиатских республик, в регион Центральной Азии с вовлечением в этот процесс афганских моджахедов. На афганской границе уже сейчас барражируют летающие объекты без опознавательных знаков, это, видимо, военные инструктора из определенных стран тренируют своих подручных игиловцев. Итак, поставлена задача по всему периметру южных границ России, включая и Южный Кавказ, и страны Центральной Азии: создать зону нестабильности, хаоса, дестабилизировать там обстановку. И все это будет происходить в условиях неослабевающей напряженности в Сирии, в Восточной Гуте. Поэтому я специально хочу напомнить о серьезнейшем предупреждении, которое сегодня прозвучало из уст начальника Генштаба Вооруженных сил России генерала армии Валерия Герасимова в связи с возможной атакой со стороны военно-воздушных сил США на правительственные войска Сирии в пригороде Дамаска. Генерал армии прямо заявил, что Россия не оставит безнаказанным возможные наступательные бомбовые удары со стороны США в районе Дамаска, потому что там находятся российские военные инструктора, российские военнослужащие, оказывающие населению гуманитарную помощь, советники из РФ. То есть обстановка, сложившаяся на Большом Ближнем Востоке, сейчас чрезвычайно напряженная. И если Вольфганг Ишингер избрал девизом Мюнхенской конференции по безопасности слова «К краю пропасти – и обратно?», окончив предложение вопросительным знаком, то сейчас этот вопросительный знак надо поменять на восклицательный.

Не скрою, что, готовясь к выступлению, я очень много думал над тем, в чем же тот феномен, который делает незыблемыми для населения России, Армении, да и жителей всех республик бывшего Советского Союза дружественные отношения между нашими народами, что нас

сближает и что невозможно никак поколебать. Вывод один, и, как мне кажется, он заключается в совместной борьбе против фашизма наших отцов и дедов в годы Великой Отечественной войны. И, даже спустя 73 года после ее окончания, если кто-то старается спекулировать на каких-то армяно-российских разногласиях, искать в них какие-то противоречия, то в конечном итоге это оборачивается пшиком, фиаско. Мы свято чтим и всегда помним заветы наших отцов и дедов, не забываем, как они самоотверженно сложили свои головы во имя спасения всего человечества от коричневой чумы, или, по современной терминологии, от диких проявлений национальной исключительности. Вот и сейчас такая же беда нависла насколько над Россией, настолько же над Арменией и над всем миром. И надо, чтобы предостережение российского Президента, высказанное им (в интервью «Миропорядок 2018») простым и доходчивым предложением: «Зачем нужен мир без России», – отрезвило горячие головы поборников войны. Значит нам необходимо проводить публичную дипломатию таким образом, чтобы под давлением общества никому ни в одной стране мира не было позволено перейти эту грань, эту последнюю черту, после которой – война. Я имею в виду тех, кто, не отдавая себе отчета в катастрофических последствиях своих действий, будет делать неправильные выводы из содержания трех весьма тревожных документов – Новой ядерной доктрины США, Стратегии национальной безопасности и Доклада национальной разведки США. Эти наши опасения и тревоги следует через наших коллег довести до армянских диаспор, до широких слоев населения других стран, чтобы наша работа была нацелена на смягчение опасности дальнейшей конфронтации, на объяснение на парламентском уровне возможных серьезных угроз безопасности для всего мира. Следует привлечь к этой работе возможно широкие слои политических элит самых разных стран. Сумеет организовать такую работу, значит мы что-то свое привнесли в борьбу за предотвращение угрозы войны, угрозы хаоса в международном положении. Убежден, что такая работа во многом сблизит парламентариев из многих и многих государств, кому дороги судьбы мира. Тогда в совершенно новом свете будут восприниматься культурные обмены между нашими странами. Готовясь к выступлению сугубо по повестке сегодняшнего заседания, не скрою, что я прочитал очень много материалов, которые были для меня очень и очень полезны. Так, немало конструктивных предложений содержалось в Ежегодном докладе Интеграционного клуба при Председателе Совета Федерации Федерального Собрания РФ за 2017 год под девизом «Евразийский вектор – интеграция будущего». Много полезного почерпнул из статьи сотрудника МГИМО К. П. Боришполеца под заглавием «Публичная дипло-

матия на пространстве ЕАЭС: осмысление феномена и тенденций развития». Много интересных подходов было изложено в материалах Международного круглого стола «Региональное измерение общественной дипломатии – евразийский вектор», состоявшегося в Москве 29 мая 2017 года в рамках I съезда Ассамблеи народов Евразии. То есть если мы сумеем основные мысли, содержащиеся в материалах этих очень своевременных конференций и встреч, довести до широких масс, то уверен, что все это в совершенно новом свете будет воспринято населением государств – членом ЕАЭС. При этом если мы покажем, что в современном сильно бурлящем мире все мы находимся на одном корабле и этот корабль не Россия и не Армения, а весь Земной шар, планета Земля, то число наших сторонников неисчислимо возрастет. Об этом и было сказано в Послании Президента России Федеральному Собранию Российской Федерации, поэтому очень актуальна наша встреча, которая, на мой взгляд, как и в прошлые разы, выделяется доверительностью и исключительным откровением. Мы в своих выступлениях сказали о своем самом болезненном, и вы, дорогие российские коллеги, услышали нас. Когда Армен Геворкович выступал, я мысленно задался вопросом: а есть ли другие парламенты, депутаты и сенаторы, которые могут столь откровенно делиться своими тревогами и заботами? Не хочу преувеличивать, но сейчас скажу то, в чем я убежден – бьют по Армении, а целются в Россию. В частности, опубликованные недавно Стокгольмским международным институтом исследований проблем мира и конфликтов цифры вызывают у нас серьезную тревогу. Они весьма тревожащие, вдумайтесь только: за отчетный период (2015 – 2017 гг.) Россия продала Азербайджану 36 единиц тяжелых огнеметов «Солнцепек» ТОС-1А, 40 единиц БТР-82А, 800 единиц противотанковых ракет комплекса «Хризантема» (на базе БМП-3), известных как «танковые убийцы».

Я уже не говорю о продажах современных вооружений со стороны Израиля Азербайджану. Об этой тревожной гонке вооружения, вы не представляете (извините за жаргон), с каким упоением и кайфом пишет азербайджанская пресса. То есть эта страна готовит свое население к войне. Опасность заключается именно в этом: Азербайджан готовит свое население к войне с Арцахом и Арменией. Такому развитию событий, конечно же, будут очень рады их старшие братья – турки. Уже сейчас в Нахиджеване дислоцируются самые ударные части 3-й полевой армии Турции. Я уже не говорю об опасности, исходящей из непредсказуемого поведения президента этой страны Реджепа Тайипа Эрдогана, который уже мнит себя новоявленным халифом, продолжателем дела султанов бывшей Османской империи, причем о своих неоосманских устремлениях он говорит громогласно, во всеуслышание.

## **А. ГЕГАМЯН**

Каждый из нас, бесспорно, делает выводы на основе той информации, которой он владеет. Но уже ясно одно: отдельные центры силы мировой политики будут действовать с одной-единственной целью – ослабить Россию, видя в ней одного из ведущих игроков современного мира, создателя нового, многополюсного миропорядка, что сильно тревожит их. Поэтому им крайне важно, чтобы Россия как таковая перестала существовать. И поэтому они будут бить по тылам России. Обращаюсь с призывом к российским коллегам: берегайте Армению, ведь это ваш самый надежный тыл.

Спасибо.

Надеюсь, что, ознакомившись с текстами моих выступлений, читатель вынесет впечатление о тематике наших прений и качестве обсуждаемых нами вопросов. Главное, чтобы в нашей дальнейшей работе мы были бы требовательными к самим себе и нашим российским коллегам в исполнении всех совместно принятых нами договоренностей.

**АРТАШЕС ГЕГАМЯН**

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՊԱՀՊԱՆԵՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՉԷ ՈՐ ԱՅՆ ՁԵՐ ԱՄԵՆԱՀՈՒՄԱԼԻ ԹԻԿՈՒՆՔՆ Է

Եվ այսպես, ս. թ. մարտի 13 – 14-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի Միջազգային գործերի կոմիտեի համատեղ նիստը: Համատեղ նիստի օրակարգն ընդգրկում էր հարցերի լայն շրջանակ, որոնք այս փուլում խիստ հրատապ նշանակություն ունեն: Հիմնովին քննարկվեցին հայ-ռուսական ռազմավարական երկխոսության հարցերը՝ խորհրդարանական չափման դիտանկյունով, գլոբալ անվտանգության հիմնախնդիրները և տարածաշրջանային մարտահրավերները: Մանրամասն դիտարկման ծիրից դուրս չմնացին եվրասիական ինտեգրման խնդիրները և այդ գործընթացում հանրային դիվանագիտության դերը, ինչպես նաև միջազգային խորհրդարանական կառույցներում համագործակցության հեռանկարները: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հաստատված ավանդույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի հայկական մասի համանախագահ Արտաշես Գեղամյանը համատեղ նիստի մասին իր տպավորությունները կիսեց «Արմենպրեսի» թղթակցի հետ:

ՀՀ Ազգային ժողովի պրոֆիլային հանձնաժողովների և ՌԴ Դաշնային ժողովի կոմիտեների համատեղ նիստերի անցկացման գործելակերպը, իմ կարծիքով, լիովին արդարացված է: Օրինակ, այն բոլոր հարցերը, որոնք խիստ հուզում են մեր քաղաքացիներին, մանրամասն վերլուծվում են համատեղ նիստերում, դիտարկվում են առկա խնդիրների լուծման այլընտրանքային ուղիները: Միևնույն ժամանակ, ուզում են գոհունակությամբ նշել անկեղծության և փոխադարձ վստահության մթնոլորտի մասին, որում անցկացվում են համատեղ նիստերը: Հույս ունեմ, որ ասվածի ապացույցը կլինի ռուսաստանցի և հայ խորհրդարանականների համատեղ նիստի ելույթների հրապարակումը:

Այսպես, «Հայ-ռուսական ռազմավարական երկխոսություն. խորհրդարանական չափում» հարցի քննարկման ժամանակ ելույթ ունեցավ Ձեր խոնարհ ծառան, որի տեքստը ներկայացվում է ստորև:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵՆՈՒՅԹԸ «ՀԱՅ-ՈՒՌՄԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ  
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ» ՀԱՐՑԻ  
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
(13 ՄԱՐՏԻ 2018 Թ.)

Նախ ցանկանում եմ նշել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի Միջազգային գործերի կոմիտեի համատեղ նիստին մեծ ուշադրություն է հատկացվում հայկական մամուլի կողմից: Մասնավորապես, մեր նիստի նախօրեին «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունն այս թեմային է անդրադարձել «Մտորումներ Եվրասիական տնտեսական միության կայացման գործում հանրային դիվանագիտության դերի մասին» հրապարակմամբ, և այսօր Հայաստանում շատ տարածված «Новое Время» թերթը նույնպես, ինչպես և շատ ծանրակշիռ հայալեզու «Հայոց Աշխարհ» թերթը, դիմել են մեր համատեղ նիստի թեմային: Ես հաճույքով վերցրել եմ այդ թերթերի մի քանի լրակազմ, որպեսզի ձեզ փոխանցեմ՝ ի հիշատակ:

Հարգարժան գործընկերներ, նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել զեկուցողներին բովանդակալից ելույթների համար: Միևնույն ժամանակ, կուզենայի մի ցանկություն հայտնել, թեև չզհետեմ՝ որքանով այն կարժանանա Ձեր հավանությանը: Այսպես, 2018թ. սկզբից աշխարհը մտել է իր զարգացման շատ վտանգավոր փուլ, և սա, ցավոք, չափազանցություն չէ: Դրա համար բավական է ուշադիր ծանոթանալ «ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարությանը», «ԱՄՆ նոր միջուկային դոկտրինին», ԱՄՆ ազգային հետախուզության ղեկավար Դենիել Բուրբսի զեկույցին և, վերջապես, ուշադիր կարդալ Ռուսաստանի նախագահի Ուղերձը Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովին: Էլ չեմ ասում այն մտքերի մասին, որոնք հնչել են Վլադիմիր Սոլովյովի, ըստ իս, զարմանալի հաջողված «Աշխարհակարգ 2018» և Արկադի Կոնդրաշովի «Պուտին» ֆիլմերում: Որպեսզի պատկերն ավելի ամբողջական լինի, կուզենայի հատկապես նշել Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյի վերջին հայտարարությունը, որը նա արել է բրիտանական խորհրդարանում տառացիորեն երեկ: Վերոնշյալ բոլոր նյութերը և փաստաթղթերը թույլ կտան մեզ հասկանալ, թե ինչ բարդ վիճակում է գտնվում արդի աշխարհը: Այս առնչությամբ կուզենայի անպայման հիշատակել նաև Հայաստանի նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի ելույթը վերջերս Մյունխենում կայացած անվտանգության համաժողովում: Նշեմ, որ Դուք ևս փայլուն գնահատական եք տվել մեր նախագահի ելույթին, հարգելի Կոնստանտին Իոսիֆովիչ, «Արմենպրես» պետական լրատվական գործակալության հարցազրույցում:

Եվ ահա, վերոնշյալ նյութերում պարունակվող գնահատականների և եզրահանգումների համատեքստում, ըստ իս, մենք շատ ճիշտ կվարվենք,



Եթե մեր քննարկումները ծավալենք անվտանգության հարցերի շուրջ: Մանավանդ որ Հայաստանն ու Ռուսաստանը եզակի ռազմավարական, ռազմաքաղաքական դաշնակիցներ են և մերձավորագույն տնտեսական գործընկերներ: Նման մոտեցումը, իմ կարծիքով, խիստ հրատապ է այն գնահատականների համատեքստում, որոնք տվել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Վլադիմիր Սոլովյովի հարցազրույցում («Աշխարհակարգ 2018»), որում, կրկնում են, հնչել են մեզ զգաստացնող գնահատականներ: Ինչ նկատի ունեն: Վլադիմիր Ռուդոլֆովիչ Սոլովյովը հարցազրույցի ժամանակ դիմեց Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինին հարցով, թե Եվրասիական տնտեսական միության և ՀԱՊԿ-ի հանդեպ չարակամորեն տրամադրվածներն անում են ամեն բան, որպեսզի ինչ-որ կերպ հեռացնեն Ղազախստանն ու Բելառուսը, իսկ վերջին ժամանակներս՝ նաև հատկապես Հայաստանը Ռուսաստանից, և միևնույն ժամանակ հարցրեց, թե ինչպիսին է լինելու Ռուսաստանի արձագանքը: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի պատասխանը կտրական էր: Կարծում եմ, որ մենք պետք է անպայման արտահայտենք մեր մտքերն այս առումով, ստուգենք մեր մոտեցումները՝ Հայաստանի և Ռուսաստանի դաշնակիցների շարքերում երկպառակության ամեն տեսակ ջատագովների, մեր բարին չկամեցողների նմանատիպ հավակնությունների հանդեպ համաձայնեցված հակազդեցություն մշակելու նպատակով: Ավելին, անհրաժեշտ է դարձել մեր հետագա աշխատանքը կառուցել հենց այս հանգամանքների հաշվառմամբ: Կասկածներ չի հարուցում նաև այն, որ ներդաշն աշխատանքի պարագայում մենք հաջողությամբ կլուծենք այս խնդիրը, մանավանդ որ այսօր մեր բանավեճին, մեր նիստի աշխատանքին մասնակցում է նշանավոր դիվանագետ Սերգեյ Իվանովիչ Կիսլյակը, որը 2008 – 2017թթ. եղել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում Ռուսաստանի Դաշնության Արտակարգ և լիազոր դեսպանը: Նա կարող է պատմել իր փորձի մասին և մեր քննարկումն ուղղորդել ժամանակի թելադրանքին հարիր հուն, և դրանում պախարակելի ոչինչ չկա:

Ահա մի քանի մտքեր, որոնցով կուզենայի կիսվել Ձեզ հետ:  
Շնորհակալություն:

Ես ելույթ ունեցա նաև օրակարգի երկրորդ՝ «Գլոբալ անվտանգությունը և տարածաշրջանային մարտահրավերները» հարցի վերաբերյալ: Ստորև ներկայացվում է այդ ելույթի տեքստը:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ «ԳԼՈԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ և ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ» ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ (13 ՄԱՐՏԻ 2018 Թ.)

Հարգելի գործընկերներ, շատ կարճ ելույթ եմ ունենալու: Բոլորովին վերջերս, Մյունխենի անվտանգության համաժողովում, որն անցկացվում էր

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

«Մինչև անդունդի եզրը և հե՞տ» կարգախոսով, ելույթ ունեցավ մեր նախագահը և պատասխանեց բանավեճի մասնակիցների հարցերին: Հայաստանի նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի ելույթի վերաբերյալ «Եվրասիա գրուփ» հետազոտական կազմակերպության հիմնադիր-նախագահ Յան Բրեմերը նշել է, որ «Սերժ Սարգսյանի ելույթը կրում էր բացառապես դրական լիցք, և բոլորին հասկանալի դարձավ, որ Հայաստանի նախագահը փորձում է լցնել անդունդը Բրյուսելի և Մոսկվայի միջև»: Դրանով իսկ նա փաստեց, որ Բրյուսելի և Մոսկվայի, ինչպես նաև Մոսկվայի ու Վաշինգտոնի միջև անդունդ կա: «Փոքր, դեպի ծով ելք չունեցող երկրի համար դա իսկապես մեծ մարտահրավեր է: Նախագահ Սարգսյանը ցույց տվեց այն, ինչը հաճախ մոռացվում է Բրյուսելում և Վաշինգտոնում. որ Հարավային Կովկասի, Կենտրոնական և Հարավային Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրները մեծ տերությունների հետ իրենց հարաբերություններում բախվում են դժվար և հաճախ հարկադրված ընտրության հետ: Այս իրավիճակում նրանք պետք է գտնեն բացառիկ ուղիներ արտաքին աշխարհի հետ իրենց հարաբերությունները պահպանելու համար», – հենց այսպես է գնահատվել ՀՀ նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի ելույթը: Կարծում եմ, բանավեճի մասնակիցները համակարծիք էին, որ մեր նախագահի ելույթը բացառիկ կառուցողական էր: Ինչպես և Սերժ Սարգսյանի նախորդ ելույթները, նրա մյուսխենյան ելույթը նույնպես աչքի էր ընկնում անկեղծությամբ, թափանցիկությամբ: Հատկապես կարևոր է նաև այն, որ Հայաստանը, Ռուսաստանի ռազմավարական գործընկերը լինելով, երրորդ երկրների հետ իր հարաբերություններն այնպես է կառուցում, որպեսզի, նախ, նրանք նոր գլխացավանք չդառնան մեր ռազմավարական դաշնակցի համար, ինչպես նաև չվնասեն այլ պետությունների հետ Հայաստանի հարաբերություններին: Ավելին, իր արտաքին քաղաքականությունում Հայաստանը ջանում է համատեղ գործունեության ինչ-որ ընդհանուր ուղղություններ, շփումների հաստատման ուղիներ գտնել համաշխարհային քաղաքականության ուժի ամենատարբեր կենտրոնների միջև: Եվ հավանաբար, այդ առկա դրական փորձը մենք ձեզ հետ միասին պետք է իմաստավորենք: Ի պատիվ մեր հարգարժան Կոնստանտին Իոսիֆովիչի՝ նա, որպես Հայաստանի նախագահի մասնակցությամբ կայացած բանավեճի մոդերատոր, ինքնաբերաբար եկավ նույն եզրահանգման, ինչ և ամերիկացի քաղաքագետը: Եվ ահա թե ինչ է ասել նա. «Ես արդեն սոցիալական ցանցերում ներկայացրել եմ կայացած բանավեճին տված իմ գնահատականը, և ես անկեղծորեն երախտագիտություն եմ հայտնել Սերժ Սարգսյանին փայլուն ելույթի համար, բանավեճին շատ կառուցողական ներդրում ունենալու, կշռադատված, հավասարակշռված և խիստ պատասխանատու վերլուծության համար, թե ինչ է տեղի ունենում և՛ հենց Հայաստանում, և՛ տարածաշրջանային հարաբերություններում, և՛ ավելի գլոբալ համատեքստում, որտեղ Հայաստանն, անշուշտ, ունի իր ակնառու և ստեղծարար դերը»: Եվ քանի որ Հայաստանին՝

հանձին իր քաղաքական ղեկավարության, հաջողվում է շփումներ և կանուրջներ հաստատել մեծ տերությունների, ամենատարբեր երկրների գլոբալ տնտեսական և ռազմաքաղաքական միավորումների միջև, գուցե մենք է՞լ մտածեինք և հանրային դիվանագիտության միջոցով արդեն առկա դրական փորձը դարձնեինք ոչ միայն մեր ռուսաստանցի գործընկեր խորհրդարանականների սեփականությունը, այլև այն տարածեինք սահմանի այն կողմում՝ լինի դա Ամերիկայի Միացյալ Նահանգներում, թե Արևմտյան Եվրոպայի երկրներում: Կարծում եմ, որ նման մոտեցումն արդարացված կլինի, և դա մեր միջխորհրդարանական համագործակցության շատ պատկառելի ու պատշաճ ներդրումը կլինի միջազգային հարաբերությունների արդի փուլի գլոբալ մարտահրավերների և սպառնալիքների հաղթահարման գործում:

Ահա այսպիսին է իմ կարծիքը, հարգելի գործընկերներ, խնդրում եմ ընդունեք սա որպես ոչ մեծ ակնարկ, իբրև փոքրիկ նշում:

Շնորհակալություն:

Ուզում եմ նաև նշել, որ օրակարգի երրորդ հարցի («Եվրասիական ինտեգրացիան և ժողովրդական դիվանագիտությունը») վերաբերյալ հայկական կողմից որպես զեկուցող հաստատված էր Ջեր խոնարի ծառան: Թե ինչի մասին էր ելույթս և որքանով էր այն արդիական՝ թող դատի ընթերցողը: Ելույթի տեքստը ներկայացվում է ստորև:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ (13 ՄԱՐՏԻ 2018Թ.)

Կոնստանտին Իոսիֆովիչը մտահոգություն հայտնեց, թե Հայաստանը հանկարծ լոյալ չվերաբերվի նրան, ինչն այժմ տեղի է ունենում Մեծ Բրիտանիայում՝ կապված ԳՀՎ նախկին գնդապետ Սերգեյ Սկրիպալի թունավորման հետ: Եթե պատահաբար գտնվեն մարդիկ, ովքեր լոյալ կվերաբերվեն անգլիական իշխանությունների կողմից իրականացվող հակառուսական գործողություններին, ապա ես նրանց խորհուրդ կտայի կարդալ Ֆեյսբուքի իր էջում Կոնստանտին Իոսիֆովիչի այսօր արած գրառումը: «Դատարանների թագուհի» Բրիտանիայի համար սա լիակատար դեգրադացիա է. մեղսունակության տոտալ կանխավարկած, երբ ապացուցում են ոչ թե դատարանն ու դատախազը, այլ մեղադրյալը, որին թույլ չեն տալիս ոչ ապացուցել, ոչ մասնակցել դատավարությանը: Նույն ավգորիթմն է ընդունվել «ռաշադեյթի» վճռով ԱՄՆ-ում և «Բոինգի» գործով Նիդեռլանդներում», – Ֆեյսբուքում գրել է Կոնստանտին Իոսիֆովիչ Կոսաչովը: Շատ համոզիչ է: Եվ սա՝ բնավ ոչ այն պատճառով, որ հյուրընկալությունից ելնելով պետք է հաճոյախոսություններ անել, այլ որովհետև հենց այդպես էլ

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կա իրականում: Մենք հերթական անգամ դառնում ենք երկակի չափորոշիչների կիրառման վկաները: Արդյո՞ք պատահական է սա: Իհարկե, պատահական չէ: Եվ ինչո՞ւ են մեր ռուսաստանցի գործընկերների մեջ մեր հաշվով նման երկյուղներ առաջացել: Գուցե Դուք հիանալի հասկանում եք, որ լայնորեն ծավալված հակառուսական տեղեկատվական պատերազմում թիրախ լինելու է ոչ միայն ինքը՝ Ռուսաստանը, այլև, առաջին հերթին, Ռուսաստանի ամենահուսալի ռազմավարական դաշնակիցներն ու գործընկերները: Չէ՞ որ համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոնների հայտնի ստրատեգները խնդիր են առաջադրել. ռուսական սահմանների ողջ պարագծով ստեղծել անվստահության իրադրություն, անկայունության և քաոսի գոտի: Ահա այս նպատակին հասնելուն էլ ուղղված է ծավալվող հակառուսական տեղեկատվական պատերազմը: Բնավ պատահականորեն չէր, որ մեջբերեցի Մյունխենի անվտանգության համաժողովում մեր նախագահի ելույթին տրված գնահատականները, որովհետև դրանցում նա մատնանշում է միջազգային լարվածության մեղմացման, համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոնների միջև կառուցողական երկխոսության հաստատման ուղիները: Մենք համոզված ենք, որ նրա խոսքերին կանսան Ամերիկայի Միացյալ Նահանգների հայկական համայնքում, իսկ այնտեղ ապրում է ավելի քան մեկուկես միլիոն հայ, Ռուսաստանի հայկական համայնքում, որտեղ ապրում են երկուսուկես միլիոն մեր հայրենակիցներ, Իրանի հայկական համայնքում, որը 250 հազարանոց հայկական համայնք ունի: Այսինքն՝ մեր առջև միանգամայն որոշակի խնդիր է դրված. ճակատագրի բերումով Հայաստանի սահմաններից դուրս հայտնված մեր հայրենակիցների միջոցով ցույց տալ, որ աշխարհի երկրների գլխին կախվել է Դամոկլյան սուրը, այո՛, ոչ միայն Ռուսաստանի և ոչ այնքան Ռուսաստանի, որքան ողջ Երկիր մոլորակի վրա: Ինձ թվում է, որ հենց սրան պետք է ուղղվեն Ռուսաստանի և Հայաստանի խորհրդարանականների ջանքերը, և սա միանգամայն հասկանալի է, որովհետև մենք՝ խորհրդարանականներս, մեր գործողություններում շատ ավելի ազատ ենք, քան մեր երկրների կառավարական գործիչները: Եվ ահա, վերադառնամ այն փաստաթղթերին, որոնք տառացիորեն վերջին չորս ամիսների ընթացքում ընդունվել և հրապարակվել են Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որոնք են. 2017թ. դեկտեմբերի 18-ին հրապարակված Ազգային անվտանգության ռազմավարությունը, 2018թ. փետրվարի 13-ին հրապարակված Ազգային հետախուզության զեկույցը, որի նոր տարբերակը հրապարակվել է 20 օր անց, ինչպես նաև ԱՄՆ նոր միջուկային դոկտրինը, որը ԱՄՆ Կոնգրեսին է ներկայացվել 2018թ. փետրվարի 2-ին: Ես մանրամասն ծանոթացել եմ այս փաստաթղթերին, ինչպես նաև վերլուծական նյութերին և մեկնաբանություններին, որոնք հրապարակվել են ռուսական էլեկտրոնային ՁԼՄ-ներում՝ այս փաստաթղթերի հետ կապված: Այսպես, ԱՄՆ Ազգային հետախուզության զեկույցում Ռուսաստանի մասին 34 հիշատակում կա, ընդ որում՝

ամենաանախորժ ձևով. իբր Ռուսաստանն ապակառուցողական երկիր է, որից պատերազմի սանձազերծման վտանգ է բխում: Ընդ որում, 7 դեպքում Ռուսաստանը հիշատակվում է Չինաստանի և երկու դեպքում՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Իսկ Ռուսաստանի մասին հիշատակումներից մեկում՝ 32-ում, խոսվում է նաև Հայաստանի մասին: Հայաստանը հիշատակվում է Ադրբեջանի հետ կապված: Միևնույն ժամանակ, նշվում է, որ Ռուսաստանն Ադրբեջանին արդիական զենք է մատակարարել, և դա հղի է նրանով, որ Ադրբեջանը կարող է պատերազմ սկսել՝ դրանում ներքաշելով նաև Հայաստանի դաշնակցին՝ Ռուսաստանին: Այսինքն՝ նշարվում է գործողությունների հայտնի մարտավարությունը: Ուրեմն այսպես, սկզբում ապակայունացման ստրատեգիան պատրաստում են հակամարտող կողմերի հանրային կարծիքը վտանգավոր այն իրադարձությունների սպասման շուրջ, որոնք իրենք արդեն նախապատրաստել են, որոնք արդեն նախօրոք հնչեցվել են: Խոսքը Անդրկովկասի տարածաշրջանում, ասել է թե՛ Հարավային Կովկասի տարածաշրջանում իրավիճակը ապակայունացնելու հնարավորության և հավանականության մասին է: Սա, արևմտյան վերլուծաբանների կարծիքով, միաժամանակ կխփի երկու թիրախի. մի կողմից՝ Իրանին, Իրանի հյուսիսում, այսպես կոչված Հարավային Ադրբեջանում (որին հավակնում է ավշերոնյան սուլթանը) իրավիճակի ապակայունացման ճանապարհով: Այնուհետև կկատարվեն արցախա-ադրբեջանական և հայ-ադրբեջանական սահմանում, իսկ հետո արդեն Հարավային Կովկասի ողջ պարագծով իրավիճակի ապակայունացման գործողություններ՝ այնտեղ ապակայունության գոտի ստեղծելու նպատակով: Մեր տարածաշրջանում պայթյունավտանգ իրավիճակ ստեղծելով, ըստ այս մտահղացման հեղինակների կարծիքի, դրանով իսկ կշեղեն Ռուսաստանի ուշադրությունն այս ուղղությամբ: Դուք, Կոնստանտին Իոսիֆովիչ, շատ ճիշտ նշեցիք ռազմական գործողությունների կտրուկ ակտիվացման մասին, որոնք հիմա տեղի են ունենում Ռուսաստանի հարավային մատույցներում, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Այնուհետև, ապակայունացումը կամ միաժամանակ, կամ հնարավորինս կարճ ժամկետում կտեղափոխվի միջինասիական հանրապետությունների կողմը՝ Կենտրոնական Ասիայի տարածաշրջան, գործընթացին աֆղանստանցի մոջահեդների ներգրավմամբ: Այնտեղ՝ աֆղանստանյան սահմանին այժմ արդեն պարելում են առանց տարբերանշանների թռչող օբյեկտներ. հավանաբար, որոշակի երկրների հրահանգիչներն են մարզում իրենց «ձեռնասուն» ԻԼԻՊ-ականներին: Եվ այսպես, խնդիր է դրված Ռուսաստանի հարավային սահմանների ողջ պարագծով, ներառյալ և՛ Հարավային Կովկասը, և՛ Կենտրոնական Ասիայի երկրները, ստեղծել անկայունության, քաոսի գոտի, ապակայունացնել այնտեղի իրավիճակը: Եվ այս ամենը տեղի կունենա Սիրիայում, Արևելյան Գուտայում չթուլացող լարվածության պայմաններում: Ուստի, ես հատուկ ուզում եմ հիշեցնել լրջագույն նախազգուշացման մասին,

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

որն այսօր հնչեցրեց Ռուսաստանի Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովը՝ ԱՄՆ ռազմաօդային ուժերի կողմից Դամասկոսի արվարձանում Սիրիայի կառավարական զորքերի դեմ հնարավոր գրոհի հետ կապված: Բանակի գեներալը պարզապես հայտարարեց, որ Ռուսաստանն անպատիժ չի թողնի ԱՄՆ հնարավոր հարձակողական ռմբահարությունները Դամասկոսի շրջանում, որովհետև այնտեղ են գտնվում ռուսաստանցի զինվորական հրահանգիչներ, հումանիտար օգնություն ցուցաբերող ռուսաստանցի զինժառանգողներ, խորհրդականներ ՌԴ-ից: Այսինքն՝ Մեծ Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակն այժմ չափազանց լարված է: Եվ եթե Վոլֆգանգ Իշինգերը Մյունխենի անվտանգության համաժողովի կարգախոս է ընտրել «Մինչև անդունդի եզրը և հե՞տ» բառերը՝ հարցական նշանով ավարտելով դրանք, ապա այժմ այդ հարցական նշանը պետք է փոխարինել բացականչականով:

Չեմ թաքցնի, որ, ելույթիս պատրաստվելով, շատ եմ մտածել այն բանի շուրջ, թե որն է այն ֆենոմենը, որը Ռուսաստանի, Հայաստանի և առհասարակ նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետությունների բնակչության համար անսասան է դարձնում բարեկամական հարաբերությունները մեր ժողովուրդների միջև, ինչն է մեզ մերձեցնում, և ինչն է, որն անհնար է որևէ կերպ սասանել: Եզրակացությունը մեկն է, և դա, իմ կարծիքով, մեր հայրերի ու պապերի՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ համատեղ պայքարի մեջ է, և անգամ դրա ավարտից 73 տարի հետո, եթե որևէ մեկը փորձի շահարկել հայ-ռուսական ինչ-որ տարածայնություններ, ինչ-որ հակասություններ որոնել, ապա վերջնարդյունքում դա կտապալվի, ֆիասկո կկրի: Մենք սրբորեն հարգում և միշտ հիշում ենք մեր հայրերի ու պապերի պատգամները, չենք մոռանում, թե ինչպես են նրանք անձնուրաց վայր դրել իրենց գլուխները՝ հանուն դարչնագույն ժանտախտից, կամ ժամանակակից տերմինաբանությամբ՝ ազգային բացառիկության վայրի դրսևորումներից մարդկության փրկության: Ահա, հիմա էլ նույն փորձանքն է կախվել որքան Ռուսաստանի, նույնքան էլ Հայաստանի և ողջ աշխարհի վրա: Եվ պետք է, որպեսզի Ռուսաստանի նախագահի զգուշացումը, որն արտահայտել է («Աշխարհակարգ 2018»-ի հարցազրույցում) պարզ ու հասկանալի նախադասությամբ՝ «Ինչի՞ է պետք աշխարհն առանց Ռուսաստանի», սթափեցնի պատերազմի ջատագովների տաք գլուխները: Ուրեմն, մենք պետք է հանրային դիվանագիտությունն այնպես վարենք, որպեսզի հասարակության ճնշման տակ ոչ մեկին և աշխարհի ոչ մի երկրում թույլ չտրվի հատել այն սահմանը, այն վերջնագիծը, որից այն կողմ պատերազմն է: Ես նկատի ունեմ նրանց, ովքեր, իրենց հաշիվ չտալով իրենց գործողությունների աղետալի հետևանքների մասին, ոչ ճիշտ եզրակացություններ կանեն երեք բավական տազնապալի փաստաթղթերի բովանդակությունից՝ ԱՄՆ միջուկային նոր դոկտրինից, Ազգային անվտանգության ռազմավարությունից և ԱՄՆ ազգային

հետախուզության զեկույցից: Մեր այս երկյուղները և տագնապները հարկ է մեր գործընկերների միջոցով հասցնել Սփյուռքի հայկական և ռուսական համայնքներին, մյուս երկրների բնակչության լայն շերտերին, որպեսզի մեր աշխատանքն ուղղվի հետագա առձակատման վտանգի մեղմմանը, խորհրդարանական մակարդակով ողջ աշխարհի համար անվտանգության հնարավոր լուրջ սպառնալիքների բացատրմանը: Հարկ է այս աշխատանքին ներգրավել ամենատարբեր երկրների քաղաքական էլիտաների հնարավորինս լայն շերտերին: Եթե կարողանանք նման աշխատանք կազմակերպել, ուրեմն մեր ավանդը կներդնենք պատերազմի սպառնալիքի, միջազգային իրավիճակում քառսի սպառնալիքի կանխման պայքարում: Համոզված եմ, որ նման աշխատանքը կմերժեցնի շատ ու շատ պետությունների խորհրդարանականներին, որոնց թանկ է աշխարհի ձակատագիրը: Այդժամ միանգամայն այլ լույսով կընկալվեն մշակութային փոխանակումները մեր երկրների միջև: Այսօրվա նիստի ելույթս պատրաստելիս՝ չեմ թաքցնում, շատ նյութեր եմ կարդացել, որոնք ինձ համար խիստ օգտակար էին: Բավական կառուցողական առաջարկություններ կային ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահին առընթեր Ինտեգրացիոն ակումբի 2017թ. Ամենամյա զեկույցում՝ «Եվրասիական վեկտորը ապագայի ինտեգրացիան է» կարգախոսով: Օգտակար շատ բան եմ քաղել Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի աշխատակից Կ.Պ. Բորիշչովեցի «Հանրային դիվանագիտությունը ԵԱՏՄ տարածքում. երևույթի և զարգացման միտումների ընկալումը» հոդվածից: Հետաքրքիր շատ մոտեցումներ էին ներկայացված «Հանրային դիվանագիտության տարածաշրջանային չափումը եվրասիական վեկտորն է» Միջազգային կլոր սեղանի (որը տեղի է ունեցել 2017թ. մայիսի 29-ին, Եվրասիայի ժողովուրդների վեհաժողովի 1-ին համագումարի շրջանակներում) նյութերում: Այսինքն, եթե մենք կարողանանք այս ճիշտ ժամանակին տեղի ունեցած համաժողովների և հանդիպումների նյութերում պարունակվող հիմնական մտքերը հասցնել լայն զանգվածներին, ապա, վստահ եմ, որ այս ամենը միանգամայն նոր լույսով կընկալվի ԵԱՏՄ անդամ պետությունների բնակչության կողմից: Միևնույն ժամանակ, եթե մենք ցույց տանք, որ արդի փոթորկահույզ աշխարհում մենք բոլորս գտնվում ենք նույն նավում և այդ նավը ոչ թե Ռուսաստանն է կամ Հայաստանը, այլ ողջ Երկրագունդը, Երկիր մոլորակը, ապա մեր կողմնակիցների թիվն անհաշիվ կաճի: Այս մասին էլ ասվել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովին Ռուսաստանի նախագահի հղած Ուղերձում: Ելնելով սրանից՝ մեր հանդիպումը հրատապ է, որը, իմ կարծիքով, ինչպես և նախորդ անգամներին, աչքի է ընկնում բացառիկ անկեղծությամբ և վստահելիությամբ: Մենք մեր ելույթներում խոսեցինք մեր ամենացավոտ խնդիրների մասին, և Դուք, թանկագին ռուս գործընկերներ, լսեցիք մեզ: Երբ Արմեն Գևորգովիչը ելույթ էր ունենում, ես մտովի հարց էի տալիս. կա՞ն արդյոք այլ խորհրդարաններ, որոնց

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

պատգամավորներն ու սենատորները կարողանան այսքան անկեղծ մակարդակում խոսել իրենց տազնապանների և հոգսերի մասին: Չեմ ուզում ինչ-որ բան չափազանցել, բայց հիմա ասելու եմ այն, ինչու համոզված եմ. խփում եմ Հայաստանին, բայց նշանառության տակ Ռուսաստանն է: Մասնավորապես, Ստոկհոլմի Խաղաղության և հակամարտությունների խնդիրների հետազոտությունների միջազգային ինստիտուտի վերջերս հրապարակած թվերը մեզ լրջորեն տազնապեցնում են: Դրանք բավական տազնապեցնող են: Դուք միայն տեսեք: Հաշվետու ժամանակաշրջանում (2015 – 2017թթ.) Ռուսաստանն Ադրբեջանին է վաճառել 36 միավոր «Солнцетек» TOS-1A ծանր հրանետ, 40 միավոր БТР-82А, 800 միավոր հակատանկային «Քրիզանթեմ» կոմպլեքսի հրթիռ (БМП-3-ի հիմքի վրա), որոնք հայտնի են որպես «տանկային մարդասպաններ»: Էլ չեմ ասում Իսրայելի կողմից Ադրբեջանին արդիական սպառազինությունների վաճառքի մասին: Սպառազինությունների այս տազնապալի մրցավազքի մասին, չեք պատկերացնի, ներողություն ժարգոնի համար, ինչ խանդաղատանքով ու կայֆով է գրում ադրբեջանական մամուլը: Այսինքն՝ այդ երկիրն իր բնակչությանը պատրաստում է պատերազմի: Վտանգը հենց դա է: Ավաղ, այդպես է. Ադրբեջանն իր բնակչությանը պատրաստում է պատերազմի Արցախի և Հայաստանի դեմ: Իրադարձությունների նման զարգացմամբ շատ ուրախ եմ նրանց ավագ եղբայրները՝ թուրքերը: Հիմա արդեն Նախիջևանում տեղակայված են Թուրքիայի 3-րդ դաշտային բանակի հարվածային գորամասերը: Էլ չեմ ասում այն վտանգի մասին, որը բխում է այդ երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի անկանխատեսելի վարքագծից, որն իրեն նորաթուխ խալիֆ, նախկին Օսմանյան կայսրության սուլթանների գործի շարունակող է երևակայում, ընդ որում՝ նեոօսմանյան իր նկրտումների մասին նա բարձրաձայնում է ի լուր աշխարհի:

Մեզանից յուրաքանչյուրը, անշուշտ, եզրահանգումներ է անում այն տեղեկատվության հիման վրա, որին տիրապետում է: Բայց արդեն պարզ է մի բան, որ համաշխարհային քաղաքականության ուժի առանձին կենտրոններ գործելու են մեն-մի նպատակով՝ թուլացնել Ռուսաստանը՝ հանձին նրա արդի աշխարհի առաջատար խաղացողներից մեկին, նոր բազմաբևեռ աշխարհի կերտողին տեսնելով, ինչը խիստ անհանգստացնում է նրանց: Ուստի, նրանց համար չափազանց կարևոր է, որպեսզի Ռուսաստանը, որպես այդպիսին, դադարի գոյություն ունենալ: Եվ դրա համար նրանք կխփեն Ռուսաստանի թիկունքին: Դիմելով Ձեզ՝ ռուսաստանցի գործընկերներ, հորդորում եմ. պահպանեք Հայաստանը, չէ որ այն Ձեր ամենահուսալի թիկունքն է:

Շնորհակալություն:

Հույս ունեմ, որ ծանոթանալով իմ ելույթների տեքստերին՝ ընթերցողները տպավորություն կկազմեն մեր բանավեճերի թեմատիկայի և մեր



քննարկած հարցերի որակի մասին: Գլխավորն այն է, որպեսզի մեր հետագա աշխատանքում մենք լինենք պահանջկոտ ինքներս մեր և մեր ռուսաստանցի գործընկերների հանդեպ՝ ի կատարումն մեր համատեղ ընդունած բոլոր պայմանավորվածությունների:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ



## АРТАШЕС ГЕГАМЯН: МЫ – ОДНА КОМАНДА

Уже становится доброй традицией проведение совместных заседаний Постоянной комиссии по внешним связям Национального Собрания Республики Армения с профильными комитетами Федерального Собрания Российской Федерации – Комитетом по международным делам Совета Федерации и Комитетом по делам СНГ, евразийской интеграции и связям с соотечественниками Государственной Думы (далее – Комитет). Очередное совместное заседание с Комитетом Госдумы состоялось 26 марта т. г. в Ереване (далее – Совместное заседание). Докладчики и выступившие в ходе заседания депутаты ГД Федерального Собрания РФ и Национального Собрания РА охватили широкий круг вопросов, касающихся как двусторонних отношений, отношений между государствами-членами Евразийского экономического союза (далее – ЕАЭС), так и международного положения, складывающегося в ареале ЕАЭС. Обсуждение проходило в обстановке искренности, доверительности и взаимопонимания. Особое место было отведено перспективам развития российско-армянских отношений в условиях нагнетания международной напряженности со стороны отдельных центров силы мировой политики. Всесторонне были обсуждены вопросы углубления армяно-российского стратегического союза на фоне как региональных, так и глобальных вызовов и угроз безопасности. При этом особое внимание было уделено проблемам активизации публичной дипломатии. И вовсе не случайно, что вторым пунктом повестки дня Совместного заседания был пункт: «Евразийская интеграция и народная дипломатия», а выступить с докладом с армянской стороны было поручено вашему покорному слуге Арташесу Гегамяну. По свежим впечатлениям прошедшего Совместного заседания могу вполне однозначно утверждать: армянские и российские парламентарии не только услышали друг друга, но и наметили перспективные направления для продолжения своих совместных усилий по всестороннему углублению отношений в рамках ЕАЭС. По установившейся традиции хотелось бы вынести на суд читателей полный текст моего выступления на Совместном заседании.

ВЫСТУПЛЕНИЕ АРТАШЕСА ГЕГАМЯНА ПРИ ОБСУЖДЕНИИ  
ВОПРОСА «ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ И НАРОДНАЯ ДИПЛОМАТИЯ»  
(26 МАРТА 2018 Г.)

Тема моего выступления – «Евразийская интеграция и народная дипломатия». Чтобы не говорить только о каких-то стандартных формах народной дипломатии, которые прошли испытание временем и, бесспорно, в условиях стабильности в отношениях центров силы мировой политики давали положительные результаты, попробуем определить формы организации публичной дипломатии в нынешних реалиях, характеризующихся крайне обострившимися международными отношениями. Думается, что очень важно несколько подробнее уяснить, в каких условиях публичная дипломатия будет проводиться? Не вызывает сомнений, что условия, сложившиеся в мире в настоящее время, в корне отличаются от тех, которые были в начале 2015 года, в январе, когда Армения вступила в Евразийский экономический союз. Достаточно сказать, что в настоящее время мир вступил в полосу холодной войны. Причем велика опасность ее перехода в горячую фазу. Для этого достаточно прочитать аналитические материалы самих американских политологов, в частности, Ричарда Хааса, бывшего высокопоставленного американского дипломата, одного из теоретиков внешней политики США.

Буквально пару дней назад он заявил, что США в настоящее время переживают «самый опасный момент» в своей современной истории, поскольку президент Дональд Трамп ведет одновременно войну на трех фронтах. «Дональд Трамп теперь настроен вести войну на трех фронтах: политическую борьбу против Боба Мюллера (Роберт Мюллер, спецпрокурор, расследующий «русское досье» Дональда Трампа), экономическую – против Китая, других торговых партнеров, а также настоящую – против Ирана и Северной Кореи. Это самый опасный момент в современной американской истории, в значительной степени это вызвали мы сами, а не какие-то события», – написал Хаас в Twitter. Но вопрос в том, что мы имеем дело с долгосрочной перспективой неспадания международной напряженности, и выход на такой вывод имеет под собой глубинные экономические причины.

Достаточно отметить, что в настоящее время федеральный внешний долг Соединенных Штатов Америки перевалил за 20 триллионов долларов, что составляет 107,48 процента к ВВП этой страны. Как же США будут выходить из этой долговой ямы? Отметим также, что федеральный (государственный) долг США на ближайшее десятилетие будет расти. Так, дефицит федерального бюджета США на 2018 финансовый год,

## А. ГЕГАМЯН

который начинается с 1 октября 2017 года, будет равен 832 млрд долларов, а в 2019 г. – 984 млрд долларов, причем при составлении бюджета предполагался устойчивый трехпроцентный рост экономики США. Если этого не произойдет, то федеральный долг США будет еще выше. Здесь уместно вспомнить слова сорокового президента Соединенных Штатов Рональда Рейгана, который как-то заметил: «Мы имеем долг в триллион долларов не из-за того, что у нас нет достаточного количества налогов. Мы имеем долг в триллион долларов, потому что мы слишком много тратим». А сейчас, как уже было сказано, федеральный долг США перевалил за 20 трлн долларов и в ближайшие годы будет и далее расти. То есть вновь на всю катушку заработает печатный станок Федеральной резервной системы (ФРС) США. Таким образом, мы можем констатировать, что как в 2018, так и в 2019 гг. расходы федерального бюджета США будут в суммарном виде на 1 трлн 816 млрд долларов превышать доходы бюджета. И все это возможно лишь благодаря доминированию доллара США в качестве основной мировой резервной валюты. Естественно, что такое положение дел никоим образом не может устраивать такие державы, каковыми являются Россия и Китай, впрочем, как и другие страны с быстро развивающейся экономикой, которые не могут смириться с тем, что за счет налогоплательщиков своих стран они поневоле поддерживают экономически не подкрепленный высокий жизненный уровень граждан США.

К опасной черте подходит и государственный внешний долг государств-локомотивов Европейского Союза. Так, по данным The World Factbook – Central Intelligence Agency [https://www.google.am/search?q=The+world+Factbook+%E2%80%93+Central+Intelligence+Agency&spell=1&sa=X&ved=0ahUKewi60cixsYraAhXNxaYKНQdBC\\_0QkeECCCloAA](https://www.google.am/search?q=The+world+Factbook+%E2%80%93+Central+Intelligence+Agency&spell=1&sa=X&ved=0ahUKewi60cixsYraAhXNxaYKНQdBC_0QkeECCCloAA), внешний долг Германии (на 31 марта 2016 г.) составил 5 трлн 326 млрд долларов при ВВП этой страны по паритету покупательной способности (далее – ППС) в 4 трлн 150 млрд долл. (по итогам 2017 г.), то есть 128,3% к ВВП; внешний долг Франции составил 5 трлн 360 млрд долл. (на 31 марта 2016 г.) при ВВП по ППС – 2 трлн 880 млрд долл. (по итогам 2017 г.), или 189,7% к ВВП; в Италии внешний долг составил 2 трлн 444 млрд долл. (на 31 марта 2016 г.) при ВВП 2 трлн 307 млрд долл. по ППС (по итогам 2017 г.), или 105,7% к ВВП. Хотелось бы обратить внимание на соответствующие показатели Великобритании. Так, при ВВП этой страны по ППС в 2 трлн 880 млрд долл. (по итогам 2017 г.) внешний долг Великобритании на 31 марта 2016 г. составил 8 трлн 126 млрд долл., или 282,2% к ВВП. Таким образом, ведущие государства еврозоны, а также Великобритания накопили государственный долг, существенно превышающий ВВП этих стран.

Вышеперечисленные государства, являясь странами-эмитентами мировой резервной валюты, в случае Германии, Франции, Италии – евро,

в случае Великобритании – фунта стерлингов, безусловно, имеют, как и США, в большей степени определенные преимущества: возможность покрытия дефицита своих бюджетов, платежного баланса национальной валютой. Эта возможность, в свою очередь, содействует укреплению позиций национальных производителей этих стран в конкурентной борьбе на мировом рынке. С этим, вне всякого сомнения, не хотят мириться ни Китай, ни Россия, ни другие развивающиеся экономики мира. В этих условиях вполне предсказуемо, что страны-эмитенты мировых резервных валют, чтобы сохранить свои преимущества, обусловленные этим фактором, заинтересованы в сохранении стабильности своих стран, что сделает их привлекательными, в частности, для вложения в государственные ценные бумаги: будь то казначейские обязательства США, а также евробонды и еврооблигации Евросоюза. В конечном итоге это создает возможность указанным государствам жить в долг, не соизмеряя свои, к примеру, социальные расходы с реально располагаемыми доходами. Они, конечно же, осознают, что дестабилизация в разных странах мира неизбежно поспособствует перетоку финансовых ресурсов из них в финансовую сферу стран-эмитентов резервных валют.

Такое противостояние стран-эмитентов мировых резервных валют со странами, которые противостоят такому положению дел, вполне ожидаемо приводит к напряженности в отношениях между ними. Более того, к прямому определению этих стран в качестве противников. Так, 19 января т. г. Пентагон обнародовал новую оборонную стратегию США, в которой в пятерке главных угроз американской безопасности, по словам главы Пентагона Джеймса Мэттиса, – Россия, Китай, КНДР, Иран и терроризм. А в докладе главы американской национальной разведки Дэниела Коутса Сенату США от 6 марта 2018 года, который является несколько видоизмененной версией доклада Коутса от 13 февраля 2018 года, содержится и ряд новых обвинений в адрес Российской Федерации, явившихся следствием дальнейшего ухудшения отношений за последний месяц между Россией и США, приведших к нарастающему уровню взаимных угроз. Достаточно отметить, что в этом докладе есть 34 упоминания о России в отрицательном свете (в 7 из них вместе с Россией упоминается и Китай, в 2-х – Иран). Подобное противостояние, по мнению отдельных стратегов центров силы мировой политики, можно будет разрешить, если, к примеру, подорвать изнутри Евразийский экономический союз, дестабилизировав ситуацию в странах-членах ЕАЭС. И, конечно, поставлена задача дестабилизировать положение в первую очередь в Российской Федерации. Однако отметим, что после выборов Президента России 18 марта т. г. эти ожидания стратегов по дестабилизации и управляемому хаосу потерпели крупное фиаско, но эти вопросы по дестабили-

зации в странах-союзниках России или же подрыву доверия между ними с повестки дня отдельных центров силы мировой политики отнюдь не сняты. Чтобы убедиться в этом, достаточно ознакомиться с обилием заголовков статей и комментариев к ним относительно состоявшейся 15 марта т. г. встречи в Астане лидеров стран Центральной Азии. Как отмечалось в одном электронном издании, «недавно встретились (лидеры стран Центральной Азии. – А. Г.) впервые без участия России, продемонстрировав единство, независимость и сотрудничество между странами региона, говорят экономисты и политологи» (<http://inozpress.kg/news/view/id/52660>). Вызывает озабоченность, что президенты Казахстана, Узбекистана, Кыргызстана, Таджикистана и председатель парламента Туркменистана единогласно согласились с тем, что: «Самое главное, у нас есть общее понимание и желание наращивать наше партнерство и идти навстречу друг другу. Поэтому мы условились ежегодно в преддверии великого для нас всех праздника Навруз (народный праздник у мусульман, который посвящается весеннему равноденствию) проводить такие встречи на регулярной основе». Об этом сказал журналистам Нурсултан Назарбаев после встречи, согласно заявлению на его официальном сайте.

Вместе с тем хотелось бы отметить, что в последнее время осложнились торговые отношения между США и Европой после того, как 8 марта т. г. президент США Дональд Трамп подписал распоряжение о введении таможенных пошлин на импорт стали на 25% и импорт алюминия на 10%. Представитель кабмина ФРГ Георг Штрайтер заявил: «Мы считаем эти пошлины противозаконными, мы рассмотрим, как на них реагировать... Они таят опасность раскручивания спирали эскалации... Принятие односторонних мер – ошибочный путь по решению проблемы избыточных производственных мощностей в сталелитейной и алюминиевой промышленности». Введение пошлин, конечно, взбудоражило Европу, поэтому США были вынуждены заявить об отсрочке до 1 мая т. г. введения этих пошлин.

Я столь подробно остановился на некоторых угрозах безопасности с тем, чтобы совместно с коллегами из Государственной Думы выработать качественно новые подходы к организации парламентской, публичной дипломатии. Думается, что все согласятся с актуальностью скорейшего начала этой работы. Если мы сосредоточимся лишь на традиционных формах освещения и распространения удавшегося положительного опыта сотрудничества между государствами-членами ЕАЭС, что, бесспорно, важно и нужно, но при этом не будем согласованно реагировать на вызовы и угрозы безопасности в отношении каждой из наших стран, то наши усилия, на мой взгляд, окажутся недостаточными. Думается, нам важно понять, что напряженные отношения между США и Россией, США

и Китаем будут иметь долгосрочный характер. Мне представляется, что отнюдь не гладкими будут и торговые отношения между США и Евросоюзом. Я делаю подобные прогнозы, ссылаясь на выступления президента США Дональда Трампа. Так, 20 января 2017 г. Дональд Трамп выступил у Капитолия с инаугурационной речью. Напомним читателю некоторые из ключевых моментов его выступления:

1). «Сделаем Америку снова великой», – этим слоганом Трамп завершил свою речь. «Вместе мы сделаем Америку снова сильной, мы сделаем Америку снова богатой, мы сделаем так, чтобы Америкой снова гордились, мы сделаем Америку снова безопасной, и да – мы сделаем Америку снова великой», – заявил президент США.

2). «Начиная с сегодняшнего дня новое видение будет управлять нашей страной. Начиная с сегодняшнего дня Америка будет превыше всего, Америка превыше всего», – Дональд Трамп.

3). «Мы будем следовать двум простым правилам: покупай американское и нанимай американцев», – Дональд Трамп.

Можно было бы привести и другие ключевые выдержки из инаугурационной речи президента США. Но, думается, сказанного достаточно, чтобы сделать определенные выводы. Так, в 2017 г. дефицит торгового баланса США достиг 566,0 млрд долларов, при этом дефицит торговли с Китаем составил 375,2 млрд долларов, достигнув рекордного уровня в истории торговых отношений между этими странами. Общий дефицит внешней торговли США в 2017 г. по сравнению с 2016 г. вырос на 12,1 %. В этих условиях реализация слогана – *покупай американское и нанимай американцев* – весьма спорна. Чем это может обернуться для торговых партнеров США – нетрудно догадаться.

Вот в ситуации этих реалий нам придется работать, более того, суметь взвешенно, грамотно отражать неизбежные нападки на ЕАЭС. Помоему, это блестяще получается у Президента Армении Сержа Азатовича Саргсяна, потому что он филигранно работает с западными коллегами. Армения, будучи стратегическим союзником России, всегда об этом заявляет. Одновременно политическое руководство нашей страны подчеркивает, что это вовсе не означает, что союзнические отношения Армении и России приведут к похолоданию отношений между, в частности, Арменией и Евросоюзом, между Арменией и Соединенными Штатами Америки и другими центрами силы мировой политики. И в этом ключе, по моему мнению, и должна реализовываться народная дипломатия, которая уже не первый год составляет суть публичной дипломатии Армении. Она должна опираться на этот феномен, который свидетельствует о том, что нет непреодолимых противоречий между государствами, в частности, между США, Евросоюзом и Россией.

## А. ГЕГАМЯН

Свидетельством этому служит тот факт, что ближайший союзник России – Армения выстраивала и выстраивает нормальные, конструктивные взаимоотношения с Европейским Союзом. При этом важной вехой в 25-летних отношениях Армении и ЕС стало подписание в ноябре 2017 г. в Брюсселе Соглашения о всеобъемлющем и расширенном партнерстве Армении – ЕС.

Вот некоторые мысли, которыми я хотел бы поделиться с вами, уважаемые коллеги.

Уважаемые коллеги, для меня была принципиально важной оценка Константина Федоровича Затулина относительно Национального героя Армении Гарегина Нжде. Я являюсь руководителем партии «Национальное Единение», однако во второй раз избираюсь в состав Национального Собрания по спискам Республиканской партии Армении, а в состав парламента Армении избран уже в пятый раз. Так вот в Республиканской партии Армении как зеницу ока берегут память патриотов армянского народа, всех тех национальных лидеров, которые ценой своих жизней отстаивали безопасность армян, независимость Армении. Не будь Гарегина Нжде, не было бы Зангезура в составе Армении, уж поверьте этому. И тогда лелеемая идеологами пантуранизма идея создания Великого Турана, исламской дуги в южном подбрюшьи России и до Тихого океана стала бы явью. И Вы очень тонко заметили, Константин Федорович, что даже беспощадное сталинское правосудие, когда даже за самые незначительные провинности людей ставили к стенке без суда и следствия, не вынесло смертного приговора Гарегину Нжде, он не был осужден на смертную казнь. И для нас было очень важно, когда один из ведущих российских политиков России об этом говорит с полным знанием истории, говорит искренне и очень честно, открыто, во всеуслышание. Более того, в знак еще большей убедительности Константин Федорович привел в пример трагическую историю своего соотечественника, генерал-майора Российской императорской армии, атамана Всевеликого Войска Донского, писателя и публициста Петра Николаевича Краснова, который, как было записано в приговоре суда, «вел посредством сформированных им белогвардейских отрядов вооруженную борьбу против Советского Союза и проводил активную шпионско-диверсионную и террористическую деятельность против СССР» и которого за совершенные преступления приговорили к смертной казни. Вместе с тем в определенных вопросах Петр Краснов, как справедливо заметил К. Ф. Затулин, конечно же, заслуживает уважения, имеется в виду его литературное наследие. И вот именно такой честный и откровенный разговор во многом повышает степень доверительности в отношениях парламентариев наших стран. Вместе с тем следует признать, что маяком честных и доверительных отношений



между парламентариями наших стран, безусловно, являются сложившиеся между Президентами России и Армении принципиальные, доброжелательные отношения. Одним из проявлений нового качества отношений, сложившихся между парламентариями наших стран, является утверждение более глубокой содержательности наших дискуссий, что наглядно проявляется на совместных заседаниях.

Спасибо большое.

Уважаемые коллеги, окончив работу над данной статьей, я невольно задумался над тем, как озаглавить ее. Ведь для меня было важно посредством этой статьи донести до читателей обстановку, дух, содержание состоявшейся дискуссии в ходе Совместного заседания Постоянной комиссии по внешним связям Национального Собрания Республики Армения и Комитета по делам СНГ, евразийской интеграции и связям с соотечественниками Государственной Думы Федерального Собрания Российской Федерации. Не скрою, что в моем понимании наиболее емко состоявшийся форум парламентариев Армении и России можно лаконично озаглавить «Мы – одна команда»

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»



## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՄԵՆՔ ՄԻ ԹԻՄ ԵՆՔ

Արդեն բարի ավանդույթ է դառնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի համատեղ նիստերի անցկացումը Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի պրոֆիլային կոմիտեների՝ Դաշնության խորհրդի Միջազգային գործերի կոմիտեի և Պետական դումայի ԱՊՀ գործերի, Եվրասիական ինտեգրման ու հայրենակիցների հետ կապերի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հետ: Պետդումայի Կոմիտեի հետ հերթական համատեղ նիստը տեղի ունեցավ ս.թ. մարտի 26-ին Երևանում (այսուհետ՝ Համատեղ նիստ): ՌԴ Դաշնային ժողովի Պետդումայի և ՀՀ Ազգային ժողովի զեկուցող և ելույթ ունեցող պատգամավորները հարցերի լայն շրջանակի են անդրադարձել, որոնք վերաբերում են ինչպես երկկողմ հարաբերություններին, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամ պետությունների միջև հարաբերություններին, այնպես էլ ԵԱՏՄ ծիրում ստեղծվող միջազգային իրավիճակին: Քննարկումն անցնում էր անկեղծության, վստահելիության և փոխըմբռնման մթնոլորտում: Հատուկ տեղ հատկացվեց ռուս-հայկական հարաբերությունների զարգացման հեռանկարներին՝ համաշխարհային քաղաքականության ուժի առանձին կենտրոնների կողմից միջազգային լարվածության թեժացման պայմաններում: Միևնույն ժամանակ, հատուկ ուշադրություն հատկացվեց հանրային դիվանագիտության ակտիվացման խնդիրներին: Եվ բնավ պատահական չէ, որ Համատեղ նիստի օրակարգի երկրորդ կետն ուներ «Եվրասիական ինտեգրացիան և ժողովրդական դիվանագիտությունը» անվանումը, և հայկական կողմից զեկույցով հանդես գալ հանձնարարված էր Ձեր խոնարհ ծառային՝ Արտաշես Գեղամյանին: Արդեն ավարտված Համատեղ նիստի թարմ տպավորությունների ներքո կարող եմ միանշանակ հաստատել. հայ և ռուսաստանցի խորհրդարանականները ոչ միայն միմյանց լսեցին, այլև նշեցին իրենց համատեղ ջանքերի շարունակման հեռանկարային ուղղությունները՝ ԵԱՏՄ շրջանակներում հարաբերությունների համակողմանի խորացման վերաբերյալ: Հաստատված ավանդույթի համաձայն՝ ցանկանում եմ ընթերցողների դատին հանձնել Համատեղ նիստում ունեցած ելույթիս տեքստը:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ և  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
(26 ՄԱՐՏԻ 2018 Թ.)

Ելույթիս թեման է՝ «Եվրասիական ինտեգրացիան և ժողովրդական դիվանագիտությունը»: Որպեսզի չխոսեմ միայն ժողովրդական դիվանագիտության ինչ-որ ստանդարտ ձևերի մասին, որոնք բռնել են ժամանակի քննությունը և, անշուշտ, համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոնների հարաբերությունների կայունության պայմաններում դրական արդյունքներ են տվել, փորձենք պարզել հանրային դիվանագիտության ձևերը ներկա իրողություններում, որոնք բնորոշվում են խիստ սրված միջազգային հարաբերություններով: Կարծում եմ, որ շատ կարևոր է փոքր-ինչ հանգամանալիորեն պարզել, թե ինչ պայմաններում է իրականացվելու հանրային դիվանագիտությունը: Կասկածից վեր է, որ ներկայում աշխարհում ստեղծված պայմաններն արմատապես տարբերվում են 2015թ. սկզբի՝ հունվարի պայմաններից, երբ Հայաստանը մտավ Եվրասիական տնտեսական միություն: Բավական է ասել, որ այժմ աշխարհը թևակոխել է սառը պատերազմի փուլ: Ընդ որում, մեծ է դրա՝ թե՛ պատերազմի վերածվելու վտանգը: Դրա համար բավական է կարդալ իրենց իսկ՝ ամերիկացի քաղաքագետների, մասնավորապես ամերիկյան նախկին բարձրաստիճանի դիվանագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության տեսաբաններից մեկի՝ Ռիչարդ Հասսի վերլուծական նյութերը:

Ուղիղ մեկ-երկու օր առաջ նա ասաց, որ ԱՄՆ-ը ներկայում իր արդի պատմության «ամենավտանգավոր պահն» է ապրում, քանի որ նախագահ Դոնալդ Թրամփը միաժամանակ երեք ճակատով պատերազմ է վարում: «Դոնալդ Թրամփն այժմ տրամադրված է պատերազմ վարել երեք ճակատով՝ քաղաքական պայքար ընդդեմ Բոբ Մյուլլերի (Ռոբերտ Մյուլլեր, հատուկ դատախազ, որը հետաքննում է Դոնալդ Թրամփի «ռուսական դոսյեն»), տնտեսական՝ ընդդեմ Չինաստանի, առևտրային այլ գործընկերների, ինչպես նաև իսկական՝ ընդդեմ Իրանի և Հյուսիսային Կորեայի: Սա ամերիկյան արդի պատմության ամենավտանգավոր պահն է, այն զգալի չափով հրահրել ենք մենք ինքներս, այլ ոչ թե ինչ-որ իրադարձություններ», – գրել է Հասսը Twitter-ում: Բայց հարցն այն է, որ մենք գործ ունենք միջազգային լարվածության չթուլացման երկարաժամկետ հեռանկարի հետ, և նման եզրահանգման գալը խորքային տնտեսական պատճառներ ունի:

Բավական է նշել, որ ներկայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դաշնային արտաքին պարտքը գերազանցել է 20 տրիլիոն դոլարը, ինչը կազմում է այդ երկրի ՀՆԱ 107,48 տոկոսը: Ինչպե՞ս է ԱՄՆ-ը դուրս գալու պարտքի այդ փոսից: Նշենք նաև, որ ԱՄՆ դաշնային (պետական) պարտքը առաջիկա տասնամյակներին աճելու է: Այսպես, ԱՄՆ Դաշնային բյուջեի դեֆիցիտը 2018 ֆինանսական տարում, որը սկսվել է 2017թ. հոկտեմբերի

## Ա. ՉԵՂԱՄՅԱՆ

1-ից, հավասար կլինի 832 մլրդ դոլարի, իսկ 2019թ.՝ 984 մլրդ դոլարի, ընդ որում, բյուջեն կազմելիս նախատեսվում էր ԱՄՆ տնտեսության կայուն երեք տոկոսանոց աճ: Եթե դա տեղի չունենա, ապա ԱՄՆ դաշնային պարտքը էլ ավելի մեծ կլինի: Այստեղ տեղին է հիշել Միացյալ Նահանգների քառասուներորդ նախագահ Ռոնալդ Ռեյգանի խոսքերը, որը մի առիթով նկատել էր. «Մենք տրիլիոն դոլարի պարտք ունենք ոչ այն պատճառով, որ հարկերի բավականաչափ քանակություն չունենք: Մենք տրիլիոն դոլարի պարտք ունենք, որովհետև մենք չափից շատ ենք ծախսում»: Իսկ հիմա, ինչպես արդեն ասվեց, ԱՄՆ դաշնային պարտքը անցել է 20 տրլն դոլարը և առաջիկա տարիներին կշարունակի ավելանալ: Այսինքն՝ նորից լրիվ թափով գործի կդրվի ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի (ԴԴՀ) տպագրասարքը: Այսպիսով, մենք կարող ենք փաստել, որ ինչպես 2018թ., այնպես էլ 2019-ին ԱՄՆ Դաշնային բյուջեի ծախսերն ամփոփ տեսքով 1 տրլն 816 մլրդ դոլարով կգերազանցեն բյուջեի եկամուտները: Եվ այս ամենը հնարավոր է լոկ ԱՄՆ դոլարի գերակայության շնորհիվ՝ որպես համաշխարհային հիմնական պահուստային արժույթ: Բնականաբար, նման իրադրությունը չի կարող բավարարել այնպիսի տերությունների, ինչպիսին են Ռուսաստանը և Չինաստանը, ի դեպ՝ ինչպեսև արագ զարգացող տնտեսություն ունեցող այլ երկրների, որոնք չեն կարող համակերպվել այն բանի հետ, որ ի հաշիվ իրենց երկրների հարկատուների՝ նրանք ակամա պահում են ԱՄՆ քաղաքացիների տնտեսապես չափահովված բարձր կենսամակարդակը:

Վտանգավոր գծին է մոտենում նաև Եվրոպական միության լոկոմոտիվ երկրների պետական արտաքին պարտքը: Այսպես, The World Factbook – Central Intelligence Agency-ի [https://www.google.am/search?q=The+world+Factbook+%E2%80%93+Central+Intelligence+Agency&spell=1&sa=X&ved=0ahUKEwi60cixsYraAhXNxaYKHQdBC\\_0QkeECCCIoAA](https://www.google.am/search?q=The+world+Factbook+%E2%80%93+Central+Intelligence+Agency&spell=1&sa=X&ved=0ahUKEwi60cixsYraAhXNxaYKHQdBC_0QkeECCCIoAA) տվյալներով՝ Գերմանիայի արտաքին պարտքը (2016թ. մարտի 31-ի դրությամբ) կազմել է 5 տրլն 326 մլրդ դոլար այն դեպքում, երբ այդ երկրի ՀՆԱ-ն՝ ըստ գնողունակության պարիտետի (այսուհետ՝ ԳՈՒՊ), կազմել է 4 տրլն 150 մլրդ դոլար (2017թ. արդյունքներով), այսինքն՝ ՀՆԱ 128,3%-ը, Ֆրանսիայի արտաքին պարտքը կազմել է 5 տրլն 360 մլրդ դոլար (2016թ. մարտի 31-ի դրությամբ), այն դեպքում, երբ ՀՆԱ-ն, ըստ ԳՈՒՊ-ի, կազմել է 2 տրլն 880 մլրդ դոլար (2017թ. արդյունքներով) կամ ՀՆԱ 189,7%-ը, Իտալիայում արտաքին պարտքը կազմել է 2 տրլն 444 մլրդ դոլար (2016թ. մարտի 31-ի դրությամբ), երբ ՀՆԱ-ն, ըստ ԳՈՒՊ-ի, կազմել է 2 տրլն 307 մլրդ դոլար (2017թ. արդյունքներով) կամ ՀՆԱ 105,7%-ը: Կուզենայի ուշադրություն հրավիրել Մեծ Բրիտանիայի համապատասխան ցուցանիշների վրա: Այսպես, այդ երկրի ՀՆԱ-ն, ըստ ԳՈՒՊ-ի, 2 տրլն 880 մլրդ դոլար (2017թ. արդյունքներով) պարագայում Մեծ Բրիտանիայի արտաքին պարտքը 2016թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 8 տրլն 126 մլրդ դոլար կամ ՀՆԱ 282,2%-ը: Այսպիսով,

Եվրոգոտու առաջատար պետությունները, ինչպես նաև Մեծ Բրիտանիան կուտակել են այդ երկրների ՀՆԱ-ն էապես գերազանցող պետական պարտք:

Վերոնշյալ պետությունները, համաշխարհային պահուստային արժույթ՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի պարագայում՝ Եվրո, Մեծ Բրիտանիայի պարագայում՝ ֆունտ ստեռլինգ թողարկող երկրներ լինելով, անշուշտ, ինչպեսև ԱՄՆ-ը, որոշակի մեծ առավելություններ ունեն՝ ազգային արժույթով իրենց բյուջեների, վճարային հաշվեկշռի դեֆիցիտի ծածկման հնարավորություն: Այդ հնարավորությունն, իր հերթին, օժանդակում է այդ երկրների ազգային արտադրողների դիրքերի ամրապնդմանը համաշխարհային շուկայի մրցակցային պայքարում: Սրա հետ, անկասկած, չեն ցանկանում հաշտվել ո՛չ Չինաստանը, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ աշխարհի զարգացող մյուս տնտեսությունները: Այս պայմաններում միանգամայն կանխատեսելի է, որ համաշխարհային պահուստային արժույթների էմիտենտ-երկրները, այդ գործոնով պայմանավորված իրենց առավելությունները պահելու համար, շահագրգռված են իրենց երկրների կայունության պահպանմամբ, ինչը նրանց գրավիչ է դարձնում, մասնավորապես, պետական արժեթղթերում ներդրումների առումով՝ լինեն դրանք ԱՄՆ գանձապետական պարտավորություններ, թե Եվրամիության եվրոբոնդեր ու եվրոփոխառություններ: Վերջնարդյունքում դա նշված պետությունների համար ստեղծում է պարտքով ապրելու հնարավորություն՝ չչափակցելով, ասենք, իրենց սոցիալական ծախսերը տնօրինության տակ առկա իրական եկամուտների հետ: Նրանք, իհարկե, հասկանում են, որ ապակայունացումն աշխարհի տարբեր երկրներում անխուսափելիորեն կնպաստի այդ երկրներից ֆինանսական ռեսուրսների արտահոսքին դեպի պահուստային արժույթներ թողարկող երկրների ֆինանսական ոլորտ:

Միանգամայն սպասելի է, որ համաշխարհային արժույթների էմիտենտ-երկրների նման դիմակայությունն այն երկրներին, որոնք ընդդիմանում են նման իրավիճակին, կհանգեցնի նրանց միջև հարաբերությունների լարվածության: Ավելին, այդ երկրներն ուղղակիորեն հակառակորդներ են որակվում: Այսպես, ս. թ. հունվարի 19-ին Պենտագոնը հրապարակեց ԱՄՆ նոր պաշտպանական ռազմավարությունը, որում ամերիկյան անվտանգության հինգ գլխավոր սպառնալիքների մեջ, Պենտագոնի ղեկավար Ջեյմս Մեթիսի խոսքերով, Ռուսաստանը, Չինաստանը, ԿԺԴՀ-ն, Իրանը և ահաբեկչությունն են: Իսկ ամերիկյան ազգային հետախուզության ղեկավար Ղանեիլ Քոուբսի՝ ԱՄՆ Սենատին ուղղված զեկույցում (2018թ. մարտի 6), որը Քոուբսի 2018թ. փետրվարի 13-ի զեկույցի մի փոքր ձևափոխված տարբերակն է, մի շարք նոր մեղադրանքներ կան Ռուսաստանի Դաշնության հասցեին, որոնք հետևանք են վերջին մեկ ամսում Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների վատթարացման, որոնք հանգեցրել են փոխադարձ սպառ-

## Ա. ՉԵՂԱՄՅԱՆ

նալիքների մակարդակի աճի: Բավական է նշել, որ այդ զեկույցում 34 բացասական հիշատակություն կա Ռուսաստանի մասին (դրանցից 7-ում Ռուսաստանի հետ հիշատակվում է նաև Չինաստանը, 2-ում՝ Իրանը): Նման դիմակայությունը, համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոնների որոշ ստրատեգիաների կարծիքով, կարելի կլինի հանգուցալուծել, եթե, օրինակ, պառակտվի Եվրասիական տնտեսական միությունը՝ ապակայունացնելով իրավիճակը ԵԱՏՄ անդամ երկրներում: Եվ իհարկե, դրված է, առաջին հերթին, Ռուսաստանի Դաշնությունում իրավիճակն ապակայունացնելու խնդիրը: Սակայն նշենք, որ ս. թ. մարտի 18-ին Ռուսաստանի նախագահի ընտրություններից հետո ապակայունացման և կառավարելի քառսի վերաբերյալ այդ ռազմավարների սպասելիքները հոդս ցնդեցին, բայց Ռուսաստանի դաշնակից երկրներում վիճակն ապակայունացնելու կամ էլ նրանց միջև վստահությունը սասանելու այդ հարցերը բնավ հանված չեն համաշխարհային քաղաքականության ուժի որոշ կենտրոնների օրակարգից: Դրանում համոզվելու համար բավական կլինեն ծանոթանալ ս. թ. մարտի 15-ին Կենտրոնական Ասիայի երկրների ղեկավարների՝ Աստանայում կայացած հանդիպման վերաբերյալ հրապարակված հոդվածների և դրանց մեկնաբանությունների խորագրերի առատությանը: Ինչպես նշվում էր էլեկտրոնային պարբերականներից մեկում, «վերջերս հանդիպեցին (Կենտրոնական Ասիայի երկրների ղեկավարները – Ա.Գ.)՝ առաջին անգամ առանց Ռուսաստանի մասնակցության՝ տարածաշրջանի երկրների միջև միասնականություն, անկախություն և համագործակցություն ցուցադրելով, ասում են տնտեսագետները և քաղաքագետները» (<http://inozpress.kg/news/view/id/52660>): Մտահոգիչ է այն, որ Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղըզստանի, Տաջիկստանի նախագահները և Թուրքմենստանի խորհրդարանի նախագահը համակարծիք էին այն հարցում, թե «ամենազլխավորն այն է, որ մենք ունենք ընդհանուր ըմբռնում և ցանկություն՝ ընդլայնելու մեր գործընկերությունը, և ընդառաջ գնալ մեկս մյուսին: Ուստի մենք պայմանավորվեցինք ամեն տարի մեզ համար մեծ տոնի՝ Նավրուզի (մուսուլմանների ժողովրդական տոն, որը նվիրվում է զարնանային գիշերահավասարին) նախօրեին կանոնավոր կերպով նման հանդիպումներ անցկացնել», – հանդիպումից հետո լրագրողներին ասել է Նուրսուլթան Նազարբաևը՝ համաձայն նրա պաշտոնական կայքում արված հայտարարության:

Միևնույն ժամանակ, կուզենայի նշել, որ վերջին ժամանակներս դժվարացել են առևտրային հարաբերությունները ԱՄՆ-ի և Եվրոպայի միջև այն բանից հետո, երբ ս. թ. մարտի 8-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ստորագրեց կարգադրություն պողպատի ներկրման 25% և ալյումինիումի ներկրման 10% մաքսատուրք մտցնելու մասին: ԳԴՀ նախարարների կաբինետի ներկայացուցիչ Գեորգ Շթրայթերն ասել է. «Մենք այդ մաքսատուրքերը համարում ենք հակաօրինական, մենք կքննարկենք, թե ինչպես ար-

ծագանքենք դրանց... Դրանք պարույրը ձգելու վտանգ են պարունակում... Միակողմանի միջոցների ընդունումը պողպատածուլման և այլումինիումի արդյունաբերության մեջ ավելորդ արտադրահզորությունների խնդրի լուծման սխալ ճանապարհ է»: Մաքսատուրքեր մտցնելը, իհարկե, զայրացրեց Եվրոպային, ուստի ԱՄՆ-ը ստիպված էր հայտարարել մինչև ս. թ. մայիսի 1-ը այդ տուրքերը մտցնելու ժամկետը հետաձգելու մասին:

Այսքան հանգամանալիորեն անդրադարձա անվտանգության մարտահրավերներին այն նպատակով, որպեսզի Պետական դումայի մեր գործընկերների հետ համատեղ մշակենք խորհրդարանական, հանրային դիվանագիտության կազմակերպման որակապես նոր մոտեցումներ: Կարծում եմ՝ բոլորը կհամաձայնեն, որ հրատապ է շտապ սկսել այդ աշխատանքը: Եթե մենք կենտրոնանանք լոկ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև համագործակցության հաջողված դրական փորձի լուսաբանման և տարածման ավանդական ձևերի վրա, ինչը, անշուշտ, կարևոր է և անհրաժեշտ, բայց դրա հետ մեկտեղ՝ համաձայնեցված կերպով չարձագանքենք մեր երկրներից յուրաքանչյուրի անվտանգության մարտահրավերներին և սպառնալիքներին, ապա մեր ջանքերը, ըստ իս, անբավարար կլինեն: Կարծում եմ, մեզ համար կարևոր է հասկանալ, որ լարված հարաբերությունները ԱՄՆ-ի և Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Չինաստանի միջև երկարատև բնույթ են ունենալու: Ես կարծում եմ, որ բնավ հարթ չեն լինելու նաև առևտրային հարաբերություններն ԱՄՆ-ի ու Եվրամիության միջև: Համարձակվում եմ նման կանխատեսումներ հնչեցնել՝ ելնելով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ելույթից: Այսպես, 2017թ. հունվարի 20-ին Դոնալդ Թրամփը Կապիտոլիումում հանդես եկավ երդմնակալության խոսքով: Ընթերցողին հիշեցնենք նրա ելույթի որոշ առանցքային պահեր.

«Ամերիկան նորից մեծ դարձնենք». այս կարճ կարգախոսով ավարտեց ելույթը Թրամփը: «Միասին մենք Ամերիկան նորից ուժեղ կդարձնենք, մենք Ամերիկան նորից հարուստ կդարձնենք, մենք այնպես կանենք, որպեսզի Ամերիկայով նորից հպարտանան, մենք Ամերիկան նորից անվտանգ կդարձնենք, և այո, մենք Ամերիկան նորից մեծ կդարձնենք», – ասաց ԱՄՆ նախագահը:

1). «Սկսած այսօրվանից՝ նոր տեսլականը կկառավարի մեր երկիրը: Սկսած այսօրվանից՝ Ամերիկան կլինի ամենից առաջ, Ամերիկան՝ ամեն ինչից առաջ», – Դոնալդ Թրամփ:

2). «Մենք կհետևենք երկու պարզ կանոնի՝ գնիր ամերիկյանը և վարձիր ամերիկացիներին», – Դոնալդ Թրամփ:

3). Կարելի էր կարևոր այլ մեջբերումներ էլ կատարել ԱՄՆ նախագահի երդմնակալության ճառից: Բայց, կարծում եմ, որ ասվածը բավական է որոշակի հետևություններ անելու համար: Այսպես, 2017թ. ԱՄՆ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը հասավ 566,0 մլրդ դոլարի, այն դեպքում, երբ Չի-

## Ա. ՊԵՐԱՄՅԱՆ

նաստանի հետ առևտրի դեֆիցիտը կազմում էր 375,2 մլրդ դոլար՝ հասնելով ռեկորդային մակարդակի այդ երկու երկրների միջև առևտրային հարաբերությունների պատմության մեջ: ԱՄՆ արտաքին առևտրի ընդհանուր դեֆիցիտը 2017թ., 2016թ. համեմատ, աճել է 12,1%-ով: Այս պայմաններում թե ինչի կվերածվի *գնիր ամերիկյանը և վարձիր ամերիկացիներին* կարգախոսը ԱՄՆ առևտրային գործընկերների համար՝ դժվար չէ կռահել:

Ահա, այս իրողությունների պայմաններում մենք պետք է աշխատենք, ավելին՝ կարողանանք կշռադատված, գրագետ ձևով պատասխանել ԵԱՏՄ-ի վրա անխուսափելի հարձակումներին: Ըստ իս, դա փայլուն հաջողվում է Հայաստանի Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանին, որովհետև նա նրբին աշխատանք է տանում Արևմուտքի գործընկերների հետ: Հայաստանը, Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը լինելով, մշտապես հայտարարում է այդ մասին: Միաժամանակ, մեր երկրի քաղաքական ղեկավարությունն ընդգծում է, որ դա բնավ չի նշանակում, թե Հայաստանի և Ռուսաստանի դաշնակցային հարաբերությունները կհանգեցնեն, մասնավորապես, Հայաստանի և Եվրամիության, Հայաստանի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների և համաշխարհային քաղաքականության ուժի այլ կենտրոնների միջև հարաբերությունների սառեցմանը: Եվ ահա այս համատեքստում էլ, ըստ իս, պետք է իրականացվի ժողովրդական դիվանագիտությունը, որն արդեն մեկ տարի չէ, ինչ կազմում է Հայաստանի հանրային դիվանագիտության բովանդակությունը: Այն պետք է հենվի այդ երկույթի վրա, որը վկայում է այն մասին, որ չկան անհաղթահարելի հակասություններ պետությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, Եվրամիության ու Ռուսաստանի միջև:

Դրա վկայությունն է այն փաստը, որ Ռուսաստանի մերձավորագույն դաշնակիցը՝ Հայաստանը, կառուցել և կառուցում է բնականոն, կառուցողական փոխհարաբերություններ Եվրոպական միության հետ: Միևնույն ժամանակ, Հայաստանի և ԵՄ 25-ամյա հարաբերությունների կարևոր շրջադարձային պահ դարձավ 2017թ. նոյեմբերին Բրյուսելում «Հայաստան – ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագրի» ստորագրումը:

Ահա այն մտքերը, որոնք ցանկացա կիսել ձեզ հետ, հարգելի գործընկերներ:

Հարգելի գործընկերներ, ինձ համար սկզբունքորեն կարևոր էր Կոնստանտին Ֆեոդորովիչ Ջատուլինի գնահատականը Հայաստանի Ազգային հերոս Գարեգին Նժդեհի մասին: Ես «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահն եմ, բայց Ազգային ժողովի կազմում երկրորդ անգամ ընտրվում եմ Հայաստանի Հանրապետական կուսակցության ցուցակով, իսկ Հայաստանի խորհրդարանի կազմում ընտրվել եմ արդեն հինգերորդ անգամ: Եվ ահա, Հայաստանի Հանրապետական կուսակցությունում աչքի



լույսի պես են պահում հայ ժողովրդի հայրենասեր զավակների, այն բոլոր ազգային առաջնորդների հիշատակը, ովքեր իրենց կյանքի գնով պաշտպանել են հայերի անվտանգությունը, Հայաստանի անկախությունը: Չլինե՞ր Գարեգին Նժդեհը՝ հավատացե՞ք, չէր լինի Ջանգեզուրը Հայաստանի կազմում: Եվ այդ ժամանակ պանթուրանիզմի գաղափարախոսների փայփայած Մեծ Թուրանի, Ռուսաստանի հարավային մատույցներում և մինչև Խաղաղ օվկիանոս իսլամական աղեղի ստեղծման գաղափարն իրողություն կդառնար: Եվ Ղուբ շատ դիպուկ նկատեցիք, Կոնստանտին Ֆեոդորովիչ, որ անգամ ստալինյան անողոք արդարադատությունը, երբ նույնիսկ ամենաաննշան զանցանքի համար մարդկանց առանց դատ ու դատաստանի գնդակահարում էին, մահվան դատավճիռ չկայացրեց Գարեգին Նժդեհի համար, նա մահապատժի չդատապարտվեց: Եվ մեզ համար շատ կարևոր էր, երբ Ռուսաստանի առաջատար քաղաքական գործիչներից մեկն այդ մասին խոսում է պատմության լիակատար իմացությամբ, խոսում է շիտակ և շատ անկեղծ, բաց, ի լուր բոլորի: Ավելին, որպեսզի իր ասածը շատ ավելի համոզիչ լինի, Կոնստանտին Ֆեոդորովիչն օրինակ բերեց իր հայրենակցի՝ Ռուսաստանի կայսերական բանակի գեներալ-մայոր, Ղոնի Ամենամեծ զորքերի ատաման (атаман Всевеликого Войска Донского), գրող և հրապարակախոս Պյոտր Նիկոլաևիչ Կրասնովի ողբերգական պատմությունը, որը, ինչպես գրված է դատավճռում, «իր կազմավորած սպիտակզավարդիական ջոկատների միջոցով զինված պայքար էր մղում Խորհրդային Միության դեմ և ակտիվ լրտեսական-դիվերսիոն ու ահաբեկչական գործունեություն էր իրականացնում ԽՍՀՄ-ի դեմ» և որին կատարած հանցագործությունների համար մահապատժի դատապարտեցին: Մինևույն ժամանակ, որոշակի հարցերում Պյոտր Կրասնովը, ինչպես արդարացիորեն նկատեց Կ. Ֆ. Ջատուլինը, իհարկե, արժանի է հարգանքի. նկատի է առնվում նրա գրական ժառանգությունը: Եվ ահա հենց այսպիսի ազնիվ և բաց խոսակցությունն էլ շատ բանով բարձրացնում է վստահելիության աստիճանը մեր երկրների խորհրդարանականների հարաբերություններում: Հարկ է ընդունել նաև, որ մեր երկրների խորհրդարանականների միջև ազնիվ և շիտակ հարաբերությունների փարոս են հանդիսանում, անշուշտ, Ռուսաստանի ու Հայաստանի նախագահների միջև հաստատված սկզբունքային, բարյացակամ հարաբերությունները: Մեր երկրների խորհրդարանականների միջև հաստատված հարաբերությունների նոր որակի դրսևորումներից մեկն է մեր բանավեճերի ավելի խոր բովանդակության հաստատումը, որը ցայտուն երևում է Համատեղ նիստերի ժամանակ:

Շնորհակալություն:

Հարգելի գործընկերներ, ավարտելով սույն հոդվածիս վրա աշխատելը՝ ականա մտածեցի, թե ինչպես վերնագրեմ այն: Չէ՞ որ ինձ համար կարևոր է, որպեսզի այս հոդվածի միջոցով ընթերցողներին հասցնեմ Հայաստանի

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Հանրապետության Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերի, եվրասիական ինտեգրացիայի և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի Համատեղ նիստի ընթացքում կայացած բանավեճի իրադրությունը, ոգին և բովանդակությունը: Չեմ թաքցնի, որ իմ ընկալմամբ Հայաստանի և Ռուսաստանի խորհրդարանականների կայացած համաժողովն առավել տարողունակ ձևով կարելի է հակիրճ վերնագրել, բնորոշել մի կարճ նախադասությամբ՝ «Մենք մի թիմ ենք»:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

«Արմենպրես», 27. 03. 2018:

## АРТАШЕС ГЕГАМЯН: РАЗМЫШЛЕНИЯ О ПУТЯХ ДОСТИЖЕНИЯ ОБЩЕНАЦИОНАЛЬНЫХ ЦЕЛЕЙ НА ОСНОВЕ ИНКЛЮЗИВНОГО РАЗВИТИЯ

4 апреля 2018 года у Президента Республики Армения Сержа Азатовича Саргсяна состоялось совещание, на котором обсуждался переработанный и дополненный вариант проекта «Стратегия развития Армении 2030» (далее – Стратегия). Широкое обсуждение Стратегии еще впереди, но уже сегодня, на мой взгляд, очень важно осмыслить отдельные принципиальные вопросы и положения, озвученные в ходе состоявшегося обсуждения. Здесь в первую очередь хотелось бы обратить внимание на качественно новый подход Сержа Саргсяна в определении путей достижения перспективных целей развития Армении. «В частности, хочу подчеркнуть необходимость устойчивого и высокого инклюзивного экономического роста, который должен быть ощутимым для каждого гражданина Армении, а также для достижения наших общенациональных целей», – сказал Президент С. Саргсян. То, что глава государства достижение общенациональных целей связывает с инклюзивным экономическим ростом, вселяет уверенность в их реализуемость. Поэтому несколько подробнее остановимся на вопросе, что же понимать под инклюзивным экономическим развитием.

Так, в отчете Всемирного экономического форума (далее – WEF), который состоялся 23 – 26 января т.г. в Давосе, эксперты задались вопросом: насколько объективно определять «здоровье экономики» лишь по показателю роста валового внутреннего продукта (далее – ВВП), который скрывает на самом деле имеющиеся острые проблемы, в том числе и неравенство. В отчете WEF недвусмысленно говорится, что ВВП – недостаточный показатель экономических достижений. «Десятилетия предпочтения простого экономического роста перед социальным равенством в качестве меры оценки привели к самым исторически высоким уровням неравенства в доходах» – говорится в отчете WEF. В этой связи был предложен ряд новых индикаторов, наиболее объективно характеризующих экономическое положение, включая так называемый инклюзивный индекс развития (Inclusive development index, IDI). Этот подход WEF, на

## А. ГЕГАМЯН

мой взгляд, объективно востребован и для нас, то есть назрела необходимость пересмотра подходов при оценке экономического развития, так как использование ВВП в качестве основного экономического показателя отражает лишь текущее производство товаров и услуг, а не степень, в которой экономика способствует более широкому социально-экономическому прогрессу. Эти вопросы были предметом рассмотрения в моих предыдущих публикациях. Так, в статьях «Арташес Гегамян: Поиск мудрости через примирение противоположностей и баланс – критерии процветания Армении» и «Арташес Гегамян: Назрела необходимость экономического анализа с учетом долговых заимствований», опубликованных Государственным информационным агентством «Арменпресс», уже приходилось писать о необходимости осмысления того, каковы же реальные факторы, определяющие реальный рост благосостояния населения Республики Армения. Эти вопросы приобретают для нашей страны особую остроту хотя бы по той причине, что в условиях высоких показателей социально-экономического развития (имеется в виду рост ВВП) РА в 2017 г., а также в январе-феврале 2018 г. (по данным Национальной статистической службы РА показатель экономической активности в январе-декабре 2017 г. в сравнении с тем же периодом 2016 г. составил 107,2%, а в январе-феврале 2018 г. в сравнении с тем же периодом 2017 г., соответственно, 108,6%) тем не менее немалая часть населения Армении не ощущает существенных положительных изменений в своей каждодневной жизни. И это при том, что был отмечен значительный рост в промышленности, в торговле и сфере услуг. Повторюсь, при весомых показателях роста ВВП в РА все еще сохраняется высокий уровень бедности. По данным Национальной статистической службы РА (далее – НСС РА) в 2016 году по сравнению с 2015 годом уровень бедности в Армении снизился лишь на 0,4% и составил 29,4%. Здесь можно было бы вспомнить и другое. Так, в Юбилейном докладе Римского клуба «Come On! Капитализм, близорукость, население и разрушение планеты», представленном в ноябре 2017 г., его авторы также ставили под сомнение универсальность показателя ВВП в качестве главного макроэкономического показателя, характеризующего уровень социально-экономического развития стран. А известная консалтинговая компания Award Group, предоставляющая консультационные услуги по многим бизнес-вопросам, как-то: инвестирование, открытие бизнеса и его стратегическое развитие, менеджмент и финансовое управление, информационные технологии, – вполне закономерно рекомендует увязывать показатели роста ВВП с данными о внешних заимствованиях в экономике данного государства. А далее лишь на основе этого анализа приходит к выводу: ВВП, рассчитанный по общепринятой методике, не отражает реальное положение дел в экономике, при этом

оставляет без ответа вопрос о том, какая часть этого роста стала возможной благодаря новым заимствованиям. И думается, что и это также вполне оправданный подход.

Так вот вновь обращаясь к WEF, в ходе которого была представлена альтернативная система оценки экономического развития стран мира на основе ряда показателей, известных, повторюсь, как индекс инклюзивного развития (Inclusive Development Index, IDI), отметим, что IDI учитывает не только показатель ВВП, но еще 11 параметров, которые, по мнению авторов этого подхода, наиболее полно отражают реальное положение дел в экономике той или иной страны. Эти 12 показателей (параметров) IDI разделены на три группы.

Первая группа параметров объединена под заголовком «Рост и развитие» и включает в себя четыре показателя, а именно: 1) ВВП на душу населения (в долларах США на 2010 год); 2) производительность труда – ВВП на одного занятого (в долларах США); 3) ожидаемая средняя продолжительность жизни (годы); 4) занятость населения трудоспособного возраста (указывается в процентах).

Во второй группе параметров, озаглавленной «Инклюзивность», отмечены: 1) коэффициент расслоения (распределенности) доходов в обществе (0–полное равенство, 100–полное неравенство); 2) уровень бедности; 3) коэффициент расслоения общества по распределению богатства (0–полное равенство, 100–полное неравенство); 4) медианный ежедневный расход домохозяйств (показатель, основанный на покупательной способности, он делит население страны на две половины: тех, кто тратит выше и ниже этой планки).

В третьей, заключительной, группе характеристик под общим названием «Преемственность поколений и устойчивость развития» представлены: 1) скорректированные чистые сбережения (рассчитываются по схеме: запасы природных богатств плюс расходы на образование и минус потребление ресурсов, истощение запасов энергии, ущерб от выбросов, указываются в процентах от валового национального продукта); 2) парниковый эффект ВВП (показатель выброса CO<sub>2</sub> за каждый доллар валового внутреннего продукта, который производит экономика страны); 3) размер государственного долга (в процентах от ВВП); 4) демографическая нагрузка (соотношение граждан-иждивенцев в возрасте от 0 до 15 и старше 64 лет на общее количество трудоспособного населения).

Из всех вышеприведенных 12 показателей сначала складываются 3 групповые характеристики, а уже после их сложения получается итоговый показатель как среднее арифметическое. Я столь подробно остановился на показателях индекса инклюзивного развития вполне осознанно, так как если анализировать экономическое положение Армении в их свете, то

## А. ГЕГАМЯН

следует отметить, что, в соответствии с индексом инклюзивного развития, отдельные экономические показатели, которые сегодня характеризуются органами исполнительной власти РА в качестве факторов экономического роста, приобретают несколько иное, скорее отрицательное, чем положительное значение. Именно этим обстоятельством и обусловлена необходимость осуществить переход на инклюзивное экономическое развитие, что было положено в сердцевину задач, поставленных Сержем Азатовичем Саргсяном в своем выступлении при обсуждении Стратегии – 2030. «Мы договорились, что до 2030 года будем прилагать усилия для развития человеческого капитала, то есть мы должны значительно увеличить выделяемые на образование и здравоохранение суммы. Мы взяли на себя обязательство и должны включить в программу (имеется в виду Стратегия. – А. Г.) создание до 2030 года нескольких сотен тысяч рабочих мест, которые обеспечат высокие заработные платы. В программу особо должен быть включен вопрос сокращения безработицы среди молодежи: если не сказать, что она будет доведена до нуля, то во всяком случае – значительно сокращена... Мы должны достигнуть существенного снижения бедности», – сказал в своем выступлении С. Саргсян.

Таблица 1

	Инвестиции в основной капитал (за счёт всех источников финансирования) млрд драмов	Валовой внутренний продукт млрд драмов
	январь-декабрь	
2007	671,0	3149,3
2008	858,7	3568,2
2009	579,7	3141,7
2010	588,8	3460,2
2011	504,8	3777,9
2012	479,4	4000,7
2013	453,4	4276,2
2014	463,9	4828,6
2015	481,5	5043,6
2016	410,6	5079,9
2017	415,9	5580,1

Несколько подробнее остановимся на отдельных факторах IDI. Правительство, руководимое премьер-министром Кареном Карапетяном, обещало в 2017 году привлечь до 850 млн долларов инвестиций. Заме-

тим, что какие-то из методик расчета включают в графу «инвестиции» среди прочего и целевые зарубежные кредиты, часть которых идет на инвестиции в основной капитал, а также капитальные вложения (новые дороги, системы орошения и др.), кредитные программы для бизнеса (то есть направляемые на пополнение активов банков). В свою очередь государство вкладывает денежные средства в развитие человеческого капитала. И это понятно. Вместе с этим следует отметить, что, к сожалению, все еще не налажена система определения эффективности инвестиций в основной капитал и в реализацию инфраструктурных проектов. Чтобы не быть голословным, приведем некоторые данные за 2007 – 2017 гг., опубликованные Межгосударственным статистическим комитетом СНГ.

Приведем также и динамику показателей государственного долга Республики Армения (внутреннего и внешнего), опубликованную в сборниках Национальной статистической службы РА «Социально-экономическое положение Республики Армения в январе-декабре 2014, 2015, 2016, 2017 гг.».

Таблица II

Государственный долг РА (внутренний и внешний)

млн. драмов

	31.12.2014	31.12.2015	31.12.2016	31.12.2017
Государственный долг РА	2109590,8	2453111,5	2872075,6	3279585,9
в том числе:				
Внешний долг	1797860,5	2084748,1	2325616,0	2660083,6
в том числе:				
долг Правительства РА	1588895,8	1854320,3	2081388,6	2368877,3
Долг ЦБ РА	208964,7	230427,8	244227,4	291206,3
Внутренний долг РА	311730,3	368363,3	550001,4	619502,4
Курс 1 доллара США в среднем за январь-декабрь	431,32	477,92	480,49	482,72

Из таблицы I следует, что ВВП за январь-декабрь 2017 г. в сравнении с тем же периодом 2016 г. вырос на 500,2 млрд драмов. В то же время из таблицы II следует, что при этом государственный долг РА за этот же период вырос на 407 млрд 510 млн драмов. Далее, если в 2016 году соотношение государственного долга к ВВП составляло 56,53%, то в 2017 г. – соответственно 58,77%. Отметим также, что в соответствии с таблицей I инвестиции в основной капитал за 2016 и 2017 годы были самыми низкими за последние 10 лет. Таким образом, если оценивать деятельность исполнительной власти с учетом хотя бы этих показателей, содержащихся в IDI, то показатели роста ВВП и инвестиций в основной капитал, имевшего место в 2017 году, мягко выражаясь, вызывают не восторг, а глубоко-

## А. ГЕГАМЯН

кое уныние. Можно было бы и дальше проанализировать и другие отдельные показатели IDI на примере экономики Армении с тем, чтобы со всей убедительностью подтвердить актуальность задачи, поставленной Президентом Армении Сержем Саргсяном о безальтернативности достижения общенациональных целей на основе именно инклюзивного экономического развития.

В заключение хотелось бы поблагодарить Президента Армении Сержа Азатовича Саргсяна за значительный вклад в оздоровление внутривнутриполитической обстановки в Армении, за продуманную и глубоко взвешенную внешнюю политику нашей страны, за ощутимый рост международного авторитета Республики Армения, за принуждение Азербайджана к миру и многое, многое другое, чего он добился за прошедшие 10 лет в должности Президента Республики Армения. А главное, пожелать Сержу Азатовичу дальнейшего прямого руководства Арменией для гарантированного достижения реализации озвученных им же общенациональных целей на основе инклюзивного экономического развития.

P.S. Увлечшись написанием этой статьи, я чуть было не допустил непростительную ошибку, а именно: впрямую не увязал, на мой взгляд, ее актуальность с главной темой сегодняшнего дня – Праздником материнства и красоты. Поэтому, пользуясь представленной возможностью, от всего сердца поздравляю дорогих женщин с этим светлым праздником. При этом выражаю абсолютную готовность приложить все свои знания, энергию и опыт в дело защиты и процветания Армении, свято помня непреходящую истину, о которой справедливо отметил Президент РА С.А.Саргсян по случаю Праздника в своем поздравительном послании от 7 апреля 2018 года: «Еще начиная с Аварайра армянские сыны шли на бой защищать наши величайшие ценности – семью, Отечество, веру. На протяжении столетий в наших боевых кличах звучала одна и та же формула: защитить матерей, сестер, невест – означает защитить Отечество и веру».

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»



## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՌԻԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄԱՆ ԿՐԱ

2018թ. ապրիլի 4-ին Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ քննարկվեց «Հայաստանի զարգացման ռազմավարություն – 2030» նախագծի (այսուհետ՝ Ռազմավարություն) լրամշակված տարբերակը: Ռազմավարության լայն քննարկումը դեռ առջևում է, բայց այսօր արդեն, ըստ իս, շատ կարևոր է իմաստավորել կայացած քննարկման ընթացքում բարձրաձայնված առանձին սկզբունքային հարցերը և դրույթները: Այստեղ, առաջին հերթին, կուզենայի ուշադրություն հրավիրել Հայաստանի զարգացման հեռանկարային նպատակներին հասնելու ուղիների վերաբերյալ Սերժ Սարգսյանի որակապես նոր մոտեցման վրա: «Մասնավորապես, ցանկանում եմ ընդգծել կայուն և բարձր ներառական տնտեսական աճի ապահովումը, որը զգալի պետք է լինի Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար, ինչպես նաև մեր համազգային նպատակներին հասնելու համար», – ասաց Նախագահ Ս. Սարգսյանը: Այն, որ պետության ղեկավարը համազգային նպատակներին հասնելը կապում է ներառական տնտեսական աճի հետ, դրանց իրականացման հանդեպ վստահություն է ներշնչում: Ուստի, մի փոքր ավելի հանգամանալիորեն կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչ պետք է հասկանալ ներառական տնտեսական զարգացում ասելով:

Այսպես, Համաշխարհային տնտեսական ֆորումի (այսուհետ՝ WEF) հաշվետվությունում, որը տեղի է ունեցել ս. թ. հունվարի 23 – 26-ին Դավոսում, փորձագետները հետևյալ հարցն են բարձրացրել. որքանով է օբյեկտիվ «տնտեսության առողջությունը» որոշել լոկ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի ցուցանիշով, որն իրականում թաքցնում է առկա սուր խնդիրները, այդ թվում և անհավասարությունը: WEF հաշվետվությունում ոչ երկիմաստորեն ասվում է, որ ՀՆԱ-ն տնտեսական ձեռքբերումների բավարար ցուցանիշ չէ: «Սոցիալական հավասարության հանդեպ պարզ տնտեսական աճը որպես գնահատման միջոց գերադասելու տասնամյակները հանգեցրին եկամուտների մեջ անհավասարության պատմականորեն ամենաբարձր մակարդակների», – ասվում է WEF հաշվետվությունում: Այս առնչությամբ առաջարկվեցին մի շարք նոր ցուցիչներ, որոնք առավել

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

օբյեկտիվ են բնութագրում տնտեսական դրությունը, ներառյալ, այսպես կոչված, զարգացման ներառական ինդեքսը (Inclusive development index, IDI): WEF այս մոտեցումը, իմ կարծիքով, օբյեկտիվորեն պահանջված է նաև մեզ համար, այսինքն՝ անհրաժեշտ է վերանայել տնտեսական զարգացման գնահատման մոտեցումները, քանի որ ՀՆԱ-ի՝ որպես հիմնական տնտեսական ցուցանիշի օգտագործումն արտացոլում է լոկ ապրանքների և ծառայությունների ընթացիկ արտադրությունը, այլ ոչ թե այն աստիճանը, որում տնտեսությունը նպաստում է ավելի լայն սոցիալ-տնտեսական առաջընթացին: Այս հարցերն են եղել իմ նախորդ հրապարակումների քննարկման առարկան: Այսպես, «Արտաշես Գեղամյան. Իմաստնության որոնումը հակադրությունների հարթման միջոցով և հավասարակշռությունը Հայաստանի բարգավաճման չափանիշներն են» և «Արտաշես Գեղամյան. Հասունացել է պարտքային պարտավորությունների հաշվառմամբ տնտեսական վերլուծություն կատարելու անհրաժեշտությունը» հոդվածներում, որոնք հրապարակվել են «Արմենպրես» պետական լրատվական գործակալության կողմից, արդեն գրել են այն մասին, որ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպիսին են իրական այն գործոնները, որոնցով որոշվում է Հայաստանի Հանրապետության բնակչության բարեկեցության իրական աճը: Այս հարցերը մեր երկրի համար հատուկ սրություն են ձեռք բերում թեկուզև այն պատճառով, որ սոցիալ-տնտեսական զարգացման բարձր ցուցանիշների պայմաններում (նկատի ունեմ ՀՆԱ աճը) ՀՀ-ն 2017թ., ինչպես նաև 2018թ. հունվար-փետրվարին (ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը 2017թ. հունվար-դեկտեմբերին, 2016թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, կազմել է 107,2%, իսկ 2018թ. հունվար-փետրվարին, 2017թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, համապատասխանաբար՝ 108,6%), այնուամենայնիվ, Հայաստանի բնակչության այնքան էլ փոքր մասը չէ, որ էական դրական փոփոխություններ չի զգում իր ամենօրյա կյանքում: Եվ սա՝ այն դեպքում, երբ նկատվել է զգալի աճ արդյունաբերությունում, առևտրում և սպասարկումների ոլորտում: Կրկնում են, ՀՀ-ում ՀՆԱ-ի աճի պատկառելի ցուցանիշների պարագայում դեռևս պահպանվում է աղքատության բարձր մակարդակը: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) տվյալներով՝ 2016թ., 2015թ. համեմատ, աղքատության մակարդակը Հայաստանում կրճատվել է լոկ 0,4%-ով և կազմել է 29,4%: Այստեղ կարելի է հիշել մեկ այլ բանի մասին ևս: «Հռոմի ակումբի» «Come On! Կապիտալիզմը, կարճատեսությունը, բնակչությունը և մոլորակի կործանումը» Հոբեյանական զեկույցի (ներկայացված 2017թ. նոյեմբերին) հեղինակները նույնպես կասկածի տակ են առել երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ՀՆԱ-ի՝ որպես գլխավոր մակրոտնտեսական ցուցանիշի, ունիվերսալությունը: Իսկ հայտնի քոնսալթինգային Award Group ընկերությունը, որը խորհրդատվական ծառայություններ է մատուցում բազմաթիվ բիզնես-հարցերի

վերաբերյալ, ինչպիսին են՝ ներդրումավորումը, բիզնես բացելը և նրա ռազմավարական զարգացումը, մենեջմենթն ու ֆինանսական կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաները, միանգամայն օրինաչափորեն խորհուրդ է տալիս ՀՆԱ աճի ցուցանիշները շաղկապել սույն պետության տնտեսությունում արտաքին փոխառությունների հետ: Հետո արդեն, միայն այդ վերլուծության հիման վրա գալիս է այն եզրահանգման, որ բոլորի կողմից ընդունված մեթոդաբանությամբ հաշվարկված ՀՆԱ-ն չի արտացոլում տնտեսության իսկական իրավիճակը, ընդ որում՝ անպատասխան է թողնում այն հարցը, թե այդ աճի որ մասն է հնարավոր դարձել շնորհիվ նոր փոխառությունների: Եվ կարծում են, որ սա նույնպես միանգամայն արդարացված մոտեցում է:

Եվ ահա, կրկին դիմելով WEF-ին, որի ընթացքում ներկայացվեց աշխարհի երկրների տնտեսական զարգացման գնահատման այլընտրանքային համակարգը՝ մի շարք այնպիսի ցուցանիշների հիման վրա, որոնք հայտնի են, կրկնում են, որպես ներառական զարգացման ինդեքս (Inclusive development index, IDI), նշենք, որ IDI-ն հաշվի է առնում ոչ միայն ՀՆԱ ցուցանիշը, այլև 11 բնութագրիչներ նույնպես, որոնք, այս մոտեցման հեղինակների կարծիքով, առավել լիովին են արտացոլում այս կամ այն երկրի իրական տնտեսական վիճակը: IDI այդ 12 ցուցանիշները (բնութագրիչները) բաժանվում են երեք խմբի:

Բնութագրիչների առաջին խումբը միավորված է «Աճ և զարգացում» խորագրի ներքո ու ներառում է չորս ցուցանիշ, դրանք են. 1. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (ԱՄՆ դոլարը 2010թ. արժեքով), 2. աշխատանքի արտադրողականությունը՝ մեկ աշխատողին բաժին ընկնող ՀՆԱ-ն (ԱՄՆ դոլարով), 3. կյանքի ակնկալվող միջին տևողությունը (տարի), 4. աշխատուճակ տարիքի բնակչության զբաղվածությունը (նշվում է տոկոսներով):

Բնութագրիչների երկրորդ խմբում, որը վերնագրված է «Ներառականություն», նշվում են՝ 1. հասարակությունում եկամուտների շերտավորման (բաշխվածության) գործակիցը (0 – լիակատար հավասարություն, 100 – լիակատար անհավասարություն), 2. աղքատության մակարդակը, 3. հասարակության շերտատման գործակիցն ըստ հարստության բաշխման (0 – լիակատար հավասարություն, 100 – լիակատար անհավասարություն), 4. տնային տնտեսությունների միջին ամենօրյա ծախսը (գնողունակության վրա հիմնված ցուցանիշը, սա եկամուտի այն մակարդակն է, որը բնակչության ամբողջությունը բաժանում է երկու հավասար մասի. բնակչության կեսն ունի մեկ շնչին ընկնող միջինից ցածր, մյուս կեսը՝ միջինից բարձր եկամուտ):

Բնութագրիչների երրորդ՝ վերջին խմբում, որի ընդհանուր խորագիրն է՝ «Սերունդների հաջորդականությունը և զարգացման կայունությունը», ներկայացված են. 1. բնակչության ճզգրտված զուտ խնայողությունները (հաշվարկվում են բնական հարստությունների պաշարներ՝ գումարած

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կրթության ծախսեր՝ հանած ռեսուրսների սպառում, էներգիայի պաշարների սպառում, վնասներ արտանետումներից սխեմայով, նշվում են համախառն ներքին արդյունքի տոկոսներով), 2. ՀՆԱ ջերմոցային էֆեկտը (CO<sub>2</sub>-ի արտանետումների ցուցանիշը ներքին համախառն արդյունքի յուրաքանչյուր մեկ դոլարի դիմաց, որն արտադրում է երկրի տնտեսությունը), 3. պետական պարտքի չափը (ՀՆԱ տոկոսով), 4. ժողովրդագրական ծանրաբեռնվածությունը (1-15 և 64-ից բարձր տարիքի խնամառու քաղաքացիների հարաբերակցությունը աշխատունակ բնակչության ընդհանուր թվաքանակի հետ):

Վերոնշյալ 12 ցուցանիշներից սկզբում կազմվում են 3 խմբային բնութագրիչներ, և դրանց գումարումից հետո արդեն ստացվում է ամփոփ ցուցանիշը՝ որպես միջին թվաբանական: Միանգամայն գիտակցված այսքան մանրամասն կանգ առա ներառական զարգացման ինդեքսի ցուցանիշների վրա, քանի որ, եթե վերլուծենք Հայաստանի տնտեսական դրությունը դրանց համատեքստում, ապա պետք է նշենք, որ ներառական զարգացման ինդեքսին համապատասխան՝ առանձին տնտեսական ցուցանիշներ, որոնք այսօր ՀՀ գործադիր իշխանության մարմինների կողմից բնորոշվում են որպես տնտեսական աճի գործոններ, փոքր-ինչ այլ, ավելի շուտ՝ բացասական, քան թե դրական նշանակություն են ստանում: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված է ներառական տնտեսական զարգացման անցնելու անհրաժեշտությունը, ինչը դրված էր Ռազմավարություն – 2030-ի քննարկման ժամանակ Սերժ Ազատի Սարգսյանի ելույթում առաջադրված խնդիրների կիզակետում: «Մենք պայմանավորվեցինք, որ մինչև 2030 թվականը ջանքեր ենք գործադրելու մարդկային կապիտալի զարգացման համար, այսինքն՝ զգալիորեն պետք է ավելացնենք կրթությանն ու առողջապահությանը հատկացվող գումարները: Մենք մեզ վրա պարտավորություն ենք վերցրել, և ծրագրում (նկատի է առնվում Ռազմավարությունը – Ա. Գ.) պետք է ներառված լինի մինչև 2030 թվականը մի քանի հարյուր հազար աշխատատեղերի ստեղծում, որոնք կապահովեն բարձր աշխատավարձ: Ծրագրում հատկապես պետք է ներառված լինի երիտասարդների շրջանում գործազրկությունը՝ եթե չասեն զրոյի հասցնելու, համենայնդեպս, զգալիորեն կրճատելու հարցը... Մենք պիտի հասնենք աղքատության էական նվազման», – իր ելույթում ասաց Ս. Սարգսյանը:

Փոքր-ինչ հանգամանալիորեն կանգ առնենք IDI-ի որոշ գործոնների վրա: Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորած կառավարությունը խոստացել էր 2017թ. մինչև 850 մլն դոլարի ներդրումներ ներգրավել: Նշենք, որ հաշվարկի ինչ-որ մեթոդիկաներ «ներդրումներ» սյունակում, ի թիվս այլ կետերի, ներառում են նաև նպատակային օտարերկրյա վարկերը, որոնց մի մասը տրամադրվում է հիմնական կապիտալի ներդրումներին, ինչպես նաև կապիտալ ներդրումները (նոր ձանապարհներ, ոռոգման համակարգեր և այլն), վարկային ծրագրեր բիզնեսի համար (այսինքն՝ բանկերի

ակտիվների համալրմանն ուղղվող): Իր հերթին՝ պետությունը դրամական միջոցներ է ներդնում մարդկային կապիտալի զարգացման մեջ: Եվ դա հասկանալի է: Սրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ, ցավոք, դեռևս չի մշակվել հիմնական կապիտալում և ենթակառուցվածքային նախագծերի իրագործման մեջ ներդրումների արդյունավետության որոշման համակարգը: Որպեսզի ասվածը մերկապարանոց չինչի, 2007 – 2017թթ. որոշ տվյալներ ներկայացնենք՝ հրապարակված ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից:

Աղյուսակ I

	Ներդրումներ հիմնական կապիտալում (ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին) մլրդ դրամ	Համախառն ներքին արդյունք մլրդ դրամ
<b>հունվար-դեկտեմբեր</b>		
2007	671,0	3149,3
2008	858,7	3568,2
2009	579,7	3141,7
2010	588,8	3460,2
2011	504,8	3777,9
2012	479,4	4000,7
2013	453,4	4276,2
2014	463,9	4828,6
2015	481,5	5043,6
2016	410,6	5079,9
2017	415,9	5580,1

Ներկայացնենք նաև Հայաստանի Հանրապետության պետական պարտքի (ներքին և արտաքին) ցուցանիշների դինամիկան՝ հրապարակված ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014, 2015, 2016, 2017թթ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատուներում:

Աղյուսակ I-ից հետևում է, որ ՀՆԱ-ն 2017թ. հունվար-դեկտեմբերին, 2016թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, ավելացել է 500,2 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ, աղյուսակ II-ից երևում է, որ դրա հետ մեկտեղ, ՀՀ պետական պարտքը այդ նույն ժամանակամիջոցում ավելացել է 407 մլրդ 510 մլն դրամով: Այնուհետև, եթե 2016թ. ՀՆԱ-ի հանդեպ պետական պարտքի հարաբերակցությունը կազմել է 56,53%, ապա 2017թ.՝ համապատասխանաբար 58,77%: Նշենք նաև, որ աղյուսակ I-ի համաձայն՝ ներդրումները հիմնական կապիտալում 2016 և 2017թթ. ամենացածրն են եղել վերջին 10

**Ա. ԳԵՂԱՄՅԱՆ**

տարիների ընթացքում: Այսպիսով, եթե գնահատելու լինենք գործադիր իշխանության գործունեությունը՝ հաշվի առնելով թեկուզև IDI-ում պարունակվող այս ցուցանիշները, ապա 2017թ. ՀՆԱ աճի և հիմնական կապիտալում ներդրումների ցուցանիշները, մեղմ ասած, ոչ թե հիացնունք, այլ խոր հուսալքություն են առաջացնում: Կարելի էր շարունակել վերլուծել IDI որոշ այլ ցուցանիշներ ևս Հայաստանի տնտեսության օրինակով, որպեսզի ամենայն համոզությամբ պնդենք հենց ներառական տնտեսական զարգացման հիման վրա համազգային նպատակներին հասնելու անայլընտրանքայնության մասին Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանի առաջադրած խնդրի հրատապությունը:

*Աղյուսակ II*

**ՀՀ պետական պարտքը (ներքին և արտաքին)**

մլն դրամ

	31.12.2014	31.12.2015	31.12.2016	31.12.2017
<b>ՀՀ պետական պարտքը</b>	2109590,8	2453111,5	2872075,6	3279585,9
այդ թվում՝ <b>Արտաքին պարտքը</b>	1797860,5	2084748,1	2325616,0	2660083,6
այդ թվում՝ <b>ՀՀ կառավարության պարտքը</b>	1588895,8	1854320,3	2081388,6	2368877,3
<b>ՀՀ ԿԲ պարտքը</b>	208964,7	230427,8	244227,4	291206,3
<b>ՀՀ ներքին պարտքը</b>	311730,3	368363,3	550001,4	619502,4
<b>ԱՄՆ 1 դոլարի միջին փոխարժեքը հունվար-դեկտեմբերին</b>	431,32	477,92	480,49	482,72

Ամփոփելով՝ կցանկանայի շնորհակալություն հայտնել Հայաստանի Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանին Հայաստանի ներքաղաքական իրադրության ապաքինման մեջ ունեցած զգալի ավանդի համար, մեր երկրի կշռադատված և խորապես հավասարակշռված արտաքին քաղաքականության, Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության շոշափելի աճի, Ադրբեջանին խաղաղություն պարտադրելու և էլի շատ բաների համար, ինչին նա հասել է անցած 10 տարիներին Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնում: Եվ որ գլխավորն է՝ ցանկանալ Սերժ Ազատովիչին Հայաստանի հետագա ուղղակի ղեկավարում՝ երաշխավորված ձևով հասնելու համար իր իսկ առաջադրած համազգային նպատակներին՝ ներառական տնտեսական զարգացման հիման վրա:

P.S. Ոգևորվելով՝ հողվածս գրելիս քիչ էր մնում աններելի սխալ գործեի, այն է՝ նրա, ըստ իս, հրատապությունն ուղղակիորեն չկապեցի այսօրվա գլխավոր թեմայի՝ «Մայրության և գեղեցկության օրվա» հետ: Ուստի,

օգտվելով ընծեռված հնարավորությունից՝ ամբողջ սրտով շնորհավորում եմ թանկագին կանանց այս լուսավոր տոնի առիթով: Միևնույն ժամանակ, լիակատար պատրաստակամություն եմ հայտնում իմ բոլոր գիտելիքները, եռանդն ու փորձը ներդնելու Հայաստանի պաշտպանության և բարգավաճման գործին՝ սրբորեն հիշելով անանց ճշմարտությունը, որի մասին տոնի առիթով արդարացիորեն նշել է ՀՀ Նախագահ Ս. Ա. Սարգսյանը 2018թ. ապրիլի 7-ի իր շնորհավորական ուղերձում. «Դեռևս Ավարայրից սկսած՝ հայորդիները մարտի են գնացել պաշտպանելու մեր մեծագույն արժեքները՝ ընտանիքը, Հայրենիքը, հավատը: Հարյուրամյակներ շարունակ մեր մարտակոչերում հնչել է նույն բանաձևը՝ պաշտպանել մայրերին, քույրերին, հարսներին, նշանակում է պաշտպանել Հայրենիք և հավատ»:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

## ՈՐՊԵՏՋԻ ՆՐԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՐԿԵՆ ՈՍԿԵ ՏԱՌԵՐՈՎ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ  
(9 ԱՊՐԻԼԻ 2018 Թ.)

*ԼՐԱԳՐՈՂ – Պարոն Գեղամյան, Դուք ի՞նչ տպավորություններ ստացաք Հայաստանի Հանրապետության Չորրորդ Նախագահի երդման արարողությունից:*

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Այսօր մենք ունենք մի իրավիճակ, որը ներհատուկ է քաղաքակիրթ երկրներին: Չորրորդ Նախագահին ամենաջերմ, սրտանց խոսքերն է ասել Երրորդ Նախագահի հասցեին, ինչու չէ, դրական է արտահայտվել Առաջին ու Երկրորդ նախագահների մասին, դրանով իսկ, ըստ էության, կոչ անելով ազգովի համախմբվել: Իսկ ամբողջ ելույթի առանցքն այն էր, որ մենք թեև փոքր երկիր ենք, բայց համաշխարհային ազգ ենք: Եվ այդ գիտակցությունը գալիս է ասելու, որ Հայաստանին լավ ապագա է սպասվում: Մի կողմից, տա Աստված, մենք կունենանք շատ իմաստուն, հմուտ նոր վարչապետ, ի դեմս Սերժ Սարգսյանի (այդ պաշտոնում նրան նշանակելու նպատակահարմարության մասին ես արդեն հողված եմ գրել, որում հիմնավորել եմ դա), մյուս կողմից, մենք կունենանք Հանրապետության Չորրորդ Նախագահ, որը, ի պատիվ իրեն, քաջատեղյակ է աշխարհաքաղաքական այն շատ բարդ զարգացումներին, որոնք խիստ վտանգավոր են ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի համար: Եվ մենք կունենանք եզակի հնարավորություն՝ աշխարհին ցույց տալու, որ, քաղաքակիրթ ազգ լինելով, կարելի է լավ հարաբերություններ ունենալ համաշխարհային քաղաքականության ուժային տարբեր կենտրոնների հետ. մի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության, մյուս կողմից՝ Եվրամիության (հատկապես, Ֆրանսիան եմ ուզում այստեղ հիշատակել) և, իհարկե, Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ: Սա յուրահատուկ օրինակ է, որը, իմ կարծիքով, մենք կկարողանանք ներկայացնել համայն մարդկությանը, և աշխարհը, անշուշտ, շնորհակալ կլինի մեր հինավուրց քաղաքակրթությանը՝ ազգերի միջև համերաշխություն հաստատելու համար: Եվ, խորհենք, միգուցե Աստծու նախախնամությունն էր, որ քրիստոնեությունը որպես պետական կրոն առաջինն ընդունած ժողովուրդը, ազգը, քրիստոնեական բարքե-



րի վրա հիմնվելով, կկարողանա աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում մատնանշել այն ուղղությունները, որոնք ազգերին կտանեն դեպի տաճար:

*Լ. – Պարոն Նախագահը ի՞նչ լիազորություններ ունի, ի՞նչ է անելու ...*

*Ա. Գ. – Իրեն հարցրեք, ինքը սպառիչ կպատասխանի Ձեր հարցին:*

*Լ. – Ինչպես կգնահատեք վարչապետ դառնալու Սերժ Սարգսյանի մտադրությունը:*

*Ա. Գ. – Եթե նորից հիմնավորեմ վերն ասածս, ապա, կնշանակի, որ այս սուրբ օրվա խորհուրդը չենք ծառայեցնում իր նպատակին:*

*Լ. – Սո՞ւրբ է այս օրը:*

*Ա. Գ. – Այո, անշուշտ, սուրբ է: Անշուշտ, սուրբ է, որովհետև մեր իրականության մեջ ձևավորվում է եզակի իրավիճակ, երբ երկրի ղեկավարների միջև կա ներդաշնակություն և մեր անկախության ավելի քան երկուսուկես տասնամյակի պատմության մեջ ոչ ոք ոչ մեկին չի փնտվում, ընդհակառակը, իր լիազորությունները նոր ստանձնած Չորրորդ Նախագահին իր նախորդի կատարած գործի դրական քայլերն է մատնանշում, ավելին, կրկնեմ, դրական է գնահատում Առաջին և Երկրորդ նախագահների կատարած աշխատանքը: Եվ այդ դրական օրինակով, անտարակույս, համախմբում է մեր ազգին, մեր ժողովրդին:*

*Լ. – Եթե անգամ Սերժ Սարգսյանը դառնա վարչապետ, այդ օ՞րն էլ սուրբ կհամարեք Դուք:*

*Ա. Գ. – Գիտեք ինչ... այո, որովհետև, թերևս, սա այն եզակի դեպքերից է, երբ ես համոզված կլինեմ, որ մենք, ի դեմս բարձրագույն իշխանությունների, նկատի ունեն երկրի Չորրորդ Նախագահին, ապագա վարչապետին, Ազգային ժողովի նախագահին, ունենք շատ փորձառու, պրոֆեսիոնալ, լավ մարդկանց, որոնք, ակնհայտ է, կառաջնորդվեն միայն մի գաղափարով՝ աշխատել այնպես, որպեսզի իրենց անունները Հայոց նորագույն պատմության մեջ գրվեն ոսկե տառերով:*

*Լ. – Տասը տարի Սերժ Սարգսյանն է պաշտոնավարել, Հայաստանից հեռացել են տասնյակ հազարավոր քաղաքացիներ ...*

*Ա. Գ. – Ուրեմն, ես Ձեզ խորհուրդ կտամ ընթերցել վերջերս լույս տեսած «Արտաշես Գեղամյան. Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական դաշինքը դարերի համար է», գիրքը, այնտեղ Ձեր հարցերի սպառիչ պատասխանները կգտնեք:*

## ЧТОБЫ ИХ ИМЕНА ЗОЛОТЫМИ БУКВАМИ БЫЛИ ВПИСАНЫ В НОВЕЙШУЮ ИСТОРИЮ АРМЕНИИ

АРТАШЕС ГЕГАМЯН ОТВЕЧАЕТ НА ВОПРОСЫ ЖУРНАЛИСТОВ  
(9 АПРЕЛЯ 2018 Г.)

*КОРРЕСПОНДЕНТ. – Господин Гегамян, каковы Ваши впечатления от церемонии инаугурации четвертого Президента Армении?*

АРТАШЕС ГЕГАМЯН. – Сегодня мы стали участниками ситуации, которая характерна для цивилизованных стран. Четвертый Президент произнес самые теплые, искренние слова в адрес третьего Президента и положительно отозвался о первом и втором президентах. По сути, это был призыв к всенародной консолидации. А стержнем всего выступления была та мысль, что мы хоть и небольшое государство, но нация – мирового масштаба. И осознание этого позволяет верить, что Армении ждет славное будущее. С одной стороны, даст Бог, у нас будет весьма мудрый, опытный премьер в лице Сержа Саргсяна (о целесообразности его назначения на эту должность я написал статью, в которой дал обоснования этому); с другой – четвертый Президент, к его чести, прекрасно осведомленный в сложнейших геополитических процессах, которые представляют чрезвычайную опасность не только для Армении, но и для всего мира. И нам представится уникальная возможность доказать миру, что, будучи цивилизованной нацией, можно выстроить хорошие отношения с разными центрами силы мировой политики: и с Российской Федерацией, и с Евросоюзом (здесь особо хочу отметить Францию), и, конечно, с Соединенными Штатами Америки. Это своеобразный пример, на мой взгляд, который мы покажем всему человечеству, миру, и мир, бесспорно, будет благодарен нашей древней цивилизации за наши усилия по установлению мира между народами. Задумаемся: а может, это промысел Божий, чтобы народ, первым принявший христианство как государственную религию, чтобы наша нация, опираясь на христианские ценности, в этой сложной геополитической ситуации сумела указать те дороги, которые приведут народы к храму.

*КОРР. – Какие полномочия у господина Президента, что он будет делать?..*

А. Г. – Задайте этот вопрос ему, он даст вам исчерпывающий ответ.

*КОРР. – Как Вы оцениваете намерение Сержа Саргсяна стать премьером?*

А. Г. – Если стану вновь обосновывать вышесказанное, получится, что весь смысл этого святого дня не послужит своей основной цели.

*КОРР. – Это святой день?*

А. Г. – Да, святой – несомненно. Бесспорно святой, потому что в нашей действительности формируется редкая ситуация, когда между носителями высшей власти существует согласие и за четверть века нашей независимости никто никого не чернит, никто никого не дискредитирует. Наоборот, четвертый Президент отмечает позитивные шаги своего предшественника и, более того, положительно оценивает все, что сделано первым и вторым президентами. Этим он, вне всяких сомнений, консолидирует нашу нацию, наш народ.

*КОРР. – Даже когда Серж Саргсян станет премьер-министром, этот день Вы также будете считать святым?*

А. Г. – Видите ли... да. Да, потому что это, пожалуй, один из тех редких случаев, когда я буду полон уверенности, что в лице высших руководителей (имею в виду четвертого Президента, будущего премьера, председателя Национального Собрания) имеем исключительно компетентных, профессиональных, просто хороших людей, которые (это совершенно очевидно) будут руководствоваться одним-единственным принципом: работать так, чтобы их имена золотыми буквами были вписаны в новейшую историю Армении.

*КОРР. – Десять лет руководил Серж Саргсян, Армении покинули десятки тысяч граждан страны...*

А. Г. – Значит так. Я посоветовал бы вам почитать книгу «Арташес Гегамян: Стратегический союз России и Армении – на века», там вы найдете исчерпывающие ответы на свои вопросы.

## ԻՆՉՊԵՍ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՔՎԵԱՐԿԵԼ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ

Որքան էլ ՀՀԿ խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանը համաժողովրդական շարժման առաջնորդ, «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումից հետո լրագրողներին հավաստիացնում է, որ եթե ԱԺ երեք քաղաքական ուժերն ունենան մեկ թեկնածու, ապա ՀՀԿ-ն որևէ խոչընդոտ չի հանդիսանա, որպեսզի Հայաստանն ունենա վարչապետ, և վաղը կայանալիք ՀՀԿ խմբակցության նիստում միասնական քվեարկության որոշում կկայացվի, այնուամենայնիվ, ամեն ինչ այդքան միանշանակ չէ:


168.am-ի հետ զրույցում հարցին, թե ինչպիսի՞ն կլինի իր անձնական դիրքորոշումը մայիսի 1-ին վարչապետի քվեարկության ժամանակ, Արտաշես Գեղամյանը պատասխանեց.

«Անձամբ ես գտնում եմ, երբ Հանրապետական խմբակցության համար հիմա ոչ միանշանակ օրեր են, այս պարագայում որևէ պատճառաբանություն բռնել և փոխել կամ չպաշտպանել տեսակետը՝ սխալ է: Վահրամ Բաղդասարյանին ես համերաշխություն եմ հայտնում, սակայն դա չի նշանակում, որ իմ խղճի մտոք քվեարկությունը նույնն է լինելու: Խմբակցության որոշմանը ենթարկվել-չենթարկվելն ակնհայտ կդառնա մայիսի 1-ին՝ քվեարկության պահին»:

Թե ի՞նչ ունի Նիկոլ Փաշինյանի դեմ այս պահին՝ Ա.Գեղամյանը հարցը «բարդ» որակեց և խորհուրդ տվեց կարդալ թեկուզ այս տարվա հունվարի 1-ից հետո իր գրած հոդվածները, որոնք, նրա բնորոշմամբ, բացարձակապես անձնավորված չեն, այլ արտահայտում են իր տեսլականը Հայաստանի զարգացման վերաբերյալ:

Հարցին՝ ի՞նչը հաղթեց Հայաստանում, ժողովո՞ւրդը, Ա. Գեղամյանը պատասխանեց. «Առայժմ ոչ մի բան չի կարելի ասել հայաստանյան զարգացումների մասին: Ժամանակը կանցնի, մենք կտեսնենք՝ կառուցողական ինչ ծրագրով հանդես կգա ընդդիմադիր թեկնածուն, որից հետո այդ ծրագիրը կգնահատենք, թե որքանով է իրատեսական, որքանով՝ պոպուլիստական, որից հետո, եթե ռաջիոնալ բաներ կան, յուրաքանչյուր հայ մարդու,

առավել ևս՝ քաղաքական գործչի և պատգամավորի պարտքն է՝ իր գիտելիքների ներածին չափով առաջարկություններ անել՝ համոզված լինելով, որ ինչ-որ հարցում կթեթևացնեն մեր հոգսերը, օգտակար կլինեն: Խնդիրն այն չէ, թե ինչ մարդ է կատարում լավ գործը, խնդիրն այն է, որ լավ գործն ի կատար ածվի»:



## КАК СОБИРАЕТСЯ ГОЛОСОВАТЬ АРТАШЕС ГЕГАМЯН

Как бы ни заверял журналистов глава фракции РПА Ваграм Багдасарян после встречи с лидером всенародного движения, руководителем фракции «Елк» Николом Пашиняном, что Республиканская партия не будет чинить никаких препятствий, если три политические силы Национального Собрания выдвинут одну кандидатуру, и что на завтрашнем заседании фракция РПА примет решение о едином голосовании – не все так однозначно.

В беседе с 168.am на вопрос, какова будет его личная позиция во время выборов премьер-министра 1 мая, Арташес Гегамян ответил:

«В нынешней ситуации, в эти неоднозначные для Республиканской фракции дни лично я считаю неправильным ухватиться за какую-либо причину и изменить или не защищать точку зрения. Я выражаю согласие с Ваграмом Багдасаряном, однако это не означает, что в душе моё голосование будет таким же. Подчинение или неподчинение решению фракции станет очевидным в момент голосования 1 мая».

Вопрос, что он имеет против Никола Пашиняна на данный момент, Арташес Гегамян оценил как «сложный» и посоветовал почитать его статьи хотя бы с 1 января текущего года, которые, по его мнению, абсолютно не персонифицированы, а выражают его видение развития Армении.

На вопрос, победил ли в Армении народ, Арташес Гегамян ответил: «Пока ничего нельзя сказать о событиях в Армении. Пройдет время, посмотрим, с каким конструктивным планом выступит оппозиционный кандидат, и после этого оценим эту программу – насколько она реалистична, насколько популистская... И если в ней есть рациональное зерно, то долг каждого армянина, тем более политического деятеля и депутата, в меру своих знаний сделать свои предложения, быть полезным – будучи уверенным, что в каких-то вопросах они облегчат наши трудности. Вопрос не в том, кто именно совершает добрые дела, вопрос в том, чтобы доброе дело было совершено».

---

«168 жам», 29. 04. 2018

## АРТАШЕС ГЕГАМЯН: РАЗДУМЬЯ О ПОСЛЕДНИХ СОБЫТИЯХ В АРМЕНИИ

Итак, 8 мая 2018 года на специальном заседании Национального Собрания Республики Армения руководитель фракции «Елк» («Выход». – *Ред.*) Никол Пашинян был избран премьер-министром Республики Армения. Не скрою, что накануне специального заседания НС РА я в письменном виде изложил свое видение ситуации, складывающейся в последнее время в Армении, имея целью в дальнейшем озвучить это в ходе прений по кандидатуре премьер-министра РА. Однако было принято решение о том, что от имени Республиканской партии выступит лишь руководитель фракции РПА Ваграм Багдасарян. Изначально отмечу, что целиком и полностью одобряю и поддерживаю взвешенные оценки и выводы, содержащиеся в его выступлении, которое было проникнуто высочайшей ответственностью за безопасность и будущее нашего народа. Предлагаю вниманию читателей текст моего предполагаемого выступления на специальном заседании Национального Собрания Республики Армения:

«Уважаемые коллеги, считаю своим долгом поделиться раздумьями о событиях, происходящих в последнее время в нашей стране, которые самым ярким образом доказывают, что между лозунгами о любви и солидарности, об утверждении справедливости в стране и реалиями имеют место очень тревожные разрывы. Взять хотя бы разного рода насильственные действия по перекрытию улиц, закрытию аэропорта и железнодорожного сообщения, озвучивание прямых угроз в адрес депутатов, вывешивание в районах их проживания траурных транспарантов, не говоря уже о профессионально направляемом информационном терроре посредством Facebook, преподносимом в качестве спонтанных действий. Между тем мы имеем дело с заведомо продуманными акциями с целью оказать психологическое давление на депутатов и подготовить их к голосованию в Национальном Собрании в пользу их кандидата на пост премьер-министра РА. И все это цинично преподносится в качестве «бархатной революции» с целью утверждения справедливости.

Уважаемые коллеги! В эти дни я поневоле вспомнил события, имевшие место в Ереване 27 мая 1990 года. В тот день, не будь героически

## А. ГЕГАМЯН

проявивших себя Рубена Геворкяна, брата героически погибшего в Арцахской освободительной войне легендарного Самвела Геворкяна, Мацика из Киликии, а также Вардана и Манвела Кочаряна, было бы невозможным предотвращение большого кровопролития в Ереване с сотнями погибших. Вместе с ними на моей служебной машине мэра Еревана, несмотря на перекрестный огонь со стороны солдат 7-й армии ВС СССР и армянских ополченцев, удалось доехать до штаба 7-й армии, расположенного в Советашене, и договориться с командующим армией генералом Михаилом Сурковым о прекращении огня как со стороны солдат, так и со стороны ополченцев. Наша миссия была бы обречена на провал, если бы наш тыл не прикрывали славные сыны нашего народа – Вазген Саркисян, основатель Республиканской партии Армении Ашот Навасардян, Леонид Азгалдян... (подтверждающие сказанное видеокadres размещены на сайте партии «Национальное Единение», [www.amiab.am](http://www.amiab.am)). Повторяю, в тот день было предотвращено большое кровопролитие в Ереване. Почему обо всем этом я говорю сейчас? О чем вы думали, коллеги-оппозиционеры, когда группу доверчивых молодых людей в сопровождении двух почтенных женщин посылали к нам домой? Неужели вам казалось, что мое решение быть против вашей кандидатуры на должность премьер-министра подобными действиями могло быть поколеблено? Быть может, вам казалось, что 31-й и 32-й пункты приложения «Методы ненасильственных действий», содержащегося в книге Джина Шарпа «От диктатуры к демократии», а именно: преследование официальных лиц и насмешки над официальными лицами, – имеют универсальный характер?

Уважаемые коллеги, в течение всей моей политической деятельности я всегда публично и обоснованно защищал незыблемость российско-армянского стратегического союза, был последовательным сторонником членства Армении в ОДКБ и Евразийском экономическом союзе. И это по той причине, что я глубоко осознавал – гарантом безопасности армянского народа, армянской государственности является именно Российская Федерация, вопреки и назло Азербайджану и Турции, а также их идеологическим приспешникам и прихлебателям. Убежден, что приверженцы противоположной позиции попросту не осознают опасность для армянской государственности своих воззрений. В этой связи мои сомнения несколько смягчились, когда кандидат в премьер-министры публично заверил, что ввиду изменения реалий, а именно: перекавалифицируясь из оппозиции во власть, он на 180 градусов изменил свое отношение как к российско-армянскому военно-политическому союзу, так и к членству Армении в ОДКБ и ЕАЭС.

Возникает вопрос: что это – не приспособленчество, а запоздалое проявление патриотизма? В этой связи, думаю, было бы к месту хотя бы



на минуту кинуть взгляд в недалекое прошлое, чтобы создалось впечатление о моих некоторых представлениях о патриотизме.

Итак, в июне – июле 2013 г. в Стамбуле проходила очередная ежегодная сессия Парламентской Ассамблеи ОБСЕ. В ходе сессии мне как руководителю делегации НС РА в ПА ОБСЕ пришлось несколько раз выступить. Хочу привести некоторые выдержки из озвученных мною мыслей в сердце Турции, в Стамбуле, в откровенно армяноненавистнической среде.

«Вечернее посещение Долма-Бахче навело меня на романтические мысли. Конкретно на то, что в 1842 – 53 годах этот великолепный комплекс был построен архитекторами Балянами – армянами. По возвращении, проезжая рядом с площадью Таксим, я вспомнил, что еще в XVI веке турецкий султан Сулейман Кануни (Великолепный) в знак благодарности армянину, своему личному повару, спасшему ему жизнь (враги пытались отравить султана), передал армянской общине 850 тысяч квадратных метров территории, где расположены площадь и парк. Я вспомнил и то, что в 1872 году местные власти пытались эти территории отнять у армян, но опять-таки турецкий султан, уже другой – Абдул Азиз, увидев фирман Сулеймана Великолепного, оставил его решение в силе. Тем не менее уже в Турецкой Республике эти земли были отняты у армян, а первый памятник жертвам Геноцида армян в Османской империи 1915 года, который был установлен на площади Таксим в 1919 году, впоследствии демонтировали». На миг представьте себе, что означает во Дворце конгрессов Стамбула говорить о неблагодарности турок и озвучить следующие слова: «Геноцид армян в Османской империи 1915 года».

Продолжу свое выступление, приведя выдержку из моего второго выступления 1 июля 2013 года в Стамбуле.

«Я категорически не согласен с мнением азербайджанского коллеги, который стал умалять роль Минской группы ОБСЕ. Пользуясь случаем, выражаю свою благодарность президентам США, России и Франции, чьими усилиями вот уже 20 лет зона нагорно-карабахского конфликта находится в состоянии относительного мира, несмотря на то что Азербайджан ежегодно тратит на вооружение около 3 млрд долларов. Принятие этой поправки преследует одну-единственную цель – подключить к переговорному процессу по Нагорному Карабаху Турцию, а мы знаем, что Турция и Азербайджан это одна нация – два государства».

Следующая выдержка из моего третьего выступления в Стамбуле от 2 июня 2013 г.

«И наконец, в 2012 году, в августе, после того как был экстрадирован азербайджанский убийца Рамиль Сафаров, на следующий же день власти Азербайджана выпустили его на свободу. Соединенные Штаты

## А. ГЕГАМЯН

Америки в лице президента Барака Обамы, Европарламент, а также заместитель представителя Европейской комиссии Кэтрин Эштон, генеральный секретарь НАТО Андерс Фог Расмуссен, генеральный секретарь ОДКБ Николай Бордюжа осудили факт освобождения преступника. Между тем после его освобождения начался процесс героизации этого убийцы. И что самое интересное, один из наиболее активных участников героизации убийцы сегодня был избран заместителем председателя Первого комитета Парламентской Ассамблеи ОБСЕ. Тем самым был поставлен под удар не только престиж Первого комитета, но и всей Парламентской Ассамблеи ОБСЕ».

Еще одна выдержка из моего четвертого выступления, 2 июля 2013 г., Стамбул.

«Я вспомнил, как в 1970 году канцлер ФРГ Вилли Брандт, посетив памятник героям Варшавского восстания в гетто, встал на колени, скрестил руки на груди и склонил голову.

Я вспомнил, как Хасан Джемаль, внук убийцы армянского народа Джемалю-паши, которого Турецкий султанский трибунал Мехмеда 6-го приговорил к смертной казни, в 2008 году в Ереване посетил Мемориал жертв Геноцида армян в Османской империи и склонил свою голову.

Когда Вилли Брандт попросил прощения за Холокост, на следующий день вся мировая пресса писала, что на колени встал не тот, кто должен был бы встать. То же самое может повториться и сейчас. Мы надеемся на мудрость турецкого руководства, которое попросит прощения за убийство сотен и тысяч армян, за Геноцид армян в Османской империи». И эти слова слышал присутствовавший в зале министр иностранных дел Турции Ахмед Давутоглу, идеолог неоосманизма.

Уважаемые коллеги, отмечу, что после этого моего выступления последовало настоятельное предложение представителей делегации Российской Федерации постоянно находиться рядом с ними, что, по их убеждению, существенно снизило бы возможность проведения террористического акта в отношении меня со стороны турецких ультра-националистов. Их обеспокоенность отнюдь не была безосновательной. Вспомним хотя бы убийство российского посла в Турции Андрея Карлова, совершенное 19 декабря 2016 года.

И наконец, приведу отдельную выдержку не из 7 моих выступлений на сессии Парламентской Ассамблеи ОБСЕ, состоявшейся в июне – июле 2014 г. в Баку, повторяю – в Баку, а отклик на них. Итак, печально известные азербайджанские интернет-ресурсы Ara.az и Vesti.az 28.06.2014 г. под заголовком «В Баку на заседании Постоянного комитета ПА ОБСЕ армянская делегация попробовала устроить провокацию в отношении Азербайджана» опубликовали следующую информацию: «Глава армян-

ской делегации в ПА ОБСЕ Арташес Гегамян, отрицая факт оккупации азербайджанских территорий со стороны Армении, для решения конфликта призвал Азербайджан к переговорам с сепаратистским режимом Нагорного Карабаха. Подняв голос, он создал ажиотаж в зале. Армянский депутат также обвинил Азербайджан в том, что среди всех членов Минской группы ОБСЕ Азербайджан полагается только на США.

Несмотря на то что президент ПА ОБСЕ Ранко Кривокапич напомнил А. Гегамяну о резолюции, стоящей на повестке дня, он вновь, проигнорировав эту тему – украинский вопрос и решение других параллельных конфликтов, попытался поднять вопрос самоопределения народов».

В заключение своего выступления посоветовал бы тысячам наших молодых людей ознакомиться с вышеупомянутой книгой Джина Шарпа, а также с трудами Эдварда Х. Люттвака «Государственный переворот: практическое пособие», Генри Дэвида Торо «О гражданском неповиновении», Ричарда Шафрански «Подробная технология разрушения стран», Стивена Манна «Теория хаоса и стратегическое мышление» и, наконец, со сборником «Политическое цунами» под редакцией Сергея Кургияна, изданным еще в 2011 году. Не сомневаюсь, что после ознакомления с этими трудами ваши оценки событий, происходящих в последнее время в нашей стране, ваши действия будут преимущественно осознанными. А самое важное, рано или поздно придет понимание того, что воплощение в жизнь востребованного стремления утвердить в Армении справедливость невозможно осуществить с применением изначально несправедливых методов, разработанных чужими технологиями разрушения государств, которые, в частности, развенчаны в сборнике под редакцией С. Кургияна «Политическое цунами».

«Бархатная революция», совершенная подобными технологиями, чрезвычайно опасна.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ այսպես, 2018թ. մայիսի 8-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հատուկ նիստում «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ: Չեմ թաքցնում, որ ՀՀ ԱԺ հատուկ նիստի նախօրեին ես գրավոր պատրաստել էի վերջին ժամանակներս Հայաստանում ստեղծված իրավիճակի իմ տեսլականը՝ նպատակ ունենալով հետագայում այն հնչեցնել ՀՀ վարչապետի թեկնածության վերաբերյալ քննարկումների ընթացքում: Սակայն ընդունվեց որոշում այն մասին, որ Հանրապետական կուսակցության անունից ելույթ կունենա միայն ՀՀԿ խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանը: Սկզբից եթե նշեմ, որ լիովին և ամբողջովին պաշտպանում ու հավանություն եմ տալիս նրա ելույթի հավասարակշռված գնահատականներին և եզրահանգումներին, ելույթ, որը համակված էր մեր ժողովրդի անվտանգության ու ապագայի հանդեպ մեծագույն պատասխանատվությամբ: Ընթերցողների ուշադրությանն եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հատուկ նիստում իմ ներկայացնելիք ելույթի տեքստը:

«Հարգելի գործընկերներ, պարտքս եմ համարում հնչեցնել մտորումներս վերջերս մեր երկրում ընթացող զարգացումների շուրջ, որոնք ամենավառ կերպով ապացուցում են, որ այսօր «սիրո և համերաշխության հեղափոխության», երկրում արդարություն հաստատելու կարգախոսների և իրականության միջև առկա են խիստ մտահոգիչ խզումներ: Վերցնենք թեկուզ ամեն կարգի բռնացումները՝ փողոցներ, օդանավակայան, երկաթուղի փակելը, պատգամավորների հասցեին ուղղակի սպառնալիքներ հնչեցնելը, նրանց բնակության վայրերում նույնիսկ մահապատառներ փակցնելը, էլ չեմ ասում Facebook-ի միջոցով հմտորեն ուղղորդվող տեղեկատվական տեռորի մասին, որը մատուցվում էր իբրև ինքնաբերական գործողություններ: Մինչդեռ իրականում գործ ունենք կանխամտածված ակցիաների հետ՝ պատգամավորների վրա հոգեբանական ճնշում գործադրելու և Ազգային ժողովում հոգուտ ՀՀ վարչապետի իրենց թեկնածուի քվեարկելուն նրանց նախապատրաստելու նպատակով: Եվ այս ամենը ցինիկաբար հրամցվում է որպես «թավշյա հեղափոխություն»՝ արդարության հաստատման նպատակով:

Հարգելի գործընկերներ: Այս օրերին ականա հիշեցի այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել Երևանում 1990թ. մայիսի 27-

ին: Եթե այդ օրը չլինեին իրենց հերոսաբար դրսևորած Ռուբեն Գևորգյանը՝ Արցախյան ազատագրական պատերազմում զոհված լեգենդար Սամվել Գևորգյանի եղբայրը, կլիկկիացի Մացիկը, ինչպես նաև Վարդանն ու Մանվել Քոչարյանը, անխուսափելի կլինեի կանխել մեծ արյունահեղությունը Երևանում՝ հարյուրավոր զոհերով: Նրանց հետ միասին իմ՝ Երևանի քաղաքապետիս, ծառայողական մեքենայով, անտեսելով ԽՍՀՄ ԶՈւ 7-րդ բանակի զինվորների և հայ ազատամարտիկների փոխհրաձգությունը, հաջողվեց հասնել Սովետաշենում տեղակայված 7-րդ բանակի շտաբ և բանակի հրամանատար, գեներալ Միխայիլ Սուրկովի հետ պայմանավորվել ինչպես զինվորների, այնպես էլ մեր ազատամարտիկների կողմից կրակի դադարեցման մասին: Մեր առաքելությունը կտապավվեր, եթե մեր թիկունքը չպահեին ազգիս նվիրյալները՝ Վազգեն Սարգսյանը, Հայաստանի Հանրապետական կուսակցության հիմնադիր Աշոտ Նավասարդյանը, Լեոնիդ Ազգալոյանը ... (ասվածը վավերացնող տեսակադրերը տեղադրված են «Ազգային Միաբանություն կուսակցության» կայքում, [www.amiab.am](http://www.amiab.am)): Կրկնում եմ՝ այդ օրը մեծ արյունահեղություն կանխվեց Երևանում: Ինչո՞ւ եմ այս ամենի մասին հիմա խոսում: Լավ, ի՞նչ էիք մտածում՝ ընդդիմադիր գործընկերներ, երբ մի խումբ դյուրահավատ երիտասարդների՝ երկու պատկառելի տիկնանց ուղեկցությամբ, ուղարկում էիք մեր տուն: Մի՞թե կարծում էիք, թե վարչապետի ձեր թեկնածուին դեմ լինելու իմ որոշումից հետո եմ կանգնելու ձեր նման գործողություններից: Թե՞ ձեզ թվում էր, թե Զին Շարփի «Բռնապետությունից դեպի ժողովրդավարություն» գրքի «Ոչ բռնի գործողությունների մեթոդները» հավելվածի 31-րդ և 32-րդ կետերը, այն է՝ պաշտոնական անձանց հետապնդելը և պաշտոնական անձանց ծաղրելը, ունիվերսալ բնույթ են կրում:

Հարգելի գործընկերներ, իմ քաղաքական բովանդակ գործունեության ընթացքում մշտապես հրապարակավ և հիմնավորված կերպով պաշտպանել եմ հայ-ռուսական ռազմավարական դաշինքի անսասանության գաղափարը, ՀԱՊԿ-ին և Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հետևողական ջատագովն եմ եղել: Որովհետև խորապես գիտակցել եմ, որ հայ ժողովրդի, հայոց պետականության անվտանգության երաշխավորը հենց Ռուսաստանի Դաշնությունն է՝ ի հեճուկս և ի հակառակ Ադրբեյջանի, Թուրքիայի, ինչպես նաև նրանց գաղափարախոսական դամբաշների: Համոզված եմ, որ հակառակ տեսակետի կողմնակիցներն ուղղակի չեն գիտակցում հայոց պետականության համար իրենց տեսակետների վտանգավորությունը: Այս առումով տազնապներս փոքր-ինչ մեղմվեցին, երբ հանրապետության վարչապետի թեկնածուն հրապարակավ հավաստիացրեց, թե իրողությունների փոփոխության բերումով, ասել է թե՛ ընդդիմությունից իշխանություն դառնալով, ինքը 180 աստիճանով փոխել է իր վերաբերմունքը թե՛ հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի, թե՛ ԵԱՏՄ-ին և ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության վերաբերյալ:

Հարց է ծագում. ընդունենք, թե սա ոչ թե պատեհապաշտություն է, այլ հայրենասիրության ուշացած դրսևորում: Այս կապակցությամբ, կարծում եմ,

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

տեղին կլիներ թեկուզ թռուցիկ հետադարձ հայացք նետել հայրենասիրության մասին իմ որոշ պատկերացումներին:

Եվ այսպես, 2013թ. հունիս – հուլիսին Ստամբուլում ընթանում էր ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի հերթական նստաշրջանը: Նստաշրջանի ընթացքում, որպես ԵԱՀԿ ԽԿ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, հարկ եղավ ոչ մեկ անգամ հանդես գալ ելույթով: Ցանկանում եմ որոշ մեջբերումներ կատարել Թուրքիայի սրտում՝ Ստամբուլում, բացահայտ հակահայ միջավայրում իմ հնչեցրած մտքերից:

«Երեկոյան այցելությունս Դոլմա Բահչե ինձ ռոմանտիկ մտքերի մղեց այն մասին, որ 1842–53թթ. այդ հոյակերտ համալիրը կառուցվել է հայ ճարտարապետներ Բալյանների կողմից: Վերադառնալիս՝ Թաքսիմ հրապարակի մոտով անցնելիս, հիշեցի, որ դեռևս 16-րդ դարում թուրքական սուլթան Սուլեյման Կանունին (Սքանչելի), ի երախտագիտություն իր անձնական հայ խոհարարի, որը փրկել էր նրան թունավորել փորձող թշնամիներից, հայ համայնքին էր հանձնել 850 հազար քառակուսի մետր տարածք՝ հրապարակով ու այգով: Ես հիշեցի նաև, որ 1872թ. տեղի իշխանությունները փորձեցին խլել այդ տարածքը հայերից, բայց կրկին թուրք սուլթանը, այս անգամ արդեն Աբդուլ Ազիզը, տեսնելով Սուլեյման Սքանչելիի ֆիրմանը, նրա որոշումը թողել է ուժի մեջ: Այնուամենայնիվ, արդեն Թուրքիայի Հանրապետությունում այդ հողերը խլվեցին հայերից, իսկ 1915թ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի առաջին հուշարձանը, որը կանգնեցվել էր 1919թ. Թաքսիմ հրապարակում, հետագայում ապամոնտաժեցին»: Մի պահ պատկերացրեք, թե ինչ է նշանակում Ստամբուլի Կոնգրեսների Պալատում ասել թուրքական երախտամոռության մասին և հնչեցնել այս խոսքերը՝ «1915 թվականին Օսմանյան կայսրության իրականացրած Հայոց ցեղասպանություն»:

Շարունակեմ՝ մեջբերում կատարելով իմ երկրորդ ելույթից, որն ունեցել էմ 2013 թ. հուլիսի 1-ին:

«Կտրականապես համաձայն չեմ ադրբեջանցի գործընկերոջ կարծիքին, որն սկսեց նվազեցնել ԵԱՀԿ Մինսկի խմբի դերը: Օգտվելով առիթից՝ իմ երախտագիտությունն էմ հայտնում ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահներին, որոնց ջանքերի շնորհիվ ահա արդեն 20 տարի Ղարաբաղյան հակամարտության գոտին գտնվում է համեմատական խաղաղության վիճակում, չնայած Ադրբեջանն ամեն տարի մոտ 3 մլրդ դոլար է ծախսում սպառազինության վրա: Այս լրացման ընդունումը միայն մի նպատակ է հետապնդում՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացում ներգրավել Թուրքիային, մինչդեռ մենք գիտենք, որ Թուրքիան և Ադրբեջանը մեկ ազգ են, երկու պետություն»:

Հաջորդ մեջբերումը 2013թ. հուլիսի 2-ին Ստամբուլում ունեցած իմ երրորդ ելույթից է:

«... և վերջապես, 2012թ. օգոստոսին, այն բանից հետո, երբ արտահանձնվեց ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովը, հաջորդ օրն իսկ Ադրբեջանի իշխանությունները նրան ազատ արձակեցին: Ամերիկայի Մի-

ացյալ Նահանգները՝ հանձին նախագահ Բարաք Օբամայի, Եվրախորհրդարանը, ինչպես նաև Եվրահանձնաժողովի փոխնախագահ Քեթրին Էշթոնը, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը, ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան դատապարտեցին հանցագործին ազատ արձակելու փաստը: Այնինչ, մարդասպանին ազատ արձակելուց հետո սկսվեց նրան հերոսացնելու գործընթացը: Եվ որ ամենահետաքրքիրն է՝ մարդասպանի հերոսացման ամենակտիվ մասնակիցներից մեկն այսօր ընտրվել է ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի Առաջին կոմիտեի փոխնախագահ՝ դրանով իսկ հարվածի տակ դնելով ոչ միայն Առաջին կոմիտեի, այլև ամբողջ ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի հեղինակությունը»:

Եվս մեկ մեջբերում իմ չորրորդ ելույթից (2 հուլիսի 2013թ., Ստամբուլ):

«... 1970թ. Գերմանիայի կանցլեր Վիլի Բրանդտը, այցելելով Վարշավայի գետտոյում ֆաշիզմի դեմ հրեա ժողովրդի ապստամբության հերոսների հուշահամալիր, ծնկի իջավ, ձեռքերը խաչեց կրծքին և գլուխ խոնարհեց:

Ես հիշեցի, թե ինչպես Հասան Ջեմալը՝ հայ ժողովրդի դահիճ Ջեմալ փաշայի թոռը, որին Մեհմեդ 6-րդի սուլթանական տրիբունալը դատապարտել էր մահապատժի, 2008-ին Երևանում այցելեց Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր և գլուխ խոնարհեց:

Երբ Վիլի Բրանդտը ներողություն խնդրեց Հոլոքոստի համար, հաջորդ օրը ողջ համաշխարհային մամուլը գրեց, որ ծնկի էր եկել ո՛չ նա, ով պետք է ծնկեր: Նույնը կարող է կրկնվել նաև այժմ: Մենք հույս ունենք, որ թուրքական ղեկավարությունն իմաստուն կգտնվի և ներողություն կխնդրի հարյուր հազարավոր հայերի սպանության, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության համար»: Ահա ևս խոսքեր, որոնք լսել է դահլիճում ներկա թուրք արտգործնախարարը՝ նեոսմանիզմի գաղափարախոս Ահմեդ Ղավթոթլուն:

Հարգելի գործընկերներ, նշեմ, որ իմ այս ելույթին հետևեց Ռուսաստանի Ղազնության պատվիրակության ներկայացուցիչների հորդորը՝ մշտապես գտնվել իրենց կողքին, ինչը, իրենց համոզմամբ, էապես կնվազեցնեք թուրք ուլտրաազգայնականների հնարավոր ահաբեկչությունն անձիս հանդեպ: Նրանց այս մտահոգությունը բնավ անհիմն չէր: Հիշենք թեկուզ 2016թ. դեկտեմբերի 19-ին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Կառլովի սպանությունը:

Եվ վերջապես, մի առանձին մեջբերում կատարեմ արդեն 2014թ. հունիս – հուլիսին Բաքվում, կրկնում եմ՝ Բաքվում, անցկացված ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի նստաշրջանում իմ ոչ թե 7 ելույթներից, այլ դրանցից մեկի առիթով արված արձագանքից: Եվ այսպես, ադրբեջանական տխրահռչակ Apa.az և Vesti.az ինտերնետ-ռեսուրսները 2014թ. հունիսի 28-ին «Բաքվում ԵԱՀԿ ԽԿ մշտական կոմիտեի նիստում հայկական պատվիրակությունը փորձել է սադրանք իրականացնել Ադրբեջանի նկատմամբ» խորագրով հրապարակել են հետևյալ տեղեկատվությունը. «ԵԱՀԿ ԽԿ-ում

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

հայկական պատվիրակության ղեկավար Արտաշես Գեղամյանը, հերքելով Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների զավթման փաստը, հակամարտության լուծման համար Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի անջատողական ռեժիմի հետ բանակցությունների կոչ արեց: Ձայնը բարձրացնելով՝ նա իրարանցում առաջ բերեց դահլիճում: Հայ պատգամավորն Ադրբեջանին մեղադրեց նաև այն բանում, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր անդամների միջից Ադրբեջանը հենվում է ԱՄՆ-ի վրա:

Չնայած ԵԱՀԿ ԽՎ նախագահ Ռանկո Կրիվոկապիչը հիշեցրեց Ա. Գեղամյանին օրակարգի բանաձևի մասին՝ նա կրկին, արհամարհելով այդ թեման՝ ուկրաինական հարցը և մյուս զուգահեռ հակամարտությունների լուծումը, փորձեց բարձրացնել ժողովուրդների ինքնորոշման հարցը»:

Ելույթս ավարտելով՝ խորհուրդ կտայի մեր հազարավոր երիտասարդներին ծանոթանալ Զին Շարփի վերը հիշատակված գրքին, ինչպես նաև Էդվարդ Ն. Լյուտվալսի «Պետական հեղաշրջում. Գործնական ձեռնարկ», Հենրի Դևիդ Տորոյի «Քաղաքացիական անհնազանդության մասին», Ռիչարդ Շաֆրանսկու «Երկրների կործանման մանրամասն տեխնոլոգիա», Սթիվեն Մանի «Քաոսի տեսություն և ռազմավարական մտածողություն» աշխատություններին և, վերջապես, Սերգեյ Կուրդինյանի խմբագրությամբ՝ դեռևս 2011թ. հրատարակված «Քաղաքական ցունամի» ժողովածուին: Կասկած չունեմ, որ այդ աշխատություններն ուսումնասիրելուց հետո ձեր գնահատականները մեր երկրում վերջին ժամանակներս տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ և ձեր գործողություններն առավել իմաստավորված կլինեն: Իսկ որ ամենակարևորն է՝ վաղ թե ուշ կգա այն գիտակցումը, որ Հայաստանի Հանրապետությունում արդարություն հաստատելու խիստ պահանջված ձգտումն անհնար է իրականացնել ի սկզբանե անարդար, օտարների կողմից մշակված, կործանարար տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք, մասնավորապես, բացահայտված են Ս.Կուրդինյանի խմբագրությամբ հրատարակված «Քաղաքական ցունամի» ժողովածուում:

Նման տեխնոլոգիաներով իրականացված «թավշյա հեղափոխությունը» չափազանց վտանգավոր է:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ Աժ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

«Իրավունք», 11. 05. 2018:



## АРТАШЕС ГЕГАМЯН: АРМЕНИИ НЕ БЫТЬ ЖЕРТВОЙ СЛЕПЫХ ПОВОДЫРЕЙ СЛЕПЫХ

Вновь и вновь осмысливая события, имевшие место в апреле-мае т. г. в Армении, все более убеждаешься в том, что в стране произошла не просто смена власти, а имел место государственный переворот, который по сути явился одной из составных частей тщательно продуманной политики по дестабилизации ситуации в Исламской Республике Иран и южном подбрюшье России. Что же этому предшествовало?

Так, в своем видеообращении к участникам Конференции европейского планирования 2018, организованной молодежной неправительственной организацией AEGEE/European Students Forum, проходившей в Ереване 8 – 12 марта т. г., Верховный представитель ЕС по иностранным делам и политике безопасности Федерика Могерини заявила: «Армения и Европейский Союз никогда не были так близки, как сейчас». Заметим, что в работе конференции приняли участие около 200 молодых людей из 25 государств Европы и стран-участниц программы «Восточное партнерство». Примечательно, что участники конференции весьма заинтересованно обсудили возможные варианты борьбы с безработицей среди молодежи, вопросы вовлечения молодежи в демократические реформы в странах «Восточного партнерства» и укрепления гражданского общества.

Также напомним читателям ответы министра иностранных дел России С. В. Лаврова на вопросы СМИ Армении от 8 апреля 2018 года.

Вопрос: «Как Вы оцениваете развитие двусторонних отношений России и Армении за последние десятилетия?»

С. В. Лавров: «Отношения России и Армении – это отношения союзничества, стратегического партнерства. Эти термины закреплены в двусторонних договорах, в документах Организации Договора о коллективной безопасности (ОДКБ). Эти связи охватывают все без исключения сферы деятельности государств, все сферы жизнедеятельности наших народов от политики в области безопасности, внешней политики до культуры, экономики, технологических контактов, гуманитарных связей, образования и многого другого. Отношения за 10 лет развивались, безусловно, под воздействием прямых доверительных контактов между президен-

## А. ГЕГАМЯН

тами наших стран В. В. Путиным и С. А. Саргсяном. Они регулярно, по несколько раз в год проводят встречи на высшем уровне, общаются на территории Республики Армения, Российской Федерации, «на полях» многочисленных международных форумов».

Таким образом, мы вправе сделать вывод, что за прошедшие 10 лет благодаря глубоко продуманной, взвешенной и честной внешней политике Армении, проводимой под руководством Президента РА Сержа Азатовича Саргсяна, мы были свидетелями того, что Армения со 2 января 2015 года стала членом Евразийского экономического союза, а 24 ноября 2017 года в Брюсселе подписала Соглашение о всеобъемлющем и расширенном партнерстве Армения – ЕС. При этом очень важно отметить, что руководители внешнеполитических ведомств как России, так и ЕС дали очень высокую оценку союзничеству и партнерству своих стран с Арменией.

Мы вправе также утверждать, что своим примером Республика Армения показала центрам силы мировой политики, что между Российской Федерацией и Европейским Союзом нет непреодолимых противоречий, более того, есть сферы для налаживания тесного взаимовыгодного экономического, да и политического сотрудничества. К этому следует добавить и дружественные, добрососедские отношения, сложившиеся между Ираном и Арменией, которые очень емко охарактеризовал президент Ирана Хасан Роухани в ходе своего визита в РА 21 – 22 декабря 2017 года. В ходе визита президент Ирана заявил: «Мы, обе страны, относимся к одной и той же культуре и цивилизации. Отношения народов двух стран всегда были теплыми и дружественными». И еще, пожалуй, очень пронизательную оценку ирано-армянским отношениям дал известный политолог Станислав Тарасов в статье под заглавием «Почему на инаугурацию президента Ирана прилетел Саргсян и не прилетел Алиев» (REGNUM, 6 августа 2017). «Еще один парадокс. До начала XIX века территория Закавказья, где потом были созданы государства Азербайджан и Армения, входила в состав Персидской империи в виде ханств. Но, пожалуй, только армянам удалось сохранить позитив в общей истории с иранцами, превратить свои отношения с Ираном в «особые»... Третий парадокс. Христианская Армения находит поддержку, с одной стороны, в христианской Европе, с другой – через Иран в исламском мире, тогда как Баку позиционирует себя больше в качестве «исламского» государства. Перспектива для Армении видится вполне приемлемой и выигрышной, что рано или поздно не могут не признать в Азербайджане... Так что, хотя на иранском направлении дипломатия Еревана работает на уровне потенциальных рисков испортить отношения с США, очевидно, у Армении есть свои запасные ходы». Думается, что мы вправе утверждать: внешне-

политический курс третьего Президента Армении Сержа Саргсяна находил понимание и поддержку со стороны России, Евросоюза и Исламской Республики Иран. При этом особо хотелось бы отметить, что Президент С. Саргсян во всех своих публичных выступлениях по внешнеполитической тематике однозначно подчеркивал главный вектор внешней политики армянского государства – союзнические отношения с Россией.

Что же касается политики Азербайджана и Турции в отношении Армении, сошлюсь на отдельные факты. Так, небезызвестный журналист Расим Агаев (сын экс-генпрокурора Нахиджеванской автономной республики, бывший заведующий отделом пропаганды и агитации ЦК КП Азербайджана в годы перестройки) на азербайджанском проправительственном информационном портале Naqqin.az 19 июля 2016 года опубликовал статью под заголовком «Серж Саргсян будет убит». Вот что под этим гнусным заглавием написал этот новоявленный «сердобольный» радетель армян и армянского государства: «Я уже писал, кажется, однажды: Сержа Саргсяна, третьего президента независимой Армении, или убьют, или вынудят уйти, или он убежит. Но скорее всего произойдет первое... Движение «Учредительный парламент», активисты которого совершили нападение на полк патрульно-постовой службы полиции, захватившие заложников, требуют не только безоговорочной отставки и смены власти. Отчаянный акт совершен во имя включения самопровозглашенной «Нагорно-Карабахской Республики» в состав Армении... На ближайшее будущее Армению ждет череда госпереворотов, политических убийств, вынужденных отставок».

Что это, пришествие в сферу журналистов-международников новоявленного Дельфийского оракула? А может, это всего лишь озвучивание давно вынашиваемых планов азербайджано-турецких стратегов? На этом фоне весьма неоднозначной видится реакция турецкого руководства на заявление премьер-министра Армении Никола Пашиняна о готовности официального Еревана восстановить дипломатические отношения с Анкарой без предварительных условий (это заявление было сделано 9 мая в Арцахе, Нагорно-Карабахской Республике). При этом примечательно, что сначала неназванный представитель администрации турецкого президента заявил: «Без освобождения азербайджанских территорий о нормализации армяно-турецких отношений не может быть и речи». Однако чуть позже последовало весьма интригующее заявление премьер-министра Турции Бинали Йылдырыма. Так, по сообщению турецкого издания *Hurriyet*, он заявил: «Если Армения отступится от неверной позиции в отношении нашей территориальной целостности и границ, если она захочет открыть новую страницу, мы можем ответить взаимностью. Турция не намерена проявлять враждебность по отношению к кому-либо, особенно

## А. ГЕГАМЯН

к соседям. Поэтому, если в позиции Армении будет какое-то смягчение, мы в интересах нашей страны можем это оценить». В чем же интрига? Напомним читателям, что при подписании 10 октября 2009 года в Цюрихе документов – «Протокол о развитии двусторонних отношений» и «Протокол об установлении дипломатических отношений» – не было и речи о претензиях Армении относительно «территориальной целостности и границ» турецкого государства. Более того, после подписания Цюрихских протоколов весь огонь критики противников нормализации армяно-турецких отношений (имеется в виду без предварительных условий, как-то: признания Геноцида армян в Османской империи, возврата исконно армянских территорий в соответствии с Севрским мирным договором и арбитражным решением президента США Вудро Вильсона по границам Армении в пределах вилайетов Ван, Битлис, Эрзрум, Трапезунд и др.), третий Президент РА Серж Саргсян взял на себя, причем как внутри страны, так и в Армянской Диаспоре. Однако Турция до последнего времени уж никак не проявляла готовность восстановить отношения с Арменией. Учитывая деструктивную политику Турции в этом вопросе, власти РА в первой декаде марта денонсировали армяно-турецкие протоколы. А теперь мы являемся свидетелями столь диаметрально противоположных перемен в подходах турецкого руководства, которые заставляют нас вновь задаться вопросом: так кто же еще был заинтересован в «ненасильственной» смене власти в Армении? Чтобы несколько прояснить ситуацию, чуть подробнее остановимся на особенностях так называемой «бархатной революции» в Армении.

Немножко истории. В октябре 1993 года в США была издана книга сотрудника Бостонского Института Альберта Эйнштейна (некоммерческая организация, существующая на пожертвования) Джина Шарпа «От диктатуры к демократии». Приложение этой книги, которое озаглавлено «Методы ненасильственных действий» (далее – Приложение), как показал анализ, и стало практическим пособием для руководителей протестного движения, развернувшегося в Армении в апреле – мае т.г., а скорее для тех, кто стоял за кулисами этих событий. При этом следует признаться, что режиссура протестного движения была составлена высокопрофессионально.

Так, в главе I Приложения, озаглавленной «Методы ненасильственного протеста и убеждения», читаем: 1. Публичные выступления; 4. Публичные заявления, подписанные известными людьми; 7. Лозунги, карикатуры и символы; 8. Знамена, плакаты и наглядные средства; 11. Магнитофонные записи, пластинки, радио, ТВ; 16. Пикетирование; 27. Установка новых уличных знаков и названий; 28. Символические звуки.

Думается, что проявление всех этих методов ненасильственного

протеста и убеждения армянский читатель очень хорошо запомнил: кто-то мысленно вспомнил свое личное участие в протестах, кто-то внимательно отслеживал происходящее по радио и телевизионным программам, публикациям и видеопозамам на интернет-ресурсах. Дальше – больше. Читаем: пункт 31. «Преследование» официальных лиц (в частности, в нашем случае депутатов Национального Собрания РА); 32. Насмешки над официальными лицами (достаточно вспомнить выступления митингующих и пикетирующих здания государственных учреждений); 33. Братание с солдатами (к примеру, присоединение военнослужащих миротворческой бригады к протестам); 34. Бдения («вахты») (вспомним круглосуточные дежурства митингующих на площади Франции и др. местах проведения митингов); 37. Пение (массовое исполнение специально сочиненных песен и гимна движения, ежевечерние концерты по окончании митингов). Или же изо дня в день практикуемые, как указано в соответствующих пунктах Приложения; 38. Марши; 39. Парады; 42. Автоколонны; 43. Политический траур (вывешивание омерзительных траурных плакатов в районах проживания депутатов Национального Собрания от Республиканской партии Армении); 44. Символические похороны (гнусное шоу, устроенное протестующими на Северном проспекте Еревана, прямо как по установке Расима Гусейновича Агаева, изложенной в статье «Серж Саргсян будет убит»).

Из главы II, озаглавленной «Методы отказа от социального сотрудничества» были широко использованы пункты 62 и 63 – студенческие забастовки и общественное неповиновение.

Примечательно, что в протестном движении были использованы также и рекомендации главы III Приложения – «Методы отказа от экономического сотрудничества. Экономические бойкоты». Были задействованы пункты 71. Бойкот потребителей (призывы не вести торговлю в супермаркетах SAS и Сити) и 72. Отказ покупать те или иные товары.

Следует также отметить широкое использование руководителями протестного движения рекомендаций, содержащихся в главе IV Приложения – «Методы отказа от символического сотрудничества». Так, в частности, мы стали свидетелями реализации пункта 97. Забастовка протеста; 98. Быстрый уход («забастовка – молния»); 99. Крестьянские забастовки (сопровождаемые перекрытием межобщинных дорог); 117. Всеобщая забастовка (периодические призывы протестующих организовать всеобщую забастовку).

Можно привести также и факты реализации протестующими установок из V главы Приложения – «Методы отказа от политического сотрудничества», а именно пункт 130. Устранение знаков собственности и уличных знаков (перекрашивание пресловутых «красных линий» в Ереване); 135.

Народное неповиновение; 137. Невыполнение приказа разойтись собранию или митингу (неоднократно озвучиваемые громкоговорителями и в информационных программах телевидения и радио заявления полиции и службы нацбезопасности к митингующим с требованием разойтись); 141. Неповиновение несправедливым (на взгляд митингующих) законам (отказ от выплаты штрафов за нарушение правил дорожного движения и правил, обусловленных «красными линиями»); 144. Препятствия работе учреждений (блокирование зданий министерств и других государственных учреждений стало повсеместно реализуемой практикой).

հսկողություն և ուսումնասիրություն իրականացնել, այլև կունենա հետախուզական գործունեություն, նախաքննություն և քննություն անցկացնելու լիազորություններ, կարող են ընկալվել սոսկ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիքներից մեկը, ոչ ավելին: Այստեղ կրկին անհրաժեշտություն կա մշտական հիմունքներով աշխատանք իրականացնել կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու համակարգ մշակելու առումով՝ այդ համակարգի արդյունավետ գործունեության ապահովման մեխանիզմների ներդրմամբ, այլ ոչ թե կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու կոչերով:

Լուրջ մտահոգություն է առաջացնում ծրագրի 3-րդ բաժինը, որը վերնագրված է «Արտաքին և ներքին անվտանգության ապահովում»: Այն կազմված է երեք ենթաբաժնից. գինված ուժեր, արտաքին քաղաքականություն և ներքին անվտանգություն:

Ծանոթանալով, օրինակ, «Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնին (3.2), ականա մտովի տեղափոխվում ես մի ինչ-որ վիրտուալ աշխարհ, որտեղ չկան նշված մարտահրավերները՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ հայտարարված պատժամիջոցներով, որը Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է, նրա անվտանգության երաշխավորը կամ էլ չկա անդրադարձ իրավիճակի ծայրահեղ բևեռացմանը Իրանի շուրջ՝ պայմանավորված «միջուկային գործարքից» ԱՄՆ-ի դուրս գալով, ինչը լուրջ բարդություններ առաջացրեց ԱՄՆ – ԵՄ հարաբերություններում:

Ծրագրի հեղինակների ուշադրությունից դուրս են մնացել նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ մեկ շաբաթվա ընթացքում ուղարկած երկու նամակները: Ընդ որում՝ հատկանշական է, որ ս. թ. մայիսի 26-ով թվագրված առաջին նամակում Դ. Թրամփը շնորհավորել է իր պաշտոնակցին և ադրբեջանցի ժողովրդին առաջին հանրապետության կազմավորման 100-ամյակի կապակցությամբ՝ նշելով, որ «առաջիկա ամիսները դարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարներ կբացեն, ինչն ավելի լավ պայմաններ կստեղծի ամերիկա-ադրբեջանական համագործակցության ընդլայնման համար»: Այս բառերի տրամաբանությունից հետևում է, որ «ավելի լավ պայմանների ստեղծումը ամերիկա-ադրբեջանական համագործակցության ընդլայնման համար» ենթադրում է հակամարտության կարգավորում այնպիսի պայմաններով, որոնք կբավարարեն ադրբեջանական կողմին: Նշենք, որ ԱՄՆ նախագահը չի շնորհավորել Հայաստանի ղեկավարությանը և հայ ժողովրդին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակի առիթով:

Իսկ Դ. Թրամփի՝ ս. թ. մայիսի 30-ով թվագրված երկրորդ նամակը Ի. Ալիևին ուղարկվել է Հարավային գագային միջանցքով առաջին անգամ գազ անցկացնելու առիթով: Այդ նամակում, մասնավորապես, ասված է. «Ադրբեջանի խոշոր նավթահանքերը կայունություն են բերում համաշխարհային էներգետիկ շուկայում: Գազի արդյունահանումը ձեր երկրում իր ավանդն է բերում Թուրքիայի և Եվրոպայի տնտեսական անվտանգության գործուն»: Բնավ պատահական չէ, որ հիշատակեցի այս մասին: Դեռևս

2018թ. հունվարի 30-ին <https://rueconomics.ru/303980> էլեկտրոնային պորտալում հրապարակվեց հետաքրքիր հոդված՝ բավական միանշանակ խորագրով. «Հարավային գազային միջանցքը Եվրոպայում Ռուսաստանի նոր նախագծերը խափանելու ԱՄՆ թանկ փորձը դարձավ»:

Մեջբերում կատարենք այդ հոդվածից. «Հարավային գազային միջանցքի մոտավոր արժեքը բանակցություններն սկսելու պահին կազմում էր ավելի քան 45 միլիարդ դոլար... Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ 45 միլիարդ դոլարի կաշառք, որը ԱՄՆ-ը տալիս է Ադրբեջանում իրեն հարմար ռեժիմին»: Այս ֆոնին, կարծում են, ծրագրում արժեք գոնե հիշատակել վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ Հայաստանի համար հնարավոր մարտահրավերները, ավելին՝ հնչեցնել Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ նոր ռազմական ագրեսիայի հրահրման վտանգի մասին: Ընդ որում՝ արժեք հստակ մատնանշել, որ նման ագրեսիա սկսվելու դեպքում այն անխուսափելիորեն կհանգեցնի հակամարտությանը Ադրբեջանի ռազմավարական դաշնակցի՝ Թուրքիայի և Հայաստանի ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի ներգրավմանը:

Մինչդեռ արդեն գաղտնիք չէ, որ ներկա բարդ փուլում լարվածության ստեղծումը ռուս-թուրքական հարաբերություններում, Ռուսաստանի և Թուրքիայի միջև զարգացող ու խորացող ռազմաքաղաքական և տնտեսական հարաբերությունների պայմաններում, լիովին համապատասխանում է համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի ռազմավարական շահերին: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի ղեկավարների համաձայնեցված դիրքորոշումը սիրիական կարգավորման հարցում, 2018թ. ապրիլի 4-ին Անկարայում, Ռուսաստան–Թուրքիա–Իրան գազաթափողովում ձեռք բերված պայմանավորվածությունների հետևողական կատարումը չեն արժանանում ԱՄՆ գլխավորությամբ գործող միջազգային կոալիցիայի հավանությանը:

Կարծում են, որ արդարացված կլիներ, եթե ծրագիրը կազմողները «Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնում նշեին այնպիսի միջոցառումների, արտաքին քաղաքական նախաձեռնությունների և ակցիաների անցկացման մասին, որոնք իրենց ամբողջության մեջ կամրապնդեին այն գնահատականը, որը ԵՄ-ի հետ Հայաստանի համագործակցությանը տվել է ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին: Նա ասել է. «Հայաստանը և Եվրամիությունը երբեք այնքան մոտ չեն եղել, որքան այժմ» (Եվրոպական պլանավորման կոնֆերանսի մասնակիցներին ուղղված տեսաուղերձից, 12 մարտի 2018 թ.):

Ինչպես նաև ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի գնահատականը, որը նա հնչեցրել է ս. թ. ապրիլին հայկական ԶԼՄ-ներին տված հարցազրույցում: «Ինչպե՞ս եք գնահատում Ռուսաստանի և Հայաստանի երկկողմ հարաբերությունների զարգացումը վերջին տասնամյակներին» հարցին Սերգեյ Լավրովը պատասխանել է. «Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունները դաշնակցային, ռազմավարական գործընկե-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

րության հարաբերություններ են: Այս եզրերը իրենց հաստատումն են գտել երկկողմ պայմանագրերում, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) փաստաթղթերում: Այս կապերը ներառում են, առանց բացառության, պետությունների գործունեության բոլոր ոլորտները, մեր ժողովուրդների կենսագործունեության բոլոր բնագավառները՝ անվտանգության քաղաքականությունից, արտաքին քաղաքականությունից մինչև մշակույթ, տնտեսություն, տեխնոլոգիական շփումներ, հումանիտար կապեր, կրթություն և այլն»:

Ցավոք, պաշտոնական Բրյուսելի և Մոսկվայի այս բարձր գնահատականների էությունը խորապես հասկանալու փոխարեն ծրագրում կարգում ենք կարծրատիպային, ոչ մեկին և առարկայական որևէ բանի չպարտավորեցնող դրույթների ցանկ, առանց որևէ մեխիզի գոնե Թուրքիային և Ադրբեջանին, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին:

Կարելի է էլի շարունակել ծրագրի առանձին ուղենիշերի և բաժինների վերլուծությունը, բայց, կարծում ենք, դրա անհրաժեշտությունը չկա: Ներկայացված ծրագիրը, ցավոք, կազմված է առանց ներկա փուլում Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը վերլուծության ենթարկելու, առանց առարկայորեն նշելու երկրի տնտեսության «նեղ» տեղերը և դրանց հաղթահարման ուղիները: Ծրագրում չկա գերակայությունների, նպատակների, նպատակային ցուցիչների և հանապազօր խնդիրների տեսլական ու սահմանում, որոնք պահանջում են լուծում ամենակարճ ժամկետում, ինչպես նաև նշված չեն դրանց իրագործման ուղիները, էլ չեն ասում պետական մարմինների ռազմավարական պլանների և ծրագրում նշված զարգացման նախագծերի ռեսուրսային ապահովման մասին:

Այսպիսով, մենք իրավունք ունենք պնդելու, որ ծրագրում հաշվի չի առնվել ծրագրային փաստաթղթերի մշակման՝ բոլորի կողմից ընդունված մեթոդաբանությունը ներքին ու արտաքին ոլորտներում առկա գործոնների և միտումների վերհանման հիման վրա. նշված չէ երկրի զարգացման հնարավորությունների և պոտենցիալ սպառնալիքների շրջանակը, հստակ սահմանված չեն այն խնդիրները, որոնց լուծումն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման համար:

Այս հարցերի ողջ համալիրը տազնապալի զգացողություններ է առաջացնում, և ականա մտաբերում են Սենեկայի պատկերավոր արտահայտությունը. «Եթե չգիտես, թե դեպի որ նավահանգիստն ես նավարկում, ոչ մի քամի էլ համընթաց չէ»...

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

## АРТАШЕС ГЕГАМЯН: Я ЗА РАЗВИТИЕ АРМЕНИИ, НО ПРОТИВ ПРЕДЛОЖЕННОЙ ПРОГРАММЫ ПРАВИТЕЛЬСТВА РА

На 48-м ежегодном Всемирном экономическом форуме (ВЭФ), который проходил в Давосе с 23 по 26 января 2018 года под девизом «Создание общего будущего в раздробленном мире», была презентована альтернативная система экономического развития стран мира. Экспертами и аналитиками ВЭФ было предложено заменить главный макроэкономический показатель планеты – внутренний валовой продукт (ВВП) – на индекс инклюзивного развития (Inclusive development index, сокращенно – IDI), так как, по их мнению, ВВП не отражает реальное положение дел как в мировой экономике, так и в конкретных странах. Ранее уже приходилось писать о том, что у IDI 12 параметров или три группы, разделенные по 4 показателя в каждой группе. Напомню, что в первой группе характеристик, названной «Рост и развитие», указаны: 1) ВВП на душу населения (в долларах США на 2010 год); 2) производительность труда – ВВП на одного занятого (в долларах США); 3) ожидаемая средняя продолжительность жизни; 4) занятость населения трудоспособного возраста (указывается в процентах).

Во второй группе характеристик «Инклюзивность» отмечены: 1) коэффициент расслоения (распределенности) доходов в обществе (0 – полное равенство, 100 – полное неравенство); 2) уровень бедности; 3) коэффициент расслоения общества по распределению богатства (0 – полное равенство, 100 – полное неравенство); 4) медианный ежедневный расход домохозяйств (показатель, основанный на покупательной способности, он делит население страны на две половины: тех, кто тратит выше и ниже этой планки).

В третьей, заключительной, группе характеристик под общим названием «Преемственность поколений и устойчивость развития» представлены: 1) скорректированные чистые сбережения (рассчитываются по схеме: запасы природных богатств плюс расходы на образование и минус потребление ресурсов, истощение запасов энергии, ущерб от выбросов, указываются в процентах от валового национального продукта); 2) парниковый эффект ВВП (показатель выброса CO<sub>2</sub> за каждый доллар валово-

## А. ГЕГАМЯН

го внутреннего продукта, который производит экономика страны); 3) размер государственного долга (в процентах от ВВП); 4) демографическая нагрузка (соотношение граждан-иждивенцев в возрасте от 0 до 15 и старше 64 лет на общее количество трудоспособного населения). Из всех вышеприведенных 12 показателей сначала складываются 3 группы индексов, а уже после их сложения получается итоговый показатель как среднее арифметическое.

Этот экскурс мною сделан далеко не случайно, так как 4 апреля 2018 года на совещании у Президента РА Сержа Азатовича Саргсяна при обсуждении проекта «Стратегия развития Армении 2030» (далее – Стратегия) Президент РА заявил: «В частности, хочу подчеркнуть необходимость устойчивого и высокого инклюзивного экономического роста, который должен быть ощутим для каждого гражданина Армении». Далее отмечалось, что реализация этого документа обеспечит необходимые условия для создания сотен тысяч новых рабочих мест, которые будут высокооплачиваемыми и значительно сократят уровень безработицы, особенно среди молодежи. Стратегией предполагалось вложить значительные средства в развитие человеческого капитала, то есть в сферу образования и здравоохранения. Была сформулирована и конечная цель Стратегии – создание необходимых условий для того, чтобы до 2040 года мы имели Армению с четырехмиллионным населением, с ВВП на душу населения порядка 20 тысяч долларов США. Обратим внимание на то обстоятельство, что выполнение общенациональных целей прямо увязывалось с «устойчивым и высоким инклюзивным экономическим ростом».

При тщательном анализе состояния экономики Армении вновь убеждаемся в том, что достижение поставленных общенациональных целей – сложная, но выполнимая задача, которая, на мой взгляд, предполагает критическое осмысление уровня социально-экономического развития Армении с позиции параметров IDI. При этом важно тщательно проанализировать, каковы имеющиеся резервы инклюзивного экономического роста для нашей экономики. Весь комплекс этих вопросов раскрыть в одной статье не представляется возможным, а в плане восприятия, думается, не целесообразным.

Рассмотрим лишь некоторые задачи, решение которых будет способствовать существенному росту экономики Армении. С этой целью приведем некоторые показатели, характеризующие динамику социально-экономического развития РА в 2007 – 2017 годах (см. таблицу 1). Отметим, что все показатели, приведенные в таблице 1 и в далее прилагаемых таблицах, взяты из сборников Статистического комитета Республики Армения за январь-декабрь, январь и январь-февраль соответствующих го-



дов, Межгосударственного статистического комитета СНГ, а также из вестников Центрального банка РА за соответствующий период.

Так, в соответствии с таблицей 1 за 11 лет инвестиции в основной капитал РА составили 5 трлн 907 млрд 700 млн драмов. За этот же период ВВП увеличился на 2 трлн 430 млрд 800 млн драмов. Таким обра-

Таблица 1

Годы	ВВП млрд. драмов	ВВП млрд. долл.	Переводы физическим лицам через банковскую систему (чистые поступления) млн. долл.	ВВП на душу населения долларов	Инвестиции в основной капитал млрд. драмов	Прямые иностранные инвестиции млн. долл.	Прямые инвестиции (данные из платежного баланса) млн. долл.
2007	3149,3	9,2	1058,310	3076	671,0	669,8	664,07
2008	3568,2	11,7	1393,067	3913	858,7	1132,4	925,29
2009	3141,7	8,6	929,235	2912	579,7	840,7	699,61
2010	3460,2	9,3	1071,973	3122	588,8	693,4	569,03
2011	3777,9	10,1	1282,357	3417	504,8	813,3	446,63
2012	4266,5	10,6	1395,014	3576	479,4	656,7	473,27
2013	4555,6	11,1	1545,576	3372	453,4	469,2	-353,52
2014	4828,6	11,6	1388,990	3889	463,9	382,8	-365,00
2015	5043,6	10,5	891,390	3529	481,5	180,5	-169,79
2016	5079,9	10,6	715,901	3533	410,6	338,0	-281,28
2017	5580,1	11,6	731,492	3690	415,9	245,7	-223,46
Всего	-	-	12403,305	-	5907,7	6422,5	3777,90/ -1393,05

зом, объем роста ВВП от инвестиций в основной капитал был в 2,5 раза меньше суммы средств, вложенных в основной капитал. При этом следует отметить, что в период 2007 – 2017 гг. государственный долг РА (внутренний и внешний) увеличился на 5 млрд 131 млн 668 тыс. долларов, или в драмовом выражении на 2 трлн 772 млрд 429,9 млн драмов, повторюсь, при росте ВВП на 2 трлн 430 млрд 800 млн драмов (см. таблицу 2).

Такая статистика наводит на весьма тревожные раздумья и свидетельствует о том, что за эти годы инвестиции в основной капитал и государственные заимствования использовались крайне неэффективно. Что за этим стоит? Отсутствие, как минимум, надлежащего профессионализма, не говоря уже о нецелевом использовании средств и т. д. и т. п. Но это тема отдельного анализа, который, думается, обязательно будет сделан. А пока отметим, что назрела острая необходимость для выработки четких условий, которые позволят свести к минимуму неэффективное использование как инвестиций в основной капитал, так и бюджетных расходов. С этой целью актуальной становится задача перехода к SMART (интеллектуальной) экономике. Это позволит более рационально использовать

## А. ГЕГАМЯН

материальные, трудовые, интеллектуальные ресурсы для решения общенациональных проблем. Применительно к экономике Армении это означает разработку современного подхода к постановке остро востребован-

Таблица 2

Годы	ВВП млрд. драмов	ВВП млрд. долл.	Государственный долг РА млн. долл.	Удельный вес неработающих активов коммерческих банков %	Объем вкладов в коммерческих банках млн. драмов	Торговый баланс млн. долл.	Курс 1 доллара США к драму
2007	3149,3	9,2	1642,936 *	-	364349	-2115,487	342,1
2008	3568,2	11,7	1906,822	-	391374	-3368,968	306,0
2009	3141,7	8,6	3378,595	4,2	539462	-2610,976	363,3
2010	3460,2	9,3	3781,403	2,77	593025	-2707,897	373,7
2011	3777,9	10,1	4148,623	3,25	770226	-2810,993	372,5
2012	4266,5	10,6	4368,886	3,31	959529	-2881,034	401,8
2013	4555,6	11,1	4588,455	4,01	1163840	-2907,117	409,6
2014	4828,6	11,6	4441,524	6,15	1336645	-2877,137	415,9
2015	5043,6	10,5	5071,031	6,98	1520651	-1753,907	477,9
2016	5079,9	10,6	5934,776	5,96	1784154	-1509,5	480,5
2017	5580,1	11,6	6774,604 **	4,99	2130144	-1939,792	482,7
Всего	-	-	-	-	-	-	-

\* 507 млрд. 156 млн. драмов. Социально-экономическое развитие РА в январе 2008 года (стр.53)

\*\* 3 трлн 279 млрд. 585,9 млн. драмов. Социально-экономическое развитие РА в январе 2018 года (стр.70)

ных в экономике нашей страны работающих целей: создание высокооплачиваемых тысяч и тысяч новых рабочих мест, проработку институциональных и экономических условий для перевода экономики на инклюзивный экономический рост и прочее. Система постановки SMART-целей позволит, например, Стратегию переработать с тем, чтобы на этапе целеполагания обобщить всю имеющуюся информацию по отраслям экономики, установить приемлемые сроки работы для достижения поставленных целей, определить степень обеспеченности ресурсами для достижения поставленных целей и, наконец, предоставить всем участникам процесса ясные, точные, конкретные задачи. Заметим, что SMART является аббревиатурой, расшифровка которой такова: Specific, Measurable, Achievable, Relevant, Time bound. Так, критерий Specific (конкретный) означает, что при постановке цели должен быть точно определен результат, которого хотим достичь. Критерий Measurable (измеримый) означает, что цель должна быть измеримой, то есть должны быть установлены конкретные критерии для измерения процесса выполнения цели. Критерий Achievable предполагает, что цель по SMART должна быть достижимой, так как реалистичность выполнения задачи влияет на мотивацию исполнителя. При этом достижимость цели определяется на основе собственного опыта с учетом всех имеющихся ресурсов и ограничений, а именно: временные

ресурсы, инвестиции, трудовые ресурсы, знания и опыт исполнителя, доступ к информации и ресурсам, возможность принимать решения и наличие управленческих рычагов. Критерий Relevant (значимый) означает важность понимания того, какой вклад решение конкретной задачи внесет в достижение общенациональной цели, решение конкретной задачи, стоящей перед отраслями экономики, конкретными корпорациями или предприятиями. И, наконец, критерий Time bound (ограниченный во времени) предполагает определение конечного срока, превышение которого говорит о невыполнении поставленной цели.

Думается, что широкое внедрение SMART-технологий в значительной мере понизит и коррупционные риски, поэтому не вызывает сомнений, что этот фактор обязательно должен быть положен в основу Программы правительства Республики Армения, в разработку критериев эффективности его работы.

В связи с этим хотелось бы обратить внимание также на то обстоятельство, что назрела необходимость проработки и других критериев повышения эффективности капитальных вложений и инвестиций, предполагающих получение максимального мультипликативного эффекта. При этом речь идет не только о достижении существенного мультипликативного эффекта, когда на одну единицу вложенных инвестиций получаем прирост к ВВП, например, на две и более единицы, но не менее важно обеспечение высокого мультипликативного эффекта государственных расходов, когда в условиях увеличения государственных расходов имеет место опережающий темп роста совокупного дохода. К сожалению, за последние 11 лет все эти вопросы выпадали из поля зрения исполнительной власти, сменяющих друга правительств РА. Первое, что необходимо сделать – это определить адресатов, куда в приоритетном порядке следует направлять внутренние инвестиции, внешние заимствования, осуществлять государственные расходы. Естественно, что это предполагает разработку системы прогнозирования эффективности инвестиционных проектов и определение адресатов, куда будут направлены инвестиции и где будут произведены государственные расходы, что в конечном итоге позволит рассчитывать на существенный рост ВВП в будущем.

Хотелось бы обратить внимание и на следующее. Согласно таблице 1, в последние годы наблюдается существенное снижение объема прямых иностранных инвестиций. Более того, согласно показателям Платежного баланса РА, в 2013 – 2017 гг. в экономике РА имели место отрицательные инвестиции, то есть имело место изъятие капитала на общую сумму в 1 млрд 393,305 млн долларов. Это свидетельствует о том, что за последние годы экономика Армении потеряла свою инвестицион-

ную привлекательность, что находит свое подтверждение также и в ухудшающихся показателях, характеризующих международную инвестиционную позицию страны. Так, ухудшается баланс запаса внешних финансовых активов и обязательств, то есть имеет место опережающий, притом существенный рост обязательств в сравнении с ростом финансовых активов. Чтобы не быть голословным, приведем статистику. Так, если на конец декабря 2012 г. чистая международная инвестиционная позиция была (минус) – 6 млрд 835,43 млн долларов (Социально-экономическое положение РА в январе-феврале 2013 г., стр.104), то уже на конец декабря 2017 г. этот показатель составил (минус) – 8 млрд 802,14 млн долларов (Социально-экономическое положение РА в январе-феврале 2018 г., стр.113). Подобные изменения международной инвестиционной позиции РА, когда имеет место существенное превышение объема обязательств над внешними финансовыми активами, у серьезных инвесторов ассоциируется с повышением рисков для реализации инвестиционных программ в РА. К сожалению, подобные неизбежные опасения подкрепляются и другим обстоятельством. Так, если в 2012 г. (см. таблицу 2) удельный вес неработающих активов коммерческих банков РА составлял 3,31% (Вестник Центрального банка РА, январь 2013 г., стр. 56), то на 31 декабря 2017 г. этот показатель составил 4,99 % (Вестник Центрального банка РА, январь 2018 г., стр.122). При этом, если учесть, что за этот период вклады населения с 959 млрд 529 млн драмов (Вестник Центрального банка РА, январь 2013 г., стр.30) возросли до 2 трлн 130 млрд 144 млн драмов (Вестник Центрального банка РА, январь 2018 г., стр.97), или имел место рост в 2,22 раза (что нас не может не радовать), мы вправе утверждать, что, несмотря на то что в 2017 году в сравнении, к примеру, с 2015, 2016 годами удельный вес неработающих активов сократился с 6,98% до 4,99%, однако в целом за указанный период времени в абсолютном выражении имел место значительный рост объема неработающих активов коммерческих банков. Естественно, что и это обстоятельство не будет вдохновлять внешних инвесторов для осуществления значимых инвестиций в экономику Армении. Ведь по существу эта статистика свидетельствует о том, что потенциальные инвесторы внутри страны сами воздерживаются от реализации инвестиционных проектов, и в этом случае вполне ожидаемо, что иностранные инвесторы тем более не будут спешить с этим делом. Думается, что комплекс вышеуказанных реалий должен стать предметом тщательного анализа и выработки действенных мер со стороны правительства и Центрального банка РА и быть положен в основу Программы нового правительства РА и соответствующих коррек-

тировок в денежно-кредитной политике ЦБ РА. Такой подход позволит существенно повысить инвестиционную привлекательность Армении, создаст благоприятные условия для обеспечения значительного роста как прямых иностранных инвестиций, так и внутренних.

Таблица 3

Годы	ВВП млрд. драмов	Денежная масса млн. драмов	Уровень монетизации, соотношении денежной массы (M2) к ВВП %	Денежная база млн. драмов	В том числе			Отношение денежной массы M2 к денежной базе (кредитный мультипликатор)	Суммарные корреспондирующие счета в драма и валюте, млн. драмов	Денежная масса за вычетом суммарных корреспондирующих счетов (млн. драмов)
					Наличные деньги вне ЦБ млн. драмов	Корреспондирующие счета (в млн. драмов)	Корреспондирующие счета в валюте (в млн. долл)			
2007	3149,3	691343	21,95	427118	350274	37445*	38421**	1,62	75886	615457
2008	3568,2	707788	19,84	449731	344503	38519*	65914**	1,57	104433	603355
2009	3141,7	814990	25,94	511678	320670	40450*	148673**	1,59	189123	625867
2010	3460,2	911386	26,34	507552	348165	57516*	88237**	1,79	145753	765633
2011	3777,9	1126978	29,8	671271	398777	163177*	102513**	1,68	265690	861288
2012	4266,5	1346364	31,56	683846	440117	154525	86033	1,97	240558	1105806
2013	4555,6	1545372	33,92	888057	446833	199002	238814	1,74	437816	1107556
2014	4828,6	1689783	35,0	886765	412345	334554	135944	1,9	470498	1219285
2015	5043,6	1855676	36,8	921325	413614	322668	182845	2,01	505513	1350163
2016	5079,9	2180098	42,9	1042299	455402	315219	256027	2,09	571246	1608852
2017	5580,1	2566502	46,0	1032005	516094	311698	177023	2,49	488721	2077781

\* обязательные резервы (в драма)

\*\* обязательные резервы (в валюте)

Хотелось бы обратить внимание и на следующее обстоятельство (см. таблицу 3). Так, из таблицы видно, что объем денежной массы ( $M_2$ ) в последнее десятилетие имеет тенденцию роста и это политика ЦБ РА в правильном направлении. При этом растет и уровень монетизации экономики (с 21,95% в 2007 г. до 46,0% в 2017 г.). Вместе с тем заметим, что опыт стран с развитой экономикой показывает, что для сбалансированной экономики нормальным уровнем показателя монетизации является объем денежной массы ( $M_2$ ), составляющий примерно 90 – 110% от объема ВВП страны. Если показатель монетизации больше верхней границы указанного уровня – 110%, то это свидетельствует о том, что роль финансового сектора экономики неоправданно велика и при этом чем выше уровень монетизации, тем больше вероятность появления в экономике финансовых «пузырей». Для сравнения отметим, что в настоящее время в экономике Японии показатель монетизации составляет 170% от объема ВВП, США – 150% ВВП. Анализ динамики роста экономики многих стран показывает: если показатель монетизации меньше нижней границы вышеотмеченного уровня – 90%, то это означает, что деньги являются

дефицитным товаром и в результате их стоимость растет (имеется в виду рост ставки кредитования) и, как следствие, в экономике не инвестируются наименее доходные отрасли и предприятия (в том числе – инфраструктурные). Если эта инфраструктура является критически важной для нормального функционирования экономики, тогда инвестиции должны осуществляться посредством бюджетных расходов, иначе данная инфраструктура просто исчезает и, как следствие, уменьшатся поступления в бюджет в целом, сократятся социальные расходы, будет падать уровень жизни населения. При этом реальная инфляция будет расти, поскольку в условиях дефицита денег процентные ставки увеличиваются, растут транзакционные издержки денежного обращения («инфляция издержек»). Думается, что и эти вопросы должны быть отражены в окончательной редакции предлагаемой Программы правительства РА, а также учтены в новой, требующей корректировки денежно-кредитной политике Центрального банка РА. Отметим, что должны быть приняты во внимание также приводимые далее выводы и предложения, касающиеся состояния финансовой сферы экономики Армении.

Так, обращают на себя внимание и изменения в структуре денежной массы РА, в основе которой денежная база, то есть созданные Центробанком РА в процессе денежной эмиссии наличные деньги (см. таблицу 3). За 2007 – 2017 гг. объем денежной массы возрос в 3,7 раза, а за вычетом суммарных корреспондирующих счетов в 3,38 раза (с 615 млн 457 тыс. драмов в 2007 г. до 2077 млн 781 тыс. драмов в 2017 году) при росте ВВП в 1,78 раза. За этот же период объем денежной базы возрос в 2,4 раза при темпе роста наличных денег в 1,47 раза. При этом обязательные резервы коммерческих банков в драмах возросли с 37 млрд 445 млн драмов до 311 млрд 698 млн драмов, то есть в 8,3 раза, а обязательные резервы (корреспондирующие счета) в валюте возросли с 38 млрд 421 млн драмов (или 112 млн 309 тыс. долл.) до 177 млрд 23 млн драмов (или 366 млн 735 тыс. долл.), или в 3,3 раза. То есть имел место значительно опережающий темп роста объема обязательных резервов в сравнении с темпом роста как денежной массы, так и денежной базы.

Особо следует подчеркнуть, что существенный рост обязательных резервов коммерческих банков, бесспорно, повышает доверие к ним вкладчиков. И это, думается, на данном этапе является оправданной политикой. Вопрос в необходимости выбора оптимального соотношения денежной массы, денежной базы и обязательных резервов. Что под этим следует иметь в виду. Во-первых, эти показатели упомянуты вовсе не случайно. Так, отношение денежной массы (денежного агрегата M2) к денежной базе называется кредитным мультипликатором, величина кото-

рого характеризует возможности кредитования экономики. Во-вторых, анализ успешно развивающихся экономик ряда стран показывает, что в экономике этих стран, как правило, оптимальное значение кредитного мультипликатора находится в интервале от 4 до 6. При этом статистика свидетельствует: превышение кредитного мультипликатора верхней границы (6) приводит к формированию в экономике финансовых пузырей, а снижение кредитного мультипликатора ниже обозначенной нижней границы (4) интервала сокращает возможности по кредитованию реального сектора экономики, а это, в свою очередь, означает, что многие предприятия, которые могли бы реально работать в экономике, обеспечивать рабочие места и платить налоги, в реальности из-за отсутствия кредитных средств не работают, а их место занимают, в основном, крупные импортеры товаров народного потребления и промежуточных инвестиционных товаров. Причем следует отметить, что возобладание крупных импортеров происходит также и вследствие сложности логистики доставки товаров в Армению из-за рубежа, то есть импорта, а также малых объемов внутреннего рынка Армении, что создает благодатную почву для образования монополий среди импортеров.

Обобщая вышеотмеченное, мы вправе утверждать, что ЦБ и коммерческие банки РА недостаточно эффективно справляются с одной из своих главных функций – с трансформацией сбережений в инвестиции, то есть в них недостаточно задействован трансмиссионный механизм. Мы также вправе утверждать, что темп роста экономики РА, хотя на первый взгляд и кажется высоким, значительно ниже своей потенциальной возможности в немалой степени и из-за изъятия денег Центральным банком из экономики (о чем свидетельствуют показатели уровня монетизации и кредитного мультипликатора). При этом речь не идет о механическом увеличении объема денежной массы путем эмиссии. Центральный банк РА должен осуществлять целевое кредитование коммерческих банков для последующей реализации реальных инвестиционных проектов. При этом возможные возражения относительно того, что нельзя печатать деньги для инвестиций, якобы, потому что это вызовет девальвацию национальной валюты и инфляцию, это банальное лукавство. Ведь за 11 лет (см. таблицу 3) денежная масса выросла в 3,7 раза, при росте ВВП в 1,78 раза, однако, никакого опасного и неконтролируемого роста инфляции в этот период не наблюдалось. Такой подход не новый. Вспомним, что в основе экономического чуда Японии лежали сбережения населения. Министерство финансов через сберкассы собирало деньги у населения. И эти деньги передавались в Банк развития Японии, в другие специализированные коммерческие банки и в дальнейшем перераспределялись в

## **А. ГЕГАМЯН**

институты развития, как кредитные ресурсы. И уже институты развития эти деньги инвестировали в экономику.

В заключение этой темы приведем слова советника Президента России В.В.Путина, академика РАН Сергея Глазьева: «Без сочетания стратегического планирования с гибкой денежной политикой кредитования инвестиций, которая должна реализовываться через государственные специальные инвестиционные проекты, частно-государственное партнерство, где бизнес берет на себя обязательства наращивать производство, внедрять новую технику, создавать рабочие места, а государство гарантирует стабильные условия благоприятного налогообложения, гарантирует дешевый кредит, мы не обойдемся». Один к одному эти слова можно отнести и к Армении.

Для еще более полного представления положения, сложившегося в финансовой сфере, думается, следует обратить внимание и на динамику денежных переводов в Армению. Как видно из Таблицы 1, в последние годы наблюдается тенденция заметного снижения объемов денежных средств, поступающих через банковскую систему РА физическим лицам Армении. Так, ежегодные чистые денежные поступления физическим лицам в 2016 – 2017 гг. были в два и более раза ниже, чем в 2012 – 2014 годах. При этом важно отметить, что при росте внешнеторгового оборота за 2012 – 2017 гг. с 5 млрд 470 млн 670,8 тыс. долл. до 6 млрд 425 млн 529,7 тыс. долл., за 2015 – 2017 гг. в целом существенно сократился дефицит торгового баланса РА (несмотря на некоторый рост в 2017 г. по сравнению с 2016 г.). Отметим, что очень важно эту тенденцию сохранить, а в ближайшие годы и далее проводить целенаправленную политику по импортозамещению. Этот вопрос обретает особую актуальность в условиях напряженного международного положения, политики санкций, проводимой против стратегического союзника Армении – Российской Федерации, что, помимо других нежелательных для наших стран последствий, неизменно сказывается и на объеме денежных поступлений в РА из России. Ведь не секрет, что наиболее крупные чистые потоки денежных средств поступают в Армению именно из России. К примеру, в 2017 году из 731 млн 492 тыс. долларов чистых денежных переводов физическим лицам РА на долю России приходилось 688 млн 853 тыс. долларов, или 94,17%. Подобное положение дел указывает на то, что непринятие действенных мер по существенному импортозамещению в условиях сокращения денежных поступлений в Армению чревато серьезными проблемами для обеспечения равновесия в платежном балансе РА, поэтому вопросы импортозамещения, на мой взгляд, должны быть в деталях тщательно проработаны в Программе правительства РА. В противном случае в



числе прочих нежелательных последствий может иметь место девальвация национальной валюты, которая, в свою очередь, приведет к росту инфляции и снижению уровня жизни населения, необходимости новых внешних заимствований, а подобный ход развития событий таит в себе опасность возможного дефолта, и это не следует сбрасывать со счетов.

Вот некоторые вопросы, на которые хотелось бы обратить внимание нового состава правительства Армении при окончательной редакции его Программы. Вместе с тем, думается, следует вновь и вновь осмыслить социально-экономическое положение РА в свете показателей индекса инклюзивного развития. А самое главное – выработать четкие критерии эффективности работы правительства Республики Армения на ближайшие годы.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»



## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ԵՍ ԿՈՂՍ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ, ԲԱՅՑ ԴԵՄ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԾՐԱԳՐԻՆ

Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) ամենամյա՝ 48-րդ նստաշրջանում, որը տեղի է ունեցել 2018թ. հունվարի 23 – 26-ը Դավոսում՝ «Ընդհանուր ապագայի ստեղծում մասնատված աշխարհում» կարգախոսով, ներկայացվեց աշխարհի երկրների տնտեսական զարգացման այլընտրանքային համակարգ: ՀՏՀ փորձագետները և վերլուծաբաններն առաջարկեցին Երկիր մոլորակի գլխավոր մակրոտնտեսական ցուցանիշը՝ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) փոխարինել ներառական զարգացման ինդեքսով (Inclusive development index – IDI), քանի որ, նրանց կարծիքով, ՀՆԱ-ն չի արտացոլում ռեալ իրավիճակն ինչպես համաշխարհային տնտեսությունում, այնպես էլ կոնկրետ երկրներում: Ավելի վաղ անդրադարձել են այն հարցին, որ IDI-ն 12 բնութագրիչ ունի, որոնք բաժանվում են երեք խմբի՝ յուրաքանչյուրը 4-ական ցուցանիշով: Հիշեցնենք, որ բնութագրիչների առաջին խմբում, որն անվանված է «Աձ և զարգացում», նշված են. 1) բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (2010թ. ԱՄՆ դոլարի արժեքով), 2) աշխատանքի արտադրողականությունը՝ մեկ աշխատողին բաժին ընկնող ՀՆԱ-ն (ԱՄՆ դոլարով), 3) կյանքի ակնկալվող միջին տևողությունը, 4) աշխատունակ տարիքի բնակչության զբաղվածությունը (նշվում է տոկոսներով): Բնութագրիչների երկրորդ՝ «Ներառականություն» խմբում նշված են. 1) հասարակությունում եկամուտների շերտավորման (բաշխվածության) գործակիցը (0 – լիակատար հավասարություն, 100 – լիակատար անհավասարություն), 2) աղքատության մակարդակը, 3) հասարակության շերտավորման գործակիցն ըստ հարստության բաշխման (0 – լիակատար հավասարություն, 100 – լիակատար անհավասարություն), 4) տնային տնտեսությունների միջին ամենօրյա ծախսը (գնողունակության վրա հիմնված ցուցանիշ. այն երկրի բնակչությունը բաժանում է երկու մասի՝ նրանց, ովքեր ծախսում են այդ նշածողից ավելի բարձր կամ ավելի ցածր):

Բնութագրիչների երրորդ՝ վերջին խմբում, որն ունի «Սերունդների հաջորդականությունը և զարգացման կայունությունը» անվանումը, ներկայացված են. 1) ճշգրտված զուտ խնայողությունները (հաշվարկվում են հետևյալ սխեմայով. բնական հարստությունների պաշարներ՝ գումարած

կրթության ծախսեր՝ հանած ռեսուրսների սպառում, էներգիայի պաշարների սպառում, վնասներ արտանետումներից. նշվում են համախառն ներքին արդյունքի տոկոսներով), 2) ՀՆԱ ջերմոցային էֆեկտը (CO<sub>2</sub>-ի արտանետումների ցուցանիշը ներքին համախառն արդյունքի յուրաքանչյուր մեկ դոլարի դիմաց, որն արտադրում է երկրի տնտեսությունը), 3) պետական պարտքի չափը (ՀՆԱ տոկոսով), 4) ժողովրդագրական ծանրաբեռնվածությունը (0-15 և 64-ից բարձր տարիքի խնամառու քաղաքացիների հարաբերակցությունը աշխատունակ բնակչության ընդհանուր թվաքանակի հետ): Բոլոր 12 ցուցանիշներից սկզբում կազմվում են ինդեքսների 3 խումբ և հետո արդեն դրանց գումարումից ստացվում է ամփոփ ցուցանիշը՝ որպես միջին թվաքանակական:

Պատահական չէ, որ կատարեցի այս էքսկուրսը, քանի որ 2018թ. ապրիլի 4-ին ՀՀ Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի հրավիրած խորհրդակցությունում, «Հայաստանի զարգացման ռազմավարություն 2030» նախագծի (այսուհետ՝ Ռազմավարություն) քննարկման ժամանակ, Նախագահն ասաց. «Մասնավորապես, ցանկանում եմ ընդգծել կայուն և բարձր ներառական տնտեսական աճի ապահովումը, որը զգալի պետք է լինի Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար»: Այնուհետև նշվում էր, որ այս փաստաթղթի իրագործումն անհրաժեշտ պայմաններ կապահովի հարյուր հազարավոր նոր աշխատատեղերի ստեղծման համար, որոնք կլինեն բարձր վարձատրվող և զգալիորեն կկրճատեն գործազրկության մակարդակը, հատկապես երիտասարդության շրջանում: Ռազմավարությունում նախատեսվում է զգալի միջոցներ ներդնել մարդկային կապիտալի, այսինքն՝ կրթության և առողջապահության զարգացման գործում: Վերջնապատակը անհրաժեշտ պայմանների ստեղծումն է, որպեսզի մինչև 2040 թվականը մենք ունենանք չորս միլիոն բնակչությամբ Հայաստան՝ մեկ շնչին բաժին ընկնող մոտ 20 հազար ԱՄՆ դոլար ՀՆԱ-ով: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ համազգային նպատակների իրագործումն ուղղակիորեն շաղկապվում էր «կայուն և բարձր ներառական տնտեսական աճի հետ»:

Մանրակրկիտ վերլուծելով Հայաստանի տնտեսական դրությունը՝ կրկին համոզվում ենք, որ առաջադրված համազգային նպատակներին հասնելը բարդ, բայց իրականանալի խնդիր է, որը, ըստ իս, ենթադրում է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի քննադատական իմաստավորում IDI բնութագրիչների տեսանկյունից: Ընդ որում, կարևոր է հանգամանալիորեն վերլուծել, թե որոնք են ներառական տնտեսական աճի առկա հնարավորությունները մեր տնտեսության համար: Այս բոլոր հարցերի ամբողջությունը մեկ հողվածում պարզաբանելը հնարավոր չի թվում, իսկ ընկալման առումով, ըստ իս, աննպատակահարմար է:

Դիտարկենք լոկ առանձին խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի Հայաստանի տնտեսության էական աճին: Այս նպատակով ներկայացնենք

**Ա. ԳԵՂԱՄՅԱՆ**

որոշ ցուցանիշներ, որոնք բնութագրում են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկան 2007–2017թթ. (տե՛ս աղյուսակ 1): Նշենք, որ աղյուսակ 1-ում և ստորև ներկայացվող մյուս աղյուսակներում ներկայացված բոլոր ցուցանիշները վերցվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի համապատասխան տարիների հունվար-դեկտեմբեր, հունվար և հունվար-փետրվար ամիսների տեղեկագրերից, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի՝ համապատասխան ժամանակաշրջանի տեղեկագրերից:

*Աղյուսակ 1*

Քվական	ՀՆԱ մլրդ դրամ	ՀՆԱ մլրդ դոլար	Փոխանցումներ ֆիզիկական անձանց բանկային համակարգի միջոցով (զուտ ներհոսքեր) մլն դոլար	ՀՆԱ բնակչության մեկ շնչի հաշվարկով, դոլարով	Ներդրումներ հիմնական կապիտալում մլրդ դրամ	Ուղղակի օտարերկրյա ներդրումներ մլն դոլար	Ուղղակի ներդրումներ (վճարային հաշվեկշռի տվյալներ) մլն դոլար
2007	3149,3	9,2	1058,310	3076	671,0	669,8	664,07
2008	3568,2	11,7	1393,067	3913	858,7	1132,4	925,29
2009	3141,7	8,6	929,235	2912	579,7	840,7	699,61
2010	3460,2	9,3	1071,973	3122	588,8	693,4	569,03
2011	3777,9	10,1	1282,357	3417	504,8	813,3	446,63
2012	4266,5	10,6	1395,014	3576	479,4	656,7	473,27
2013	4555,6	11,1	1545,576	3372	453,4	469,2	-353,52
2014	4828,6	11,6	1388,990	3889	463,9	382,8	-365,00
2015	5043,6	10,5	891,390	3529	481,5	180,5	-169,79
2016	5079,9	10,6	715,901	3533	410,6	338,0	-281,28
2017	5580,1	11,6	731,492	3690	415,9	245,7	-223,46
Ընդամենը	-	-	12403,305	-	5907,7	6422,5	3777,90/ -1393,05

Այսպես, ըստ աղյուսակ 1-ի 11 տարիների ընթացքում ներդրումները ՀՀ հիմնական կապիտալում կազմել են 5 տրլն 907 մլրդ 700 մլն դրամ: Այդ նույն ժամանակամիջոցում ՀՆԱ-ն ավելացել է 2 տրլն 430 մլրդ 800 մլն դրամով: Այսպիսով, ՀՆԱ աճի ծավալը պայմանավորված հիմնական կապիտալում ներդրումներով 2,5 անգամ փոքր է եղել հիմնական կապիտալում ներդրված միջոցների զումարից: Ընդ որում՝ հարկ է նշել, որ 2007–2017թթ. ժամանակաշրջանում ՀՀ պետական պարտքը (ներքին և արտաքին) ավելացել է 5 մլրդ 131 մլն 668 հազ. դոլարով կամ դրամով արտահայտված՝ 2 տրլն 772 մլրդ 429,9 մլն դրամով, կրկնում եմ՝ ՀՆԱ 2 տրլն 430 մլրդ 800 մլն դրամ աճի պարագայում (տե՛ս աղյուսակ 2):

Նման վիճակագրությունը բավական տազնապալի մտորումների տեղիք է տալիս և վկայում է այն մասին, որ այդ տարիների ընթացքում ներդրումները հիմնական կապիտալում և պետական փոխառությունները չափազանց անարդյունավետ են օգտագործվել: Ո՞րն է սրա պատճառը: Հարկ

Աղյուսակ 2

Թվական	ՀՆԱ մլրդ դրամ	ՀՆԱ մլրդ դոլար	ՀՀ պետական պարտքը մլն դոլար	Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը %	Ներդրումների ծավալն առևտրային բանկերում մլն դրամ	Առևտրային հաշվեկշիռը մլն դոլար	ԱՄՆ 1 դոլարի փոխարժեքը դրամի հանդեպ
2007	3149,3	9,2	1642,936 *	-	364349	-2115,487	342,1
2008	3568,2	11,7	1906,822	-	391374	-3368,968	306,0
2009	3141,7	8,6	3378,595	4,2	539462	-2610,976	363,3
2010	3460,2	9,3	3781,403	2,77	593025	-2707,897	373,7
2011	3777,9	10,1	4148,623	3,25	770226	-2810,993	372,5
2012	4266,5	10,6	4368,886	3,31	959529	-2881,034	401,8
2013	4555,6	11,1	4588,455	4,01	1163840	-2907,117	409,6
2014	4828,6	11,6	4441,524	6,15	1336645	-2877,137	415,9
2015	5043,6	10,5	5071,031	6,98	1520651	-1753,907	477,9
2016	5079,9	10,6	5934,776	5,96	1784154	-1509,5	480,5
2017	5580,1	11,6	6774,604 **	4,99	2130144	-1939,792	482,7
Ընդամենը	-	-	-	-	-	-	-

\* 507 մլրդ 156 մլն դրամ: ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումը 2018թ. հունվարին (էջ 54):

\*\* 3 տրլն 279 մլրդ 585,9 մլն դրամ: ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումը 2018թ. հունվարին (էջ 72):

եղած պրոֆեսիոնալիզմի բացակայությունը՝ առնվազն, էլ չեն ասում միջոցների ոչ նպատակային օգտագործման մասին և այլն, և այլն: Բայց սա առանձին վերլուծության թեմա է, որը, կարծում եմ, անպայման կարվի: Իսկ այստեղ նշենք, որ առաջացել է հստակ պայմանների մշակման անհրաժեշտություն, որոնք թույլ կտան նվազագույնի հասցնել ինչպես հիմնական կապիտալում ներդրումների, այնպես էլ բյուջետային ծախսերի անարդյունավետ օգտագործումը: Այս նպատակով հրատապ է դառնում SMART (ինտելեկտուալ) տնտեսությանն անցման խնդիրը: Դա թույլ կտա ավելի ռացիոնալ օգտագործել նյութական, աշխատանքային, մտավոր ռեսուրսները համազգային խնդիրների լուծման համար: Հայաստանի տնտեսությունում կիրարկման առումով սա նշանակում է մեր երկրի էկոնոմիկայում արդիական մոտեցմամբ խիստ պահանջված նպատակների առաջադրում, ինչպիսիք են՝ հազարավոր նոր և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը, տնտեսությունը ներառական տնտեսական աճի բերելու ինստիտուցիոնալ ու տնտեսական պայմանների մշակումը և այլն: SMART-նպատակների առաջադրման համակարգը թույլ կտա, օրինակ, Ռազմավա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

րությունը վերամշակել այնպես, որպեսզի նպատակների առաջադրման փուլում առկա ամբողջ ինֆորմացիան ընդհանրացվի տնտեսության ճյուղերի կտրվածքով, սահմանվեն աշխատանքի ընդունելի ժամկետներ առաջադրված նպատակներին հասնելու համար, պարզել ռեսուրսներով ապահովվածության աստիճանը՝ առաջադրված նպատակներին հասնելու համար և, վերջապես, գործընթացի բոլոր մասնակիցներին տալ հստակ, ճշգրիտ, կոնկրետ խնդիրներ: Նշենք, որ SMART-ը հապավում է՝ կազմված Specific, Measurable, Achievable, Relevant, Time bound բառերի սկզբնատառերից: Specific (կոնկրետ) չափանիշը նշանակում է, որ նպատակն առաջադրելու ժամանակ պետք է ճշգրիտ պարզված լինի այն արդյունքը, որին ուզում ենք հասնել: Measurable (չափելի) չափանիշը նշանակում է, որ նպատակը պետք է չափելի լինի, այսինքն՝ պետք է սահմանված լինեն կոնկրետ չափանիշներ նպատակի կատարման գործընթացը չափելու համար: Achievable չափանիշը ենթադրում է, որ SMART-ով առաջադրված նպատակը պետք է հասանելի լինի, քանի որ խնդրի կատարման իրատեսականությունն ազդում է կատարողի մոտիվացիայի վրա: Ընդ որում, նպատակի հասանելիությունը որոշվում է սեփական փորձի հիման վրա՝ հաշվի առնելով առկա բոլոր ռեսուրսներն ու սահմանափակումները, այն է՝ ժամանակային ռեսուրսները, ներդրումները, աշխատանքային ռեսուրսները, կատարողի գիտելիքները և փորձը, նրա համար տեղեկատվության ու ռեսուրսների մատչելիությունը, որոշումներ ընդունելու հնարավորությունը և վարչական լծակների առկայությունը: Relevant (նշանակալի) չափանիշը նշանակում է կարևորել այն ընկալումը, թե տնտեսության ճյուղերի, կոնկրետ կորպորացիաների կամ ձեռնարկությունների առջև կանգնած կոնկրետ խնդրի լուծումն ինչ ներդրում կունենա համազգային նպատակին հասնելու գործում: Եվ վերջապես, Time bound (ժամանակով սահմանափակված) չափանիշով նախատեսվում է սահմանել վերջնաժամկետը, որի գերազանցումը խոսում է առաջադրված նպատակը չկատարելու մասին:

Կարծում են, որ SMART-տեխնոլոգիաների լայն ներդրումը զգալի չափով կնվազեցնի նաև կորուպցիոն ռիսկերը, ուստի կասկած չի հարուցում, որ այս գործոնն անպայման պետք է դրվի Հայաստանի Հանրապետության կառավարության Ծրագրի, նրա աշխատանքի արդյունավետության չափանիշների մշակման հիմքում:

Այս առնչությամբ կուզենայի ուշադրություն հրավիրել նաև այն հանգամանքին, որ առաջացել է հիմնական կապիտալում ներդրումների և ներդրումների արդյունավետության բարձրացման հստակ չափանիշների մշակման անհրաժեշտություն, չափանիշներ, որոնք կենթադրեն առավելագույն մուլտիպլիկատիվ էֆեկտի ստացում: Միևնույն ժամանակ, խոսքը միայն էական մուլտիպլիկատիվ էֆեկտի հասնելու մասին չէ, երբ մեկ միավոր ներդրման դիմաց ստանում ենք աճ ՀՆԱ-ի հանդեպ, օրինակ՝ երկու և ավելի միավորի չափով: Պակաս կարևոր չէ պետական ծախսերի բարձր մուլտիպլիկատիվ էֆեկտի ապահովումը, երբ պետական ծախսերի ավե-

լացման պայմաններում արձանագրվում է միագումար եկամտի աճի առաջանցիկ տեմպ: Ցավոք, վերջին 11 տարիներին այս բոլոր հարցերը դուրս են մնացել գործադիր իշխանության՝ ՀՀ իրարահաջորդ կառավարությունների տեսադաշտից: Առաջինը, ինչն անհրաժեշտ է անել՝ հասցեատերերի հստակեցումն է, որոնց պետք է գերակա կարգով ուղղվեն ներքին ներդրումները, արտաքին փոխառությունները, պետական ծախսերի իրականացումը: Բնական է, որ սա ենթադրում է ներդրումային նախագծերի արդյունավետության և հասցեատերերի (որոնց կուղղվեն ներդրումները և կիրականացվեն պետական ծախսերը) հստակեցման կանխատեսման համակարգի մշակում, ինչը վերջնարդյունքում թույլ կտա ապագայում ՀՆԱ էական աճի հույս ունենալ:

Այնուհետև, կուզենայի ուշադրություն հրավիրել նաև հետևյալի վրա: Աղյուսակ 1-ի համաձայն՝ վերջին տարիներին նկատվում է ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալի զգալի կրճատում: Ավելին, ՀՀ Վճարային հաշվեկշռի ցուցանիշների համաձայն՝ 2013 – 2017թթ. ՀՀ տնտեսությունում կատարվել են բացասական ներդրումներ, այսինքն՝ հանվել է կապիտալ՝ 1 մլրդ 393,305 մլն դոլար ընդհանուր գումարի չափով: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանի տնտեսությունը կորցրել է իր ներդրումային գրավչությունը, ինչն իր հաստատումն է գտնում նաև երկրի միջազգային ներդրումային դիրքը բնութագրող վատթարացող ցուցանիշներում: Այսպես, վատթարանում է արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների պաշարի հավասարակշռությունը, այսինքն՝ տեղի է ունենում պարտավորությունների առաջանցիկ, ընդ որում՝ էական աճ ֆինանսական ակտիվների աճի համեմատ: Որպեսզի ասվածը մերկապարանոց չինչի, ներկայացնենք վիճակագրությունը: Այսպես, եթե 2012թ. դեկտեմբերի վերջի դրությամբ զուտ միջազգային ներդրումային դիրքը եղել է (միևնույն) – 6 մլրդ 835,43 մլն դոլար (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-փետրվարին, էջ 114), ապա արդեն 2017թ. դեկտեմբերի վերջի դրությամբ այդ ցուցանիշը կազմել է (միևնույն) – 8 մլրդ 802,14 մլն դոլար (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-փետրվարին, էջ 113): ՀՀ միջազգային ներդրումային դիրքի այսօրինակ փոփոխությունները, երբ տեղի է ունենում պարտավորությունների ծավալի էական ավելացում արտաքին ֆինանսական ակտիվների համեմատ, լուրջ ներդրողներն ասոցիացնում են ՀՀ-ում ներդրումային ծրագրերի իրականացման ռիսկերի բարձրացման հետ: Ցավոք, նման անխուսափելի երկյուղները ամրանում են այլ հանգամանքով ևս: Այսպես, եթե 2012թ. (տե՛ս աղյուսակ 2) ՀՀ առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը կազմում էր 3,31% (ՀՀ Կենտրոնական բանկի Տեղեկագիր, 2013թ. հունվար, էջ 56), ապա 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ցուցանիշը կազմել է 4,99% (ՀՀ Կենտրոնական բանկի տեղեկագիր, 2018թ. հունվար, էջ 122): Ընդ որում, եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակամիջոցում բնակչության ավանդները 959 մլրդ 529 մլն դրամից (ՀՀ Կենտրոնական բանկի Տեղեկագիր, 2013թ.

**Ա. ԳԵՂԱՄՅԱՆ**

հունվար, էջ 30) աճել են մինչև 2 տրլն 130 մլրդ 144 մլն դրամ (ՀՀ Կենտրոնական բանկի Տեղեկագիր, 2018թ. հունվար, էջ 97) կամ 2,22 անգամ (ինչը մեզ չի կարող չուրախացնել), ապա մենք իրավունք ունենք պնդելու, որ, թեև 2017 թվականին, օրինակ՝ 2015, 2016 թվականների համեմատ, չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը 6,98%-ից իջել է 4,99%-ի, սակայն, ընդհանուր առմամբ, նշված ժամանակաշրջանում բացարձակ արտահայտությամբ տեղի է ունեցել առևտրային բանկերի չաշխատող ակտիվների ծավալի զգալի աճ: Բնական է, որ այս հանգամանքը նույնպես չի ոգևորի արտաքին ներդրողներին Հայաստանի տնտեսությունում զգալի ներդրումներ կատարելու համար: Զէ՞ որ, ըստ էության, այս վիճակագրությունը վկայում է, որ եթե երկրի ներսում պոտենցիալ ներդրողներն իրենք են ձեռնպահ մնում ներդրումային նախագծեր իրականացնելուց, ապա այս պարագայում միանգամայն սպասելի է, որ օտարերկրյա ներդրողներն առավել ևս չեն շտապի անել դա: Կարծում եմ, որ այս հարցերի համալիրը պետք է դառնա հանգամանալի վերլուծության և գործունե միջոցների մշակման առարկա ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի կողմից և դրվի ՀՀ նոր կառավարության Ծրագրի ու համապատասխան լրացումներով՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության հիմքում: Նման մոտեցումը թույլ կտա էապես բարձրացնել Հայաստանի ներդրումային գրավչությունը, բարենպաստ պայմաններ կատեղծի ինչպես ուղղակի օտարերկրյա, այնպես էլ ներքին ներդրումների զգալի աճի ապահովման համար:

Աղյուսակ 3

Թվական	ՀՆԱ վրդ դրամ	Փողի գանգված մլն դրամ	Դրամային անկարող փողի գանգվածի (M2) հարաբերակցությունը ՀՆԱ-ին %	Փողի բազա մլն դրամ	Այդ թվում			M2 փողի գանգվածի հարաբերակցությունը փողի բազային (վարկային մուլտիպլիկատոր)	Միագումար թղթակցային հաշիվներ դրամով և արտարժույթով մլն դրամ	Փողի գանգված՝ միագումար թղթակցային հաշիվները (մլն դրամ)
					Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս մլն դրամ	Թղթակցային հաշիվներ (մլն դրամ)	Թղթակցային հաշիվներ արտարժույթով (մլն դոլար)			
2007	3149,3	691343	21,95	427118	350274	37445*	38421**	1,62	75886	615457
2008	3568,2	707788	19,84	449731	344503	38519*	65914**	1,57	104433	603355
2009	3141,7	814990	25,94	511678	320670	40450*	148673**	1,59	189123	625867
2010	3460,2	911386	26,34	507552	348165	57516*	88237**	1,79	145753	765633
2011	3777,9	1126978	29,8	671271	398777	163177*	102513**	1,68	265690	861288
2012	4266,5	1346364	31,56	683846	440117	154525	86033	1,97	240558	1105806
2013	4555,6	1545372	33,92	888057	446833	199002	238814	1,74	437816	1107556
2014	4828,6	1689783	35,0	886765	412345	334554	135944	1,9	470498	1219285
2015	5043,6	1855676	36,8	921325	413614	322668	182845	2,01	505513	1350163
Չեմ թաքցնի, որ այդ հանդիպման նախօրեին ինձ համակել էին հակասական զգացողություններ: Չէ՞ որ անկախ այն բանից, թե ով է Հայաստանում իշխանության ղեկին, եթե անկեղծ սիրում ես Հայրենիքը, ապա կամաակամա խիստ շահագրգռված ես Ռուսաստանի և Հայաստանի ղեկավարության միջև բանակցությունների հաջողությամբ: Անգամ այն դեպքում, երբ Հայաստանի իշխանության ղեկին է «ժողովրդի» վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ ՀՀ ԱԺ) կողմից սորոսյան տարատեսակ ֆոնդերի ու կրոնական աղանդների գրանտակերների ագրեսիվ ճնշմամբ հաստատված, որոնք հաճախ, իրենք էլ չգիտակցելով դա, իրենց գործողություններով խարխուլում են պետության և Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հիմքերը: Նրանց գործունեության զինանոցում ճիշտ նույնությամբ գործի է դրվում ոչ միայն գունավոր հեղափոխությունների և պետական հեղաշրջումների տեխնոլոգիաների հայտնի գիտակ Ջին Շարփի «Բռնապետությունից ժողովրդավարություն» գրքի «Ոչ բռնի գործողությունների 198 մեթոդ» հավելվածում ներկայացված գործիքակազմը, այլև մի ինչ-որ նոր բան: Վերցնենք թեկուզ այն ժամանակ Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցության ղեկավարների և պատգամավորների մահապատահները կախելու զգվելի ակցիաները: Ընդ որում՝ այդ պատահարները կախվում էին այն փողոցներում ու տների ճակատամասերին, որտեղ ապրում էին պատգամավորների ընտանիքները, հավանաբար, այն հաշվարկով, որ նրանց ծնողները, երեխաներն ու թոռները աշխատանքի կամ

դպրոց գնալիս խոր տրավմա ստանան մնացած ողջ կյանքի համար և հոգեբանական ճնշում գործադրեն իրենց մերձավորների՝ ՀՀ Աժ պատգամավորների վրա, որպեսզի նրանք քվեարկեն «Ժողովրդի» վարչապետի, «նոր Հայաստանի»՝ հանձինս այդ անկարգությունները հրահրողների, օգտին: Նշենք, որ պատգամավորներին «ահաբեկելուն» միտված բողոքի շարժման առաջին շարքերում, որպես կանոն, անխնամ հագնված, փնթի «կանայք» էին, որոնք, նրանց քրս-քրս տվող ուսանողների, հավանաբար, վատ սովորողների ու արտասահմանյան այլևայլ գրանտակերների ուղեկցությամբ, խմբային երթեր էին կազմակերպում դեպի խորհրդարանականների տները՝ հասցեատերերին կամ նրանց ընտանիքների անդամներին հանձնելով անգրագետ կազմված (ամենայն հավանականությամբ, օտար՝ գրանտատուի մայրենի լեզվից անվարժ թարգմանության պատճառով) հանրագրեր՝ վիրավորական բովանդակությամբ: Այլ գռեհիկ դրսևորումներ էլ եղան, որոնք առնվազն վկայում էին դրանք նախածեռնողների տարրական անդաստիարակության մասին: Ջարմանալին այլ բան է. այն, որ ատելության այս ողջ բաքոսատոնը, որն ուղեկցվում էր Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի քրեորեն պատժելի մի շարք խախտումներով, քաղաքական և իրավաբանական անգրագիտության պատճառով, թե՞ Ջին Շարփի (որը կյանքին հրաժեշտ տվեց այս «հեղափոխական» օրերից ընդամենը մի 5 – 6 ամիս առաջ) հիշատակն անտաշ ձևով մոռացության չմատնելու ցուցադրման նպատակով, դրա կազմակերպիչները սրբապղծորեն անվանեցին ոչ այլ կերպ, քան «թավշյա հեղափոխություն»: Մինևույն ժամանակ, հանուն արդարության նշենք, որ իշխանության բռնի տապալումը, այո, ես չսխալվեցի՝ բռնի տապալումը, ասել է թե՛ պետական հեղաշրջումը, տեղի ունեցավ մեր միանգամայն մեղսունակ զգալի թվով քաղաքացիների լուռ հավանությամբ, ովքեր իրենց անձնական համոզմունքներից ելնելով, որոնք շատ բանով համընկնում էին մերձավոր ու հեռավոր արտասահմանի իրենց գործատուների մտահղացումների հետ, նույնպես մասնակցում էին բողոքի շարժմանը: Ավաղ, նրանք մի փոքր համբերություն չցուցաբերեցին, որպեսզի իրենք էլ դառնան Հայաստանի Հանրապետության ներառական տնտեսական զարգացման վկաներն ու արարողները, որի անայլընտրանքայնության և պահանջվածության մասին համոզիչ կերպով հայտարարվել էր ՀՀ Նախագահ, վարչապետի թեկնածու Սերժ Ազատի Սարգսյանի ծրագրային ելույթում՝ ընթացիկ տարվա ապրիլի 14-ին ՀՀ Աժ հատուկ նիստի ժամանակ: Բայց սա առանձին վերլուծության թեմա է: Հարգելի ընթերցող, մինչ Պուտին – Փաշինյան հանդիպման արդյունքների մասին առաջին տպավորությունս արտահայտելը, ուզում եմ ներկայացնել բանակցային գործընթացներում հաջողությունների հասնելու անհրաժեշտ պայմանների իմ տեսլականը, իմ ըմբռնումը, անգամ մեր ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության հետ: Այս առումով խիղճս մաքուր է. վերջին 3 ամիսներին ես քանիցս հանդես եմ եկել քննադատական հոդվածներով Ն. Փաշինյանի կառավարության հասցեին՝ հատկապես շեշտադրելով նրա

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

ծախողումները, մանավանդ արտաքին քաղաքականության ոլորտում, այն հույսով, որ այդ քննադատությունից պատշաճ հետևություններ կանեն: Եվ ահա, բնորոշելով արդի Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը՝ ըստ իս, կարելի է փաստել, որ այն ուղղված է նոր արդար աշխարհակարգի կայացմանը, որի հիմքում պետք է լինեն համամարդկային արժեքների գերակայությունը, հավասար և անբաժանելի անվտանգության ապահովումը բոլոր ժողովուրդների և պետությունների համար, հակամարտությունների խաղաղ լուծումը, պետությունների ամբողջականության և ինքնիշխանության հարգումը, չմիջամտելը մեկը մյուսի ներքին գործերին: Կարծում եմ, Ռուսաստանի հետ բանակցություններում հաջողության հասնելու համար, այդ թվում և նրա ռազմավարական դաշնակիցը՝ Հայաստանը, պետք է ոչ միայն վերոնշյալ մոտեցումների համոզված հետևորդը լինի, ինչը, անշուշտ, անհրաժեշտ պայման է, այլև պետք է լինի ազնիվ և կանխատեսելի գործընկեր, որը հոգով ու մտքով հասկանում է ռուս մեծ քաղաքակրթության պատմական և մշակութային ժառանգության արժեքները: Բնավ պատահական չէ, որ գրում եմ այս մասին: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ այսօր էլ ՀՀ ներքին և արտաքին անվտանգությունն ապահովող կարևոր պաշտոններում հայտնվել են մարդիկ, ովքեր, մեղմ ասած, քաղաքական երկդիմության նմուշներ են հանդիսանում: Սակայն, ի տարբերություն հնամյա «երկդիմի Յանուսի» նախատիպի, որին հին աստվածներից մեկը՝ Սատուրնը, օժտել էր անցյալն ու ապագան տեսնելու ունակությամբ, մեր գործիչների պարագայում միանգամայն այլ պատկեր ունենք: Այսպես, Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանին «Նոյան տապան» թերթում [№ 9 (308), 2018թ. սեպտեմբեր], «Հայաստանի շահերն ամուր կապված են Ռուսաստանի հետ, և մենք ելնում ենք դրանցից» հարցազրույցում, հարցազրուցավար, հարգարժան Գրիգորի Անիսոնյանը հետևյալ հարցն է ուղղում. «Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Արտաշես Գեղամյանն իր հողվածներից մեկում՝ «Քոչարյանն իմ ընկերը չէ, բայց ճշմարտությունն ավելի թանկ է» վերնագրով, պնդում է, որ Հայաստանի նոր կառավարության գրեթե ողջ թիմը ռուսատյացներ են ու արևմտամետներ, Սորոսի և այլ «խափանարար» կառույցների «ստիպենդիատներ»: Պատգամավորն այդ թվում նշում է նաև Չեզ: Այդ պատճառով, գրում է հեղինակը, անվստահություն է առաջանում ներկա իշխանությունների այն հայտարարությունների հետ կապված, թե Հայաստանը չի փոխում Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների ուղեգիծը, բայց իրականում շրջվում է Արևմուտքի կողմը: Ինչպե՞ս կմեկնաբանեիք այս պնդումները»: Այո, իսպապես, ս. թ. օգոստոսի 2-ին REGNUM-ը հրապարակել է իմ հողվածը վերը նշված վերնագրով: Սկզբում մեջբերում կատարեմ իրեն տրված հարցին ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարի պատասխանից, հետո ներկայացնեմ իմ փաստարկները, որպեսզի հանկարծ Ռուսաստանի Դաշնության REGNUM Դաշնային տեղեկատվական գործակալության մեծարգո գլխավոր խմբագրի՝ բարձրակարգ քաղաքագետ և հայրենասեր-դերժավնիկ Մոդեստ

Ալեքսեևիչ Կոլերովի մեջ կասկած չսողոսկի այդ հողվածում իմ ներկայացրած փաստարկների կասկածելիության վերաբերյալ:

Եվ այսպես, իմ «վիզավի» Արմեն Գրիգորյանը տըրտնջում է. «Ո՞ւր են փաստերը, որոնք հաստատում են նման պնդումները: Ինձ համար կարևոր են փաստերը: Քաղաքականության մեջ պատահում է, որ արվում են պնդումներ, որոնց փաստացի ապացույցները չկան... Սյուս խնդիրն այն է, որ մարդիկ հաճախ ստերեոտիպերով են մտածում: Օրինակ, եթե մարդը սովորել է Արևմուտքում կամ աշխատել է ինչ-որ միջազգային կազմակերպությունում, նա պետք է լինի հակառուսական տրամադրված: Մենք կոտրել և կոտրում ենք այդ ստերեոտիպերը»: Առանց մեկնաբանությունների լոկ մի քանի փաստ ներկայացնեմ, որոնք տենչում է տեսնել սույն պարոնը: Այսպես, «Առավոտ» թերթին տված հարցազրույցում (<https://www.aravot.am/2016/01/13/646752/>) “Jamestown Foundation”-ի հողվածագիր, քաղաքագետ Արմեն Գրիգորյանն առարկել է փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանին՝ ՀԱՊԿ-ի մասին իր տեսլականը ներկայացնելով հետևյալ կերպ. «Բայց խնդիրը հենց այն է, որ ՀԱՊԿ-ը ազդեցիկ ռազմաքաղաքական կառույց չէ, այլ հենց ձևական է, քանի որ ի սկզբանե դրա ստեղծման միակ պատճառը եղել են ոչ թե անդամ երկրների ընդհանուր շահերը, այլ Ռուսաստանի հիվանդագին մեծապետական ամբիցիաները» («Առավոտ», 12. 01. 2016): Կամ մեկ այլ օրինակ: «Առավոտ» թերթի 2016թ. օգոստոսի 17-ի համարում, «Չկա ռուսական ծրագրերին հակակշռելու ընդունակ քաղաքական համակարգ» հողվածում, այդ նույն Ջեյմսթաուն ֆոնդի հողվածագիր Արմեն Գրիգորյանը կարծիք է հայտնել, թե «2013թ. աշնանից սկսած՝ բազմիցս առիթներ են եղել նշելու, որ Եվրասիական միությանն անդամակցելու (նկատի ունի Հայաստանի անդամակցությունը – Ա. Գ.) և Ռուսաստանից կախվածությունն էլ ավելի խորացնելու գործընթացը, ըստ էության, «անշյուսի», աստիճանական անեքսիայի է վերածվելու»: Չեմ կարող չներկայացնել ռուս-հայկական համագործակցության խորացման այս, իբր, նախանձախնդրի գրչի մեկ այլ մարգարիտ՝ հրապարակված 2016թ. նոյեմբերի 24-ին այդ նույն «Առավոտ» թերթում (<https://www.aravot.am/2016/11/24/829757/>)՝ «Երկիրը ռուսական գուբերնիայի վերածելու գործընթաց» վերնագրով հողվածը: Անդրադառնալով Հայաստանում տուրիզմի զարգացման հարցերին՝ Ա. Գրիգորյանը տրտնջում է, թե հաստատված է անվիզա ռեժիմ Հայաստան այցելող ռուսաստանցի քաղաքացիների համար. «Բացի այդ, զբոսաշրջությունը զարգացնելու համար կարելի էր այլ երկրների քաղաքացիներին ևս առանց անձնագրի մուտքի հնարավորություն տալ. մասնավորապես, ԵՄ-ի քաղաքացիները մի շարք երկրներում նման արտոնություն ունեն: Մնում է փաստել, որ Հայաստանի կառավարությունը նախընտրել է երկիրը ռուսական գուբերնիայի վերածելու գործընթացն արագացնել՝ հանուն իր վերարտադրությունը երաշխավորելու»:

Կարելի է ԱԱ քարտուղարի տասնյակ նման խոստովանություններ մեջբերել, բայց կսահմանափակվեմ փաստեր որոնողի որոշ հայտնություն-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

հողվածների լույս վերնագրերով, որոնք, բացահայտում են նրա՝ ըստ իրեն, լավ թաքցվող, խորապես ծածուկ հակառուսական էությունը: Եվ այսպես, ահա դրանցից մի քանիսը. «Ռուսական շանտաժի գործոնը բնավ չի վերացել» (<https://www.aravot.am/2015/06/03/577807/>), պակաս ինտրիգային չէ նաև Արմեն Գրիգորյանի մեկ այլ հարցազրույցի վերնագիրը, որը նա տվել է «Առավոտ» թերթին 2013թ. սեպտեմբերի 3-ին. «Ռուսաստանը չի հարգում Հայաստանի ինքնիշխանությունը» (<https://www.aravot.am/2013/09/03/282751/>) կամ էլ «Ռուսաստանը կարող է դիմել սադրանքի ԼՂ հակամարտության գոտում» հողվածը (4 նոյեմբերի 2013թ., «Առավոտ», <https://www.aravot.am/2013/11/04/402199/>): Ի դեպ նշեն, որ սույն հողվածը ռուսերեն լեզվով սեպտեմբերի 8-ին ժամը 22:55-ին (մ. ժ.) հրապարակվել էր REGNUM գործակալության կայքէջում: Իսկ արդեն սեպտեմբերի 9-ին ժամը 01:11 որպես հողվածիս շարունակություն REGNUM-ի խմբագրությունը տեղադրել էր Արմեն Գրիգորյանի խորհրդական Աննա Փևրոգյանի գրությունը, որում, մասնավորապես, նշված էր. «ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը ոչ մի կապ չունի “Jamestown Foundation” կազմակերպության Արմեն Գրիգորյան քաղաքագետ հողվածագրի հետ, անգամ լուսանկարում կարելի է տեսնել բոլորովին ուրիշ Արմեն Գրիգորյանի»: Հնարավոր կասկածները փարատելու համար ընթերցողի ուշադրությանը ներկայացնենք 2017 թ. նոյեմբերի 11-ին Արմեն Գրիգորյանի լուսանկարի ներքո հրապարակված «Армен Григорян: На международных платформах армянские чиновники способствовали распространению неверного вос-



прияття» վերնագրով հոդվածից մեջբերում: Այդ հոդվածի առաջին իսկ տողում կարդում ենք. «Собеседник Первого Информационного – автор статей фонда «Джеймстаун», политолог Армени Григорян» (armenian-report.com/ pubs/171545 11 Ноября 2017-11:35): Եթե 11 ամիս առաջ տեղի է ունեցել նման կոպիտ խեղաթյուրում, որին մինչ օրս չի արձագանքել ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը, ապա դա լուրջ մտորումների տեղիք է տալիս վերջիններիս արհեստավարժության կապակցությամբ, երբ նրանց ղեկավարի լուսանկարը ամիսներ շարունակ տեղադրված էր իր գրչին չպատկանող նյութում: Ինչպե՞ս ընկալել ազգային անվտանգության համար պատասխանատու կառույցի անտարբերությունը, եթե այն ի վիճակի չէ ապահովել սեփական տեղեկատվական անվտանգությունը: Իսկ միգուցե ...

Ինչևէ, կարծում եմ, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պարագայում մենք իրավունք ունենք փաստելու, որ, ի տարբերություն հին հռոմեական երկդիմի, մուտք ու ելքի և բոլոր դռների աստծո՝ մեր «հերոսը» ինքն իրեն փակուղի է քշել, որի պատին երևում են Մովսեսին Աստծո տված Իններորդ պատվիրանի տողերը. «Մերձավորիդ դեմ սուտ վկայություն մի՛ տուր»: «Մերձավոր» ասելով նկատի ունենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հավանական հետևորդությունը: Այս վերապահությունը բնավ պատահականորեն չեմ անում, քանի որ Ն.Փաշինյանի կառավարությունում և նրա մոլի երկրպագուների շարքերում կան Հայաստանի համար ոչ ավանդական տարատեսակ կրոնական աղանդների հետևորդներ, որոնք, ավաղ, աչքի են ընկնում բարձր կարգապահությամբ և համախմբվածությամբ, հատկապես այն ժամանակ, երբ բանը վերաբերում է «Ժողովրդի» վարչապետի կոչով կազմակերպվող հանրահավաքներին և երթերին մասնակցելուն: Այսքան մանրամասն մեջբերումներ չէի կատարի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հոդվածներից և հարցազրույցներից, եթե դրանցում Հայաստանի ազգային անվտանգության հանդեպ սպառնալիք չտեսնեի: Նրա գործընկերներից, օրինակ՝ ՀԱՊԿ գծով, ո՞վ նրա հետ կքննարկի անվտանգության մարտահրավերների վերաբերյալ որևէ լուրջ հարց՝ ի սկզբանե իմանալով, որ նա անկեղծ չէ և երկդիմի է: Օրինակ, եթե նա հայտնի ուսումնական կենտրոններում (որոնցում, որպես կանոն, դասավանդում են Արևմուտքի հատուկ ծառայությունների վետերանները) ստացած կրթությունը կանխամտածված ձևով, միտումնավոր շփոթում է հայտնի ուսումնական կենտրոններում (որոնք բացառապես բարձրագույն ուսումնական հաստատության համբավ են վայելում) բարձրագույն կրթություն ստանալու հետ, որպեսզի իմ խոսքերը խեղաթյուրելով՝ ընթերցողներին մոլորության մեջ գցի, ապա գոնե այս փաստը չի կարող չզգաստացնել նրա գործընկերներին:

Որպեսզի ընթերցողն այնպիսի տպավորություն չստանա, թե ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը հակառուսական արտաքին քաղաքական հակումների առումով Ն. Փաշինյանի շրջապատում բացառություն է, վկայակոչեմ «Նոր Հայաստանի» մեկ այլ բարձրաստիճան չինովնիկի՝ ՀՀ վարչապետի անմիջական վերահսկողության ներքո գտնվող Հա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

յաստանի Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի հրապարակային ելույթները: Այսպես, 2018թ. սեպտեմբերի 6-ին, ինչպես տեղեկացնում է «Արմենայրես» պետական տեղեկատվական գործակալությունը, լրագրողների հետ զրույցի ժամանակ, մեկնաբանելով տեղեկատվությունն այն մասին, որ իր ու Արմեն Գրիգորյանի նախկին գործունեության պատճառով իրենց ներկայությունն իշխող էլիտայում ցանկալի չէ Ռուսաստանի համար, արդեն իր պատասխանի մեջ, հոգու պարզության պատճառով, թույլ տվեց ինքնատիպ, իրեն հատուկ հերթական ռուսատյաց արտահայտությունը. «Մենք ռուսատյաց չենք եղել, ես ընդհանրապես դեմ չեմ ոչ մի ազգի (համաձայնեք, որ սա մեծահոգության գազաթնակետն է նրա կողմից – Ա. Գ.): Դա պարզապես սևացում է, ինչ-որ քարոզչության փորձ: Կան մարդիկ, որոնց կոշտուկը տրորում ենք, և նրանք պատվիրում են այդպիսի բաներ (հավանաբար, նրան ստիպում են հանդես գալ հակառուսական հողվածներով և հարցազրույցներով – Ա. Գ.): Բայց մենք զբաղվում ենք մեր գործով: Եվ հետո, այլ պետությունների ղեկավարները չեն կարող որոշել, թե ինչ կադրային քաղաքականություն պետք է վարվի մեր երկրում: Սա պարզապես վիրավորական է, երբ ասում են «Կրեմլը դժգոհ է ինչ-որ նշանակումից»: Գոհ պետք է լինեն Հայաստանի քաղաքացիները և վարչապետը», – ասել է Սանասարյանը: Նախ՝ կուզենայի ուղղել լրագրողին, որ նրանց «ներկայությունը իշխող էլիտայում» անցանկալի է նախ և առաջ Հայաստանի համար, քանի որ նրանց արտաքին քաղաքական, բացահայտ ռուսատյաց մոտեցումների պատճառով՝ ազգային անվտանգության առումով, այդ ներկայությունն առաջին հերթին Հայաստանին ոչ մի լավ բան չի խոստանում: Երկրորդ՝ իր պատասխանի մեջ Դ. Սանասարյանը, փաստորեն, չի հերքում «այլ պետությունների ղեկավարների» միջամտությունը կադրային քաղաքականությանը: Հետո ինքն էլ միջնորդավորված ձևով մատնանշում է, «ինչպես ասում են», Կրեմլը: Այս համառոտ նշումը կատարում են որպես ոչ մեծ նախաբան, իսկ այժմ որոշ մեջբերումներ կատարեմ նրա հողվածներից և հարցազրույցներից: Մեջբերում կատարեմ «Հայկական ժամանակ» թերթի (որի խմբագիրն է Նիկոլ Փաշինյանի տիկինը – *յսմբ.*) 2017թ. դեկտեմբերի 14-ի համարում հրապարակված Դավիթ Սանասարյանի հարցազրույցից, որի վերնագիրն է՝ «Դավիթ Սանասարյան. Եկել է ժամանակը, որ ՌԴ-ի սահմանապահ զորքերը հանվեն Հայաստանից» (<http://armtimes.com/hy/article/127332>): Այսպես, թղթակցի՝ «Դուք պնդում եք, որ հայ-իրանական սահմանին ընդհանրապես ռուսական սահմանապահների կարիք չկա՞» հարցին հետևել է հետևյալ պատասխանը. «Առհասարակ իմ կարծիքը, մոտեցումն այն է, որ ամբողջությամբ ռուսական զորքերը պետք է դուրս գան: Կեղծ հիմնավորում է, որ նրանք մեր անվտանգությունն են ապահովում, նման բան չկա: Բազմաթիվ անգամներ տեսել ենք, որ նրանք որևէ ձևով անվտանգություն չեն ապահովում: Թուրքիան կարողանում է իր օդուժն անցկացնել մեր սահմանով, ու դրա համար որևիցե պատասխան չկա Թուրքիային: Հակառակը տեսել ենք, թե ինչպես է Թուրքիան ռուսական ինքնաթիռը վայր գցում: Այնուամենայնիվ, տեսել ենք պերմյակովներ և այլն, և



այլն: Դա չարիք է (ռուսական զորքերի և սահմանապահների առկայությունը – Ա. Գ.), որի առկայությունը կախվածության մեջ է պահում մեզ Ռուսաստանից: Հայաստանը պետք է հրաժարվի դրանից»: Կամ էլ մեջբերենք Դ. Սանասարյանի այլ հայտնություններ ևս. «Հայաստանը մտցրել են ԵՏՍ կոչվող ճահճի մեջ, իսկ հիմա ասում են, որ այնտեղ խոսում են ռուսերեն, եկեք այնպես անենք, որպեսզի մեր երեխաները սովորեն այդ ճահճի լեզուն» (նկատի ունի Ա. Ս. Պուշկինի, Յու. Մ. Լերմոնտովի, Լ. Ն. Տոլստոյի, Ֆ. Մ. Դոստոևսկու, Ա. Պ. Չեխովի լեզուն – Ա. Գ.): Այս մեջբերումն արված է 2017թ. սեպտեմբերի 27-ի հոդվածից (<http://www.aravot-ru.am/2017/09/27/252019>), ճիշտ նույնությամբ վերնագրված այդ գործչի վերոնշյալ արատավոր բառերով: Կամ էլ ևս մեկ՝ Ռուսաստանի հանդեպ ատելության ոչ պակաս զգվելի դրսևորում: Այսպես, <https://blognews.am/arm/news/243329/ardyocputinn-e-spanel-nemcovin.html> կայքում «Արդյո՞ք Պուտինն է սպանել Նեմցովին» վերնագրի ներքո Նիկոլ Փաշինյանի սույն սխրակիցը հարց է տալիս. «Արդյո՞ք Պուտինն է սպանել Նեմցովին»: Այնուհետև ինքն էլ պատասխանում է. «Վստահ չեմ: Արդյո՞ք նա է մեղավոր Նեմցովի սպանության համար, – միանշանակ այո, քանի որ նա է Ռուսաստանի գաղջի ու ամենաթողության աճացնող դոնը, նա է, որ տևական ժամանակ է՝ խեղդում է այլախոհությունն ու բազմակարծությունը Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս, որտեղ որ կրեմլյան մահակը շարժվելու տեղ ունի...»: Հարկադրված հղում կատարելով հայերի և հայկական պետության համար ՀՀ Պետական վերահսկողական ծառայության նորահայտ ղեկավարի այս բացահայտ թշնամական ցիտատներին՝ զգում ես պետության հիմքերին սպառնացող վտանգը, Հայաստանի ազգային անվտանգությունը ենթարկվում է դաժան փորձությունների «Նոր Հայաստանի» իշխանավորների կողմից: Ինչո՞ւ են այս մասին գրում հենց հիմա՝ Վլադիմիր Պուտինի և Նիկոլ Փաշինյանի հանդիպման ավարտից հետո: Ուզում եմ հուսալ, որ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանին գոնե հիմա չէր խանգարի խորիել Ռուսաստանի նախագահի ողջույնի խոսքում արտահայտված շատ լակոնիկ մտքի շուրջ. «Հավանաբար, անհրաժեշտություն չկա առանձնապես խորանալ մեր հարաբերությունների բնույթի մեջ. դրանք կրում են միանգամայն հատուկ, առանձնահատուկ բնույթ: Եվ դա դրսևորվել է դարերի ընթացքում, այլ ոչ թե Ձեզ հետ մեր համատեղ աշխատանքի ժամանակ» (ընդգծումը հեղ. – խմբ.): Այս խոսքերում և՛ բարեկամական խորհուրդ կա, և՛ կոչ՝ գիտակցելու զբաղեցրած պաշտոնների ողջ աննշանությունը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության բազմադարյա պատմության համեմատ: Այս առնչությամբ կուզենայի հուսալ, որ Ն. Փաշինյանը հավատարիմ կմնա իր իսկ խոսքերին՝ ասված իր պատասխան խոսքում՝ ս. թ. սեպտեմբերի 8-ին Ռուսաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ. «Իհարկե, մենք տրամադրված ենք հետազայում ևս զարգացնել և ամրապնդել մեր հարաբերությունները ոչ միայն երկկողմ, այլ նաև ԵԱՏՄ շրջանակներում: Ես նկատի ունեմ նաև մեր հարաբերությունները ՀԱՊԿ շրջանակներում և առհասարակ այլ ոլորտներում»: Այս բառերի տրամաբանական շարունակությունը, եթե դրանք ասված են ան-

## Ա. ՊԵՆԱՍՅԱՆ

կեղծ և գիտակցված ձևով, պետք է դառնա ռուս-հայկական ռազմավարական դաշինքի բացահայտ հակառակորդներին զբաղեցրած պաշտոններից անհապաղ հեռացումը: Դրանով իսկ կորվի երկու բարի գործերի, իհարկե՝ անհամադրելի իրենց նշանակալիությամբ, սկիզբը:

Առաջին. կարվի առաջին քայլը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմաքաղաքական դաշինքի կնքման ճանապարհին, որի այլընտրանքը տարածաշրջանում և նրա շուրջ ստեղծված պայթյունավտանգ իրավիճակում պատերազմն է Հարավային Կովկասում: Պատերազմ, որը շա՛տ են ուզում սանձագերծել համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի ներկայացուցիչները՝ նպատակ ունենալով կասեցնել նոր, արդար աշխարհակարգի կայացումը, որի դրոշակակիրն է հանդիսանում Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի ղեկավարած Ռուսաստանը:

Եվ երկրորդ բարի գործը. Գրիգորյանին ու ընկերակիցներին ազատելով զբաղեցրած պաշտոններից՝ կորվեր նրանց անձի երկվության վերջը՝ մի կողմից, ինչպես նաև սույն գործողությունը կդառնար իր իսկ՝ Նիկոլ Փաշինյանի խոսքերի հավաստիացումը, թե իր կողմից ԵԱՏՄ-ում և ՀԱՊԿ-ում Հայաստանի անդամակցությունը չընդունելը՝ քանիցս հնչեցված նրա կողմից ամիսներ առաջ, երբ ընդդիմադիր պատգամավոր էր, լոկ մարտավարական խուսանավում էր: Համարձակվում են հուսալ, որ այդ խուսանավումը բնավ չի հետապնդել հերթական գրանտը կայցնելու նպատակ համախոհների և գրանտակեր տարբեր հասարակական կազմակերպությունների իր երկրպագուների համար:

*Հետգրության փոխարեն:* «Ժողովրդի» վարչապետի թիմի անդամների բազմաթիվ հարցազրույց-պարզաբանումները ռուս-հայկական համագործակցության խորացման գործին հանկարծ ի հայտ եկած անշեղ հավատարմության վերաբերյալ, հակառակ ավելի վաղ հնչեցված տրամագծորեն հակադիր պնդումների, ակամա որոշակի մտորումների տեղիք են տալիս: Օրերս դրանց բովանդակությունը բավական տարողունակ և սարկազմով մեկնաբանեց իմաստուն պետական գործիչ ընկերս, ով, հիրավի, հերոսական ճանապարհ է անցել, որը նշանավորվել է Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի Հանրապետության անկախության նվաճմամբ, Հայաստանի Հանրապետության՝ որպես միջազգային հարաբերություններում (լինի ԱՄՆ-ի, թե Եվրամիության հետ) անկախ սուբյեկտի կայացմամբ, էլ չեն ասում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության մասին: Ինչի՞ մասին պատմեց ինձ իմ լավ ընկերը: Նրա կարծիքով՝ հայ-ռուսական ռազմավարական դաշինքի նորահայտ վայ-ջատագովները հիշեցնում են հայտնի անեկդոտի պերսոնաժին. վախեցած մարդը դիմում է բժշկին՝ գանգատվելով, թե իրեն թվում է, որ ինքը մարդ չէ, այլ կուտ, որը ուր որ է կտցելու է առաջին իսկ պատահած հավը: Կտցված լինելու վախից այս հերոսը տնից դուրս չի գալիս: Սրտացավ բժիշկը, լսելով այցելուին, նրան համապատասխան բուժում է նշանակում: Նշված դեղորայքն ընդունելուց

մի քանի օր հետո հիվանդը նորից է գալիս բժշկի մոտ և երախտագիտական խոսքերով ողողում նրան՝ ասելով, թե արդեն հաստատ գիտի, որ կուտ չի: Հոգին դատարկած՝ նա դուրս է գալիս բժշկի աշխատասենյակից, բայց անմիջապես էլ հետ է դառնում և տագնապով հարցնում. բժիշկ, իսկ հավերը գիտե՞ն, որ ես արդեն կուտ չեմ, այլ մարդ: Ահա, հիմա էլ Ն. Փաշինյանի թիմի հատկապես եռանդուն հակառուսական գործիչներն իրարից խոսք խլելով՝ հարցազրույց հարցազրույցի հետևից են տալիս, միահամուռ պնդելով, որ իրենք բոլորովին էլ ռուսաոյաց չեն, պատկերավոր ասած՝ «կուտ» չեն, և շատ են անհանգստանում՝ իսկ այդ մասին գիտի՞ արդյոք նրանց «կտցող» հավը: Առակս զի՞նչ կցուցանե. մեծ քաղաքականության մեջ գործընկերների հավի հիշողության վրա հույս դնելը վնաս է ...

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

<< Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
<< Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
<< Աժ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ԵՍ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ ԵՍ ԸՆՏՐԵԼՈՒ

Armdaily.am-ը Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ հարցազրույցների շարք է անում մայրաքաղաքի նախկին քաղաքապետների հետ: Այս անգամ խոսել ենք Արտաշես Գեղամյանի հետ, ով Երևանի քաղաքապետ է եղել 1989 – 1990 թվականներին:

«Ես ամենայն ուշադրությամբ հետևում եմ ավագանու ընտրությունների գործընթացին, քանի որ ես ծնվել և մեծացել եմ Երևանում ու այս քաղաքի հետ է կապված իմ ամբողջ կյանքը»: Գեղամյանի կարծիքով՝ թեկնածուների մեծ մասն արժանավոր են և շատ լավ կլիներ, որ բոլոր ուժերից էլ մարդիկ ներգրավված լինեին քաղաքապետարանում, քանի որ կարծում է՝ բոլորն էլ սրտացավ են և սիրում են իրենց քաղաքը: «Բայց միայն սիրելը բավական չէ լավ քաղաքապետ լինելու համար: Պետք է ունենալ լավ ծրագիր և բանիմաց թիմ, որպեսզի կարողանան համատեղ ուժերով քաղաքի հոգսը թեթևացնեն», – ասաց նա և հավելեց, որ այդպիսի լավ թիմ ունի «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը:

Ինչու՞ հենց նրանց թեկնածուն և ծրագիրը. «Ծրագրի առաջին տողերը կարդալիս էլ կարող ենք նկատել, որ պրոֆեսիոնալ թիմ է աշխատել: Նրանք հասկանում են Երևանի ամենակարևոր խնդիրները և առաջարկում են այդ խնդիրների լուծման ուղիները և ես կարող եմ ասել, որ իմ ձայնը Նաիրա Զոհրաբյանին եմ տալու»: Արտաշես Գեղամյանի խոսքերով կարելի է մտածել, թե ինչ առանձնահատուկ բան կա դրանում, որ ԲՀԿ-ն ընդամենը 14 կետից բաղկացած ծրագիր է ներկայացրել. «Երբ խորանում ես, հասկանում ես, որ այդ 14 կետերում նրանք վիթխարի աշխատանք են դրել իրենց առաջ: Նրանք հատիկ - հատիկ վեր են լուծել բոլոր խնդիրները: Եվ ես վստահ եմ, որ նրանք կստանան Երևանցու քվեն և կկարողանան իրենց ծրագիրն իրագործել ի շահ մայրաքաղաքի ու Երևանցու»: Նախկին քաղաքապետը նշում է, որ կուսակցական պատկանելիությունը պետք է ղնել մի կողմ և համախմբվել մեկ գաղափարի շուրջ. «Լավ կլինի, որ մի պահ քաղաքական ուժերը մոռանան այդ կուսակցություն կոչվածը: Եվ ով էլ լինի քաղաքապետ, իր թիմում վերցնի նաև մյուս ուժերից անհատների, ովքեր իրենց ուժը և եռանդը չեն խնայի մայրաքաղաքի խնդիրները լուծելու հարցում»:

Քաղաքապետի թեկնածու Հայկ Մարությանի անվան շուրջ թեժ քննարկումներն ամենաշատն էին, և Արտաշես Գեղամյանի խոսքերով՝ վերջինս լավ դերասան է, բայց այրող՞ք կլինի նաև լավ քաղաքապետ. «Ես չգիտեմ՝ Հայկի քաղաքապետ դառնալը բխու՞մ է Երևանի շահերից: Մեզ պետք է քաղաքապետ, որ 24 ժամ կաշխատի և տոգորված կլինի քաղաքի խնդիրներով, իսկ Հայկը, ցանկանում է նա դա, թե՛ ոչ, քաղաքականացված քաղաքապետ կլինի: Հայաստանում ամենադժվարին աշխատանքը դա մայրաքաղաքի քաղաքապետ լինելն է: Թեկնածուն ոչ թե ի պաշտոնե պետք է լինի քաղաքապետ, այլ իր ամբողջ էությանմբ: Իսկ Մարության Հայկը, իմ կարծիքով, այդ մարդը չէ»:



## АРТАШЕС ГЕГАМЯН: Я ПРОГОЛОСУЮ ЗА НАИРУ ЗОГРАБЯН

В преддверии выборов в Совет старейшин Еревана сайт Arm-daily.am проводит цикл бесед с экс-мэрами столицы. В этот раз собеседником издания стал Арташес Гегамян – градоначальник Еревана в 1989 – 1990 годах.

«Я с пристальным вниманием слежу за ходом выборов в Совет старейшин, поскольку я родился и вырос в Ереване и с этим городом связана вся моя жизнь».

По мнению Гегамяна, большинство кандидатов – люди достойные и было бы прекрасно, если б в городской администрации были представлены все политические силы, поскольку он считает, что свою столицу любят все и душа за нее болит у всех. «Но одной любви недостаточно, чтобы стать хорошим главой города. Необходимо иметь хорошую программу и компетентную команду, чтобы совместными усилиями облегчить бремя нашего города», – сказал он, добавив, что такая команда есть у партии «Процветающая Армения».

Почему именно их кандидат и их программа? «Уже с первых строк их программы можно понять, что над ней работала команда профессионалов. Они понимают самые злободневные проблемы Еревана и предлагают пути их разрешения. Так что я могу сказать, что отдам свой голос за Наиру Зограбян». Но словам Арташеса Гегамяна, кто-то может сказать, а что особенного, ведь партия «Процветающая Армения» представила программу, состоящую всего-то из 14 пунктов. «Когда вникаешь глубже в суть программы, то понимаешь, что этими 14 пунктами, их реализацией предстоит провести огромную работу. Они досконально разобрали все проблемы, стоящие перед городом. И я уверен, что они получат голоса избирателей и смогут реализовать свою программу во благо Еревана и ереванцев». Экс-мэр столицы отмечает, что нужно отставить в сторону партийную принадлежность и консолидироваться вокруг одной идеи. «Было бы хорошо, если б политические силы на время забыли об этой навязчивой в данном случае партийной принадлежности. И кто бы ни стал мэром, он должен взять в свою команду представителей других полити-

ческих сил, которые профессионалы своего дела и не пожалеют сил и энергии для решения проблем города».

Самыми резонансными стали обсуждения вокруг кандидатуры Айка Марутяна. По словам Арташеса Гегамяна, артист он хороший, но сможет ли он стать и хорошим мэром? «Я не знаю, будет ли в интересах Еревана, если Аик станет городским головой. Нам нужен мэр, который будет работать 24 часа в сутки – проникнутый проблемами города, а Аик будет, хочет он или нет, политизированным мэром. Самая трудная работа в Армении – это быть мэром столицы. Главой города человек должен стать не по должности, а по своей сущности. А Марутян, на мой взгляд, не такой человек».



## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ԲԱ ՀԻՄԱ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱՎՆ Է. ՀԵՆՑ ԱՅՂ ԱՌԻԹԻՑ ՕԳՏԿԵԼՈՎ ԷԼ ԱՂՐԲԵԶԱՆԸ ԿՄՏՆԻ ՀՀ ՏԱՐԱԾՔ

«Ղա թավշյա հեղափոխություն չէր: Ղա դասական հեղաշրջում էր», – Արտաշես Գեղամյանը կարծում է, որ Սերժ Սարգսյանի շնորհիվ է, որ հեղաշրջման ընթացքում ոչ ոքի արյունը չի թափվել. «Բարեբախտաբար, մենք այն ժամանակ ունեինք խոշոր պետական գործիչ՝ ի դեմս Սերժ Սարգսյանի: Մարդ, որը Ղարաբաղյան պատերազմով է անցել և թափված արյուն է տեսել, երբեք թույլ չէր տա, որ Երևանի փողոցներում արյուն թափվեր»: «Հեղափոխություն իրականացնողները Ազգային ժողովի նախագահի, տեղակալների, ԱԺ պատգամավորների և մի շարք այլ անձանց տների բակում հայիռ-յախառը և սպառնալիքներով լի պաստառներ էին փակցնում ու այդքանից հետո ասում են, թե թավշյա հեղափոխություն է եղել: Այստեղ ոչ մի հեղափոխության մասին խոսք չի կարող գնալ»:

Գեղամյանի կարծիքով՝ նոր կառավարությունը պատրաստ չէ երկիրը կառավարելու. «Հայաստանի նման աշխարհաքաղաքական բարդ դիրքում գտնվող պետության համար յուրահատուկ մոտեցումներ են պետք, բայց այս չորս ամիսների ընթացքում ես ոչ մի մշակված մոտեցումներ ու ծրագրեր չեմ տեսել նոր կառավարությունից»: Կառավարության անդամների աշխատանքի լավ ու վատ կողմերը Արտաշես Գեղամյանը դժվարացավ նշել. «Երբ ընդհանուր առմամբ ՀՀ կառավարության ծրագիրը շատ թերի է, նրանց գործունեությունը ոչ լիարժեք և դրական, ես առանձին ինչ-որ դրվագներ կամ անհատների գործունեության լավ ու վատ կողմերը մատնանշել չեմ կարող»:

Գեղամյանի խոսքերով՝ նոր կառավարության ճանապարհը տանում է փակուղի. «Թե նրանք այդ փակուղի տանող ճանապարհը կընտրեն քարքարոտ, թե՝ ասֆալտապատ, դա արդեն էական չէ: Ասֆալտապատի միակ առավելությունն այն է, որ ճանապարհին ոտքդ քարին չի դիպչի», – ասաց նա և հավելեց, որ, այնուամենայնիվ, կառավարությունը ցանկություն ունի և փորձում է լավ բաներ անել:

Նոր կառավարությունը ցանկանում է արտահերթ ԱԺ ընտրություններ իրականացնել, սակայն Գեղամյանը կարծում է, որ խորհրդարանը ցրելու կոչեր անողները ցանկանում են ժամանակ շահել սեփական անպտուղ



աշխատանքները կոծկելու համար. «Արդյոք գեթ մեկ օրենսդրական նախա-  
ձեռնություն ներկայացվե՞լ է կառավարության կողմից, որ ԱԺ-ն հավանութ-  
յան չի արժանացրել: Չի եղել այդպիսի դեպք»: Գործչի պնդմամբ՝ սահմա-  
նադրական կամ քաղաքական ոչ մի պատճառ չկա, որ ԱԺ-ն լուծարվի.  
«Եթե նոր կառավարությունը գտնում է, որ խորհրդարանը պետք է լու-  
ծարվի, ապա վարչապետն իր լիազորությունները պետք է վայր դնի, և, եթե  
երկու անգամ չընտրվի նոր վարչապետ, նոր կարելի է լուծարել խոր-  
հրդարանը»:

Գեղամյանը վստահ է, թե՛ ԲՀԿ-ն, թե՛ ՀՅԴ-ն և, ինչու ոչ, ՀՀԿ-ն ունեն  
բավականին հմուտ կադրեր, ովքեր եթե ԱԺ-ում ներկայացնեն իրենց տես-  
լականը Հայաստանի ապագային վերաբերող, ապա համոզված է, որ  
բոլորը կասեն՝ «բա մենք, եթե էսպիսի կադրեր ունենք, ինչի՞ Նիկոլ Փաշին-  
յանին ընտրեցինք». «Ինչքան էլ իշխանությունները փորձեն երկրում իրա-  
վիճակն ապակայունացնել, միևնույն է հանգիստ իշխանափոխություն է  
լինելու: Ուրիշ հարց է, որ ՀՀԿ-ն կամ ԲՀԿ-ն երկրում իրավիճակի  
ապակայունացման չեն գնում, քանի որ հասկանում են՝ դեռ ժամանակը չէ»:

Ադրբեջանը բացահայտ հայտարարում է, որ Հայաստանում վարվող  
քաղաքականությունը պատերազմի կհանգեցնի Ադրբեջանի հետ: «Բա  
հիմա նոր խորհրդարանական ընտրությունների ժամանակն է. հենց այդ  
առիթից օգտվելով էլ Ադրբեջանը կմտնի ՀՀ տարածք: Այդ իսկ պատճառով՝  
պետք է յուրաքանչյուր քայլ ձեռնարկելիս հաշվարկել հնարավոր վտանգ-  
ները երկրիդ համար», – ասաց Արտաշես Գեղամյանը:



## АРТАШЕС ГЕГАМЯН: РАЗВЕ СЕЙЧАС ВРЕМЯ ПРОВОДИТЬ НОВЫЕ ПАРЛАМЕНТСКИЕ ВЫБОРЫ?! АЗЕРБАЙДЖАН ВОСПОЛЬЗУЕТСЯ ЭТИМ И ВТОРГНЕТСЯ НА ТЕРРИТОРИЮ АРМЕНИИ

«Это была не бархатная революция. Это был классический переворот». Арташес Гегамян считает, что именно благодаря Сержу Саргсяну в ходе переворота не пролилась кровь: «К счастью, в то время у руля государства был крупный политический деятель в лице Сержа Саргсяна – человека, прошедшего сквозь горнило Карабахской войны, видевшего кровь. Он ни за что бы не допустил, чтобы на улицах Еревана пролилась кровь... Вспомним, что во дворах домов, где жили председатель Национального Собрания, его заместители, депутаты, революционеры развешивали траурные полотна и плакаты с разного рода непристойными угрозами в их адрес. И после этого они говорят, что это была бархатная революция?! Ни о какой революции тут не может быть и речи».

По мнению Гегамяна, новое правительство не готово управлять страной: «Для Армении – государства, находящегося в столь сложной геополитической ситуации, нужны особые подходы, но за прошедшие четыре месяца я не увидел ни одного продуманного подхода или программы, разработанной новым правительством». Хорошие или плохие стороны работы членов правительства Гегамян затруднился назвать: «Когда программа правительства в целом весьма несовершенна, а их действия не совсем полноценны и позитивны, я не могу отметить какие-то отдельные положения или хорошие и плохие стороны деятельности конкретных лиц».

По словам Гегамяна, путь нового правительства ведет в тупик. «Какой именно путь в тупик они предпочтут – ухабистый или асфальтированный, не суть важно. Единственное преимущество гладкого, асфальтированного пути в том, что на нем не споткнешься о камень. В любом случае конечная остановка – тупик», – сказал он, добавив, что тем не менее нельзя отрицать, что правительство хочет и пытается делать что-то хорошее.

Новое правительство намерено провести внеочередные выборы в

Национальное Собрание, однако Гегамян полагает, что те, кто призывает распустить парламент, пытаются выиграть время, чтобы скрыть свои бесплодные деяния: «Было ли такое, чтобы правительство представило хоть одну законодательную инициативу, которую Национальное Собрание бы не одобрило?! Не было такого».

Гегамян утверждает, что нет ни одной конституционной или политической причины для роспуска НС: «Если новое правительство находит, что парламент следует распустить, то премьер-министр должен сложить свои полномочия, и если дважды не будет избран новый премьер, то в этом случае парламент можно распустить».

Артасес Гегамян уверен: и в партии «Прцветающая Армения» (ППА), и в Армянской революционной федерации «Дашнакцутюн» (АРФД), почему нет – и в Республиканской партии Армении (РПА) есть компетентные кадры, и если они представят в парламенте свое видение будущего Армении, то, как он считает, все могут сказать: «Если у нас были такие кадры, почему же мы выбрали Пашиняна?»: «Сколько бы власти ни пытались дестабилизировать ситуацию в стране, все равно будет мирная смена власти. Другое дело, что ни ППА, ни АРФД, ни РПА на смену премьер-министра не идут, ибо понимают – еще не время».

Азербайджан открыто заявляет, что проводимая в Армении политика приведет к войне с Азербайджаном. «Так разве сейчас время проводить новые парламентские выборы?! Азербайджан тут же воспользуется этим и вторгнется на территорию Армении. Поэтому, предпринимая любой шаг, необходимо просчитать все возможные для страны риски», – сказал Артасес Гегамян.

## АРТАШЕС ГЕГАМЯН: АНТИГОСУДАРСТВЕННЫЙ ПЕРЕВОРОТ Н. ПАШИНЯНА ОБРЕЧЁН НА ПРОВАЛ

### И В ЭТОМ – СПАСЕНИЕ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

Внимательно анализируя события последнего полугодия, происходящие в Республике Армения и вокруг нее, невольно задаешься вопросом: когда же у широких народных масс наступит осознание серьезной опасности, нависшей над армянской государственностью? Неужели нет понимания того, что Азербайджан уже объявил Республике Армения (РА) и Арцахской Республике (Нагорно-Карабахской Республике) гибридную войну? Изо дня в день повторяются обстрелы сел Тавушской области Республики Армения и населенных пунктов Арцахской Республики, которые в ведущих электронных СМИ Азербайджана преподносятся их населению и международным организациям как очередное нарушение режима прекращения огня со стороны РА и НКР. На этом фоне неужели соответствующие службы, призванные обеспечивать национальную безопасность Армении, не анализируют заголовки и содержание проправительственных и якобы независимых электронных изданий (особенно в последний месяц) апшеронской республики: «Азербайджанская армия готовится к наступлению в Карабахе» ([haqqin.az/news/136004](http://haqqin.az/news/136004) от 14 сентября 2018 г.), «Эрдоган подтвердил в Баку поддержку Азербайджана в карабахском конфликте» ([www.kavkaz-uzel.eu/articles/325429](http://www.kavkaz-uzel.eu/articles/325429) от 15 сентября 2018 г.) и множество других публикаций. К примеру, приведем выдержку из заявления Эрдогана, опубликованного на «Кавказском узле». «Турция будет поддерживать все усилия Азербайджана. Мы хотим прекращения страданий одного миллиона азербайджанских беженцев», – заявил Эрдоган в своем выступлении на параде, посвященном 100-летию освобождения Баку, видимо, вдохновившись выступлением Алиева, который до него заявил: «Основным условием, необходимым для восстановления территориальной целостности, является наличие сильной армии. И сегодня мощь азербайджанской армии увеличивается... Наступит день, когда наши флаги будут развеваться на всех наших территориях, которые сегодня под оккупацией».

Эрдоган далее подчеркнул, что Турция не установит отношений с Арменией и не откроет границ с ней, пока не будет урегулирован карабахский конфликт. «Ожидания открытия нами границ тем, кто виновен в оккупации 20% территории наших братьев и не позволяет более чем миллиону наших братьев вернуться в свои дома, пустая трата времени», – заявил Эрдоган. Эти прямые призывы к войне в устах президента страны-члена НАТО звучат зловеще. Вызывает недоумение то, что государства-члены НАТО – США и Франция, которые одновременно являются сопредседателями Минской группы ОБСЕ, почему-то отмалчиваются. Я всё надеялся, что посол США в РА Ричард Миллс обязательно выступит с соответствующим осуждающим заявлением после прямого подстрекательства турецким президентом к развязыванию войны со стороны Азербайджана. Помнится, когда 3 сентября т.г. министр иностранных дел РФ Сергей Викторович Лавров заявил, что Россию тревожит то, что ситуация в Армении сейчас продолжает бурлить и, в частности, расследуются события десятилетней давности, происходят аресты, Р. Миллс весьма оперативно среагировал на это, заявив: «Я видел подобные оценки и комментарии. Правительство Армении должно ответить на них. Наша позиция была и остается таковой, что события 1 марта должны быть подробно и объективно расследованы. Важно, чтобы следствие основывалось на принципах верховенства закона и в рамках должных правовых процессов». Хочу надеяться, что пять заявлений президентов США, Франции и России по урегулированию нагорно-карабахского конфликта были подготовлены на основе объективного расследования и составлены на принципах верховенства международного права и в рамках общепризнанных правовых процессов. Хотя молчанию посла США есть оправдание – эти воинственные призывы к войне со стороны лидеров Турции и Азербайджана прозвучали в минувшую субботу вечером, а дальше – выходной день, словом, сегодня ждем вестей на сей счет из американского посольства. Читатель может заподозрить меня в предвзятости: дескать, почему не упоминаются другие страны-сопредседатели Минской группы ОБСЕ? В этой связи хотелось бы обратить внимание читателей на некоторые факты.

Так, 14 сентября т.г. состоялся рабочий визит премьер-министра РА Никола Пашиняна в Париж и его встреча с президентом Франции Эммануэлем Макроном. Ну что же в этом необычного, может спросить читатель. А необычное вот в чём. Совершенно недавно, 11 июля т.г., Н. Пашинян был с официальным визитом в Брюсселе, где принимал участие в саммите НАТО. Отметим, что в рамках визита он встретился с президентом Франции Эммануэлем Макроном. Напомним также, что всего через месяц Э. Макрон прибудет в Армению с государственным визитом для

участия в саммите Франкофонии. Так чем же была обусловлена необходимость этой встречи? Освещая визит Н. Пашиняна в Париж, информгентства Армении, помимо упоминания разного рода протокольных любезностей, также сообщили, что стороны обменялись мнениями по карабахскому вопросу и придали важность мирному урегулированию конфликта в рамках формата Минской группы ОБСЕ. Не приходится сомневаться, что именно события, разворачивающиеся вокруг нагорно-карабахского конфликта, встревожили президента дружественной Франции, который захотел быть проинформированным о видении ситуации армянской стороной.

Что же касается действий нашего самого надежного союзника, Российской Федерации, лично ее достойного лидера, президента Владимира Владимировича Путина, то обратим внимание читателей на некоторые факты. Итак, 1 сентября т.г. в Сочи состоялась встреча президента Владимира Путина и президента Азербайджана. Примечательно, что еще накануне встречи азербайджанские СМИ выступили с серией публикаций, в которых особо подчеркивалось, что карабахский конфликт назван одной из тем встречи двух президентов. Более того, В. Путин, встречая И. Алиева, подчеркнул буквально вот что: «Рад возможности с вами поговорить и о наших двусторонних отношениях, и о том, как ситуация складывается в регионе – она непростая. Но надеюсь, что и наша сегодняшняя встреча будет способствовать тому, что мы поищем пути решения всех сложных проблем, но и, разумеется, поговорим о том, как развиваются двусторонние связи между Азербайджаном и Российской Федерацией».

Думается, что ни у кого не вызывает сомнений то обстоятельство, что, подчеркивая «в регионе складывается непростая ситуация», Владимир Путин имел в виду азербайджано–армяно–карабахский конфликт. И именно приверженность сохранению мира в регионе побудила президента В. Путина спустя неделю, 8 сентября, принять в Москве также и премьер-министра РА. Не хочется вдаваться в обсуждение степени объективности восторженных оценок Н. Пашиняна по итогам этой встречи в верхах. Дальнейшее развитие событий даст ответ и на этот вопрос. При этом надо полагать, что, следуя логике премьер-министра, он убедил или уговорил Владимира Владимировича, что наличие в его ближайшем окружении на руководящих должностях откровенных русофобов или приверженцев тоталитарных религиозных сект – это и есть новое проявление (доселе неизвестное политологической науке) «блестящих» российско-армянских отношений. Из этого цикла «блестящих» отношений отметим и ночной налёт на ЗАО «Южно-Кавказская железная дорога», являющееся 100% дочерней компанией ОАО «Российские железные дороги», с изъятием всей имеющейся в наличии документации, более того, с обнаруже-

нием неуплаты налогов аж на целых \$19 000. Согласитесь, что это – «внушительная» сумма для компании, инвестиции которой за последние годы перевалили отметку \$300 млн.

Чтобы не отвлекаться от главного, заметим, что 25 сентября т.г. намечен государственный визит президента РФ В. В. Путина в Азербайджан. Это убедительное свидетельство в первую очередь исключительно ответственного отношения союзнической России к вопросу недопущения сегодня как никогда опасной военной эскалации в регионе Южного Кавказа. Еще и еще раз убеждаешься, в частности, в том, что нашего стратегического союзника – Российскую Федерацию беспокоят те же самые провокационные своей воинственностью публикации в азербайджанской прессе – например, от 14 сентября т.г. в haqqin. az: «Азербайджанская армия готовится к наступлению в Карабахе», или в издании «Военное обозрение» от 17 сентября т.г.: «СМИ Баку: Азербайджанская армия готовится к освобождению Карабаха» и множество других. Видимо, нашего союзника склоняют к мысли, что апшеронским султаном готовится война в Карабахе. Ведь не стало бы столь серьезное российское издание, как «Военное обозрение», публиковать статью с вышеуказанным заголовком, в которой, например, отмечается: «Сегодня на территории Азербайджана стартовали крупнейшие за последнее время оперативно-тактические учения различных видов и родов войск. В маневрах, по сообщению Минобороны Азербайджана, участие принимают более 20 тысяч военнослужащих, свыше 200 танков и другой бронетехники, 100 с лишним ракетных систем и установок, 30 единиц авиации, включая армейскую». И это на фоне появившихся, как было отмечено, статей с весьма провокационными заголовками типа «Азербайджанская армия готовится к войне» (информационный портал AZE. az). Я вовсе не случайно столь подробно остановился на этих публикациях, готовящих общественное мнение Азербайджана, да и международные организации к мысли о неизбежности войны. Как же на всё это реагирует высокое руководство Армении, наделенный Конституцией РА самыми широкими полномочиями премьер-министр Никол Пашинян? Отвечу сразу – весьма своеобразно, а точнее, неадекватно. Чтобы быть правильно понятым, замечу лишь, что он всё еще продолжает пребывать в каком-то виртуальном мире. Достаточно сказать, что, анализируя его выступления и речи, приходишь к выводу: налицо полный отрыв руководителя страны от реальности. Причем примечательно, что человек, являющийся первым лицом государства в столь сложное для страны время, когда под угрозой ее безопасность и безопасность Арцахской Республики, свои выступления и действия посвящает в основном разоблачению каких-то контрреволюционеров, которые только и делают, что на заседаниях Национального

## А. ГЕГАМЯН

Собрания РА единогласно голосуют за любой проект закона, представленный правительством Н. Пашиняна. Причём его выступления, как правило, бывают не во время заседаний правительства РА, а в ходе предвыборной кампании на митингах, организованных в поддержку одного из кандидатов в мэры г. Еревана, выдвигенца его партии. Справедливости ради отметим, что его выступление от 16 сентября т.г. перед избирателями одного из районов г. Еревана отличилось новшеством: Никол Воваевич в лучших традициях прямой демократии то ли Древней Греции V и IV веков до н.э., то ли Великого Новгорода XII – XV веков напрямую обратился к ... гражданам Азербайджана, да-да, я не оговорился, к гражданам Азербайджана. Видимо, из посольства какой-либо страны или из небезызвестной радиовещательной компании его уверили, что, как то было на протяжении так называемой «бархатной революции» (читай – государственного переворота), когда велась круглосуточная прямая трансляция с улиц Еревана, так будет и сейчас и его выступления будут вещаться и на Баку, причем в режиме прямого эфира, без редакторской правки, с сохранением вполне объективной критики в адрес президента И. Алиева, который не сообразил последовать примеру Н. Пашиняна и отправить своего сына служить в Вооруженные силы Азербайджана на границе с Арцахской Республикой. Здесь Н. Пашинян для пущей убедительности своих слов, тем более для азербайджанской аудитории, на мой взгляд, должен был бы добавить, что в прифронтовой зоне, как правило, служат представители национальных меньшинств и самых неимущих слоев населения Азербайджана. В чём мы в очередной раз убедились после четырехдневной (2016 г.) азербайджанской военной агрессии против Арцахской Республики.

К сожалению, абсолютно неадекватная оценка имеющихся угроз безопасности армянской государственности стала доминантой и в деятельности соответствующих правительственных структур. Вызывает недоумение, когда соответствующие компетентные структуры после каждого военного инцидента на границе Республики Армения и Азербайджана или после нередких вылазок азербайджанских диверсантов как в РА, так и в Арцахскую Республику лишь ограничиваются академическими беззубыми заявлениями, озвучиваемыми соответствующими пресс-службами указанных организаций.

С сожалением приходится отмечать, что и трезво мыслящие политики, которые, осознавая свою ответственность перед гражданами республики за обеспечение национальной безопасности, время от времени скатываются на уготованные им роли – всё время реагируют на какие-то несуразные, как правило, клеветнические обвинения в адрес депутатов НС РА от Республиканской партии Армении, льющиеся, как из рога изоби-



лия, из уст «народного» премьера сотоварищи. Тем самым, по сути, не в полной мере реализуется, а скорее торпедировается крайне востребованная работа по консолидации армянского народа.

Комплекс всех этих вопросов является убедительным подтверждением того, что на одном из важнейших направлений объявленной нам Азербайджаном гибридной войны реализуется поставленная ими цель: расшатывается единство и подрывается консолидация армянского народа, политической элиты и гражданского общества, тем самым наносится сильный удар, расшатывающий безопасность армянского государства на данном судьбоносном этапе нашей истории. Эта серьезная угроза, увы, не находит надлежащего противодействия.

Вновь и вновь осмысливая положение, сложившееся в Армении и вокруг нее, на память приходит книга бизнесмена и философа, математика Нассима Талеба «Черный лебедь. Под знаком непредсказуемости», вышедшая в 2007 году и ставшая в год издания бестселлером. Очень важно, чтобы у читателя не сложилось впечатление, что события, происходящие в РА, были для меня непредсказуемы. С того дня, когда немногочисленными «революционерами любви и солидарности» был совершен штурм здания Общественного радио под руководством будущего «народного» премьера Н. Пашиняна 14 апреля 2018 г., у меня не было никаких иллюзий насчет финала сей затеи, увы, до конца не просчитанной со стороны отдельных задействованных в этом процессе акторов. Было заявлено (Н. Пашиняном), что акция в здании Общественного радио – это образец мирного гражданского неповиновения. Видимо, сделать такой вывод подтолкнуло абсолютно безучастное поведение полиции. Словом, тогда уже всё стало понятно. Но это тема отдельного анализа. Я об этом вспомнил лишь с тем, чтобы сказать, что этот государственный переворот был весьма предсказуем с моей стороны и никоим образом не уместается в первый из критериев теории «Черного лебедя», а именно: 1) событие является неожиданным. Впрочем, оно вполне уместается во второй и третий критерии; 2) событие производит значительные последствия и 3) после наступления в ретроспективе, событие имеет рационалистическое объяснение, как если бы событие было ожидаемым. Что касается прогнозируемости второго критерия, думается, ни для кого не секрет, что над страной неизбежно нависает угроза потери государственности, если к власти приходят революционеры, для которых созидание и государственное строительство изначально противопоказаны. Не говоря уже о незнании ими азов государственного управления. Относительно ожидаемости третьего критерия оговоримся, что для главного закулисного автора сценария «революции любви и солидарности» уже по прошествии почти 6 месяцев (в плане поставленных главным сце-

наристом целей) произошедшее умещается и в третий критерий теории «Черного лебедя». Тогда в чём же дело? Почему при анализе современного положения в РА на память приходит теория Нассима Николаса Талеба? В своей книге Нассим Талеб отмечает, что человечество неспособно успешно прогнозировать свое будущее, если уверенность в своих знаниях опережает сами знания и тем самым порождает феномен сверхуверенности. В действиях «народного» премьер-министра Никола Пашиняна мы становимся свидетелями классического примера феномена сверхуверенности, причем ввиду того, что «уверенность в своих (Никола. – А. Г.) знаниях опережает (причем весьма существенно) сами знания». Более того, мы являемся очевидцами, когда сверхуверенность Н. Пашиняна является не чем иным, как искажением имеющихся реалий, при которых уверенность премьер-министра РА в своих действиях и решениях значительно выше, чем объективная точность его суждений относительно положения в РА и вокруг неё. Естественно, что этому процессу, очевидцами которого являются не только наши сограждане, но и мало-мальски осведомленные политики из-за рубежа, свойственно льстивое представление о себе любимом. Отметим, что если с феноменом сверхуверенности своего руководителя сталкивается отдельно взятая корпорация, то это может обернуться потерями для корпорации, в худшем исходе – её банкротством. А в случае, когда у руля государства оказался человек, подверженный феномену сверхуверенности, то вывод однозначен: настало время для объявления общенационального SOS (Save our Souls), но не в плане спасения наших душ, а в плане спасения армянской государственности.

*Вместо послесловия.* Не хотелось бы на грустной ноте завершать свою статью. Почему-то, когда у меня бывает тревожно на душе, на память приходит письмо арбитра искусств Гая Петрония императору Нерону. Приведу лишь отдельную выдержку из него: «...Мучай своих подданных, если так хочется, но умоляю тебя – не уродуй и не калечь Искусства. Прошу Тебя: не сочиняй больше музыки».

Вот и сейчас хотелось бы написать Н. Пашиняну: «...Мучай своих фанатов-почитателей, которым ты методично внушаешь, что среди армянского народа есть «черные» и «белые», если так хочется, но прошу тебя – не уродуй и не калечь наши традиционные семейные ценности, явно и тайно покровительствуя ЛГБТ- сообществам, безнаказанно, нагло и цинично атакующим отделения полиции Еревана; не покровительствуй агрессивным религиозным сектам, атакующим Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина Второго; не покровительствуй разного рода отщепенцам из финансируемых Соросом общественных органи-

заций, которые намереваются 15–18 ноября т.г. провести очередное собрание под названием «Форум ЛГБТ-христиан Восточной Европы и Центральной Азии» на священной земле Григория Просветителя и Григора Нарекаци. Прошу тебя, перестань мучить обезволенных нуждой людей своими надрывными речами о революции и контрреволюции. Может, ты и не осознаешь, что уже стал угрозой национальной безопасности Республики Армения».

Чтобы у читателя не сложилось впечатление, что мои раздумья – это своеобразный «глас вопиющего в пустыне», с уверенностью заявляю, что коллективная мудрость армянского народа восторжествует и антигосударственный переворот Никола Пашиняна, какими бы благими лозунгами ни прикрывался, будет обречен на провал. В этом, бесспорно, спасение Армянского государства и Арцахской Республики. И чем раньше наступит осознание этой истины, тем меньше угроз национальной безопасности и государственности Республики Армения.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»



## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՁԱԽՈՂՄԱՆ

Ուշադիր վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում և նրա շուրջ վերջին կես տարում տեղի ունեցող իրադարձությունները՝ ականա հարց է ծագում. ժողովրդական լայն զանգվածները ե՞րբ կգիտակցեն այն լուրջ վտանգը, որը կախվել է հայոց պետականության գլխին: Մի՞թե չկա ըմբռնումն այն բանի, որ Ադրբեջանն արդեն հիբրիդային պատերազմ է հայտարարել Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ) և Արցախի Հանրապետությանը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն): Օր օրի կրկնվում են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գյուղերի և Արցախի Հանրապետության բնակավայրերի զնդակոծությունները, որոնք Ադրբեջանի առաջատար էլեկտրոնային ՋԼՄ-ներում իրենց բնակչությանն ու միջազգային կազմակերպություններին մատուցվում են որպես ՀՀ-ի և ԼՂՀ-ի կողմից իրադարձի ռեժիմի հերթական խախտում: Այս համապատկերում մի՞թե համապատասխան ծառայությունները, որոնք կոչված են ապահովելու Հայաստանի ազգային անվտանգությունը, չեն վերլուծում ափշերոնյան հանրապետության կառավարամետ և իբր անկախ էլեկտրոնային պարբերականների հոդվածների վերնագրերն ու դրանց բովանդակությունը (հատկապես վերջին ամսին), դիցուք. «Ադրբեջանական բանակը պատրաստվում է հարձակման Ղարաբաղում» ([haqqin.az/news/136004](http://haqqin.az/news/136004), 14 սեպտեմբերի 2018թ.), «Էրդողանը Բաքվում հաստատել է իր աջակցությունն Ադրբեջանին Ղարաբաղյան հակամարտությունում» ([www.kavkaz-uzel.eu/articles/325429](http://www.kavkaz-uzel.eu/articles/325429), 15 սեպտեմբերի 2018թ.) և բազմաթիվ այլ հրապարակումներ: Օրինակ, մեջբերում կատարենք Էրդողանի՝ «Кавказский Узел»-ում հրապարակված հայտարարությունից: «Թուրքիան կսատարի Ադրբեջանի բոլոր ջանքերին: Մենք ուզում ենք, որ դադարեն մեկ միլիոն ադրբեջանցի փախստականների տառապանքները», – հայտարարել է Էրդողանը Բաքվի ազատագրման 100-ամյակին նվիրված ռազմական շքերթի ժամանակ ունեցած իր ելույթում, ըստ երևույթին՝ ոգեշնչվելով իրենից առաջ Ալիևի ունեցած ելույթից, որն ասել էր. «Տարածքային ամբողջականության վերականգնման հիմնական պայմանը ուժեղ բանակի առկայությունն է: Եվ այսօր ադրբեջանական բանակի հզորությունը մեծանում է... Կգա օրը, երբ մեր դրոշները կփողփողան մեր բոլոր տարածքների վրա, որոնք այսօր օկուպացիայի մեջ են»:

Իսկ Էրդողանն այնուհետև ընդգծել էր, որ Թուրքիան հարաբերություններ չի հաստատի Հայաստանի հետ և չի բացի նրա հետ սահմանները, մինչև որ չկարգավորվի Ղարաբաղյան հակամարտությունը: «Մեր կողմից սահմանները բացելու նրանց ակնկալիքը, ովքեր մեղավոր են մեր եղբայրների տարածքի 20%-ի օկուպացիայի մեջ և թույլ չեն տալիս մեր ավելի քան մեկ միլիոն եղբայրներին վերադառնալ իրենց տները՝ ժամանակի իզուր վատնում է», – ասել է Էրդողանը: Պատերազմի այս ուղղակի կոչերը ՆԱՏՕ անդամ երկրի նախագահի կողմից չարագուշակ են հնչում: Տարակուսանք է առաջացնում այն, որ ՆԱՏՕ անդամ պետությունները՝ ԱՄՆ-ը և Ֆրանսիան, որոնք միաժամանակ հանդիսանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողներ, չգիտես ինչու, լռում են: Ես դեռ հույս ունեի, որ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսն անպայման հանդես կգա համապատասխան դատապարտող հայտարարությամբ Թուրքիայի նախագահի կողմից Ադրբեյջանին պատերազմ սանձազերծելու ուղղակի սադրելուց հետո: Մտաբերում եմ, երբ ս. թ. սեպտեմբերի 3-ին ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Վիկտորովիչ Լավրովն ասաց, թե Ռուսաստանին տագնապեցնում է, որ իրավիճակը Հայաստանում հիմա շարունակում է եռալ և, մասնավորապես, հետաքննվում են տասնամյա վաղեմության իրադարձությունները, տեղի են ունենում կալանումներ, Ռ. Միլսը շատ օպերատիվորեն արձագանքել է դրան՝ ասելով. «Ես տեսել եմ նման գնահատականներ և մեկնաբանություններ: Հայաստանի կառավարությունը պետք է պատասխանի դրանց: Մեր դիրքորոշումը եղել և մնում է այնպիսին, որ մարտի 1-ի իրադարձությունները պետք է մանրամասն և օբյեկտիվորեն հետաքննվեն: Կարևոր է, որպեսզի քննությունը հենվի օրենքի գերակայության սկզբունքների վրա և պատշաճ իրավական գործընթացների շրջանակներում»: Ուզում եմ հուսալ, որ ԱՄՆ, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահների հինգ հայտարարությունները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ պատրաստվել են օբյեկտիվ հետաքննության հիման վրա և կազմվել են ըստ Միջազգային իրավունքի գերակայության սկզբունքների ու համընդհանուր իրավական գործընթացների շրջանակներում: Թեև ԱՄՆ դեսպանի լռությունը արդարացում ունի. պատերազմի այդ ռազմաշունչ կոչերը Թուրքիայի և Ադրբեյջանի նախագահների կողմից հնչել են անցած շաբաթ օրվա երեկոյան, իսկ հետո կիրակի էր, մի խոսքով՝ այսօր ամերիկյան դեսպանությունից սպասում ենք լուրերի այս հաշվով: Ընթերցողը կարող է կասկածել ինձ կանխակալության մեջ. ինչո՞ւ, իբր, չեն հիշատակվում ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահող երկրները: Այս առնչությամբ կուզենայի ընթերցողների ուշադրությունը հրավիրել որոշ փաստերի վրա:

Այսպես, ս. թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Փարիզ և նրա հանդիպումը Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ: Ի՞նչ արտաստվոր բան կա այստեղ՝

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կարող է հարցնել ընթերցողը: Իսկ արտասովորն ահա թե ինչն է: Բոլորովին վերջերս՝ ս. թ. հուլիսի 11-ին, Ն.Փաշինյանը պաշտոնական այցով գտնվում էր Բրյուսելում, որտեղ մասնակցում էր ՆԱՏՕ գագաթաժողովին: Նշենք, որ այցի շրջանակներում նա հանդիպել էր Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ: Հիշեցնենք նաև, որ ընդամենը մեկ ամիս հետո է. Մակրոնը կժամանի Հայաստան՝ պետական այցով, մասնակցելու համար Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովին: Ուրեմն, ինչո՞վ էր պայմանավորված այս հանդիպման անհրաժեշտությունը: Լուսաբանելով Ն. Փաշինյանի Փարիզ կատարած այցելությունը՝ Հայաստանի տեղեկատվական գործակալությունները, տարատեսակ արարողակարգային սիրալիրությունների հիշատակման կողքին, նաև տեղեկացրին, որ կողմերը կարծիքներ են փոխանակել Ղարաբաղյան հարցի վերաբերյալ և կարևորել են հակամարտության խաղաղ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի շրջանակներում: Հարկ չկա կասկածելու, որ հենց Ղարաբաղյան հակամարտության շուրջ ծավալվող իրադարձություններն են տագնապեցրել բարեկամական Ֆրանսիայի նախագահին, որը ցանկացել է տեղեկացված լինել իրավիճակի վերաբերյալ հայկական կողմի տեսլականի մասին:

Իսկ ինչ վերաբերում է մեր ամենահուսալի դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության, անձամբ նրա մեծարգո առաջնորդի՝ նախագահ Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի գործողություններին, ապա ընթերցողների ուշադրությունը հրավիրենք որոշ փաստերի վրա: Եվ այսպես, ս. թ. սեպտեմբերի 1-ին Սոչիում տեղի ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Ադրբեջանի նախագահի հանդիպումը: Հատկանշական է, որ դեռևս հանդիպման նախօրեին ադրբեջանական ՁԼՄ-ները հանդես եկան մի շարք հրապարակումներով, որոնցում առանձնապես ընդգծվում էր, որ Ղարաբաղյան հակամարտությունը նշվել էր որպես երկու նախագահների հանդիպման թեմաներից մեկը: Ավելին, Վ. Վ. Պուտինը, ընդունելով Ի. Ալիևին, ընդգծել էր տառացիորեն հետևյալը. «Ուրախ եմ ձեզ հետ թե՛ մեր երկկողմ հարաբերությունների, թե՛ այն մասին խոսելու հնարավորության համար, թե ինչպիսի իրավիճակ է ստեղծվում տարածաշրջանում. այն հասարակ չէ: Բայց հույս ունեմ, որ մեր այսօրվա հանդիպումը ևս կնպաստի այն բանին, որպեսզի մենք փնտրենք բոլոր բարդ խնդիրների լուծման ուղիները, և հասկանալի է՝ կխոսենք այն մասին, թե ինչպես են զարգանում երկկողմ կապերը Ադրբեջանի և Ռուսաստանի Դաշնության միջև»:

Կարծում եմ, որ որևէ մեկի կասկածը չի հարուցում այն հանգամանքը, որ ընդգծելով, թե «տարածաշրջանում հասարակ իրավիճակ չի ստեղծվում», Վլադիմիր Պուտինը նկատի է ունեցել ադրբեջանա-հայ-ղարաբաղյան հակամարտությունը: Եվ տարածաշրջանում հենց խաղաղության պահպանմանը հավատարմությունն է մղել նախագահ Վ. Վ. Պուտինին մեկ շաբաթ անց՝ սեպտեմբերի 8-ին, Մոսկվայում ընդունել նաև ՀՀ վարչապետին:

Չեն ուզում խորանալ ղեկավարների այդ հանդիպման արդյունքների մասին Ն. Փաշինյանի հիացական գնահատականների օբյեկտիվության աստիճանի քննարկումների մեջ: Իրադարձությունների հետագա զարգացումը կտանա այդ հարցի պատասխանը: Ընդ որում, պետք է կարծել, որ հետևելով վարչապետի տրամաբանությանը՝ նա հավատացրել կամ համոզել է Վլադիմիր Վլադիմիրովիչին, որ իր մերձավոր շրջապատում՝ ղեկավար պաշտոններում բացահայտ ռուսատյացների կամ տոտալիտար կրոնական աղանդների հետևորդների առկայությունն է հենց «փայլուն» ռուս-հայկական հարաբերությունների նոր (ցայժմ քաղաքագիտությանն անհայտ) դրսևորումը: «Փայլուն» հարաբերությունների այս շարքից նշենք նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի վրա գիշերային հարձակումը, որը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի 100%-անոց դուստր ընկերությունն է՝ առկա բոլոր փաստաթղթերի առգրավմամբ, ավելին՝ ուղիղ \$19 000 չվճարված հարկերի հայտնաբերմամբ: Համաձայնեք, որ սա «պատկառելի» գումար է մի ընկերության համար, որի ներդրումները վերջին տարիներին գերազանցել են \$300 մլն նշածողը:

Եվ ահա, գլխավորից չշեղվելու համար նշենք, որ ս. թ. սեպտեմբերի 25-ին նախատեսված է ՌԴ նախագահ Վ. Վ. Պուտինի պետական այցը Ադրբեյջան: Սա համոզիչ վկայությունն է, առաջին հերթին, այն բանի, որ դաշնակցային Ռուսաստանը բացառիկ պատասխանատու վերաբերմունք է ցուցաբերում Հարավային Կովկասի տարածաշրջանում այսօր, քան երբևէ վտանգավոր ռազմական թեժացում թույլ չտալու հարցին: Կրկին ու կրկին համոզվում ես, մասնավորապես, այն հարցում, որ մեր ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության համար, օրինակ, իրենց ռազմատենչությամբ սադրիչ այդ նույն հրապարակումներն ադրբեյջանական մամուլում, դիցուք՝ ս. թ. սեպտեմբերի 14-ի հրապարակումը haqqin. az-ում՝ «Ադրբեյջանական բանակը պատրաստվում է հարձակման Դարաբաղում» վերնագրով կամ ս. թ. սեպտեմբերի 17-ին «Военное Обозрение» պարբերականում հրապարակված հոդվածը՝ «Բաքվի ԶԼՄ-ներ. Ադրբեյջանական բանակը պատրաստվում է Դարաբաղի ազատագրմանը» վերնագրով և էլի շատերը, հավանաբար, մեր դաշնակցին հակում են այն մտքին, որ ավիչերոնյան սուլթանը Դարաբաղում պատերազմի է պատրաստվում: Չէ՞ որ ռուսական այնպիսի լուրջ պարբերական, ինչպիսին է «Военное Обозрение»-ն, չէր հրապարակի հոդված վերոնշյալ վերնագրով, որում, օրինակ, նշվում է. «Այսօր Ադրբեյջանի տարածքում մեկնարկել են տարբեր զորատեսակների՝ վերջին ժամանակների համար ամենախոշոր օպերատիվ-տակտիկական զորավարժանքները: Ջորավարժանքներին, Ադրբեյջանի պաշտպանության նախարարության տեղեկացմամբ, մասնակցում են ավելի քան 20 հազար զինծառայող, ավելի քան 200 տանկ և այլ զրահատեխնիկա, 100-ից ավելի հրթիռային համակարգ և սարքավորումներ, 30 միավոր ավիացիա, ներառյալ

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

բանակայինը»: Եվ սա, ինչպես ավելի վաղ նշվել էր, բավական սադրիչ վերնագրերով (ինչպիսին է «Ադրբեջանական բանակը պատրաստվում է պատերազմի», AZE.az տեղեկատվական պորտալ) հողվածների համապատկերում: Բնավ պատահականորեն չէ, որ այսքան մանրամասն կանգ առա այս հրապարակումների վրա, որոնք Ադրբեջանի հանրային, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կարծիքը նախապատրաստում են անխուսափելի պատերազմի մտքին: Իսկ ինչպե՞ս է այս ամենին արձագանքում Հայաստանի բարձր ղեկավարությունը, ՀՀ Սահմանադրությամբ ամենալայն իրավասություններով օժտված «ժողովրդական» վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Անմիջապես պատասխանեմ՝ շատ ինքնատիպ, ավելի ճիշտ՝ ոչ աղեկվատ: Որպեսզի ճիշտ հասկացվեն, ընդամենը նշեմ, որ նա դեռ շարունակում է գտնվել մի ինչ-որ վիրտուալ աշխարհում: Բավական է ասել, որ, վերլուծելով նրա ելույթներն ու ճառերը, գալիս ես մի եզրահանգման. ակնհայտ է, որ երկրի ղեկավարը լիովին կտրված է իրականությունից: Ընդ որում, հատկանշական է, որ մարդը, որը պետության առաջին դեմքն է երկրի համար այսքան բարդ ժամանակաշրջանում, երբ սպառնալիքի տակ է նրա անվտանգությունն ու Արցախի Հանրապետության անվտանգությունը, իր ելույթներն ու մտքերը նվիրում է հիմնականում ինչ-որ հակահեղափոխականների բացահայտմանը, որոնց արածը լոկ այն է, որ ՀՀ Ազգային ժողովի նիստերի ժամանակ միաձայն քվեարկում են Ն. Փաշինյանի կառավարության ներկայացրած ցանկացած օրինագծի օգտին: Ընդ որում, նրա ելույթները, որպես կանոն, լինում են ոչ թե ՀՀ կառավարության նիստերի ժամանակ, այլ հանրահավաքներում, նախընտրական քարոզարշավի ընթացքում, որոնք կազմակերպվում են ի պաշտպանություն Երևանի քաղաքապետի՝ նրա կուսակցության առաջադրած թեկնածուներից մեկի: Հանուն արդարության նշենք, որ նրա ս. թ. սեպտեմբերի 16-ի ելույթը Երևանի համայնքներից մեկի ընտրողների առջև աչքի ընկավ նորարարությամբ, այն է. Նիկոլ Վովակիչը մ. թ. ա. V և IV դարերի Հին Հունաստանի, թե XII–XV դարերի Վելիկի Նովգորոդի ուղղակի ժողովրդավարության լավագույն ավանդույթներով անմիջականորեն դիմեց ... Ադրբեջանի քաղաքացիներին, այո, այո, ես չսխալվեցի՝ Ադրբեջանի քաղաքացիներին (ըստ երևույթին, մի ինչ-որ երկրի դեսպանությունից կամ ոչ անհայտ ռադիոընկերությունից նրան հավատացրել էին, որ ըստ հին ու բարի ավանդույթի՝ ինչպես, այսպես կոչված, «թավշյա հեղափոխության», իմա՝ պետական հեղաշրջման ընթացքում էր): Հիշում եմ, որ այն ժամանակ շուրջօրյա ուղիղ միացում էր վարվում Երևանի փողոցներից, և Ն. Փաշինյանը, հավանաբար, հույս էր փայփայում, թե նույնը կլինի նաև հիմա, և նրա ելույթները կհեռարձակվեն նաև Բաքվում, ընդ որում՝ ուղիղ եթերի ռեժիմով, առանց խմբագրման, նախագահ Ի. Ալիևի հասցեին միանգամայն օբյեկտիվ քննադատության պահպանմամբ, որը չէր «ֆայմել» հետևել Ն. Փաշինյանի օրինակին և



որդուն չէր ուղարկել ծառայելու Ադրբեջանի Զինված ուժերում, Արցախի Հանրապետության հետ սահմանին: Այստեղ Ն. Փաշինյանը, որպեսզի ավելի մեծ համոզչություն հաղորդեր իր խոսքերին, մանավանդ ադրբեջանական լսարանի համար, իմ կարծիքով, պետք է հավելեր, որ ճակատամերձ գոտում, որպես կանոն, ծառայում են Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների և բնակչության ամենաչունևոր խավերի ներկայացուցիչները: Ինչում մենք հերթական անգամ համոզվեցինք Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանական քառօրյա (2016թ.) ռազմական ագրեսիայից հետո:

Ցավոք, հայկական պետականության անվտանգության առկա սպառնալիքների բացարձակ ոչ ադեկվատ գնահատականը դոմինանտ դարձավ նաև համապատասխան կառավարական կառույցների համար: Տարակուսելի է, երբ համապատասխան պատկան մարմինները Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի սահմանին յուրաքանչյուր ռազմական միջադեպից կամ ինչպես ՀՀ, այնպես էլ Արցախի Հանրապետություն ադրբեջանական դիվերսանտների ոչ հազվադեպ սողոսկումներից հետո սահմանափակվում են լոկ ալկադեմիական անատամ հայտարարություններով, որոնք հնչեցվում են նշված կազմակերպությունների մամուլի ծառայությունների պատասխանատուների կողմից:

Ցավոք, ստիպված ենք նշել, որ նաև սթափ մտածող քաղաքական գործիչներն են, որոնք, գիտակցելով իրենց պատասխանատվությունը հանրապետության քաղաքացիների առջև ազգային անվտանգության ապահովման համար, ժամանակ առ ժամանակ սայթաքում-ընկնում իրենց համար պատրաստված դերերի մեջ. անընդհատ արձագանքում են ինչ-որ անհեթեթ, որպես կանոն՝ զրպարտչական մեղադրանքների ՀՀ ԱԺ Հանրապետական կուսակցության պատգամավորների հասցեին, մեղադրանքներ, որոնք հորդում են ասես առատության եղջյուրից, «Ժողովրդի» վարչապետի և ընկերակիցների կողմից: Դրանով իսկ, ըստ էության, լիովին չի իրագործվում, ավելի շուտ՝ արգելակվում է հայ ժողովրդի համախմբման չափազանց պահանջված աշխատանքը:

Այս բոլոր հարցերի համախումբը համոզիչ հաստատումն է այն բանի, որ Ադրբեջանի՝ մեզ հայտարարված հիբրիդային պատերազմի կարևորագույն ուղղություններից մեկում իրականացվում է նրանց առաջադրած նպատակը՝ խարխլվում է հայ ժողովրդի, քաղաքական էլիտայի և քաղաքացիական հասարակության միասնությունը և խափանվում է նրանց համախմբվածությունը, դրանով իսկ ուժեղ հարված է հասցվում հայոց պետականության անվտանգությանը մեր պատմության այս ճակատագրական փուլում: Այս լուրջ սպառնալիքը, ավաղ, պատշաճ հակազդեցություն չի գտնում:

Նորից և նորից իմաստավորելով Հայաստանում և նրա շուրջ ստեղծված իրադրությունը՝ մտաբերում են գործարար և փիլիսոփա, մաթեմատի-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կոս Նասիմ Թալեբի «Սև կարապ. անկանխատեսելիության նշանի ներքո» գիրքը, որը լույս է տեսել 2007թ. և հենց հրապարակման թվականին էլ բեսթսելեր է դարձել: Շատ կարևոր է, որպեսզի ընթերցողը տպավորություն չստանա, թե ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձությունները ինձ համար անկանխատեսելի էին: Այն օրվանից, երբ 2018թ. ապրիլի 14-ին «սիրո և համերաշխության սակավաթիվ հեղափոխականների» կողմից գրոհի ենթարկվեց Հանրային ռադիոյի շենքը՝ ապագա «Ժողովրդի» վարչապետ Ն. Փաշինյանի կողմից, որևէ պատրանք չունեի, ավաղ, այդ գործընթացում գործի դրված առանձին գործող անձանց կողմից մինչև վերջ չհաշվարկված այս մտահղացման ավարտի մասին: Ն. Փաշինյանի կողմից հայտարարվեց, որ ակցիան Հանրային ռադիոյի շենքում խաղաղ քաղաքացիական անհնազանդության օրինակ է: Հավանաբար, նման եզրահանգման էր մղել ոստիկանության միանգամայն կրավորական վարքագիծը: Մի խոսքով՝ այդ ժամանակ արդեն ամեն բան հասկանալի դարձավ: Բայց սա առանձին վերլուծության թեմա է: Ես այս մասին հիշեցի միայն այն բանի համար, որպեսզի ասեմ, որ այդ պետական հեղաշրջումը շատ կանխատեսելի էր իմ կողմից և ոչ մի կերպ չի տեղավորվում «Սև կարապի» տեսության չափանիշներից առաջինում, այն է. 1. իրադարձությունն անսպասելի է. ի դեպ, այն լիովին տեղավորվում է երկրորդ և երրորդ չափանիշներում. 2. իրադարձությունը զգալի հետևանքներ է թողնում և 3. ռետրոսպեկտիվում, հարձակումից հետո իրադարձությունն ունի իրատեսական բացատրություն, ինչպես եթե իրադարձությունը սպասելի լիներ: Ինչ վերաբերում է երկրորդ չափանիշի կանխատեսելիությանը, կարծում եմ, ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ երկրի վրա անխուսափելիորեն կախվում է պետականության կորստի սպառնալիքը, եթե իշխանության են գալիս հեղափոխականներ, որոնց համար արարումը և պետականակերտումը ի սկզբանե հակացուցված են: Էլ չեմ ասում այն մասին, որ նրանք չգիտեն պետական կառավարման այբուբենը: Երրորդ չափանիշի սպասելիության առումով ասենք, որ «սիրո և հանդուրժողության հեղափոխության» գլխավոր անդրկուլիսյան սցենարիստի համար տեղի ունեցածը, արդեն գրեթե 6 ամիս անց (գլխավոր սցենարիստի առաջադրած նպատակների առումով), տեղավորվում է նաև «Սև կարապի» տեսության երրորդ չափանիշում: Ուրեմն, բանն ի՞նչ է: Ինչո՞ւ եմ ՀՀ արդի իրավիճակը վերլուծելիս մտաբերում Նասիմ Նիկոլաս Թալեբի տեսությունը: Իր գրքում Նասիմ Թալեբը նշում է, որ մարդկությունն ի գորու չէ հաջող կանխատեսել իր ապագան, եթե իր գիտելիքների հանդեպ վստահությունն առաջ է ընկնում գիտելիքներից և դրանով իսկ ծնում է գերվստահության ֆենոմենը: «Ժողովրդի» վարչապետ Նիկոլ Փաշինյանի գործողություններում մենք դառնում ենք գերվստահության երևույթի դասական օրինակի վկաները, ընդ որում՝ այն պատճառով, որ իր սեփական (Նիկոլի) գիտելիքների հանդեպ վստահությունը առաջ է ընկնում (ընդ որում՝ բավական

էականորեն) բուն գիտելիքներից: Ավելին, մենք ականատեսն ենք դառնում այն բանի, երբ Ն. Փաշինյանի գերվստահությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ առկա իրողությունների խեղաթյուրում, որոնց դեպքում ՀՀ վարչապետի վստահությունն իր գործողությունների և որոշումների մեջ զգալիորեն ավելի բարձր է, քան նրա դատողությունների օբյեկտիվ ճշտությունը ՀՀ-ում և նրա շուրջ տիրող իրավիճակի վերաբերյալ: Բնականաբար, այս գործընթացին, որի ականատեսներն են ոչ միայն մեր համաքաղաքացիները, այլ նաև արտասահմանի քիչ թե շատ տեղեկացված քաղաքական գործիչները, բնորոշ է սեփական` սիրելի անձի հանդեպ շողոմ պատկերացումը: Նշենք, որ եթե ղեկավարի գերվստահության երևույթին բախվում է առանձին վերցրած կորպորացիան, ապա դա կարող է կորուստների, վատագույն դեպքում` սնանկացման պատճառ դառնալ կորպորացիայի համար: Իսկ եթե պետության ղեկին հայտնվել է մեկը, ով ենթարկված է գերվստահության ֆենոմենին, ապա եզրահանգումը միանշանակ է. եկել է համազգային SOS (Save our Souls) հնչեցնելու ժամանակը, բայց ոչ թե մեր հոգիների, այլ հայոց պետականության փրկության առումով:

*Հետգրության փոխարեն:* Չէի ցանկանա տխուր նոտայով ավարտել հոդվածս: Չգիտես ինչու, երբ հոգիս տագնապում է, մտաբերում եմ նրբաձաշակության արբիտր Գայոս Պետրոնիոսի նամակը կայսր Ներոնին: Մի փոքրիկ մեջբերում կատարեմ դրանից. «...Տանջի՛ր հպատակներիդ, եթե այդպես ես ուզում, բայց աղաչում եմ քեզ` մի՛ այլանդակիր և և մի՛ հաշմիր Արվեստները: Թախանձագին խնդրում եմ քեզ. ողջ եղի՛ր, բայց մի՛ երգիր, սպանի՛ր, բայց ոտանավորներ մի՛ գրիր, թունավորի՛ր, բայց մի՛ պարիր»:

Ահա, հիմա էլ կուզենայի գրել Ն. Փաշինյանին. «...Տանջի՛ր քո մուեռանդ-երկրպագուներին, որոնց մեթոդաբար ներշնչում ես, թե հայ ժողովրդի մեջ կան «սևեր» ու «սպիտակներ», եթե այդպես ես ուզում, բայց խնդրում եմ քեզ` մի՛ այլանդակիր և մի՛ հաշմիր մեր ավանդական ընտանեկան արժեքները` ակնհայտորեն և ծածուկ հովանավորելով ԼԳԲՏ ընկերակցությանը, որն անպատիժ, անպատկառ ձևով և ցինիկաբար գրոհում է Երևանի ոստիկանական բաժանմունքները: Մի՛ հովանավորիր ագրեսիվ կրոնական աղանդներին, որոնք գրոհում են Ամենայն Հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդին: Մի՛ հովանավորիր Սորոսի կողմից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների տարատեսակ հերձվածողներին, որոնք մտադիր են ս. թ. նոյեմբերի 15 – 18-ին Գրիգոր Լուսավորչի և Գրիգոր Նարեկացու սրբազան հողում «Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ-քրիստոնյաների համաժողով» անվանմամբ հերթական խառնաժողովն անցկացնել: Խնդրում եմ քեզ` հեղափոխության և հակահեղափոխության մասին քո սրտաճմլիկ ճառերով էլ մի՛ տանջիր կարիքից կամազուրկ դարձած մարդկանց: Գուցե դու չես էլ հասկանում, որ արդեն

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

սպառնալիք ես դարձել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար»:

Որպեսզի ընթերցողի մեջ տպավորություն չստեղծվի, թե խոհերս ինքնատիպ «ծայն բարբառոյ յանապատի» են, վստահաբար հայտարարում եմ, որ հայ ժողովրդի հավաքական իմաստությունը կհաղթանակի և Նիկոլ Փաշինյանի հակապետական հեղաշրջումը, ինչ բարեհունչ կարգախոսներով էլ որ քողարկվի, դատապարտված է ձախողման: Սրանում է, անշուշտ, Հայոց պետականության և Արցախի Հանրապետության փրկությունը: Ով որքան ավելի շուտ գիտակցի այս ճշմարտությունը, այնքան ավելի քիչ կլինեն մեր ազգային անվտանգության և Հայաստանի Հանրապետության պետականության սպառնալիքները:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

«Հայոց Աշխարհ», 19. 09. 2018:

## «НАУЧИСЬ ЛЮБИТЬ ЕРЕВАН ТАК, КАК ЕГО ЛЮБИЛ АСРАТЯН...»

*Ереван, и не только, живет страстями по случаю выборов очередного мэра – первого после «бархатной революции». На кресло градоначальника претендует дюжина совершенно неопытных в ереванских делах кандидатов, представляющих политические партии и блоки. Выборы чудесным образом совпали со 100-летием мэра Еревана Григора Асратяна (1918 – 2001). Не часто мэров запоминают надолго, но вот Григора Асратяна с благодарностью вспоминают многие ереванцы. Прежде чем стать руководителем столицы, он прошел немалый путь, но в основном был связан с Ленинаканом, институтом «Ереванпроект» и Ереваном. Это при нем в столице произошли качественно новые перемены, позволившие городу стать динамичным современным. Эффективно работавший, любимый всеми ереванцами, Асратян в 1975 году после 13 лет работы был неожиданно, без каких-либо объяснений снят с поста.*

*Остались вещественные следы его деятельности и благодарная память. Вновь избранному мэру, кто бы он (или она) ни был, Асратян может быть превосходным примером сыновней любви к Еревану и самоотверженного труда. И хотя времена изменились, многие из методов работы Асратяна-мэра заслуживают самого пристального внимания. О феномене 39-го мэра столицы размышляет политический и общественный деятель Арташес Гегамян, мэр Еревана в 1989 – 1990 гг.*

### ДОМОЙ ПО САМОЙ ДЛИННОЙ ДОРОГЕ

... В ноябре 1989 г., спустя 14 лет с того времени, когда крайне незаслуженно с должности мэра Еревана был освобожден, на мой взгляд, наилучший из председателей исполкома Ереванского городского совета за всю историю Армянской ССР Григор Асратян, бюро ЦК КП Армении рекомендовало меня на эту должность.

Первое напутствие я получил от первого секретаря ЦК КП Армении Сурена Арутюняна. «Арташес, если будешь работать так же профессионально и умно, с полной отдачей и любовью, как работал Григорий Иванович (коллеги по работе именно так обращались к Григору Асратяну),

считаю, что ты оправдал мое доверие». Работу в должности ереванского градоначальника я начал со встреч с людьми – видными представителями нашей столицы и республики. В дальнейшем для меня стало удивительным откровением, что, казалось бы, все, словно сговорившись, советовали мне непременно встретиться с Григорием Ивановичем и посоветоваться с ним на предмет того, с чего и как начать свою работу на столь ответственном посту. Мысленно я задавался вопросом: что же Григорий Иванович не успел воплотить в жизнь, будучи мэром Еревана? Не скрою, прежде чем встретиться с ним, я имел встречи с Мурадом Мурадяном и Эдуардом Авакяном, которые также славно поработали на этой должности и с именами которых связано много добрых дел – будь то новостройки, парки или уникальные сооружения. Я объединяю этих двух достойных сограждан еще и потому, что они долгие годы возглавляли строительный комплекс республики.

Мурад Мурадян и Эдуард Авакян приводили в пример добрые дела, которые были исполнены в годы, когда городом руководил Григор Асратян. И самое трогательное было то, что каждый из них с особым воодушевлением приводил примеры достижений своих коллег и лишь в очень деликатной форме предлагал мне подумать о возможности завершения тех начинаний и замыслов, которые сами они в силу каких-то обстоятельств не смогли претворить в жизнь. Мне запомнились слова Мурада Мурадяна. Он спросил, встречался ли я с Асратяном, на что я ответил, что пока нет. «Арташес, ты обязательно переговори с ним, посоветуйся. Он умный и знающий человек, я знаю, что он и сейчас сердцем и мыслями с Ереваном», – сказал он.

Во всем, что касалось людей (тем более старшего поколения), я советовался с моим отцом. Его мнение о Григории Ивановиче было для меня особенно важно. Отец с увлечением рассказывал об их совместной работе, его удивительной работоспособности и профессионализме. Отец, Мамикон Гегамян, был первым председателем исполкома Мясникянского райсовета и хорошо знал, что значит управлять городом. В 60-е годы только началось застраивание Нор Норка, Норкских массивов. Вся концепция застройки принадлежала Григору Асратяну и группе архитекторов из института «Ереванпроект». Строительные работы в застраиваемых Норкских массивах начинались с самого раннего утра и длились до поздней ночи. Мы жили с Асратяном по соседству, в конце проспекта Маштоца. Отец поражался, что нередко после очень напряженного дня Григорий Иванович просил водителя подъехать к дому, проехав через самые отдаленные районы столицы. Он хотел лично удостовериться в том, как исполнялись поручения, данные им на заседаниях в горсовете. При этом он сильно переживал за небрежно выполненные поручения и

все свои оценки и эмоции произносил вслух. После подобных поездок домой, как оказалось, по самой длинной дороге из Норкского массива до Матенадарана (Григорий Иванович жил рядом с Матенадараном, в обычном жилом доме) отец добросовестно званил коллегам, руководителям разных районов города, строителям, службам горисполкома и напоминал о все еще невыполненных поручениях мэра. И нередко происходили поразительные вещи: в считанные часы и дни недоработки, замеченные Асратяном, устранялись.

Главы районов прекрасно знали о тех душевных переживаниях, которые испытывал Асратян, увидев разбитую дорогу, неблагоустроенную улицу, погасшие фонари, даже разодранную на дереве кору. Он не переносил, не мог мириться, когда видел неубранный мусор. И его коллегам было крайне неловко подводить своего градоначальника, своей недобросовестностью обидеть его. Видя его полную самоотдачу, люди не только ответственно подходили к исполнению своих обязанностей, но в них пробуждалось обостренное чувство долга перед своим руководителем, перед своей столицей. И не раз случалось, что во время еженедельных совещаний Григорий Иванович, с удовольствием говоря о выполненной работе, с улыбкой обращался к Мамикону Гегамяну: «Оказывается, не только я, но и ты поздно возвращаешься с работы, а некоторые из наших коллег даже остаются на работе вплоть до утра». Он имел в виду тех, кто после его ночных проверок всю ночь был вынужден вкалывать, чтобы к утру устранить недоработки.

#### «НАУЧИСЬ ЛЮБИТЬ ЕРЕВАН»

В ноябре 1989 года я позвонил Григору Асратяну с просьбой о встрече. Тогда этот мудрый и исключительно востребованный для страны управленец и опытный профессионал работал директором Сардарапатского мемориального комплекса. Опережая меня, Григорий Иванович сказал, что с удовольствием поздравил бы меня в здании мэрии, но...

Встреча в Сардарапате была исключительно доброжелательной и одновременно очень поучительной. Он слушал внимательно, но у меня все больше и больше складывалось впечатление, что мысленно он ушел в мир архитектурных ансамблей, обелисков, скульптур, музеев, рождавшихся в годы, когда мэром столицы был Григор Асратян. Мэтр армянской столицы дал мне много весьма полезных советов. «Если ты сумеешь своей любовью, самоотверженным трудом во благо Еревана, заботой к нуждам своих сограждан, бескорыстным служением ереванцам пробудить в них доверие к себе и к городским властям, то дело у тебя будет спориться. Окружишь себя единомышленниками, каждый из которых профессионал в своем деле, тогда успех придет быстрее, – проникновенно

## А. ГЕГАМЯН

говорил Григорий Иванович. – Но, пожалуй, самое главное – постоянно чувствовать себя обязанным согражданам, своему городу». Тогда многие мне говорили: «Научись любить Ереван так, как его любил Асратян». Так оно и было.

После этой встречи передо мной стояла, пожалуй, самая главная задача: осмыслить, в чем же созидательная сила Григора Асратяна, которая вывела его в число наиболее запомнившегося и полюбившегося горожанами мэра. Ведь в принципе в республике все градоначальники находились (речь о 50 – 80-х гг.) в одинаковых стартовых условиях. Действовала жесткая нормативность всех видов проектно-сметной документации возводимых объектов: жилья, школ, больниц, детских садов, учреждений культуры, которая задавала структуру строительства, плотности застройки микрорайонов, городов в целом. Исполкомы городских и районных советов были обязаны придерживаться жестких строительно-директивных норм и правил. В этих условиях Асратяну приходилось вырабатывать и проводить такую градостроительную политику, которая вобрала бы в себя систему взглядов, методов, знаний, которые органически сочетали бы элементы армянской архитектурной школы с элементами, присущими советской урбанизации. Отличительной особенностью такого градостроительства явилась, в частности, разработка проектной документации, с одной стороны, соответствующей директивам плановой экономики, с другой – сохраняющей особенности национальной архитектуры. Естественно, что эти директивы не предусматривали строительства таких объектов, как Мемориал жертвам Геноцида армян, здание кинотеатра «Россия» и подобных. Достаточно отметить, что благодаря принципиальности Григория Ивановича и председателя Госстроя Г. Агабабяна было принято специальное постановление правительства, освобождавшее власти Еревана от обустройства центра города типовыми домами. Справедливости ради следует отметить, что руководство ЦК КП Армении и правительство, как правило, поддерживали начинания главы города. Особое внимание к нуждам городского хозяйства, со слов Григория Ивановича, оказывали руководители республики тех лет – Яков Заробян и Антон Кочинян. Об этом он сказал, тонко намекая на необходимость слаженной работы городских властей с руководством страны.

### ДЕТИЩЕ АСРАТЯНА: ЕДИНОЕ СООБЩЕСТВО ГОРОЖАН

О добрых делах тех лет можно писать долго, однако было бы слишком большим упрощением оценивать работу Григория Ивановича лишь по архитектурным ансамблям, памятникам, обустроенным микрорайонам, которые и сегодня украшают наш город. Речь о том, что сам Григор Асратян прекрасно понимал, что самым невосполнимым и ценным укра-



шением любого города, претендующего на уникальность и самобытность (не говоря об исключительности), должны быть его жители, горожане, которые призваны стать одной большой семьей. Именно такой предстала перед многочисленными гостями и туристами наша столица в октябре 1968 г., когда жители Еревана, от мала до велика, отмечали 2750-летие со дня основания своей столицы – Эребуни – Еревана. В те памятные дни город был озарен блеском и сиянием глаз сотен тысяч его сограждан, радость которых казалась безмерной. Не было ни одного магазина, школы, учреждения культуры и быта, жилого дома, больницы, перед которыми на тротуарах ереванцы с особым радушием не угощали бы прохожих, многочисленных гостей и туристов, в особенности из диаспоры. Праздник Эребуни – Ереван был своего рода детищем Григория Ивановича. Празднование дня города показало, что Еревану удалось достичь главного: на пике своего пребывания на посту градоначальника он своей кропотливой, никогда не афишируемой работой сумел создать единое сообщество горожан. Сообщество, которое было объединено любовью к своему городу и друг к другу. Но это не произошло спонтанно. Асратян шел к этому с самого первого дня своей работы.

Старшее поколение, уж тем более мои сверстники, конечно, помнят, как в 60 – 70-е годы в ереванских дворах проводились конкурсы на лучшую дворовую цветочную клумбу, лучший дворовый сквер. Предметом особой гордости ереванских женщин было участие в конкурсах по озеленению балконов. Мальчишки считали для себя очень почетным участие в летних спортивных соревнованиях, особенно по футболу, которые проводились в парке, раскинувшемся в ущелье Раздана – в излюбленном месте отдыха детей, где особой популярностью пользовалась детская железная дорога. Я уже не говорю о ежегодных смотрах по выявлению лучших дворовых пионерских лагерей, где для выявления победителей учитывалось умение плясать и петь, декламировать, играть на музыкальном инструменте, рисовать, состязаться в разных видах спорта. Нам особо запоминалась ежедневная утренняя зарядка, проводимая перед началом занятий под звуки школьных оркестров на пришкольных площадках. Все эти мероприятия были частью политики городских властей, лично Григора Асратяна. И эта энергия созидания вполне логично выплеснулась на улицы в виде праздника Эребуни – Ереван.

Достойны всякой похвалы и другие его начинания, которые и сегодня имеют актуальное звучание. Так, в феврале 2009 г. в одном из своих интервью Генрих Игитян говорил: «Еще один счастливый “кадр” – моя встреча с Григорием Ивановичем Асратяном, мэром города, по тем временам председателем горсовета. Я не встречал в жизни человека более цельного, организованного и внимательного ко всем человеческим про-

## А. ГЕГАМЯН

блемам. Асратяну было интересно решительно все, что касалось судьбы Еревана, Армении, нашей культуры... Он умел слушать, делать выводы. Мне даже не потребовалось особых усилий, чтобы убедить его в создании первой в мире Детской картинной галереи, которая после превратилась в Музей детского творчества Армении. В 1972 г. Г. Асратян всячески содействовал созданию первого в СССР Музея современного искусства, который успешно функционирует и поныне». Сегодняшний молодой читатель справедливо может задаться вопросом: а собственно, какие для этого требовались усилия, ведь по сути замышлялось сделать доброе дело? Я не случайно упомянул о жесткой централизованной системе планирования всего и вся. Детская галерея, Музей современного искусства, Мемориальный комплекс в память жертв Геноцида армян – все они по своей идеологической направленности не умещались в рамках социалистической урбанизации.

Мэр Еревана многие свои прекрасные начинания претворял в жизнь, потому что все это не было предусмотрено партийными директивами и, естественно, при формальном подходе уж никак не могло быть отражено в градостроительных планах Еревана, а тем более осуществлено. Однако «причуды» ереванского мэра не подвергались остракизму. Более того, партийное руководство и правительство республики понимали исключительную важность реализации проектов мэра-новатора.

Незабываемым днем для ереванцев стало открытие новой улицы Саят-Новы, приуроченное к 250-летию со дня рождения этого великого поэта и музыканта. За считанные месяцы эта магистраль стала своеобразной жемчужиной Еревана. Ни один из жителей столицы и его гостей не мог оставаться равнодушным при виде этой прекрасной, обсаженной с обеих сторон фруктовыми деревьями улицей, под тенью которых были посажены розы «Глория дей».

Именно при Асратяне декоративно-лиственные и красиво цветущие кустарники внесли разнообразие в зеленую архитектуру и ландшафт столицы. Это по его инициативе в Ереване была впервые основана служба дендролога-дизайнера.

Григорий Иванович уже в конце 60-х XX века осознал острую необходимость совершенствования инфраструктуры столицы. При его непосредственном участии были разработаны проектно-сметная документация и обоснования необходимости сооружения скоростного подземного электротранспорта. Хотелось бы напомнить ереванцам, особенно молодому поколению, что метрополитен стали строить во второй половине 1972 г. и 7 марта 1981 г. открыли движение на пусковом участке с четырьмя станциями: «Барекамутюн», «Сараланджи», «Еритасардакан» и «Сасунци Давид». Начать строительство было очень хлопотным делом.

Вначале на основании четко выверенных обоснований, изложенных в записке Ереванского горсовета, было принято постановление Совета министров (N 481 от 04.08.1971 г.) о создании скоростного внеуличного транспорта. Чтобы суметь отстоять этот проект в Москве, городские и республиканские власти выбрали вариант реконструкции действующей трамвайной сети с пропуском трамвайных поездов через центр города по тоннелям габарита метрополитена. Не будь последовательности Григора Асратяна, можно с уверенностью сказать, что не было бы и постановления ЦК КПСС и Совмина (N 2221 Р. от 06.10.1977 г.) «О строительстве метрополитена в г.Ереване». Конечно, в решении этого вопроса следует отдать должное и руководству партийных и советских органов Армении.

### 13 САМООТВЕРЖЕННЫХ ЛЕТ

Чтобы полнее раскрыть человеческий образ Григора Асратяна, при этом оставаясь объективным, необходимо сослаться и на очевидцев его будничных забот. Рассказывают, что как-то в начале 60-х годов прохожие стали свидетелями следующей сцены: на парапете ограды рядом с кинотеатром «Москва» были установлены архитектурные планшеты, там же председатель Ергорсовета Григор Асратян выслушивал комментарии невысокого человека, очевидно, автора проекта. На небольшом пятачке предполагалось построить необычное сооружение. Естественно, мэр Еревана в силу им же установленной традиции должен был на месте удостовериться в целесообразности предполагаемого строительства. Он дал свое согласие, и в 1966 г. Ереван украсился еще одним прекрасным сооружением – уникальным летним кинотеатром «Москва». Авторами проекта были Спартак Кнтехцян и Тельман Геворкян. Эти талантливые архитекторы и многие их собратья по творчеству в лице мэра всегда видели настоящего профессионала, тонко чувствующего архитектуру зданий и городскую среду. Григорий Иванович безошибочно предвосхищал, как к любой из новостроек отнесутся горожане, он особенно дорожил их мнением. Поэтому в бытность его главой столицы в витринах центральных магазинов экспонировались проекты новостроек. Это давало людям возможность не только представить, каким будет тот или иной микрорайон в будущем, но также высказать свои предложения и пожелания, тем самым становиться сопричастными к судьбе города в целом.

Что же было свойственно градостроительной политике, проводимой мэром? На каждом из этапов строительства Григорий Иванович добивался неукоснительного исполнения того, чтобы современные доминанты развития органически вписывались в общую идеологию таманяновского Еревана. Григор Асратян продолжил дело Александра Таманяна – строить город, который стал бы столицей всей нации, каждого армянина,

## **А. ГЕГАМЯН**

независимо от места проживания. Это при нем произошло возрождение старых и формирование новых традиций армянского народа, во многом определивших лицо современной армянской нации.

На протяжении 13 лет, работая мэром г. Еревана, Григорий Асратян придал этой должности благородство, возвеличил место градоначальника в номенклатуре 60 – 70-х гг. Он на своем примере показал, что при самоотверженной работе быть мэром Еревана – это и большая награда, и великая ответственность, где причины и следствия твоей деятельности органически взаимосвязаны, где ежедневно ты можешь менять жизнь самых разных людей.

\*\*\*

В заключение хотелось бы напомнить простую истину: у каждого города есть своя история, свои особенности и проблемы. Есть и свои мэры, которые призваны эти проблемы решать. На долю Григора Асратяна выпала почетная миссия: омолодить, придать созидательную энергию, жизнерадостность 2750-летнему Эребуни – Еревану, сделать эту солнечную жемчужину у подножия Библейского Арарата Святой Землей для всего армянства.

Ереванцы и сегодня с благодарностью вспоминают Григора Асратяна, они признали его своим лучшим мэром, потому что поняли – он пришел, чтобы хорошо сделать свое дело.

## «ՍՈՎՈՐԻՐ ՍԻՐԵԼ ԵՐԵՎԱՆՆ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ՍԻՐՈՒՄ ԷՐ ՀԱՍՐԱԹՅԱՆԸ ...»

Երևանը, և ոչ միայն, ապրում է հերթական քաղաքապետի ընտրությունների (առաջինը «թավշյա հեղափոխությունից» հետո) հետ կապված կրքերով: Քաղաքապետի աթոռին հավակնում են երևանյան գործերի մեջ լիովին անփորձ մեկ տասնյակից ավելի թեկնածուներ, որոնք ներկայացնում են քաղաքական տարբեր կուսակցություններ և դաշինքներ: Ընտրությունները հիանալի կերպով համընկել են Երևանի քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանի (1918 – 2001) ծննդյան 100-ամյակի հետ: Քաղաքապետերին հաճախ չէ, որ երկար են հիշում, բայց ահա Գրիգոր Հասրաթյանին երախտագիտությամբ են հիշում շատ երևանցիներ: Մինչև մայրաքաղաքի ղեկավար դառնալը նա բավական ճանապարհ էր անցել, հիմնականում կապված Լենինականի, «Երևաննախագիծ» ինստիտուտի ու Երևանի հետ: Այդ նրա օրոք են մայրաքաղաքում որակապես նոր փոփոխություններ կատարվել, որոնք թույլ տվեցին, որ քաղաքը դառնա դինամիկ ու արդիական: Արդյունավետ աշխատանքով աչքի ընկնող, բոլոր երևանցիների կողմից սիրված Հասրաթյանը 1975թ., 13 տարվա աշխատանքից հետո, անսպասելիորեն, առանց որևէ բացատրության, հեռացվեց պաշտոնից: Մնացել են նրա գործունեության իրեղեն հետքերը և երախտագետ հիշողությունը: Նոր ընտրվող քաղաքապետի համար, ով էլ որ նա լինի, Հասրաթյանը Երևանի հանդեպ որդիական սիրո և անձնվեր աշխատանքի գերազանց օրինակ կարող է ծառայել: Եվ թեև ժամանակները փոխվել են, Հասրաթյան-քաղաքապետի աշխատանքի շատ մեթոդներ խիստ ուշագրավ են: 39-րդ քաղաքապետի ֆենոմենի մասին խորհրդածում է քաղաքական և հասարակական գործիչ, 1989 – 1990թթ. Երևանի քաղաքապետ Արտաշես Գեղամյանը:

### ԴԵՊԻ ՏՈՒՆ՝ ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

...1989թ. նոյեմբերին, երբ արդեն 14 տարի էր անցել այն ժամանակվանից, երբ անարժանորեն Երևանի քաղաքապետի պաշտոնից ազատվել էր, ըստ իս, Հայկական ԽՍՀ ողջ պատմության մեջ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի լավագույն նախագահ Գրիգոր Հասրաթյանը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն ինձ երաշխավորեց այդ պաշտոնին:

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Առաջին ողջերթը ստացա Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Մուրեն Հարությունյանից: «Արտաշես, եթե նույնքան արհեստավարժ և խելացի, լիակատար նվիրումով և սիրով աշխատես, որքան Գրիգորի Իվանովիչը (գործընկերները հենց այդպես էին դիմում Գրիգոր Հասրաթյանին), համարիր, որ արդարացրել ես իմ վստահությունը»: Երևանի քաղաքապետի պաշտոնում աշխատանքս ես սկսեցի մեր մայրաքաղաքի և հանրապետության նշանավոր ներկայացուցիչների հետ հանդիպումներից: Հետագայում ինձ համար զարմանալի հայտնություն դարձավ այն, որ թվում է, թե բոլորը՝ խոսքները մեկ արած, խորհուրդ էին տալիս անպայման հանդիպել Գրիգորի Իվանովիչին և խորհրդակցել նրա հետ, թե ինչից և ինչպես սկսեմ աշխատանքս այդքան պատասխանատու պաշտոնում: Մտովի հարց էի տալիս. այդ ի՞նչ չի հասցրել կյանքի կոչել Գրիգորի Իվանովիչը Երևանի քաղաքապետ եղած ժամանակ: Չեմ թաքցնի, մինչ նրա հետ հանդիպելը՝ հանդիպումներ էի ունեցել Մուրադ Մուրադյանի և Էդուարդ Ավագյանի հետ, որոնք նույնպես գերազանց էին աշխատել այդ պաշտոնում և որոնց անունների հետ շատ բարի գործեր են կապված՝ նորակառույցներ, զբոսայգիներ, եզակի շինություններ: Այս երկու պատվարժան համաքաղաքացիներին միավորում եմ նաև այն պատճառով, որ նրանք երկար տարիներ ղեկավարել են հանրապետության շինարարական համալիրը:

Մուրադ Մուրադյանը և Էդուարդ Ավագյանը օրինակ էին բերում այն բարի գործերը, որոնք կատարվել էին այն տարիներին, երբ քաղաքը ղեկավարում էր Գրիգոր Հասրաթյանը: Եվ ամենահուզիչն այն էր, որ նրանցից յուրաքանչյուրն առանձնակի խանդավառությամբ էր ներկայացնում գործընկերոջ ձեռքբերումները և միայն շատ նրբանկատորեն էր առաջարկում ինձ մտածել այն նախաձեռնություններն ու մտահղացումներն ավարտելու հնարավորության մասին, որոնք իրենք, ինչ-ինչ հանգամանքների պատճառով, չէին կարողացել իրագործել: Մտապահել եմ Մուրադ Մուրադյանի խոսքերը: Նա ինձ հարցրեց՝ հանդիպե՞լ եմ արդյոք Հասրաթյանի հետ: Պատասխանեցի՝ առայժմ ոչ: «Արտաշես, անպայման խոսիր նրա հետ, խորհրդակցիր: Նա խելացի և բանիմաց մարդ է, գիտեմ, որ հիմա էլ սրտով մտքով Երևանի հետ է ապրում», – ասաց նա:

Այն ամենի մասին, ինչը մարդկանց էր վերաբերում (մանավանդ ավագ սերնդի մարդկանց), խորհրդակցում էի հորս հետ: Նրա կարծիքը Գրիգորի Իվանովիչի մասին ինձ համար հատկապես կարևոր էր: Հայրս խանդավառությամբ էր պատմում իրենց համատեղ աշխատանքի, նրա զարմանալի աշխատունակության և պրոֆեսիոնալիզմի մասին: Հայրս՝ Մամիկոն Գեղամյանը, Մյասնիկյանի շրջխորհրդի գործադիր կոմիտեի առաջին նախագահն էր և լավ գիտեր, թե ինչ ասել է քաղաքի կառավարում: 60-ական թվականներին նոր էր սկսվել Նոր Նորքի, Նորքի զանգվածների կառուցապատումը: Կառուցապատման ամբողջ հայեցակարգը պատկանում էր Գրիգոր Հասրաթյանին և «Երևաննախագիծ» ինստիտուտի մի խումբ ճարտարա-

պետների: Նորքի նոր կառուցվող զանգվածներում շինաշխատանքներն սկսվում էին առավոտ կանուխ և շարունակվում մինչև ուշ գիշեր: Մենք Հասրաթյանի հետ հարևանությամբ էինք ապրում՝ Մաշտոցի պողոտայի վերջնամասում: Հայրս զարմանում էր, որ հաճախ, լարված օրվանից հետո, Գրիգորի Իվանովիչը խնդրում էր վարորդին իրեն տուն տանել՝ մայրաքաղաքի ամենահեռավոր շրջանների միջով անցնելով: Նա ցանկանում էր անձամբ հավաստիանալ, թե ինչպես են կատարվել քաղխորհրդի նիստերի ժամանակ իր տված հանձնարարությունները: Միևնույն ժամանակ, նրա սիրտը ցավում էր անփույթ կատարված հանձնարարությունների համար, և նա իր բոլոր գնահատականներն ու հույզերն արտահայտում էր բարձրաձայն: Տուն վերադառնալու այսպիսի, ինչպես պարզվեց՝ Նորքի զանգվածից մինչև Մատենադարան (Գրիգորի Իվանովիչն ապրում էր Մատենադարանի հարևանությամբ, սովորական բնակարանում) ամենաերկար ճանապարհով ուղևորություններից հետո հայրս բարեխճորեն զանգահարում էր գործընկերներին՝ քաղաքի տարբեր շրջանների ղեկավարներին, շինարարներին, քաղգործկոմի ծառայություններին և հիշեցնում քաղաքապետի դեռևս չկատարված հանձնարարությունների մասին: Եվ հաճախ զարմանալի բաներ էին տեղի ունենում. հաշված ժամերի և օրերի ընթացքում Հասրաթյանի նկատած թերացումները վերացվում էին:

Շրջանների ղեկավարները քաջ գիտեին հոգեկան այն ապրումների մասին, որոնք զգում էր Հասրաթյանը՝ քանդված ճանապարհ, անբարեկարգ փողոց, հանգած լապտերներ, անգամ ծառի պոկոտված կեղև տեսնելիս: Նա տանել չէր կարողանում, չէր հաշտվում այն բանի հետ, երբ չհավաքված աղբ էր տեսնում: Եվ նրա գործընկերները խիստ անհարմար էին զգում «նեղացնել» իրենց քաղաքապետին, իրենց անբարեխճությամբ վիրավորել նրան: Տեսնելով նրա անձնվիրությունը՝ մարդիկ ոչ միայն պատասխանատու ձևով էին մոտենում իրենց պարտականությունները կատարելուն, այլև նրանց մեջ արթնանում էր պարտքի սուր զգացողություն իրենց ղեկավարների, իրենց մայրաքաղաքի առջև: Եվ քանիցս է պատահել, որ ամենաքաթյա խորհրդակցությունների ժամանակ Գրիգորի Իվանովիչը, գոհունակությամբ նշելով կատարված աշխատանքի մասին, ժպիտով դիմել է Մամիկոն Գեղամյանին. «Պարզվում է՝ ոչ միայն ես, այլև դու էլ ես ուշ վերադառնում աշխատանքից, իսկ մեր գործընկերներից ոմանք անգամ մինչև առավոտ մնում են աշխատավայրում»: Նա նկատի ուներ նրանց, ովքեր նրա գիշերային ստուգումներից հետո ամբողջ գիշեր ստիպված էին տքնաջան աշխատել, որպեսզի առավոտյան թերացումները վերացված լինեն:

### «ՍՈՎՈՐԻՐ ՍԻՐԵԼ ԵՐԵՎԱՆԸ»

1989թ. նոյեմբերին զանգահարեցի Գրիգոր Հասրաթյանին՝ հանդիպման խնդրանքով: Այն ժամանակ այդ իմաստուն և երկրի համար բացառիկ

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

պահանջված կառավարիչն ու փորձառու արհեստավարժն աշխատում էր որպես Սարդարապատի հուշահամալիրի տնօրեն: Ինձնից առաջ ընկնելով՝ Գրիգորի Իվանովիչն ասաց, որ հաճույքով կշնորհավորեր ինձ քաղաքապետարանի շենքում, բայց ... Հանդիպումը Սարդարապատում բացառիկ բարյացակամ էր և միաժամանակ՝ ինձ համար խիստ ուսանելի: Նա լսում էր ուշադիր, բայց ես ավելի շատ այնպիսի տպավորություն էի ստանում, թե նա մտովի ճարտարապետական համալիրների, կոթողների, քանդակների, թանգարանների աշխարհում է, որոնք ծնունդ էին առել այն տարիներին, երբ մայրաքաղաքի ղեկավարն էր Գրիգոր Հասրաթյանը: Հայոց մայրաքաղաքի մետրն ինձ շատ օգտակար խորհուրդներ տվեց: Եվ վերջում անփոփեց: «Եթե կարողանաս քո սիրով, ի բարօրություն Երևանի անձնուրաց աշխատանքով, համաքաղաքացիների կարիքների հանդեպ հոգատարությամբ, երևանցիներին անշահախնդիր ծառայությամբ նրանց մեջ քո և քաղաքային իշխանությունների հանդեպ վստահություն առաջացնել, ապա գործդ գլուխ կգա: Կշրջապատես քեզ համախոհներով, որոնցից յուրաքանչյուրն իր գործի պրոֆեսիոնալը կլինի՝ այդ ժամանակ հաջողությունն ավելի արագ կգա, – ոգևորված ասաց Գրիգորի Իվանովիչը: – Բայց, թերևս, ամենագլխավորն այն է, որ մշտապես պարտավորված զգաս համաքաղաքացիներին, քաղաքիդ առջև»: Այն ժամանակ շատերն էին ինձ ասում. «Սովորիր սիրել Երևանն այնպես, ինչպես այն սիրում էր Հասրաթյանը»: Այդպես էլ եղավ:

Այդ հանդիպումից հետո իմ առջև կանգնած էր, թերևս, ամենագլխավոր խնդիրը. իմաստավորել, թե որն էր Գրիգոր Հասրաթյանի արարող ուժը, որը նրան դարձրեց քաղաքացիների կողմից սիրված և ամենահիշարժան քաղաքապետերից մեկը: Չէ՞ որ, ըստ էության, հանրապետությունում բոլոր քաղաքապետերը գտնվում էին (խոսքը 50 –80-ականների մասին է) միանման մեկնարկային պայմաններում: Գործում էր կառուցվող օբյեկտների (բնակարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ, մշակութային հաստատություններ) նախագծա - նախահաշվային բոլոր տեսակի փաստաթղթերի կոշտ նորմատիվություն, ըստ որի՝ սահմանվում էին շինարարության կառուցվածքը, միկրոշրջանների, առհասարակ քաղաքների կառուցապատման խտությունը: Քաղաքային և շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեները պարտավոր էին հետևել այդ կոշտ շինարարական դիրեկտիվ նորմերին և կանոններին: Այս պայմաններում Հասրաթյանը ստիպված էր մշակել և իրականացնել քաղաքաշինական այնպիսի քաղաքականություն, որը կներառեր այն հայացքների, մեթոդների, գիտելիքների համակարգը, որոնք օրգանապես կհամադրեին հայկական ճարտարապետական դպրոցի տարրերը խորհրդային ուրբանիզացիային բնորոշ տարրերի հետ: Նման քաղաքաշինության տարբերակիչ գծերից էր, մասնավորապես, նախագծային փաստաթղթերի կազմումը, որը, մի կողմից, պիտի համապատասխաներ պլանային տնտեսության դիրեկտիվներին, մյուս կողմից՝ պետք է պահպաներ ազգային ճարտարապետության առանձ-



նահատկությունները: Բնականաբար, այդ դիրեկտիվներով չէր նախատեսվում այնպիսի օբյեկտների շինարարություն, ինչպիսին էին Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը, «Ռոսիա» կինոթատրոնի շենքը և այլն: Բավական է նշել, որ շնորհիվ Գրիգորի Իվանովիչի և Պետշինի նախագահ Գ. Աղաբաբյանի սկզբունքայնության կայացվեց կառավարության հատուկ որոշում, որը Երևանի իշխանություններին ազատում էր քաղաքի կենտրոնը տիպային շենքերով կառուցապատելուց: Հանուն արդարության հարկ է նշել, որ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ղեկավարությունը և կառավարությունը, որպես կանոն, սատարում էին քաղաքապետի նախածեռնություններին: Քաղաքային տնտեսության կարիքների հանդեպ հատուկ ուշադրություն էին դարձնում, Գրիգորի Իվանովիչի խոսքերով, հանրապետության այն տարիների ղեկավարները՝ Յակով Ջարոբյանը և Անտոն Քոչինյանը: Նա այս մասին ասաց՝ բարեկրթորեն ակնարկելով, որ լավ կլինի՝ քաղաքային իշխանություններն իրենց աշխատանքը կազմակերպեն երկրի ղեկավարության հետ:

ՀԱՍՐԱԹՅԱՆԻ ՀՈԳԵԶԱՎԱԿԸ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն տարիների բարի գործերի մասին կարելի է երկար գրել, բայց չափից ավելի հասարակ կլինեք Գրիգորի Իվանովիչի աշխատանքը գնահատել լոկ ճարտարապետական համալիրներով, հուշարձաններով, կառուցապատված միկրոշրջաններով, որոնք այսօր էլ զարդարում են մեր քաղաքը: Խոսքն այն մասին է, որ ինքը՝ Գրիգոր Հասրաթյանը, հիանալի հասկանում էր, որ եզակիության և ինքնատիպության (էլ չեմ ասում բացառիկության) հավակնող ցանկացած քաղաքի ամենաանփոխարինելի և արժեքավոր զարդը պետք է լինեն նրա բնակիչները՝ քաղաքացիները, ովքեր կոչված են դառնալու մի մեծ ընտանիք: Հենց այսպիսին ներկայացավ մեր մայրաքաղաքը բազմաթիվ հյուրերին և զբոսաշրջիկներին 1968թ. հոկտեմբերին, երբ Երևանի բնակիչները՝ մեծուփոքրով, նշեցին իրենց մայրաքաղաքի՝ Էրեբունի-Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Այն հիշարժան օրերին քաղաքը շողարձակում էր իր հարյուր հազարավոր քաղաքացիների աչքերի փայլով, որոնց ուրախությունն անսահման էր թվում: Չկար մի խանութ, դպրոց, մշակույթի և կենցաղի որևէ հաստատություն, բնակելի տուն, հիվանդանոց, որոնց առջև՝ մայթերին, երևանցիներն առանձնահատուկ հրճվանքով չհյուրասիրեին անցորդներին, բազմաթիվ հյուրերին և զբոսաշրջիկներին՝ մանավանդ Սփյուռքից: Էրեբունի-Երևան տոնակատարությունն ասես Գրիգորի Իվանովիչի հոգեզավակը լինեք: Քաղաքի տոնակատարությունը ցույց տվեց, որ Երևանին հաջողվել է հասնել գլխավորին՝ քաղաքապետի պաշտոնին գտնվելու էկվատորին նա իր քրտնաջան, երբեք ի ցույց չդրվող աշխատանքով կարողացավ ստեղծել քաղաքացիների միաս-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

նական հանրություն: Հանրություն, որը միավորվել էր քաղաքի և միմյանց հանդեպ սիրով: Բայց դա ինքնին չէր ստացվել: Հասարթայանը դրան գնում էր իր աշխատանքի առաջին իսկ օրվանից:

Ավագ սերունդը, առավել ևս՝ իմ հասակակիցները, իհարկե, հիշում են, թե ինչպես 60–70-ական թթ. Երևանյան բակերում լավագույն բակային ծաղկանոցների, լավագույն բակային պուրակների մրցույթներ էին անցկացվում: Երևանցի կանանց հատուկ հպարտության առարկա էր մասնակցությունը պատշգամբների կանաչապատման մրցույթներին: Տղաներն իրենց համար շատ պատվաբեր էին համարում մասնակցությունն ամառային մարզական մրցումներին, հատկապես ֆուտբոլի մրցումներին, որոնք անցկացվում էին Հրազդանի կիրճի այգում՝ երեխաների սիրած վայրում, որտեղ լայն ժողովրդականություն էր վայելում մանկական երկաթուղին: Էլ չեմ ասում լավագույն պիոներական ճամբարների ամենամյա տեսայցերի մասին, որտեղ հաղթողներին պարգևելու համար հաշվի էր առնվում երգել-պարելու, արտասանելու, երաժշտական գործիք նվագելու, նկարելու, տարբեր մարզաձևերում մրցելու ունակությունը: Առանձնապես հիշարժան է ամենօրյա առավոտյան մարզանքը, որն անցկացվում էր դպրոցամերձ հրապարակներում, պարապմունքներից առաջ, դպրոցական նվագախմբերի հնչյունների ներքո: Այս բոլոր միջոցառումները քաղաքային իշխանությունների, անձամբ Գրիգոր Հասարթյանի քաղաքականության մի մասն էին: Եվ արարման այդ եռանդը միանգամայն տրամաբանորեն հորդել էր փողոցներ՝ Էրեբունի–Երևան տոնակատարության տեսքով:

Գովասանքի են արժանի նաև նրա այլ նախածեռնությունները, որոնք այսօր էլ արդիական նշանակություն ունեն: Այսպես, 2009թ. փետրվարին իր հարցազրույցներից մեկում Հենրիկ Իգիթյանն ասում է. «Եվս մեկ երջանիկ «կադր»՝ իմ հանդիպումը Գրիգորի Իվանովիչ Հասարթյանի՝ քաղաքապետի, այն ժամանակներում՝ քաղխորհրդի նախագահի հետ: Կյանքումս ավելի նպատակային, կազմակերպված և մարդկային բոլոր խնդիրների հանդեպ ուշադիր մարդու չեմ հանդիպել: Հասարթյանին հաստատ հետաքրքիր էր այն ամենը, ինչ վերաբերում էր Երևանի ճակատագրին, Հայաստանին, մեր մշակույթին ... Նա կարողանում էր լսել, հետևություններ անել: Ես անգամ հատուկ ջանքեր գործադրելու կարիք չունեցա, որպեսզի համոզեմ նրան ստեղծելու աշխարհում առաջին Մանկական պատկերասրահը, որը հետագայում վերածվեց Հայաստանի Մանկական ստեղծագործության թանգարանի: 1972թ. Գ. Հասարթյանն ամեն կերպ օժանդակեց ԽՍՀՄ-ում առաջին ժամանակակից արվեստի թանգարանի ստեղծմանը, որը հաջողությամբ գործում է նաև այսօր»: Մերօրյա երիտասարդ ընթերցողն արդարացիորեն կարող է հարց տալ. իսկ դրա համար ի՞նչ ջանքեր էին հարկավոր, չէ՞ որ, ըստ էության, մտածել էին բարի գործ կատարել: Պատահական չէ, որ հիշատակեցի ամեն ինչի պլանավորման կոշտ կենտրոնացված համակարգի մասին: Մանկական պատկերասրահը, ժամանակակից արվեստի թանգա-

րանը, Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը՝ այս բոլորն իրենց զաղափարական ուղղվածությամբ չէին տեղավորվում սոցիալիստական ուրբանիզացիայի շրջանակներում:

Երևանի քաղաքապետն իր շատ հիանալի մտահղացումները կարողացավ իրականացնել, այդ ամենը նախատեսված չէր կուսակցական դիրեկտիվներով և, բնականաբար, ֆորմալ մոտեցման պարագայում ոչ մի կերպ չէր կարող արտացոլվել Երևանի քաղաքաշինական պլաններում, առավել ևս՝ չէր կարող իրականացվել: Սակայն Երևանի քաղաքապետի «խենթությունները» օտարակիզմի չէին ենթարկվում: Ավելին՝ հանրապետության կուսակցական ղեկավարությունը և կառավարությունը հասկանում էին նորարար քաղաքապետի նախագծերի իրագործման բացառիկ դրականությունը:

Երևանցիների համար անմոռանալի օր դարձավ նոր՝ Սայաթ-Նովայի փողոցի բացումը, որը համընկավ մեծ բանաստեղծի և երաժշտի ծննդյան 250-ամյակին: Հաշված ամիսների ընթացքում այդ մայրուղին Երևանի ինքնատիպ մարզարիտը դարձավ: Մայրաքաղաքի և ոչ մի բնակիչ, ոչ մի հյուր չէր կարող անտարբեր մնալ այդ հիանալի, երկու կողմից մրգատու ծառերով, որոնց ստվերի ներքո տնկվել էին «Գլորիա դեյ» վարդեր, պատված փողոցի հանդեպ:

Հասրաթյանի օրոք դեկորատիվ-սաղարթավոր և գեղեցիկ ծաղիկներով թփերը զանազանություն մտցրին մայրաքաղաքի կանաչ ճարտարապետության և բնապատկերի մեջ: Այդ նրա նախաձեռնությամբ Երևանում առաջին անգամ հիմնվեց դեմոկրոլոգ-դիզայների ծառայությունը:

Գրիգորի Իվանովիչն արդեն XX դարի 60-ական թթ. վերջին գիտակցում էր, որ խիստ անհրաժեշտ է կատարելագործել մայրաքաղաքի ենթակառուցվածքը: Նրա անմիջական մասնակցությամբ մշակվեցին արագընթաց ստորգետնյա էլեկտրատրանսպորտի կառուցման նախագծա - նախահաշվային փաստաթղթերը և հիմնավորումները: Կուզենայի երևանցիներին, մանավանդ երիտասարդ սերնդին հիշեցնել, որ մետրոպոլիտենը սկսել են կառուցել 1972թ. երկրորդ կեսին և 1981թ. մարտի 7-ին բացեցին այն երթևեկության չորս կայարաններով՝ «Բարեկամություն», «Սարալանջի», «Երիտասարդական» և «Սասունցի Դավիթ»: Շինարարությունն սկսելը բավական հոգսաշատ գործ էր: Սկզբում Երևանի քաղխորհրդի գրությունում ներկայացված՝ հստակ ստուգված հիմնավորումների հիման վրա ընդունվեց Մինիստրների խորհրդի որոշումը (N 481, 04. 08. 1971թ.) արագընթաց արտափողոցային տրանսպորտի ստեղծման մասին: Այս նախագիծը Մոսկվայում պաշտպանելու համար քաղաքային և հանրապետական իշխանություններն ընտրեցին գործող տրամվայի ցանցի վերակառուցման տարբերակը. տրամվայները պետք է անցնեին քաղաքի կենտրոնով, թունելներով (մետրոպոլիտենի գաբարիտով): Եթե չլիներ Գրիգոր Հասրաթյանի հետևողականությունը, կարելի էր վստահաբար ասել, որ չէր լինի նաև ԽՄԿԿ

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Կենտրոնի և Մինիստրների խորհրդի որոշումը (N 2221 P., 06.10.1977թ.) «Երևան քաղաքում մետրոպոլիտենի կառուցման մասին»: Իհարկե, այս հարցի լուծման մեջ հարկ է պատշաճը մատուցել նաև Հայաստանի կուսակցական և խորհրդային ղեկավար մարմիններին:

### 13 ԱՆՁՆՈՒՐԱՑ ՏԱՐԻՆԵՐ

Գրիգոր Հասրաթյանի մարդկային կերպարը լիովին բացահայտելու համար՝ միևնույն ժամանակ օբյեկտիվ մնալով, հարկ է վկայակոչել նաև նրա առօրյա մտահոգությունների ականատեսներին: Պատմում են, որ մի անգամ 60-ական թթ. սկզբին անցորդները դարձել են հետևյալ տեսարանի ականատեսը. «Մոսկվա» կինոթատրոնի կողքի ճաղաչարին ճարտարապետական պլանշետներ էին տեղադրվել, այդ նույն տեղում Երքաղխորհրդի նախագահ Գրիգոր Հասրաթյանը լսում էր ոչ բարձրահասակ մի մարդու, հավանաբար, նախագծի հեղինակի մեկնաբանությունները: Մի փոքրիկ հրապարակում առաջարկվում էր կառուցել արտասովոր մի շինություն: Բնականաբար, Երևանի քաղաքապետը, իր իսկ սահմանած ավանդույթից ելնելով, պետք է տեղում հավաստիանար առաջարկվող շինության նպատակահարմարության մեջ: Նա տվեց իր համաձայնությունը, և 1966թ. Երևանը զարդարվեց ևս մեկ հիանալի շինությամբ՝ «Մոսկվա» ամառային ունիկալ կինոթատրոնով: Նախագծի հեղինակներն էին Սպարտակ Կնթեղյանը և Թելման Գևորգյանը: Այս տաղանդավոր ճարտարապետները և արվեստի գծով նրանց շատ այլ գործընկերներ հանձին քաղաքապետի միշտ իսկական արհեստավարժ են տեսել, որը ճիշտ էր զգում շենքերի և քաղաքային միջավայրի ճարտարապետությունը: Գրիգորի Իվանովիչը անսխալ կռահում էր, թե ինչպես նորակառույցներից ցանկացածին կվերաբերվեն քաղաքացիները, նա կարևորում էր նրանց կարծիքը: Ուստի, նրա քաղաքապետ եղած ժամանակ կենտրոնական խանութների ցուցափեղկերին ցուցադրվում էին նորակառույցների նախագծերը: Դա մարդկանց հնարավորություն էր տալիս ոչ միայն պատկերացնել, թե ինչպիսին է լինելու այս կամ այն միկրոշրջանն ապագայում, այլև արտահայտելու իրենց առաջարկությունները և ցանկությունները, դրանով իսկ համամասնակից դառնալու քաղաքի ձակատագրին:

Ի՞նչն էր բնորոշ քաղաքապետի իրականացրած քաղաքաշինական քաղաքականությանը: Շինարարության յուրաքանչյուր փուլում Գրիգորի Իվանովիչը հասնում էր այն բանի անշեղ կատարմանը, որպեսզի զարգացման արդի դոմինանտները օրգանապես ներգրվեն թամանյանական Երևանի ընդհանուր գաղափարի մեջ: Գրիգոր Հասրաթյանը շարունակեց Ալեքսանդր Թամանյանի գործը՝ կառուցել քաղաք, որը կդառնար ամբողջ ազգի, յուրաքանչյուր հայի՝ անկախ բնակության վայրից, մայրաքաղաքը: Այդ նրա օրոք տեղի ունեցավ հայ ժողովրդի հին ավանդույթների վերածնունդն ու նորերի ձևավորումը, ինչն էլ շատ բանով պայմանավորեց ժամա-

նակակից հայ ազգի դիմագիծը: 13 տարվա ընթացքում Երևանի քաղաքապետ աշխատելով՝ Գրիգոր Հասրաթյանն ազնվացրեց այդ պաշտոնը, ավելի արժանապատիվ դարձրեց քաղաքապետի տեղը 60 – 70-ական թթ. նոմենկլատուրայում: Նա իր օրինակով ցույց տվեց, որ անձնվեր աշխատանքի պարագայում Երևանի քաղաքապետ լինելը և՛ մեծ պարգև է, և՛ մեծ պատասխանատվություն, որտեղ քո գործունեության պատճառներն ու հետևանքներն օրգանապես փոխկապակցված են, որտեղ ամեն օր կարող ես փոխել ամենատարբեր մարդկանց կյանքը:

\*\*\*

Ամփոփելով՝ կցանկանայի հիշեցնել մի պարզ ճշմարտություն. յուրաքանչյուր քաղաք իր պատմությունն ունի, իր առանձնահատկություններն ու խնդիրները: Ունի նաև իր քաղաքապետերը, որոնք կոչված են լուծելու այդ խնդիրները: Գրիգոր Հասրաթյանին պատվավոր առաքելություն բաժին ընկավ՝ երիտասարդացնել, արարող էներգիա, կենսուրախություն հաղորդել 2750-ամյա Էրեբունի–Երևանին, Բիբլիական Արարատի ստորոտին փռված արևոտ այդ մարգարիտը դարձնել Սուրբ Հող ողջ հայության համար: Երևանցիներն այսօր էլ երախտագիտությամբ են հիշում Գրիգոր Հասրաթյանին, նրանք Գրիգորի Իվանովիչին ճանաչել են իրենց լավագույն քաղաքապետը, որովհետև հասկացել են. նա եկավ, որպեսզի լավ անի իր գործը:



## ԱՅՈՒՆ. ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՁԱԽՈՂՄԱՆ

### ԵՎ ԴՐԱ ՄԵՋ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ս. թ. սեպտեմբերի 17-ին Ռուսաստանի Դաշնային REGNUM տեղեկատվական գործակալությունը «Ն. Փաշինյանի հակապետական հեղաշրջումը դատապարտված է ձախողման» վերնագրի ներքո հրապարակել էր հոդվածս (<https://regnum.ru/news/polit/2483595.html>): Եվ ահա հաջորդ օրը «Ժողովրդական վարչապետի» համախոհները Facebook-ում բարձրացրին վայնասուն՝ ի վկայություն, որ հոդվածի մեջ արձարծված քննադատության թիրախներն ընտրված են ճիշտ և անվրեպ: Հայիոյախառն տղետին ներհատուկ արծագանքները, որն իմ մտորումների ու տագնապների հետ և ոչ մի աղերս չունեին, արթնացրին թե՛ դրական, թե՛ բացասական զգացումներ: Արծագանքներից ստացած դրական տպավորությունս պայմանավորված էր այն իրողությամբ, որ հոդվածիս «հերոսները» ակնհայտորեն տագնապում են՝ գիտակցելով իրենց գոյության վտանգավորությունը մեր երկրի ու հասարակության համար: Իսկ նրանցից շատերի խուճապահար, սարսափած լինելու փաստը վկայում է, որ հոդվածիս վերնագիրը արդեն իսկ մոտ ապագայում կդառնա իրականություն: Ջգացի նաև, որ հոդվածում բերված և ոչ մի քննադատական գնահատական ու եզրակացություն ո՛չ հերքվել էր, ո՛չ էլ վիճարկվել, այն է՝ բովանդակային առումով անխցելի էր: Իսկ բացասականն էլ այն էր, որ վերստին համոզվեցի. ԼԳԲՏ ընկերակցության անդամները, ագրեսիվ տոտալիտար կրոնական աղանդների հետևորդները, կարիքից կամագուրկ դարծած մեր ոյուրահավատ քաղաքացիները համախմբված են և, ցավոք, դեռ քիչ չեն: Այս իրողությունը լուրջ մտորումների տեղիք է տալիս, առավել ևս, որ «Ժողվարչապետի» բոցաշունչ ելույթներից մոլորյալների թվում կան լուսավոր դեմքերով և փայլող աչքերով, ակնհայտորեն, ազնվաբարո երիտասարդներ:

Ինչևէ, ընթերցողի դատին են հանծնում հոդվածիս վերջաբանը:

«Հետգրության փոխարեն: Չէի ցանկանա տխուր նոտայով ավարտել հոդվածս: Չգիտես ինչու, երբ հոգիս տագնապում է, մտաբերում են նրբաճաշակության արբիտր Գայոս Պետրոնիոսի նամակը կայսր Ներոնին: Մի փոքրիկ մեջբերում կատարեն դրանից. «...Տանջի՛ր հպատակներիդ, եթե այդպես ես ուզում, բայց աղաչում եմ քեզ՝ մի՛ այլանդակիր և մի՛ հաշմիր

Արվեստները: Թախանձագին խնդրում են քեզ ողջ եղի՛ր, բայց մի՛ երգիր, սպանի՛ր, բայց ոտանավորներ մի՛ գրիր, թունավորի՛ր, բայց մի՛ պարիր»:

Ահա, հիմա էլ կուզենայի գրել Ն. Փաշինյանին. «...Տանջի՛ր քո մոլեռանդ-երկրպագուներին, որոնց մեթոդաբար ներշնչում ես, թե հայ ժողովրդի մեջ կան «սևեր» ու «սպիտակներ», եթե այդպես ես ուզում, բայց խնդրում են քեզ՝ մի՛ այլանդակիր և մի՛ հաշմիր մեր ավանդական ընտանեկան արժեքները՝ ակնհայտորեն և ծածուկ հովանավորելով ԼԳԲՏ ընկերակցությանը, որն անպատիժ, անպատկառ ձևով և ցինիկաբար գրոհում է Երևանի ոստիկանական բաժանմունքները: Մի՛ հովանավորիր ագրեսիվ կրոնական աղանդներին, որոնք գրոհում են Ամենայն Հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդին: Մի՛ հովանավորիր Սորոսի կողմից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների տարատեսակ հերձվածողներին, որոնք մտադիր են ս. թ. նոյեմբերի 15 – 18-ը Գրիգոր Լուսավորչի և Գրիգոր Նարեկացու սրբազան հողում «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ-քրիստոնյաների համաժողով» անվանմամբ հերթական խառնածողվն անցկացնել: Խնդրում են քեզ՝ հեղափոխության և հակահեղափոխության մասին քո սրտաճնլիկ ճառերով էլ մի՛ տանջիր կարիքից կամազուրկ դարձած մարդկանց: Գուցե դու չես էլ հասկանում, որ արդեն սպառնալիք ես դարձել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար»:

Որպեսզի ընթերցողի մոտ տպավորություն չստեղծվի, թե խոհերս ինքնատիպ «ձայն բարբառոյ յանապատի» են, վստահաբար հայտարարում են, որ հայ ժողովրդի հավաքական իմաստնությունը կհաղթանակի և Նիկոլ Փաշինյանի հակապետական հեղաշրջումը, ինչ բարեհունչ կարգախոսներով էլ որ քողարկվի, դատապարտված է ձախողման: Սրանում է, անշուշտ, Հայոց պետականության և Արցախի Հանրապետության փրկությունը: Ով որքան ավելի շուտ գիտակցի այս ճշմարտությունը, այնքան ավելի քիչ կլինեն մեր ազգային անվտանգության և Հայաստանի Հանրապետության պետականության սպառնալիքները»:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

«Իրավունք», 21. 09. 2018:

## ДА, АНТИГОСУДАРСТВЕННЫЙ ПЕРЕВОРОТ Н. ПАШИНЯНА ОБРЕЧЕН НА ПРОВАЛ

### И В ЭТОМ – СПАСЕНИЕ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

17 сентября т.г. Российское информационное агентство REGNUM опубликовало мою статью под заглавием «Антигосударственный переворот Н. Пашиняна обречен на провал» (<https://regnum.ru/news/polit/2483595.html>). И вот на следующий же день единомышленники «народного» премьер-министра в Facebook-е подняли вой, свидетельствуя тем самым, что мишени, на которые было направлено острие критики, содержащейся в статье, выбраны правильно и безошибочно. Перемежающиеся бранью присущие невеждам отклики, которые ничего общего не имели с моими раздумьями и тревогами, побудили во мне двоякие чувства: как положительные, так и отрицательные. Положительное впечатление от этих откликов было обусловлено теми реалиями, что «герои» моей статьи явно встревожились, осознавая опасность своего существования для нашей страны и общества. А факт того, что многие из них объаты ужасом и пребывают в панике, свидетельствует, что заголовок моей статьи в ближайшее время станет действительностью. Я также зафиксировал, что приведенные в статье ни одна критическая оценка, ни один вывод не были ни опровергнуты, ни оспорены, то есть в содержательном плане они, как оказалось, неуязвимы. А отрицательные чувства были обусловлены констатацией в очередной раз того, что члены ЛГБТ-сообщества, последователи агрессивных религиозных тоталитарных сект, обезволенные нуждой наши доверчивые сограждане сплочены и, к сожалению, их немало. Эта реальность дает повод для серьезных раздумий, тем более что среди заблудших от пламенных речей «народного» премьер-министра, совершенно очевидно, добропорядочные молодые люди со светлыми лицами и блестящими глазами.

Словом, выношу на суд читателей послесловие моей статьи.

*«Вместо послесловия.* Не хотелось бы на грустной ноте завершать свою статью. Почему-то, когда у меня бывает тревожно на душе, на память приходит письмо арбитра искусств Гая Петрония императору



Нерону. Приведу лишь отдельную выдержку из него: «...Мучай своих подданных, если так хочется, но умоляю тебя – не уродуй и не калечь Искусства. Прошу Тебя: не сочиняй больше музыки».

Вот и сейчас хотелось бы написать Н. Пашиняну: «...Мучай своих фанатов-почитателей, которым ты методично внушаешь, что среди армянского народа есть «черные» и «белые», если так хочется, но прошу тебя – не уродуй и не калечь наши традиционные семейные ценности, явно и тайно покровительствуя ЛГБТ- сообществам, безнаказанно, нагло и цинично атакующим отделения полиции Еревана; не покровительствуй агрессивным религиозным сектам, атакующим Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина Второго; не покровительствуй разного рода отщепенцам из финансируемых Соросом общественных организаций, которые намереваются 15–18 ноября т.г. провести очередное собрание под названием «Форум ЛГБТ-христиан Восточной Европы и Центральной Азии» на священной земле Григория Просветителя и Григора Нарекаци. Прошу тебя перестань мучить обезволенных нуждой людей своими надрывными речами о революции и контрреволюции. Может, ты и не осознаешь, что уже стал угрозой национальной безопасности Республики Армения».

Чтобы у читателя не сложилось впечатление, что мои раздумья – это своеобразный «глас вопиющего в пустыне», с уверенностью заявляю, что коллективная мудрость армянского народа восторжествует и антигосударственный переворот Никола Пашиняна, какими бы благими лозунгами ни прикрывался, будет обречен на провал. В этом, бесспорно, спасение Армянского государства и Арцахской Республики. И чем раньше наступит осознание этой истины, тем меньше угроз нашей национальной безопасности и государственности Республики Армения.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»

## АРТАШЕС ГЕГАМЯН: АЗЕРБАЙДЖАН ВОТ-ВОТ РАЗВЯЖЕТ ВОЙНУ

### НЕ ПРИХОДИТСЯ СОМНЕВАТЬСЯ

События, развернувшиеся в ходе проходящей недели в регионе Южного Кавказа, все более и более склоняют к мысли, что Азербайджан вот-вот развяжет новую военную агрессию против Арцахской Республики.

Статья со столь категоричным началом, естественно, может у читателей породить определенные сомнения в объективности изложенного в ней материала, ибо любое алармистское заявление в столь взрывоопасной ситуации, которая складывается вокруг Сирии и Ирана, не может никого оставить равнодушным из-за возможности возникновения нового очага напряженности в регионе. Чтобы развеять подобное восприятие, упомяну лишь, на мой взгляд, некоторые наиболее примечательные публикации и отдельные высказывания президента Азербайджана Ильхама Алиева, которыми в эти дни изобилуют азербайджанские масс-медиа.

Итак, как передает информационное агентство АЗЕРТАДЖ, 21 сентября т.г. президент Азербайджана Ильхам Алиев, выступая на торжественном заседании Милли меджлиса, проведенном по случаю 100-летия азербайджанского парламента, заявил:

«Нагорный Карабах никогда не получит какого бы то ни было статуса вне суверенитета Азербайджана. Азербайджанский народ и государство никогда не позволят, чтобы их исконная, историческая, правовая земля была отделена от Азербайджана. Армении не следует жить такими грезами. Если страной в течение 20 лет управлял режим криминальной хунты, – речь идет о государстве, являющемся независимым 26 лет, – то как еще можно назвать это государство? Только безуспешным».

То, что И. Алиев абсолютно не в ладах с историей, кто бы сомневался: оказывается, азербайджанское государство, история которого исчисляется всего лишь одним столетием, может иметь «исконные, исторические, правовые земли», причем которые по какому-то «злому умыслу» древнегреческого географа и историка Страбона, ссылающегося на источники середины I века до н.э., поведал грядущим поколениям о том, что с начала II века до н.э. до раздела Великой Армении в 387 г. н.э. в

течение примерно 6 столетий территория современного Нагорного Карабаха (Орхистена) входила в состав армянского государства. Страбон характеризовал Орхистену, как «область Армении, выставляющую наибольшее количество всадников» (Страбон. «География» 4,11,14 тома). Можно привести еще с десятков авторитетных и общепризнанных исторической наукой авторов и составленных ими документов, наглядно свидетельствующих о том, что апшеронскому султану абсолютно неведома богатая история страны под гордым названием Армения, которая, вне всякого сомнения, безуспешна в одном – в плане доставшихся на ее долю соседей в лице Азербайджана и Турции. Незнание истории своей страны лидером Азербайджана – данность вполне предсказуемая ввиду отсутствия таковой, имеется в виду истории. Но удивляет другое: оказывается, И. Алиев не в ладах и с арифметикой. Ему почему-то кажется, что Республике Армения, провозгласившей свою независимость 21 сентября 1991 года, 26 лет, а не 27, как, к примеру, Азербайджану, провозгласившему свое образование и независимость в этом же году. Словом, незнание истории и арифметики у президента Азербайджана наводит на весьма грустные размышления за судьбу азербайджанского народа, которого их же президент своим незнанием предмета обсуждения вводит в заблуждение. Это, увы, было вынужденное отступление от основной темы, однако об этом я не стал бы упоминать, если бы не бредовые оценки апшеронского султана о двадцатилетнем правлении «режима криминальной хунты», бредовые оценки, которые спустя неделю в более мягкой форме, увы, повторил премьер-министр Республики Армения Никол Пашинян, причем с трибуны 73-й сессии Генеральной Ассамблеи ООН: «Я бы хотел вкратце обратиться к нашей победе над авторитарной властью – вот так. Сегодня парламент продолжает работать, но он не отражает волю нашего народа... Почему? Ответ краток, поскольку он избран с грубыми нарушениями избирательного процесса, в том числе с использованием административного ресурса и применением давления».

После подобных оценок премьер-министра РА уже совершенно по-другому воспринимаются слова апшеронского султана, сказанные им 9 июля т.г. на расширенном заседании правительства Азербайджана:

«Я заявил с трибуны ООН, что в Армении был режим коррупционной хунты. Сейчас это повторяет армянский народ. Я говорил, что это кровососущий, воровской, криминальный режим. Сейчас это повторяет армянский народ... Армянская государственность уже потерпела крах. В то же время справедливость восторжествовала, хунта кровопийц оставила власть. Здесь была и наша роль. Не хочу сейчас это раздувать», – цитирует Алиева издание *ohv.az*. Так и хочется воскликнуть – возрадуйся, армянский народ, не кто-нибудь, а отчасти сам президент Азербайджана освободил тебя из пут «режима криминальной хунты».

Правда, возникает и другой вопрос: а чьими руками он освободил нас? Однако это тема совершенно другого анализа, который при упорстве руководителя исполнительной власти Армении в своем стремлении любой ценой распустить парламент не заставит себя долго ждать.

После столь небольшой вводной части сделаем некоторые наблюдения. Итак, сегодня 27 сентября т.г. Президент Российской Федерации Владимир Владимирович Путин прибыл в Баку с кратким рабочим визитом, в ходе которого намечается двусторонняя встреча с И. Алиевым, участие на пленарной сессии IX российско-азербайджанского межрегионального форума и посещение заключительного этапа чемпионата мира по дзюдо. Читатель может задаться вопросом – а что в этом необычного? Так вот еще за пару дней до визита В.В.Путина в Баку в апшеронском султанате развернулась широко рекламируемая антироссийская пропагандистская истерика.

Как сообщает агентство «Туран», 24 сентября т.г. группа общественных деятелей, в большинстве известные оппозиционные политики, провела круглый стол, посвященный оценке значения предстоящего визита президента РФ В. Путина в Азербайджан. Видимо, властям Азербайджана уж больно хотелось накануне визита российского президента устами подконтрольных аппарату И. Алиева лиц озвучить некоторые мысли, которые И. Алиев боится озвучить сам. А заодно, популяризируя русофобские бредни азербайджанской оппозиции, самому выглядеть таким героем, который вопреки давлению со стороны «видных оппозиционных деятелей» самоотверженно ратует за углубление азербайджано-российских стратегических отношений. Так что же поведали честному народу участники этого исторического круглого стола. «Россия продолжает поддерживать оккупацию азербайджанской земли, одновременно изолируя Азербайджан от международных сил, противоречащих геополитическим устремлениям Кремля... Азербайджанские политики призывают страны и общества региона сплотиться перед угрозой российской экспансии, защитить независимость своих государств, опираясь на международные системы безопасности. Они напоминают о прямой ответственности России за оккупацию азербайджанской земли со стороны Армении...». Думается, что соседи Азербайджана в лице Турции и Ирана совместно воскликнут «Иншаллах» и со смирением воспримут наставления азербайджанских оппозиционеров, к вящему сожалению которых Грузия еще за несколько лет до этого исторического круглого стола, приуроченного к приезду Владимира Путина, уже разобралась со своим геополитическим выбором.

Можно привести и другие примеры подобного рода, которые, повторысь, бесспорно, иницируются и режиссируются аппаратом президента Азербайджана. Однако ограничимся выдержками из публикации с изложением прямо противоположного возможного сценария. Так, небезыз-

вестный турецко-азербайджанский интернет портал MÜXALIFT в своей публикации от 24 сентября т.г. под заголовком «Чем вызван визит Владимира Путина в Азербайджан – Аналитика», анализируя возможные риски для Азербайджана, связанные с приобретением оружия из России (имеются в виду риски из-за возможных санкций со стороны США, как это имело место против Китая, закупившего самолеты в России), отмечает: «И здесь можно выдвинуть новое предположение о том, что вместе с соглашением о приобретении российского вооружения (предполагается, что такая договоренность будет иметь место в ходе сегодняшнего визита В. В. Путина в Азербайджан. – *А. Г.*) Баку сделали некие предложения, которые укрепили решимость Азербайджана рискнуть. Есть только одна проблема, способная толкнуть Баку на такой шаг – и это растянувшийся на десятилетия нагорно-карабахский конфликт. Не случайно весьма информированное агентство «Росбалт» отмечает: «В 2018 году Армении ждет опасность войны с Азербайджаном без «спины» России».

Таким образом, мы вправе утверждать, что приводимые выше разнонаправленные сценарии развития ситуации в регионе Южного Кавказа приобретают совершенно другой смысл, если рассматривать их в свете выступления президента США Дональда Трампа на 73-й сессии Генеральной Ассамблеи ООН. Да, да, я не оговорился, в свете выступления президента США от 25 сентября т.г. в Нью Йорке. «Лидеры Ирана сеют хаос, смерть и разрушение, – сказал в своем выступлении американский президент, – они не уважают ни своих соседей, ни суверенные права других стран. Вместо этого иранские лидеры расхищают запасы страны ради собственной наживы, также выступают причиной потрясений на Ближнем Востоке и далеко за его пределами... Мы не можем позволить основному спонсору терроризма в мире овладеть самым опасным оружием». После этих слов об ужесточении позиции Вашингтона в противостоянии с Ираном особую актуальность приобретает наличие 100-километровой границы Арцахской Республики и зоны безопасности Нагорного Карабаха с Исламской Республикой Иран (отметим, что граница Республики Армения с ИРИ составляет 35 км). С учетом этого вспомним, что 21 сентября т.г. Дональд Трамп поздравил премьер-министра РА Никола Пашиняна по случаю Дня независимости Армении, при этом, в частности, отметил: «В ближайшие месяцы открываются возможности для урегулирования нагорно-карабахского конфликта, что может также открыть новые возможности для армяно-американского партнерства. Будучи страной-членом МГ ОБСЕ, Соединенные Штаты готовы работать с вами по нахождению долгосрочного мирного решения конфликта». Вот и прекрасно, подумает читатель. А теперь приведем выдержку из поздравления Дональда Трампа, адресованного Ильхаму Алиеву в связи с Днем республики и 100-летием Азербайджанской Демократической Республи-

## А. ГЕГАМЯН

ки. В поздравлении, в частности, было сказано: «Предстоящие месяцы создадут возможности для решения нагорно-карабахского конфликта, а это создаст еще более лучшие условия для сотрудничества между США и Азербайджаном. Соединенные Штаты, как сопредседатель Минской группы ОБСЕ, искренне желают сотрудничества с вами для устойчивого решения этого конфликта мирным путем». Так на что же надеется Ильхам Алиев, когда из выступления в выступление ужесточает свою воинственную риторику, полностью перечеркивая суть 5 заявлений президентов стран-сопредседателей МГ ОБСЕ по урегулированию нагорно-карабахского конфликта, в каждом из которых особо подчеркивается безальтернативность мирного урегулирования нагорно-карабахского конфликта. Не говоря уже о резолюциях авторитетных международных организаций, принятых за последние годы. А может, Алиеву кажется, что, развязав новую войну против Нагорного Карабаха создав тем самым зону крайней напряженности вдоль границы Арцахской Республики и Ирана, он откроет дорогу для ввода миротворческих сил и их размещения по периметру границ Арцаха? Ни для кого не секрет, что в первую очередь это будут миротворцы из стран-сопредседателей МГ ОБСЕ, не говоря уже о миротворцах военно-стратегического союзника Азербайджан – Турции... Не надо быть провидцем, чтобы не понять, какой катастрофой для региона Южного Кавказа обернется реализация такого сценария, который открыто вынашивается апшеронским султаном.

С учетом вышеизложенного кажутся абсолютно неуместными тональность, да и отдельные послы выступления премьер-министра РА Н. Пашиняна на Генассамблее ООН. Взять хотя бы его жалостливый пассаж «Карабах не может быть в составе Азербайджана, если кто-то не желает позволить новый геноцид армянского народа». Это на чье же милосердие и праведность уповает премьер-министр, кто они – которые не пожелают позволить «новый геноцид армянского народа»? Неужели свои надежды он связывает с теми, кто и глазом не моргнул, когда в Азербайджане героизировали Рамиля Сафарова, зарубившего топором спящего офицера ВС Армении в дни проведения учебных курсов в Будапеште по линии НАТО. А может, Н. Пашинян рассчитывает на тех правдоборцев и правдолюбив, которые так и не возвысили свой голос протеста и осуждения, когда на сайте Бакинского государственного университета был выставлен гнусный видеоролик с азербайджанским башибузуком, с улыбкой на роже державшим в руках отрубленную голову попавшего в плен армянского воина в апреле 2016 г. В сознание закрадываются подозрения, что вся эта не стихающая последние 5 месяцев в Армении мерзкая информационная вакханалия вокруг проштрафившихся в мирное время героев Арцаха проводилась с далеко идущими целями, которые, хочется верить, неведомы «народному» премьер-министру.

Теперь уже совершенно в ином свете представляется также и безудержное стремление Н. Пашиняна сотоварищи к роспуску Национального Собрания РА, что не что иное, как их осознанный выбор любой ценой дестабилизировать ситуацию в Армении, добиться раскола армянского общества. Здесь внимание читателей обратим на еще одну немаловажную деталь. И. Алиев далеко не случайно говорит именно о двадцатилетнем правлении в Армении «режима криминальной хунты». То есть первые семь лет существования независимой Армении по логике азербайджанского президента Арменией правил отнюдь не «режим кровавой хунты». Не правда ли – парадокс. Ведь именно в те годы была завоевана независимость Нагорно-Карабахской Республики, правда, ценой жизни десятков тысяч достойных сынов и дочерей армянского народа, ценой невероятных, но вместе с тем осознанных гражданами Армении лишений. Так как же понимать апшеронского султана, который руководителя Армении тех лихих лет «благородно» не причисляет к «коррупционерам» и «кровососам армянского народа». Может, причина в четко выраженной позиции первого президента РА и его команды в подходах к урегулированию нагорно-карабахского конфликта, которые по существу сводились, в конечном счете, к сдаче на милость Азербайджану Нагорно-Карабахской Республики. Справедливости ради заметим, что об этом он без обвиняков неоднократно заявлял. К этому добавим также и то, что на выборах в Национальное Собрание РА 2 апреля 2017 года возглавляемая первым президентом РА политическая сила «Армянский национальный конгресс» (далее – АНК) набрала всего лишь 1,66% голосов избирателей, причем, по моему мнению, благодаря голосам Народной партии Армении, которая была в альянсе с АНК. Что ж, похвально, что до сих пор Ильхам Алиев помнит об этом «конструктивном» подходе первого президента РА к урегулированию нагорно-карабахского конфликта. Поэтому вовсе не случайно, что азербайджанские масс-медиа, нещадно критикуя второго и третьего президентов Армении – Роберта Кочаряна и Сержа Саргсяна, с неизменным уважением, даже благоговением упоминают имя Левона Тер-Петросяна, зачастую с приставкой к его имени ласкающего эпитета – «мудрый».

P.S. Статья уже была готова к печати, когда десятки интернет-порталов Азербайджана в заголовки своих публикаций поставили выдержку из слов президента России Владимира Владимировича Путина, сказанных на пленарном заседании IX российско-азербайджанского межрегионального форума в Баку: «Мы с Азербайджаном ищем баланс интересов». Уверен, что воинственные слова Ильхама Алиева о том, что «Нагорный Карабах никогда не получит какого бы то ни было статуса вне суверенитета Азербайджана», идут вразрез с российско-азербайджанским балансом интересов. Думается, Ильхам Алиев это прекрасно осознает.

**А. ГЕГАМЯН**

*Вместо послесловия.* Не хотелось бы дебют премьер-министра РА Никола Пашиняна на Генеральной Ассамблее ООН представлять лишь в критическом плане. В его выступлении были и положительные ноты, как-то: «Проблема в том, как Азербайджан может претендовать на Карабах без диалога с ним. Это возможно? Это возможно лишь в том случае, если власти Азербайджана интересуют не народ, а исключительно территория. Таким образом, становится очевидным, что намерения властей Азербайджана заключаются в том, чтобы очистить Карабах от армян, как это произошло в Нахичеване».

Уж коль скоро к этому выводу Н. Пашинян пришел самостоятельно, вполне ожидаем с его стороны и второй, на мой взгляд, востребованный и вытекающий из этого заключения следующий шаг, а скорее осознание простой истины: когда Родина в опасности, преступно делить общество на «белых» и «черных», преступно без решения суда хулить и приклеивать оскорбительные ярлыки на героев Арцахской национально-освободительной войны, напрочь умаляя их неопределимую роль в освобождении Арцаха. Да, незаменимых лидеров нет, но есть немеркнувший подвиг многих и многих героев Арцахской войны, которые каждый день, каждый час, видя перед глазами смерть, служили Отечеству – Армении и Нагорно-Карабахской Республике во имя спасения жизней десятков и сотен тысяч карабахцев, чтобы их не постигла участь армянского населения Нахичевана. Каким бы ни было мое отношение к Роберту Кочаряну, Сергу Саргсяну, Самвелу Бабабяну, Артуру Агабекяну, Виталию Баласаняну и ко многим и многим героям Арцаха, важно однако: их самое широкое привлечение к пока еще дипломатическому урегулированию нагорно-карабахского конфликта сегодня, как никогда, актуально – и оно страшнее подрыва плотины Мингечаурского водохранилища.

Да, Азербайджан вот-вот развяжет войну, которая обернется для апшеронской республики потерей государственности. И это есть правда.

**АРТАШЕС ГЕГАМЯН**

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»



## ԱՂԻՔԵԶԱՆՆ ՈՒՐ ՈՐ Է ՊԱՏԵՐԱԶՄ ԿԱԱՆՁԱԶԵՐԾԻ

### ԵՎ ԴԱ ԿԱՍԿԱԾ ՉԻ ՀԱՐՈՒՑՈՒՄ

Հարավկովկասյան տարածաշրջանում անցնող շաբաթվա ընթացքում տեղի ունեցող իրադարձություններն ավելի ու ավելի են հակում այն մտքին, որ Ադրբեջանն ուր որ է՝ նոր ռազմական ագրեսիա է սկսելու Արցախի Հանրապետության դեմ:

Այսօրվա կտրուկ սկիզբ ունեցող հողվածը, բնականաբար, ընթերցողների մեջ կարող է որոշակի կասկածներ առաջացնել ներկայացվող նյութի օբյեկտիվության առումով, քանզի ցանկացած խուճապարար հայտարարություն նման պայթյունավտանգ իրավիճակում, որը ստեղծվում է Սիրիայի և Իրանի շուրջ, չի կարող որևէ մեկին անտարբեր թողնել տարածաշրջանում լարվածության նոր օջախի ծագման հնարավորության հանդեպ:

Ինչպես տեղեկացնում է ԱԶԵՐԹԱԶ տեղեկատվական գործակալությունը, սեպտեմբերի 21-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, ելույթ ունենալով Միլի մեջլիսի հանդիսավոր նիստին, որը գումարվել էր ադրբեջանական խորհրդարանի 100-ամյակի առիթով, ասել է. «Լեռնային Ղարաբաղը երբեք չի ստանա որևէ կարգավիճակ Ադրբեջանի ինքնիշխանությունից դուրս: Ադրբեջանցի ժողովուրդը և պետությունը երբեք թույլ չեն տա, որ իրենց բնիկ, պատմական, իրավական հողն առանձնացվի Ադրբեջանից: Հայաստանը չպետք է ապրի նման անուրջներով: Եթե երկիրը 20 տարվա ընթացքում կառավարել է քրեական խուճախի ռեժիմը, խոսքը 26 տարի անկախություն ունեցող պետության մասին է, ապա ուրիշ էլ ի՞նչ կերպ կանվանես պետությունը: Միայն անհաջող»:

Ի դեպ, ուշադրություն դարձրեք ավիչերոնյան սուլթանի գառանցական գնահատականներին «քրեական խուճախի ռեժիմի» քսանամյա կառավարման մասին, որոնք մեկ շաբաթ անց, ավելի մեղմ ձևով, կրկնեց Հայաստանի «ժողովարչապետ» Նիկոլ Փաշինյանը, ընդ որում՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 73-րդ նստաշրջանի ամբիոնից:

«Կցանկանայի հակիրճ անդրադառնալ ավտորիտար իշխանության նկատմամբ մեր տարած հաղթանակին, – ահա այսպես ... – Այսօր խորհրդարանը շարունակում է աշխատել, բայց այն չի ներկայացնում մեր ժողովրդի կամքը ... Ինչո՞ւ: Պատասխանը կարճ է՝ քանի որ այն ընտրվել է ընտրական

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

գործընթացի կոպիտ խախտումներով, այդ թվում՝ վարչական ռեսուրսի և ճնշումների գործադրմամբ»:

Հայաստանի վարչապետի նման գնահատականներից հետո արդեն միանգամայն այլ կերպ են ընկալվում ավիաբեռնող սուվթանի՝ հուլիսի 9-ին ասած խոսքերը Ադրբեջանի կառավարության ընդլայնված նիստում. «Ես ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեցի, որ Հայաստանում եղել է կոռուպցիոն խունտայի վարչակարգ: Հիմա դա կրկնում է հայ ժողովուրդը: Ես ասում էի, որ դա արյուն ծծող, գողական, քրեական ռեժիմ է: Հիմա դա կրկնում է հայ ժողովուրդը...

Հայկական պետականությունն արդեն փլուզվել է: Միևնույն ժամանակ, հաղթանակել է արդարությունը, արնախումների խունտան թողել է իշխանությունը: Այստեղ մենք էլ մեր դերն ենք ունեցել: Չեմ ուզում հիմա դա ուռձացնել», – Ալիևին մեջբերում է oxv.az պարբերականը: Հազիվ եմ զսպում ինձ, որ չբացականչեմ. ցնծա՛, հայ ժողովուրդ, ոչ այլ ոք, քան մասամբ ինքը՝ Ադրբեջանի նախագահն է ազատել քեզ «քրեական խունտայի ռեժիմի» կապանքներից:

Իհարկե, այլ հարց էլ է ծագում. իսկ ո՞ւմ ձեռքերով է ազատել մեզ: Սակայն սա միանգամայն այլ վերլուծության թեմա է, որը Հայաստանի գործադիր իշխանության ղեկավարի՝ ամեն գնով խորհրդարանը ցրելու համառության պարագայում երկար սպասել չի տա:

Այսպիսի ոչ այնքան մեծ ներածությունից հետո որոշ նկատառումներ հայտնեմ: Եվ այսպես, սեպտեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը ժամանեց Բաքու՝ կարճ աշխատանքային այցով, որի ընթացքում նախատեսվում էին երկկողմանի հանդիպում Ի. Ալիևի հետ, մասնակցություն ռուս-ադրբեջանական միջտարածաշրջանային համաժողովի IX լիագումար նիստին և այցելություն ձյուդոյի աշխարհի առաջնության եզրափակչին: Ընթերցողը կարող է հարցնել՝ իսկ ի՞նչ արտասովոր բան կա սրանում: Դե, ուրեմն, նշենք, որ Վ. Պուտինի Բաքու կատարելիք այցից մեկ-երկու օր առաջ ավիաբեռնող սուվթանությունում լայնորեն գովազդվող հակառուսական քարոզչական հիստերիկա էր ծավալվել:

Ինչպես տեղեկացնում է «Թուրան» գործակալությունը, ս. թ. սեպտեմբերի 24-ին հասարակական գործիչների մի խումբ, հիմնականում հայտնի ընդդիմադիր քաղաքական գործիչներ, կլոր սեղան անցկացրեց՝ նվիրված ՌԴ նախագահ Վ. Պուտինի Ադրբեջան կատարելիք այցի նշանակության գնահատմանը: Հավանաբար, Ադրբեջանի իշխանությունները շատ էին ցանկանում Ռուսաստանի նախագահի այցի նախօրեին Ի. Ալիևի ապարատի կողմից վերահսկվող անձանց միջոցով հնչեցնել որոշ մտքեր, որոնք Ի. Ալիևն ինքը վախենում է բարձրաձայնել: Եվ ձեռքի հետ էլ, հանրայնացնելով ադրբեջանական ընդդիմության ռուսատյաց զառանցանքները, այնպիսի հերոս երևալ, որը, հակառակ «նշանավոր ընդդիմադիր գոր-

ծիչների» ճնշմանը, անձնուրացաբար պայքարում է ադրբեջանա-ռուսական ռազմավարական հարաբերությունների խորացման համար:

Ուրեմն ի՞նչ տեղեկացրին պաշտելի ժողովրդին այդ պատմական կլոր սեղանի մասնակիցները: «Ռուսաստանը շարունակում է սատարել ադրբեջանական հողի օկուպացիային՝ միաժամանակ Ադրբեջանը մեկուսացնելով Կրեմլի աշխարհաքաղաքական նկրտումներին հակասող միջազգային ուժերից ... Ադրբեջանցի քաղաքական գործիչները տարածաշրջանի երկրներին և հասարակություններին կոչ են անում համախմբվել ռուսական էքսպանսիայի սպառնալիքի դեմ, պաշտպանել իրենց պետությունների անկախությունը՝ հենելով անվտանգության միջազգային համակարգերի վրա: Նրանք հիշեցնում են Ռուսաստանի ուղղակի պատասխանատվության մասին՝ Հայաստանի կողմից ադրբեջանական հողի օկուպացիայի համար ...»:

Կարծում եմ, որ Ադրբեջանի հարևանները՝ հանձինս Թուրքիայի և Իրանի, միասին Ինչալլահ կբացականչեն և հնազանդորեն կընդունեն ադրբեջանցի ընդդիմադիրների խրատները, ի մեծ դժբախտություն որոնց՝ Վրաստանը պատմական այս կլոր սեղանից (որը զուգադիպել էր Վլադիմիր Պուտինի այցին) դեռևս մի քանի տարի առաջ էր արդեն կատարել իր աշխարհաքաղաքական ընտրությունը:

Հարավկովկասյան տարածաշրջանում իրավիճակի զարգացման տարավեկտոր սցենարները միանգամայն այլ իմաստ են ստանում, եթե դրանք դիտարկում ենք ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 73-րդ նստաշրջանում ունեցած ելույթի համատեքստում: Այո, այո, ես չսխալվեցի, Նյու Յորքում սեպտեմբերի 25-ին ԱՄՆ նախագահի ունեցած ելույթի համատեքստում: «Իրանի առաջնորդները քառս են սերմանում, մահ և ավերածություն, – իր ելույթում ասաց ամերիկյան նախագահը, – նրանք չեն հարգում ոչ իրենց հարևաններին, ոչ այլ երկրների ինքնիշխան իրավունքները: Դրա փոխարեն Իրանի առաջնորդները թալանում են երկրի պաշարները հանուն սեփական շահի, նաև Մերձավոր Արևելքում և նրա սահմաններից շատ հեռու ցնցումների պատճառ են հանդիսանում ... Մենք չենք կարող թույլ տալ աշխարհում ահաբեկչության գլխավոր հովանավորին տիրապետել ամենավտանգավոր զենքին»:

Իրանի հետ դիմակայությունում Վաշինգտոնի դիրքորոշման կոշտացման մասին այս խոսքերից հետո առանձնակի արդիականություն է ստանում Իրանի Իսլամական Հանրապետության հետ Արցախի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի անվտանգության գոտու 100 կիլոմետրանոց սահմանի առկայությունը (նշենք, որ Հայաստանի Հանրապետության սահմանը ԻԻՀ-ի հետ 35 կմ է): Սա նկատի ունենալով՝ հիշենք, որ սեպտեմբերի 21-ին Դոնալդ Թրամփը շնորհավորել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին Հայաստանի Անկախության օրվա առիթով, միևնույն ժամանակ, մասնավորապես նշել է. «Առաջիկա ամիսներին հնարավորություններ են բացվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար, որը կա-

## Ա. գեղաստ

րող է նաև նոր հնարավորություններ բացել հայ-ամերիկյան գործակցության համար: Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետություն՝ Միացյալ Նահանգները պատրաստ է աշխատել Ձեզ հետ հակամարտությանը տևական խաղաղ լուծում գտնելու շուրջ»:

Դե, ուրեմն, հիանալի է, կմտածի ընթերցողը: Իսկ հիմա մեջբերում կատարենք Դոնալդ Թրամփի՝ Իլիամ Ալիևին Հանրապետության օրվա և Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության 100-ամյակի առիթով հասցեագրված շնորհավորանքից: Շնորհավորանքում, մասնավորապես, ասված է. «Առաջիկա ամիսները հնարավորություն կստեղծեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման համար, իսկ դա էլ ավելի լավ պայմաններ կստեղծի ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև համագործակցության համար: Միացյալ Նահանգները, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, անկեղծորեն ցանկանում է համագործակցել Ձեզ հետ այդ հակամարտությունը խաղաղ ճանապարհով կայուն լուծելու համար»:

Ուրեմն, ինչի՞ վրա է հույս դնում Իլիամ Ալիևը, երբ ելույթից ելույթ կոշտացնում է իր ռազմաշունչ հռետորաբանությունը:

Միանգամայն անտեղի են թվում «ժողովարչապետ» Ն. Փաշինյանի ելույթի տոնայնությունը և որոշ հղումները ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում: Վերցնենք թեկուզ նրա գանգատավոր անցումը՝ «Ղարաբաղը չի կարող լինել Ադրբեջանի կազմում, եթե ինչ-որ մեկը Արցախի հողն է ուզում՝ առանց արցախցու, դա հայ ժողովրդի նոր ցեղասպանություն է»:

Այդ ո՞ւմ ողորմածության և արդարամտության վրա է հույս դնում վարչապետը, որը չի ցանկանա թույլ տալ «հայ ժողովրդի նոր ցեղասպանությունը»: Մի՞թե նա իր հույսը կապում է նրանց հետ, ովքեր աչք անգամ չթարթեցին, երբ Ադրբեջանում հերոսացրին Ռամիլ Սաֆարովին, որը Բուդապեշտում ՆԱՏՕ-ի գծով ուսումնական դասընթացների անցկացման օրերին սպանել էր Հայաստանի Զինված ուժերի քնած սպային: Իսկ գուցե Ն. Փաշինյանը հույս է կապում այն արդարամիտների ու արդարասերների հետ, ովքեր այդպես էլ իրենց բողոքի և դատապարտման ձայնը չբարձրացրին, երբ Բաքվի պետական համալսարանի կայքում տեղադրվեց ադրբեջանցի բաշիբոզուկներին պատկերող զագրելի տեսահոլովակը, որում վերջինները՝ ժպիտը սֆաթներին, ցուցադրում էին 2016թ. ապրիլին գերի ընկած հայ զինվորի կտրված գլուխը:

Գիտակցությանս մեջ կասկածներ են սողոսկում, որ վերջին 5 ամիսներին Հայաստանում չհանդարտվող զգվելի տեղեկատվական վակխանալիան խաղաղ ժամանակներում սխալանք թույլ տված Արցախի հերոսների շուրջ իրականացվում էր հեռուն գնացող նպատակներով, որոնց, ուզում եմ հավատալ, տեղյակ չէ «ժողովրդի» վարչապետը: Հիմա արդեն բոլորովին այլ լույսով է ներկայանում նաև Ն. Փաշինյանի և զինակիցների անզուսպ ձգտումը՝ ցրել Ազգային ժողովը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրանց գիտակցված

ընտրությունը՝ ցանկացած գնով ապակայունացնել իրավիճակը Հայաստանում, հասնել հայ հասարակության պառակտման:

Այստեղ ընթերցողների ուշադրությունը հրավիրենք ևս մեկ՝ ոչ պակաս կարևոր հանգամանքի վրա: Ի. Ալիևը բնավ պատահականորեն չէ, որ խոսում է Հայաստանում «քրեական խունտայի ռեժիմի» հենց քսանամյա կառավարման մասին: Այսինքն՝ անկախ Հայաստանի գոյության առաջին յոթ տարիներին, Ադրբեջանի նախագահի տրամաբանությամբ՝ բոլորովին էլ «արյունալի խունտայի ռեժիմը» չի կառավարել: Պարադոքս է, չէ՞: Չէ՞ որ այդ տարիներին է նվաճվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, իհարկե՝ հայ ժողովրդի տասնյակ հազարավոր արժանավոր որդիների և դուստրերի կյանքի գնով, անասելի, բայց և միաժամանակ Հայաստանի քաղաքացիների կողմից գիտակցված զրկանքների գնով:

Ուրեմն, ինչպե՞ս հասկանալ ափշերոնյան սուլթանին, որը Հայաստանի այն բազմաբովանդակ և քաջարի տարիների ղեկավարին «վեհանձնորեն» չի դատում «կոռուպցիոներների» և «հայ ժողովրդի արյունը ծծողների» շարքին: Գուցե պատճառը ՀՀ առաջին նախագահի և նրա թիմի հստակ արտահայտված դիրքորոշումն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման մոտեցումներում, որոնք, ըստ էության, վերջին հաշվով հանգեցվում էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Ադրբեջանի ողորմածությանը հանձնելուն:

 կանությունը՝ կոչոտ բանակցություններ վարել «հակահեղափոխականների»

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

հետ, հավաքվածների կասկածը չէր հարուցում: Չէ՞ որ մինչ այդ հանրահավաքում նա արդեն հասցրել էր հայտարարել, որ խորհրդարանի ընդունած «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում ուղղակի հարված է նկատվում «Նոր Հայաստանը» կերտողների դեմ, հակահեղափոխություն, ասել է թե՛ խորհրդարանական խմբակցությունների կողմից: Անշուշտ, այս պարագայում մենք գործ ունենք քաղաքագիտությունում նոր խոսքի հետ, երբ օրենքը, որն ուղղված է ՀՀ Ազգային ժողովի գործառնության նորմալ պայմանների ապահովմանը, որը երաշխավորում է պատգամավորների անվտանգությունը, տեղաշարժի ազատությունը և իրենց լիազորությունների կատարման անխոչընդոտ կատարումը, վարչապետի կողմից որակվում է ոչ այլ կերպ, քան հակահեղափոխական և հակասահմանադրական: Այս հաշվով, թերևս, շատ դիպուկ է արտահայտվել ՀՀ խորհրդարանական խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը, որը հայտարարել է, որ եթե ՀՀ Սահմանադրության պահանջներին հետևելը և պատգամավորների վրա ճնշում չգործադրելը համարվում են հակահեղափոխական, այդ դեպքում ինքը հակահեղափոխական է:

Իսկ այս պարագայում իրավիճակը փրկեց ՀՀԿ, «Ծառուկյան դաշինք» և ՀՀԴ խմբակցությունների անդամների բարձր պատասխանատվության հերթական դրսևորումը, որոնք Ն. Փաշինյանին հրավիրեցին ՀՀ ԱԺ շենք բանակցությունների համար՝ ստեղծված լարված իրադրության լիցքաթափման նպատակով: Ն. Փաշինյանը, բնականաբար, ընդունեց խորհրդարանական խմբակցությունների առաջարկը և հաղթական հայտարարեց, որ գնում է բանակցությունների՝ «հակահեղափոխականների» չար մտադրությունները խափանելու նպատակով: Այստեղ լուրջ անհանգստություն է առաջացնում այն գիտակցումը, որ Ն. Փաշինյանի անզուսպ ձգտումը՝ բացահայտ ստի միջոցով գրգռել իր կողմնակիցներին (մասնավորապես, տոտալիտար աղանդների թվից, ինչպիսին է «Կյանքի խոսքը», ԼԳՏԲ հանրույթից, որը հանրահավաքում ներկայացված էր անհայտ սեռի ոչ սակավաթիվ, հետևում կարճ հյուսիկներ ունեցող պերսոնաժներով, էլեկտրականացված, սխրանքի տենչով վառվող երիտասարդությունից, այդ թվում և բարձրդասարանցիներից ու Երևանի սովորական քաղաքացիներից, որոնք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չափազանց դժգոհ էին նախկին իշխանությունների աշխատանքից), կարող էր նրանց տրանսի մեջ գցել: Ընդ որում՝ նրանք, իրենց ճանապարհին ամեն ինչ հողին հավասարեցնելով, կարող էին բանը հասցնել արյունահեղության: Բնականաբար, ընթերցողը կարող է միանգամայն արդարացի հարց տալ. իսկ ի՞նչ է, Երևանում ոստիկանությունը մի՞թե հակաիրավական գործողություններ չտեսավ «ժողվարչապետի» բացահայտ սադրիչ կոչերին հետևողների արարքներում:

Որպես տեղեկանք նշենք, որ դեռևս 2011թ. ապրիլի 14-ին ՀՀ ԱԺ-ը ընդունել է օրենք «Հավաքների ազատության» մասին, ընդ որում, այդ օրեն-

քի՝ 2014թ. մայիսի 19-ին և 2017թ. հոկտեմբերի 25-ին ընդունված լրացումները չէին վերաբերում այն հոդվածներին, որոնց ես հղում կկատարեմ: Այսպես, այդ գիշեր տեղի ունեցող իրադարձություններին բավական ինքնատիպ է արձագանքել ՀՀ ոստիկանապետ Վալերի Օսիպյանը. «Ես մտահոգված էի, շատ մարդ էր հավաքվել: Բայց իրավիճակը հանգիստ է, ժողովուրդն արտահայտում է իր կամքը, ոստիկանները հետևում են իրավիճակին: Ներկայում բացատրական աշխատանքներ են վարվում, քաղաքացիները կարգը չեն խախտում, տարերային հանրահավաք են անցկացնում՝ «Հավաքների ազատության մասին» օրենքին համապատասխան»: Հավանաբար, պրն Օսիպյանը նկատի ունի լոկ Հոդված 9-ի 1-ին կետը, որն ասում է. «1. Հանրային հավաքի (այսուհետ՝ հավաք) անցկացման համար կազմակերպիչը տեղեկացնում է իրավասու մարմնին գրավոր, բացառությամբ շտապ և տարերային հավաքների»: Համարենք, թե հավաքը տարերային էր, և նրա կազմակերպիչը՝ ՀՀ վարչապետը, չէր հասցրել տեղեկացնել դրա մասին իրավասու մունիցիպալ մարմնին: Բայց չէ՞ որ խոսքն այլ բանի մասին է: Ավաղ, լրջորեն տազնապալի է, երբ ՀՀ ոստիկանապետը, որի հայացքն անգամ անզիջում է և խիստ, երբ բարևում է ՀՀ խորհրդարանի պատգամավորներին, բնականաբար՝ ոչ Նիկոլ Փաշինյանի «Ելք» խմբակցությունից, ըստ երևույթին, կյանքում շատ փափուկ մարդ է և այդ իսկ պատճառով բավական ներողամիտ «Հավաքների ազատության մասին» օրենքի կոպտագույն խախտումների հանդեպ: Մանավանդ, երբ խախտումներ նախաձեռնողը հենց «ժողովարչապետն» է: Որպեսզի սույն օրենքի կոպիտ խախտումների մասին պնդումներս մերկապարանոց չհնչեն, ընդամենը մեկ մեջբերում կատարեմ այդ օրենքից՝ մատնանշելով դրա խախտման փաստի մասին: Այսպես, Հոդված 19-ի 1.3 կետում՝ «Հավաքն արգելվելը» վերնագրով, ասվում է. «Հավաքն արգելվում է, եթե. 3) հավաքն անցկացվելու է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը»: Այնինչ, հավանաբար, այն փաստը, որ հավաքվածները՝ «ժողովարչապետի» գլխավորությամբ, շնորհիքով ներխուժեցին ՀՀ Աժ տարածք, իսկ նրանցից առավել ագրեսիվները այնուհետ ևս հետևեցին Ն. Փաշինյանին ՀՀ Աժ շենքում՝ միաժամանակ իրենց մուտքը շենք ուղեկցելով հայիոյանքների վանկարկմամբ Ազգային ժողովի, ինչպես նաև Աժ խմբակցությունների ղեկավարների հասցեին, Վ. Օսիպյանի կարծիքով՝ ոչ թե «սպառնում էր նրանց գործունեությանը», այլ, ընդհակառակը, նրա կողմից որակվել է միանգամայն որոշակի՝ «քաղաքացիները կարգը չեն խախտում»: Դե, համաձայնեք, ինչպե՞ս չհասկանալ միտինգավորների խուլիգանություն անող հատվածի, «Հավաքների ազատության մասին» օրենքը կոպիտ խախտողների էմոցիաները, երբ այդ ապօրինի հանրահավաքի ամե-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

նասկզբից մինչև վերջ նրանք արժանացան իրենց հակաօրինական գործողությունների նման զովասանական գնահատականի երկրի իրավակարգի առաջին պահապանի կողմից: Ինչպե՞ս դրանից հետո իրենց հույզերը զսպեին վճռականորեն տրամադրված միտինգավորները և չժափահարեին անձամբ ՀՀ ոստիկանապետին ու նրա ենթականերին: Իսկ որ նրանք ԱԺ տարածքում իրենց անպատկառ էին պահում պատգամավորների, այդ թվում և կին պատգամավորների հանդեպ, ավտոմեքենաներով փակել էին ՀՀ ԱԺ տարածքի բոլոր մուտքերն ու ելքերը, ապա դա տեղի ունեցավ այն պատճառով, որ նրանք միանգամայն ինքնատիպ ձևով և, դատելով ըստ ամենայնի, բավական ճիշտ էին հասկացել ոստիկանապետի բարձր գնահատականը իրենց կատարած անօրինական գործին՝ բնութագրված որպես՝ «Բայց իրավիճակը հանգիստ է, ժողովուրդն արտահայտում է իր կամքը, ոստիկանները հետևում են իրավիճակին: Ներկայում բացատրական աշխատանքներ են վարվում, քաղաքացիները կարգը չեն խախտում»: Կարծում եմ, որ ամենամոտ ժամանակներս Ն. Փաշինյանը ըստ արժանվույն կգնահատի Վ. Օսիպյանի աշխատանքը: Դեռ ինչե՛ր են լինելու՝ անօրինական հանրահավաքների անցկացման, պատգամավորներին վախեցնելու առումով ... Եվ ոստիկանապետի ծառայությունը հարկ է խրախուսել, թե չէ նրա մեջ կարող են արթնանալ սպայի պատիվը և երդման ոգին, ինչի հետևանքով մեղադրյալների աթոռին մեկ էլ տեսար կհայտնվեն Ն. Փաշինյանի կառավարության անդամներից շատերը:

Հարգելի ընթերցող, ինչպես և պետք էր սպասել, այդ գիշերային հանրահավաքը Երևանում անտարբեր չթողեց նաև Ադրբեջանի շատ էլեկտրոնային ՋԼՄ-ների, որոնք, փաստորեն, «Ազատություն» ռադիոյի հետ միաժամանակ էին հետևում Երևանում տեղի ունեցող իրադարձություններին, իսկ հետո այդ իրադարձությունների մասին ինֆորմացիան իրենց հարմար դիտանկյունով մատուցեցին իրենց երկրի և դրանից դուրս գտնվող լսարանին: Միևնույն ժամանակ, նշենք, որ հրապարակումների ընդհանուր ուղղվածությունը մեկն էր՝ այսուհետ Հայաստանը Ռուսաստանի համար անհուսալի գործընկեր է: Ինչպես և պետք էր սպասել, այս քարոզչությանը նոր տոն հաղորդեց, ինչպես նրան Ադրբեջանում քնքշորեն անվանում են, «Կրեմլի գաղափարախոս» Ալեքսանդր Դուգինը, որը հանրահավաքի հենց հաջորդ օրը հարցազրույց տվեց media.az պորտալին՝ աչք ծակող վերնագրով. «Ալեքսանդր Դուգին. Բաքուն տարածաշրջանում Ռուսաստանի համար առաջին տեղում է: Հայաստանը հետևում է մնացել – Հարցազրույց»: Պատասխանելով թղթակցի՝ «Ստացվում է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը փորձում է խելքի՞ բերել Նիկոլ Փաշինյանին» հարցին Ա.Դուգինը ներողամտաբար պատասխանել է. «Ես այդպես ուղղակի չէի ասի: Հասկանում եք, չէ՞ որ Հայաստանը մեր դաշնակիցն է: Երբ Փաշինյանը իշխանության եկավ, նա փորձեց հարցականի տակ դնել դաշնակցայնությ-

յունը: Եվ ոչ մի լավ բանով (Երևանի համար – *խմբ.*) դա ավարտվել չէր կարող: Եվ ահա տեսնում եք, թե ինչպես է մեր աչքերի առջև ամրապնդվում Ադրբեջանի հետ Ռուսաստանի դաշինքը: Բաքուն Մոսկվայի համար առաջին դիրք է դուրս գալիս տարածաշրջանում՝ հետևում թողնելով Հայաստանը»: Հենց այդ նույն ժամանակ, Վ. Վ. Պուտինի Բաքու այցելությունից մեկ շաբաթ հետո, հիմա արդեն հազգին. az-ը հոկտեմբերի 4-ին հրապարակեց հոդված՝ «Նախագահի աշխատակազմը Ալիևի և Պուտինի հանդիպման արդյունքների մասին» վերնագրով: Ըստ երևույթին, շատ կարևոր էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության հարցերի բաժնի պետի տեղակալ Հիմքեթ Հաջիևի միջոցով արդեն որերորդ անգամ այցելությունից հետո անցած 7 օրերի ընթացքում նորից հայտարարել, որ «մեր երկրների (Ադրբեջանի և Ռուսաստանի – *Ա. Գ.*) վստահության բարձր մակարդակի և փոխշահավետ համագործակցության վկայությունն է նաև այն, որ երկկողմանի կապերը հաջողությամբ զարգանում են միջտարածաշրջանային հարաբերությունների ձևաչափով ... Միևնույն ժամանակ, համագործակցությունը մեր երկրների միջև՝ հիմնված ավանդական հարաբերությունների վրա, շարունակվում է նաև բազմակողմանի հարթությունում»:

Այս և նման բովանդակությամբ բազմաթիվ հրապարակումներ են եղել՝ ադրբեջանական ազիտայրոպի գաղափարախոսների գլխավոր մտադրությանը զուգահեռ: Իսկ գլխավոր մտադրությունն այն է, որպեսզի ադրբեջանական ղեկավարության մտադրությունը՝ ռազմական ագրեսիա սկսել Արցախի Հանրապետության դեմ, իր քաղաքացիներին և միջազգային ակտորներին մատուցվի այն բանաձևի տեսքով, թե իբր «Երևանն է պատերազմի առիթ ստեղծում»: Հենց այս վերնագրով 2018թ. հոկտեմբերի 3-ին <https://haqqin.az/analytics/137140> պորտալում հրապարակվեց Ռասիմ Աղևալի հոդվածը: Ահա թե, մասնավորապես, ինչ է գրում նա. «... ոմն մեկը հակված է եզրակացնելու, որ եկել է հակամարտության ռազմական լուծման ժամանակը (նկատի ունի Ղարաբաղյան հակամարտությունը – *Ա. Գ.*): Իբր, բավական է մեկ հզոր հարված (իսկ ադրբեջանական բանակն այժմ նման հզորության տիրապետում է), որպեսզի լուծվի հակամարտությունն իրենց օգտին ... Պատերազմը ձեռնադրու կլինե՞ր Հայաստանի կառավարող դասին՝ որպես կորսված ժողովրդական վստահությունը, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև ազգային միասնությունը վերադարձնելու միջոց, շեղել բնակչության ուշադրությունն իր գլխին կուտակված սոցիալական փորձանքներից և նորից համոզել աշխարհին և սեփական հոտին, որ բոլոր դժբախտությունների մեջ, հասկանալի է, մեղավոր են անիծյալ ադրբեջանցիները: Կարելի է չկասկածել, այս խորամանկ քարոզչահնարքին հաճույքով կհավատան ոչ միայն հայտնի ուժերը Մոսկվայում, այլև եվրոպական մայրաքաղաքներում և, ինքնըստինքյան, ԱՄՆ-ում»:

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Մի կողմ թողնելով մանրակրկիտ թաքցվող, բայց չափից ավելի բազմաշերտ ստի հրաշագործությունները՝ կարելի է պնդել, որ ադրբեջանական քարոզչությունը պատրաստում է Արցախի Հանրապետության դեմ պատերազմ սանձազերծելու ժամանակին ակնարկած ամենահարմար պահը՝ պատերազմն սկսելու պատասխանատվությունը դնելով Հայաստանի և Արցախի Հանրապետության վրա: Նման սցենարը նոր չէ, այս մասին դեռևս ս. թ. հունիսի 20-ին ադրբեջանական բանակի կազմավորման 100-ամյակին նվիրված ձեպագրույցում ասել է այդ երկրի պաշտպանության նախարար Ջաքիր Հասանովը: «Ադրբեջանական բանակը պատրաստ է ցանկացած պահի կատարել այդ խնդիրը (գավթել Արցախի Հանրապետությունը – Ա. Գ.): Այս խնդրի կատարման հրամանը քաղաքական հարց է, և նման հրաման կտրվի ամենահարմար պահին՝ հաշվի առնելով միջազգային քաղաքական իրադրությունը», – այն ժամանակ հայտարարել էր Ջաքիր Հասանովը:

Վերլուծելով Հայաստանի վարչապետի բավական վտանգավոր գործողությունները, ով տարածաշրջանում և ողջ աշխարհում տիրող միջազգային այս բարդ իրադրությունում ձեռնարկել է Ազգային ժողովը ցրելու չափազանց ժամանակավրեպ գործողություններ, ապշում ես նրա քաղաքական կարճատեսությունից և Հայաստանի ազգային անվտանգության սպառնալիքները համարժեք գնահատելու անկարողությունից: Չէ՞ որ իր գործողություններով նա հրահրում է հայ հասարակության, նրա քաղաքական դասի պառակտում: Ավաղ, սա ոչ միայն տարակուսանք է առաջացնում, այլև ստիպում է նորից ու նորից խորհել այն բանի շուրջ, որ այս ամենն արվում է կամ «ժողվարչապետի» անհասկացողության պատճառով, կամ նրա գործողությունները հմտորեն ղեկավարվում են կուլիսների հետևից: Արդյո՞ք սա «Վարդերի հեղափոխության» նոր, ավելի արդիականացված հայկական տարբերակը չէ՞ Մ. Սաակաշվիլու սխալների հաշվառմամբ: Եթե Վրաստանում հեղափոխության արդյունքը դարձավ Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության հռչակումը, ապա Հայաստանի համար այլ ճակատագիր է պատրաստված՝ Արցախի Հանրապետության կորուստ և իրավիճակի լիակատար ապակայունացում Լեռնային Ղարաբաղի անվտանգության գոտու ու Իրանի Իսլամական Հանրապետության 100 կիլոմետրանոց սահմանին: Թե ինչով է սա հղի Հայաստանի, հայոց պետականության գոյության համար՝ դժվար չէ կռահել:

Ղարաբաղյան հակամարտության գոտում Ադրբեջանի կողմից ռազմական լարվածության անխուսափելի թեժացումը, այն անպայման լայնածավալ պատերազմի վերածելու ձգտումը հնարավոր է կանգնեցնել լոկ Ռուսաստանի և Հայաստանի միջև ռազմաքաղաքական դաշինք կնքելով: Ավելի վաղ արդեն գրել եմ այս մասին, բայց վերջին շաբաթվա իրադարձությունները պահանջում են որոշ ճշտումներ մտցնել. Ռուսաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական դաշինքի այլընտրանքը պատերազմն է, ընդ որում՝



պատերազմը ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև Հարավային Կովկասի տարածաշրջանում՝ դրանում Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի հնարավոր ներգրավմամբ: Չէ՞ որ հայտնի ուժերի համար թանկ արժե Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև ստեղծված գործընկերային հարաբերությունների խզումը: Եվ, դատելով ըստ ամենայնի, դրան խիստ հետևողականորեն ձգտում է հասնել համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոններից մեկը՝ ցինիկաբար հաշվարկելով, որ անգամ մեծ արյան գնով Հայաստանը երբեք չի գիջի Լեռնային Ղարաբաղը և հերոսաբար կպաշտպանի Արցախի Հանրապետության անկախությունը: Անգամ իշխանության ղեկին գտնվողների չիմացության և նրանց կողմից Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի ազգային անվտանգության սպառնալիքների գիտակցումը կորցնելու պարագայում:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ



## АРТАШЕС ГЕГАМЯН: ОТВЕТСТВЕННЫМ ЗА РАЗРУШЕНИЕ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА НАЗНАЧЕН НАРОД

Итак, в первой половине декабря 2018 г., по всей вероятности, состоятся внеочередные выборы в Национальное Собрание Республики Армения (далее – НС РА). Думаю, что вновь возвращаться к изложению событий, предшествующих государственному перевороту апреля-мая т. г., нет необходимости. Последние полгода журналистская братия и прикнувшие к ним политологи только об этом и пишут. Бросается в глаза другое: авторов самого разного рода статей, репортажей, интервью, как правило, объединяет общее заблуждение: они почему-то государственный переворот именуют «бархатной революцией». Сам факт незнания ими разницы (не этимологической, а политической) между революцией и государственным переворотом приводит в глубокое уныние. Ведь за прошедшие пять месяцев со дня формирования нового правительства мы так и не стали свидетелями радикальных, коренных, глубоких качественных положительных изменений в социально-экономическом развитии страны, в социальной и политической жизни общества, в науке, которые имманентно присущи революциям. Скорее с точностью до наоборот, о чем будет изложено ниже. Повторюсь, в апреле-мае т. г. в Республике Армения произошел банальный государственный переворот. Достаточно констатировать, что после выборов в НС РА 2 апреля 2017 года Армения стала парламентской республикой, а в результате госпереворота к власти пришла политическая сила, у которой нет большинства в парламенте (7 депутатов из 105). Здесь важно отметить, что итоги выборов в НС РА ни одной из политических сил, в том числе и фракцией, руководимой Н. Пашиняном, не были оспорены, не говоря уже о том, что они были признаны авторитетными международными организациями. Естественно, что такая, мягко выражаясь, трансформация власти могла произойти только и только при обязательном нарушении действующих на тот момент конституционных и правовых норм, что и имело место быть. Однако замысел настоящей статьи в другом, а именно: в осмыслении накануне новых выборов в НС РА произошедших за последние месяцы в Армении событий, выяснении того, насколько политический класс, общественные орга-

низации, да и обычные граждане нашей страны осознали случившееся, какие извлекли уроки из произошедшего государственного переворота? Более того, извлекли ли из этого уроки вообще?

При написании этих строк и мысленном сравнении произошедшего с другими событиями я всегда опасался того, чтобы вдруг не оказаться в роли очередного изобретателя велосипеда, поэтому постарался вспомнить из истории и литературы какие-то необычные случаи, хотя бы чем-то похожие на события последних месяцев нашей жизни. Нет, уважаемый читатель, я не поддался соблазну делать какие-то сравнительные описания между государственным переворотом в Армении и известными революциями хотя бы последних двух столетий. И в силу этого почему-то всякий раз мне на память приходила классическая работа французского психолога Густава Лебона «Психология народов и масс», в которой автор четко описал законы поведения организованной толпы. Вспоминая «осаду» здания Национального Собрания 2 октября т.г. воинственно настроенной и наэлектризованной «народным» премьером толпой, я вновь и вновь убеждался в объективности оценок Лебона, в которых он утверждал, что в толпе отдельно взятый человек «приобретает сознание непреодолимой силы, и это сознание позволяет ему поддаваться таким инстинктам, которым он никогда не дает волю, когда один». Ведь групповое скандирование митингующими ругательств у здания парламента в адрес руководства НС РА и парламентских фракций явилось убедительным свидетельством того, что у наших сограждан, объединенных в толпе, стали проявляться новые качества, которыми они до этого не обладали. По жизни многие из них весьма и весьма тихие и незаметные люди. Но в толпе, под воздействием экзальтированных речей оратора, то бишь самого «народного» премьера, сотни людей на глазах преображались («благо» отделение радио «Свобода» в Армении вело прямой репортаж с места событий, поэтому можно быть объективным при оценке имевшего место действия). Они становились очень восприимчивыми к внушению, стали походить на людей, у которых своей воли не существует, даже к неприятию той изначальной ерунды, которая надрывно передавалась через усилители, в частности, когда оратор в принятии законопроекта «О внесении изменений в Конституционный закон РА «О регламенте Национального Собрания»» усмотрел начало наступления «контрреволюции». Не буду приводить другие совпадения в поведении митингующих в Ереване с описанными Густавом Лебоном в его труде примерами. Не скрою, что, размышляя о буднях нашей страны, совершенно неожиданно вспомнил отдельные сюжеты из другого сборника исторических очерков известного шотландского поэта, журналиста, автора нескольких книг Чарльза Маккея. Так, еще в 1841 году вышла в свет его книга под загла-

вием «Наиболее распространенные заблуждения и безумства толпы». В книге автор описывает явления общественной жизни XVIII века, которые были порождены «безумством и заблуждением толпы»: «национальные помешательства» – от финансовых пирамид XVIII века до моды на бороды; «особенные помешательства» – массовые религиозные движения и пр., и пр. Да, с апреля т. г., когда Н. Пашинян вступил на тропу революции и перестал бриться, в современной Армении пошла мода на небритых. Или же другое сравнение. С того дня как тоталитарная религиозная секта под умильным названием или, как сейчас модно, брендом «Слово жизни», ничего общего не имеющим с ее подлинной сущностью, стала одной из главных движущих сил «бархатной революции», в Армении пошла мода на «особенные помешательства», когда «набожные сектанты» из «Слова жизни» взяли на вооружение выкрикивание ругательств в адрес «контрреволюционеров», то есть депутатов Национального Собрания РА. Или же когда нелюди из ЛГБТ-сообщества с остервенелыми криками врываются в одно из отделений полиции г. Еревана и в итоге отделяются легким испугом, или же когда заказные, по существу, мракобесы из тоталитарных религиозных сект осаждают резиденцию Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина II с требованием его отречения, а в итоге один из лидеров этого антирелигиозного и антиармянского шабаша идет на повышение по служебной лестнице. Я специально несколько подробнее останавливаюсь на этих далеко не случайных совпадениях, описанных авторами, жившими в XIX и первой половине XX веков с тем, чтобы показать, как выводы, содержащиеся в этих и множестве других работах известных ученых мужей – психологов, конфликтологов, политологов, – уже не единожды были опробованы в самых разных странах, а сегодня имеют место быть в Армении. При этом не следует забывать, что странам, в которых это практиковалось сильными мира сего, была предначертана печальная судьба – жить в условиях управляемого хаоса с последующим разрушением их государственности.

Так какие же уроки надлежало нам извлечь из событий последних пяти месяцев? Первое, о чем хотелось бы сказать – это то, что в Армении была подмена понятий, а именно: когда, например, борьба с коррупцией вместо глубинного осмысления причин, ее порождающих, сводилась к разного рода массовкам с выкручиванием рук, на взгляд новых властей, маргиналов, укладыванием их на асфальт, показом чемоданов, наполненных деньгами, пережевыванием этих фактов и видеоклипов по всем доступным телевизионным и электронным СМИ, арестом уклонившихся от налогов и «незаконно обогатившихся» и... втихую выпуском их же на свободу под крупные денежные залогов и поручительства. Никакого анализа изъянов в законодательстве, создающих питательную среду для

коррупции, никаких попыток по созданию институциональной основы, сводящей на нет проявления коррупции, новые власти так и не предприняли. Более того, достаточно сказать, что если в период с января по апрель 2018 г. прежнее правительство РА внесло в повестку НС РА 211 законопроектов, то в мае-сентябре т. г. новое правительство внесло в НС РА всего-навсего 34 законопроекта. То есть за благовидными лозунгами премьера о борьбе с коррупцией проглядывается всего лишь компанейщина, от начала и до конца полная профанация этой работы. А между тем еще два года назад по поручению Президента РА Сержа Азатовича Саргсяна в годы премьерства О. А. Абрамяна вопрос борьбы с коррупцией стал предметом тщательного анализа в правительстве РА с привлечением широкого круга экспертов, политических и общественных деятелей. Ещё тогда мною было предложено внедрить по каждой отдельной отрасли экономики Армении SMART-технологии. Причем была обоснована необходимость того, чтобы эта технология вначале была бы внедрена в крупном бизнесе, а далее распространена на средний бизнес с одновременным принятием соответствующих правовых актов, а в случае необходимости и соответствующих законов. Цель была четко определена: составить формализованные стратегии развития отдельно взятой компании, хотя бы сроком на 3 года. При этом предполагалось внедрение эффективной технологии постановки и формулирования целей, которые известны как SMART-технологии. Акроним SMART означает умная цель и объединяет заглавные буквы от английских слов, обозначающих, какой должна быть настоящая цель: Specific (конкретность) – Measurable (измеримость) – Attainable (достижимость) – Relevant (релевантность) – Time-bounded (определенность во времени). Так вот внедрение этой технологии в крупном и среднем бизнесе, да и в верхних управленческих структурах государства существенно бы сократило коррупционные риски. Ведь максимально ясная и конкретная цель, при постановке которой отчетливо представляется конечный результат, фактически сводит на нет вмешательство со стороны, то есть коррупционные риски. Или же измеримость поставленной цели предполагает выделение не только конечных, но и промежуточных критериев оценки, что обеспечивает прозрачность операций по их достижению. Принятие как необходимого условия достижимости цели с точки зрения внешних и внутренних ресурсов почти исключает возможность разного рода непроизводительных затрат как со стороны государства, так и со стороны бизнеса (что снижает коррупционные риски). Релевантность цели, соотносясь с другими общими целями, будет работать на достижение стратегической цели. И наконец, достижение любой цели должно быть четко определено во времени. Казалось бы, что «народный» премьер во главу угла работы правительства в области

борьбы с коррупцией обязательно должен был бы поставить задачу по скорейшему внедрению SMART-технологии. Ан нет. Для него куда более сподручнее было обнародование банковских счетов отдельных бизнесменов, их дальнейшее шельмование, не дожидаясь решения судебных инстанций. Ну прямо как в неудавшемся приключенческом фильме, в котором главный герой вовсе не руководитель государства, а ищущий славы налоговый инспектор. Увы, приходится констатировать, что ввиду непонимания властями Армении сути проблемы борьба с коррупцией правительством Н. Пашиняна провалена.

На определенные размышления наводит и динамика денежных переводов через банковскую систему РА физическим лицам Армении и из Армении. Так, если в январе-августе 2017 года чистый приток денежных средств в РА из-за рубежа составил 492 млн 286 тыс. долл., то за январь-август т. г. этот показатель составил 396 млн 829 тыс. долл. То есть имело место сокращение чистого денежного притока на 95 млн 457 тыс. долл., или же – на 19,4%. И это в условиях, когда отток денежных средств из РА за этот же период 2017 г. составил 582 млн 105 тыс. долл., а уже в текущем году, за этот же период, отток составил 730 млн 613 тыс. долл. (Вестник ЦБ РА, август 2018 г., стр. 75). Увеличивающийся отток денежных средств из Армении при сокращающемся их чистом притоке свидетельствует также о том, что инвестиционная среда в РА оставляет желать лучшего в восприятии физических лиц, проживающих в РА, и их родственников, которые являются отправителями денежных переводов. Примечательно, что это происходит в условиях, когда за прошедшие 5 месяцев не было случая, чтобы НС РА не утвердило хотя бы один законопроект, представленный правительством Н. Пашиняна. Тем самым хотелось бы отметить, что псевдореволюционная риторика, разделение армянского общества на «черных» и «белых», революционеров и контрреволюционеров не могли не отпугнуть потенциальных инвесторов, для которых предсказуемость и стабильность в стране – обязательное условие для инвестиционных вложений. При этом отметим, что сокращение поступления финансовых средств в РА при одновременном увеличении их оттока из страны в условиях растущего дефицита торгового баланса РА принимает угрожающий характер. Так, если по итогам первого полугодия 2018 г. торговый баланс был отрицательным и составил минус 1 млрд 145,7 млн долл. («Социально-экономическое положение РА в январе-июне 2018 г.», стр.116), то по итогам января-августа 2018 г. дефицит торгового баланса составил уже 1 млрд 578,6 млн долл., рост дефицита – на 272,4 млн долларов («Социально-экономическое положение РА в январе-августе 2018 г.», стр.80). Здесь следует отметить, что при сохранении такой динамики внешней торговли и при отсутствии существенного притока прямых иностранных инвестиций уже к концу года мы станем свидетелями недоста-

точности в экономике страны валютных резервов. А это неизбежно приведет к девальвации, существенному падению обменного курса армянской национальной валюты, драма, со всеми вытекающими из этого отрицательными последствиями. Обозначим некоторые из них: утрата доверия к обесцениваемой валюте, увеличение цен на внутреннем рынке, обесценивание вкладов наших граждан в национальной валюте в коммерческих банках, ограничение импорта из-за повышения на него цен. Заметим, что в числе импортируемых товаров немало товаров первой необходимости: зерно, кофе, мясо птицы, свинина, рис, растительное масло, табачные изделия, бензин, дизельное топливо. На импорт этих товаров приходится 50 и более процентов используемых ресурсов («Социально-экономическое положение РА в январе-июне 2018 г.», стр. 292).

Особо отметим, что наиболее серьезным последствием девальвации станет стремительное падение стоимости государственной валюты, что может вызвать тяжелое потрясение для экономики страны, ее спад, а в крайнем случае – дефолт. Это же, в свою очередь, спровоцирует отток отечественного капитала в зарубежные страны (что уже видно из анализа динамики платежного баланса РА), резкое сокращение предпринимательства, рост безработицы, гиперинфляцию и массовую эмиграцию населения со всеми вытекающими из этого губительными последствиями для национальной безопасности, да и сохранения самой армянской государственности.

Для полноты складывающегося положения дел в экономике и финансах РА приведем также данные о прямых иностранных инвестициях (далее – ПИИ) в реальный сектор экономики РА.

Таблица 1  
млн. драмов

	Январь-март 2017г.		Январь-март 2018г.	
	Чистые потоки		Чистые потоки	
	Всего инвестиции	Из которых прямые инвестиции	Всего инвестиции	Из которых прямые инвестиции
<b>Всего</b>	6463,5	19743,2	33261,7	40307,2
Или в долларовом выражении		млн.долларов		
<b>Всего</b>	13,36*	40,81*	69,09**	83,73**

\* Обменный курс 483,78 драма за 1 доллар в I полугодии 2017 г.

\*\* Обменный курс 481,4 драма за 1 доллар в I полугодии 2018 г.

Так, по данным Национальной статистической службы РА («Социально-экономическое положение РА в январе-марте 2018 г.», стр. 104), объем потоков иностранных инвестиций в реальном секторе экономики РА страны в январе-марте 2018 г. приведен в таблице 1.

**А. ГЕГАМЯН**

Объем потоков иностранных инвестиций в реальном секторе экономики РА в январе-июне 2018 г. приведен в таблице 2 («Социально-экономическое положение РА в январе-июне 2018 г.», стр.111):

*Աղյուսակ 2  
վն դրամ*

	2017թ. հունվար-հունիս		2018թ. հունվար-հունիս	
	Զուտ հոսքեր		Զուտ հոսքեր	
	Ընդամենը ներդրումներ	Որոնցից ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	Որոնցից ուղղակի ներդրումներ
Ընդամենը	-26237,6	15844,0	-25591,1	39196,1
Կամ դրվարով արտահայտված, վն դրամ				
Ընդամենը	-54,23	32,75	-53,16	81,42

Из сопоставления таблиц 1 и 2 видно, что во втором квартале 2018 г. имел отток всего инвестиций на 122,25 млн долларов, в том числе отток ПИИ в течение II квартала т. г. составил 2,31 млн долларов.

Эти приведенные статистические данные позволяют сделать вывод о том, что, в случае продолжения сложившихся в экономике Армении тенденций, велика опасность обвального падения обменного курса национальной валюты, драма, с вышеописанными крайне отрицательными последствиями для экономической и национальной безопасности страны. В этих очень неблагоприятных для экономики Армении условиях поражает полная неадекватность действий правительства, которое вместо принятия эффективных мер по преодолению вызовов и угроз, как минимум, экономической безопасности страны затеяло весьма несвоевременную возню по проведению досрочных парламентских выборов под какими-то надуманными предлогами предотвращения «контрреволюционного реванша» со стороны прежних властей. Здесь мне, как депутату НС РА от Республиканской партии Армении, хотелось бы принять и долю своей персональной ответственности за подобное положение, сложившееся в Армении. Речь о том, что уж слишком деликатное, уступчивое отношение к любым просьбам и предложениям со стороны правительства Н. Пашиняна, поступающим в парламентскую фракцию Республиканской партии Армении, так или иначе получало положительное решение. В итоге подобной уступчивости страна вплотную приблизилась к опасной черте, за которой последует разрушение государственности. В чем же причина подобной уступчивости – это тема отдельного анализа, но, бесспорно, что это не есть результат боязни руководства Республиканской партии и депутатов перед возможным гневом народных масс, которым то и дело страшает Н. Пашинян. При этом читатель вполне резонно может задаться вопросом: а есть ли выход из сложившегося положения? Да, выход есть – и он в утверждении Национальным Собранием РА на основе консенсуса нового компетентного премьер-министра и формировании



НС РА нового состава правительства национального согласия, костяк которого должны составить высокие профессионалы, обладающие навыками менеджмента в условиях кризиса, вне зависимости от их партийной принадлежности. В востребованности такого подхода убеждаешься, когда осмысливаешь отдельные постулаты из заявления Н. Пашиняна об отставке, озвученные им 16 октября 2018 г. Так, «народный» премьер, в частности, заявил: «Конечно, многие опасаются, что парламентские силы могут выдвинуть другого кандидата, и готовы ли мы к подобному сценарию. События 2 октября показали, что мы готовы к любому сценарию, потому что ни одна сила не может противостоять воле народа». Услышав такое, так и хочется воскликнуть – возрадуйся, армянский народ, ибо в сей радостный день в твоей судьбе появилась определенность: жить тебе далее в государстве, где отныне все предрешено и нет более достойной кандидатуры быть лидером армянского народа, чем Никол Пашинян (как в плане богатого жизненного опыта, глубокого знания экономики, геополитики, ну и уж, конечно, непревзойденного журналиста, ведь он самородок в журналистике, который в силу своих «убеждений» даже ранее был осужден).

Так, следующим шагом нового правительства РА должно стать утверждение профессионально составленной Программы по преодолению тревожных тенденций, сложившихся в экономике и финансах, переводу страны на рельсы динамичного развития, причем на основе инклюзивного экономического роста. Причем при реализации этой задачи следует воспользоваться уже имеющимися наработками, которые содержатся в документе «Стратегия развития Армении – 2030». Заметим, что еще 4 апреля 2018 г. на совещании у Президента РА при обсуждении этого документа Сержем Азатовичем Саргсяном была высказана следующая идея: «В частности, хочу подчеркнуть необходимость устойчивого и высокого инклюзивного экономического роста, который должен быть ощутимым для каждого гражданина Армении, а также для достижения наших общенациональных целей». По прошествии полугода вновь и вновь убеждаешься в востребованности такого подхода для обеспечения устойчивого экономического развития. Эта работа должна проводиться с одновременной разработкой соответствующей законодательной базы с целью институционального обеспечения перевода экономики на инклюзивные рельсы развития. Увы, с горечью и негодованием приходится признать, что осмысление актуальности этих задач – непосильный труд для властей предрержащих, которые поверили в свою исключительность, что имеет место быть ввиду их абсолютной некомпетентности в вопросах управления государством. И этот феномен усугубляется их излишней самоуверенностью в безоговорочном поддержании проводимой ими политики (а скорее – отсутствия таковой) со стороны народа. В этом

## А. ГЕГАМЯН

смысле совершенно другой, зловещий смысл приобретают неоднократные обращения премьера Н. Пашиняна к народу с бесконечным громогласным повторением той «непреходящей мысли», что после «бархатной революции» решения в Армении принимает не Н. Пашинян, а народ. Словом, продолжая курс на развал экономики и финансов, Н. Пашинян уже назначил и ответственного за его губительные последствия, а именно за разрушение государственности. Ответственным за разрушение армянского государства назначен народ.

Приговор Н. Пашиняном вынесен, и неоднократно, под улюлюканье митингующих, озвучен, а посему коль скоро решения принимает не премьер-министр Армении, а народ, стало быть, повторюсь, ответственность за их последствия ложится и на народ. В нашем случае на часть наших сограждан, которые обезволены нуждой, оболванены тоталитарными религиозными сектами и надрывными подстрекательскими речами «народного» премьера, разрушительные действия которых стали возможны из-за абсолютной отстраненности от общественной жизни молчаливого большинства жителей Еревана и Армении.

P. S. Справедливости ради отметим, что в условиях крайне напряженной ситуации, складывающейся вокруг Исламской Республики Иран, «спасение» экономики и финансовой системы РА от грядущего коллапса – вполне реализуемая задача. Ее можно решить, к примеру, путем выделения денежного транша в объеме, как минимум, 500 млн долларов (разумеется, через международные финансовые организации) по подсказке одного из центров силы мировой политики, но это будет кредит с политическим душком. Негласным условием выделения такого кредита будет, например, создание законодательных основ (быть может, именно с таким прицелом и организуются внеочередные выборы в НС РА, в которых при имеющем место оцепенении здравомыслящих политических сил большинство в новом парламенте будет за соросовцами, тоталитарными сектантами) для вывода из Армении 102-й Российской военной базы, Российской авиабазы Южного военного округа, дислоцированной на аэродроме Эребуни в Ереване, для разрыва концессионного договора с ОАО «Российские железные дороги» по передаче железнодорожной системы Армении в управление ЗАО «Южно-Кавказская железная дорога» («ЮКЖД»). Ведь пробные шары по инициированию этих крайне опасных и губительных для Армении процессов были уже предприняты (инцидент с российскими военнослужащими в селе Паник, вероломный ночной десант в служебное здание администрации «ЮКЖД» и изъятие оттуда всей бухгалтерской отчетности). К сожалению, мои опасения относительно целенаправленного выдавливания российских учреждений и насаждения в самых разных структурах РА функционеров известного профиля

вовсе не беспочвенны. Косвенным подтверждением тому является нешутливая подковерная борьба, развернувшаяся в последнее время вокруг должности главного советника «народного» премьера, в функции которого входят практические задачи по обеспечению внешнеполитического и экономического диалога Армении с Россией! Так, основанный фондом Сороса и Демократической партии США (NED - National Endowment for Democracy) информационный сайт Eurasianet.org 12 октября т. г. опубликовал статью под заглавием «Армения: Главный советник по вопросам внешней политики – предприниматель сигарного бизнеса с долгами за рубежом» (Armenia: Top foreign policy advisor is a cigar entrepreneur with debts abroad). Уважаемый читатель может прийти в изумление от подобной сердобольности и заботы указанного соросовского информационного сайта, столь усердно пекущегося о моральном облике главного советника премьера РА с тем, чтобы на этой должности был бы человек с неуязвимой репутацией. Однако не будем торопиться, ибо данный вопрос куда банальнее: для Сороса очень важно, чтобы на этом участке работы был бы не какой-нибудь там просто гражданин США, некто Арсен Гаспарян, которого СМИ представляют не иначе, как представителя ЦРУ (об этом открыто заявляли), а один из координаторов из числа многих десятков разного рода финансируемых Соросом общественных организаций, которые стояли у истоков «бархатной революции». О наиболее ярких представителях из этой плеяды подрывников армянской государственности, которые окопались в весьма ответственных государственных структурах, уже приходилось писать.

В заключение хотелось бы еще и еще раз подчеркнуть, что процесс разрушения армянской государственности вступает в заключительную фазу. Премьер-министром РА Николом Пашиняном виновник уже назначен – армянский народ. К числу виновников я бы добавил и тех политиков, представителей интеллигенции, бизнесменов, всех тех наших граждан, которые в этот судьбоносный для Армении час приняли позу стороннего наблюдателя. В свое оправдание многие из них говорят, что не хотят запачкаться от соприкосновения с грязной политикой. Словом, как бы не стать нам авторами и героями новой, армянской версии Заговора равнодушных.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
 сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
 Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
 руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
 Православия, председатель партии «Национальное Единение»

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ՆՇԱՆԱԿՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Եվ այսպես, 2018թ. դեկտեմբերի առաջին կեսին, ամենայն հավանա-  
կանությամբ, տեղի կունենան Հայաստանի Հանրապետության Ազգային Ժո-  
ղովի (այսուհետ՝ ՀՀ ԱԺ) արտահերթ ընտրությունները: Կարծում եմ, որ ան-  
հրաժեշտություն չկա կրկին վերադառնալու ս. թ. ապրիլ-մայիսի պետական  
հեղաշրջմանը նախորդած իրադարձությունները նկարագրելուն: Վերջին  
կես տարում լրագրողական հանրույթը և նրան հարող քաղաքագետները  
հենց միայն այդ մասին են գրում: Աչքի է գարնում այլ բան. ամենատարբեր  
հոդվածների, ռեպորտաժների, հարցազրույցների հեղինակներին, որպես  
կանոն, միավորում է ընդհանուր մոլորությունը. նրանք, չգիտես ինչու, պե-  
տական հեղաշրջումն անվանում են «թավշյա հեղափոխություն»: Հեղափո-  
խության և պետական հեղաշրջման տարբերության (ոչ թե ստուգաբանա-  
կան, այլ քաղաքական) նրանց չիմացության փաստն իսկ հանգեցնում է խոր  
տրտմության: Չէ՞ որ նոր կառավարության ձևավորումից հետո անցած հինգ  
ամիսների ընթացքում մենք այդպես էլ չդարձանք երկրի սոցիալ-տնտե-  
սական զարգացման, հասարակության սոցիալական և քաղաքական կյան-  
քի, գիտության մեջ արմատական, խոր, որակական դրական փոփոխու-  
թյունների վկաները, փոփոխություններ, որոնք ներակայորեն բնորոշ են  
հեղափոխություններին: Ավելի շուտ՝ տեղի ունեցավ ուղիղ հակառակը, ինչի  
մասին կներկայացնենք ստորև: Կրկնում եմ, ս. թ. ապրիլ-մայիսին Հայաս-  
տանի Հանրապետությունում տեղի ունեցավ ճղճիմ պետական հեղաշրջում:  
Բավական է փաստել, որ 2017թ. ապրիլի 2-ին ՀՀ ԱԺ ընտրություններից  
հետո Հայաստանը դարձավ խորհրդարանական հանրապետություն, իսկ  
պետական հեղաշրջման արդյունքում իշխանության եկավ քաղաքական մի  
ուժ, որը մեծամասնություն չունի խորհրդարանում (7 պատգամավոր 105-  
ից): Այստեղ կարևոր է նշել, որ ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքները քա-  
ղաքական ոչ մի ուժ, այդ թվում և Ն. Փաշինյանի ղեկավարած խմբակցու-  
թյունը, չվիճարկեց, էլ չեն ասում այն մասին, որ դրանք ընդունվեցին հեղի-  
նակավոր միջազգային կազմակերպությունների կողմից: Բնական է, որ իշ-

խանութան նման, մեղմ ասած, փոխակերպումը կարող էր իրականացվել միայն և միայն այդ պահին գործող սահմանադրական ու իրավական նորմերի պարտադիր խախտմամբ, ինչն էլ տեղի ունեցավ: Սակայն սույն հոդվածը գրելու մտահղացումն այլ է, դիցուք, ՀՀ ԱԺ նոր ընտրությունների նախօրեին իմաստավորել անցած ամիսներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, պարզել, թե որքանով են քաղաքական դասը, հասարակական կազմակերպությունները և, առհասարակ, մեր երկրի սովորական քաղաքացիները դասեր քաղել տեղի ունեցած պետական հեղաշրջումից: Ավելին, արդյոք առհասարակ դասեր քաղե՞լ են:

Այս տողերը գրելիս և տեղի ունեցածը մտովի այլ իրադարձությունների հետ համեմատելիս ես միշտ զգուշացել եմ այն բանից, որ հանկարծ հերթական հեծանիվ հայտնագործողի դերում չհայտնվեմ, ուստի ջանացել եմ պատմությունից և գրականությունից հիշել ինչ-որ ոչ սովորական դեպքեր, որոնք գոնե ինչ-որ բանով նման կլինեն մեր կյանքի վերջին հինգ ամիսների իրադարձություններին: Ոչ, հարգելի ընթերցող, ես չտրվեցի Հայաստանում պետական հեղաշրջման և գոնե վերջին երկու հարյուրամյակում տեղի ունեցած հայտնի հեղափոխությունների միջև ինչ-որ համեմատական նկարագրություններ անելու գայթակղությամբ: Եվ այդ պատճառով, չգիտես ինչու, ամեն անգամ մտաբերում էի ֆրանսիացի հոգեբան Գուստավ Լեբոնի «Ժողովուրդների և զանգվածների հոգեբանությունը» դասական աշխատությունը, որում հեղինակը հստակ նկարագրել է կազմակերպված ամբոխի վարքի կանոնները: Հիշելով ս. թ. հոկտեմբերի 2-ին Ազգային ժողովի շենքի «պաշարումը» ռազմաշունչ տրամադրված և «ժողվարչապետի» կողմից հրահրված ամբոխի կողմից՝ ես նորից ու նորից համոզվում էի Լեբոնի գնահատականների օբյեկտիվության մեջ, որոնցում նա պնդում էր, որ ամբոխի մեջ առանձին վերցրած մարդը «ծեռք է բերում անհաղթահարելի ուժի գիտակցություն, և այդ գիտակցությունը թույլ է տալիս նրան տրվել այնպիսի բնագոյների, որոնց նա երբեք ազատություն չի տալիս, երբ մենակ է»: Չէ՞ որ խորհրդարանի շենքի մոտ հավաքվածների կողմից ՀՀ ԱԺ-ի և խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հասցեին հնչեցրած հայիոյանքների խմբակային վանկարկումը վկայությունն է այն բանի, որ ամբոխում միավորված մեր համաքաղաքացիները սկսել են դրսևորել նոր հատկանիշներ, որոնք մինչ այդ չուներին: Առօրյա կյանքում նրանցից շատերը միանգամայն հանգիստ և աննկատ մարդիկ են: Բայց ամբոխում, հռետորի, ասել է թե՛ «ժողվարչապետի» հուզավառ ճառերի ներգործությամբ հարյուրավոր մարդիկ մեր աչքերի առջև կերպարանափոխվում էին (լավ է, որ «Ազատություն» ռադիոյի հայկական ծառայությունը ուղիղ ռեպորտաժ էր վարում իրադարձությունների վայրից, ուստի կարելի է օբյեկտիվ լինել տեղի ունեցող արարքը գնահատելիս): Նրանք դառնում էին ներշնչման հանդեպ շատ ընկալունակ, սկսեցին նմանվել մարդկանց, որոնք չունեն իրենց սեփական կամքը՝ անգամ ի սկզբանե չընդունելու համար այն անհեթեթությունը, որը

## Ա. ԳԵՂԱՍՅԱՆ

խզվող ծայնով փոխանցվում էր բարձրախոսներով, մասնավորապես՝ երբ հռետորը «Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծի ընդունման մեջ «հակահեղափոխության» հարձակման սկիզբ էր տեսնում: Չեն ներկայացնի Երևանում հանրահավաքի մասնակիցների վարքի և Գուստավ Լեբոնի գրքում նկարագրված օրինակների այլ համընկնումներ: Չեն թաքցնի, որ մտորելով մեր երկրի առօրյայի մասին՝ միանգամայն անսպասելիորեն մտաբերեցի առանձին սյուժեներ շտաբանացի հայտնի բանաստեղծ, լրագրող, մի քանի գրքերի հեղինակ Չարլզ Մակքեյի պատմական ակնարկների ժողովածուից: Այսպես, 1841թ. լույս տեսավ նրա գիրքը՝ «Ամբոխի առավել տարածված մոլորությունները և խելահեղությունները» վերնագրով: Գրքում հեղինակը նկարագրում է XVIII դարի հանրային կյանքի երևույթները, որոնք առաջ են եկել «ամբոխի խելահեղությամբ և մոլորությամբ», դիցուք՝ «ազգային խելագարություններ» – XVIII դարի ֆինանսական բուրգերից մինչև մորուքի մոդան, «հատուկ խելագարություններ» – զանգվածային կրոնական շարժումներ և այլն, և այլն: Այո, ս. թ. ապրիլից, հենց որ Ն. Փաշինյանը ոտքը դրեց հեղափոխության արահետին և դադարեց սավիրվել, արդի Հայաստանում չսավիրված լինելը մոդայիկ դարձավ: Կամ՝ մեկ այլ համեմատություն: Այն օրից, ինչ «Կյանքի խոսք» խանդաղատական կամ, ինչպես հիմա մոդայիկ է, բրենդային անվանումը կրող տոտալիտար կրոնական աղանդը, որի անվանումը ոչ մի ընդհանուր բան չունի նրա իսկական էության հետ, դարձավ «թավշյա հեղափոխության» գլխավոր շարժիչ ուժերից մեկը, Հայաստանում մոդայիկ դարձան «հատուկ խելագարությունները», երբ «Կյանքի խոսքի» «բարեպաշտ աղանդավորները» որդեգրեցին հայհոյախոսություններ բղավելը «հակահեղափոխականների», այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների հասցեին: Կամ էլ, երբ ԼԳՏԲ հանրային տականքները մոլեգին ձղձղոցներով ներխուժում են Երևան քաղաքի ոստիկանության բաժանմունքներից մեկը և արդյունքում թեթևակի վախ են ապրում, կամ էլ՝ երբ ըստ էության տոտալիտար կրոնական աղանդների պատվիրված խավարամիտները պաշարում են Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ի նստավայրը՝ պահանջելով նրա հրաժարականը, իսկ արդյունքում այդ հակակրոնական և հակահայկական «խրախճանքի» առաջնորդներից մեկը ծառայողական աստիճանով վեր է բարձրանում: Ես հատուկ փոքր-ինչ ավելի մանրամասն եմ կանգ առնում XIX դարում և XX դարի առաջին կեսին ապրած հեղինակների նկարագրած այս բնավ ոչ պատահական համընկնումների վրա, որպեսզի ցույց տամ, թե ինչպես են այս և այլ հայտնի գիտնական այրերի (հոգեբաններ, կոնֆլիկտաբաններ, քաղաքագետներ) բազմաթիվ աշխատություններում պարունակվող եզրահանգումներն արդեն քանիցս փորձարկվել ամենատարբեր երկրներում, իսկ այսօր էլ՝ Հայաստանում: Ընդ որում, չպետք է մոռանալ, որ այն երկրների համար, որոնցում սա կիրարկվել է աշխարհիս հզորների կողմից, նախատեսված է

եղել տխուր ճակատագիր. ապրել կառավարելի քառսի պայմաններում՝ նրանց պետականության կործանման հեռանկարով:

Ուրեմն, ի՞նչ դասեր մենք պետք է որ քաղեինք վերջին հինգ ամիսների իրադարձություններից: Առաջինը, ինչի մասին կցանկանայի ասել, այն է, որ Հայաստանում եղել է հասկացությունների նենգափոխում, դիցուք, երբ, օրինակ, կոռուպցիայի դեմ պայքարը՝ այն ծնող պատճառների խորքային իմաստավորման փոխարեն, հանգեցվում էր, ըստ նոր իշխանությունների մոտեցման՝ մարզինականների ձեռքերը ոլորելու մասսայական տեսարանների, նրանց ասֆալտին փռելու, փողով լիքը ճամպրուկների ցուցադրմանը, այս փաստերն ու տեսակադրերը բոլոր հասանելի հեռուստատեսային և էլեկտրոնային ՋԼՄ-ներով պատեցնելուն, հարկերից խուսափողների և «ապօրինաբար հարստացածների» կալանմանը և ... սուսուփուս հենց նրանց էլ ազատ արձակելուն՝ խոշոր դրամական գրավի և երաշխավորության դիմաց: Նոր իշխանություններն այդպես էլ չձեռնարկեցին կոռուպցիայի համար պարարտ միջավայր ստեղծող օրենսդրական բացթողումների և ոչ մի վերլուծություն, որևէ առաջարկություն չարվեց կոռուպցիայի դրսևորումները չեղարկելուն ուղղված ինստիտուցիոնալ հիմքի ստեղծման վերաբերյալ: Ավելին, բավական է ասել, որ եթե 2018թ. հունվար-ապրիլ ժամանակաշրջանում ՀՀ նախկին կառավարությունը ՀՀ ԱԺ օրակարգ էր մտցրել 211 օրինագիծ, ապա ս. թ. մայիս-սեպտեմբերին նոր կառավարությունը ՀՀ ԱԺ է մտցրել ընդամենը 34 օրինագիծ: Այսինքն՝ կոռուպցիայի դեմ պայքարի մասին վարչապետի բարեհունչ կարգախոսների հետևում նկատվում են ընդամենը կամպանիականություն, սկզբից մինչև վերջ այդ աշխատանքի լիակատար խեղաթյուրում: Այնինչ, դեռևս երկու տարի առաջ ՀՀ Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի հանձնարարությամբ Հ. Ա. Աբրահամյանի վարչապետության տարիներին կոռուպցիայի դեմ պայքարի հարցը դարձել էր մանրակրկիտ վերլուծության առարկա ՀՀ կառավարությունում՝ փորձագետների, քաղաքական և հասարակական գործիչների լայն ընդգրկմամբ: Դեռ այն ժամանակ ես առաջարկեցի Հայաստանի տնտեսության ամեն մի առանձին ճյուղում ներդնել SMART-տեխնոլոգիաներ: Ընդ որում, հիմնավորվեց այն բանի անհրաժեշտությունը, որպեսզի այդ տեխնոլոգիան սկզբում ներդրվի խոշոր բիզնեսում, իսկ հետո տարածվի միջին բիզնեսի վրա՝ համապատասխան իրավական ակտերի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև համապատասխան օրենքների միաժամանակյա ընդունմամբ: Նպատակը հստակ որոշված էր. կազմել առանձին վերցրած ընկերության զարգացման հաշվարկված ռազմավարություններ, թեկուզև 3 տարի ժամկետով: Ընդ որում, ենթադրվում էր ներդնել նպատակների առաջադրման և ձևակերպման արդյունավետ տեխնոլոգիաներ, որոնք հայտնի են որպես SMART-տեխնոլոգիաներ: SMART հապավումը նշանակում է խելացի նպատակ և միավորում է անգլերեն այն բառերի սկզբնատառերը, որոնք նշում են, թե ինչպիսին պետք է լինի իսկական նպատակը. Specific (որո-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

չակիություն) – Measurable (չափելիություն) – Attainable (հասանելիություն) – Relevant (ռեվեանտություն) – Time-bounded (որոշակիություն ժամանակի մեջ): Եվ ահա, այս տեխնոլոգիայի ներդրումը խոշոր և միջին բիզնեսում, ինչպես և պետության վերին կառավարչական կառույցներում էապես կկրճատեր կոռուպցիոն ռիսկերը: Չէ՞ որ առավելագույնս հստակ և որոշակի նպատակը, որի առաջադրման ժամանակ պարզ պատկերացվում է վերջնարդյունքը, փաստորեն, զրոյի է հանգեցնում միջամտությունը կողքից, այսինքն՝ կոռուպցիոն ռիսկերը: Կամ էլ՝ առաջադրված նպատակի չափելիությունը ենթադրում է գնահատականի ոչ միայն վերջնական, այլ նաև միջանկյալ չափանիշների վերհանում, ինչն ապահովում է դրանց հասնելու գործողությունների թափանցիկությունը: Նպատակի հասանելիությունը որպես անհրաժեշտ պայման արտաքին և ներքին ռեսուրսների տեսակետից՝ գրեթե բացառում է ամեն տեսակ ոչ արտադրական ծախսերի հնարավորությունը ինչպես պետության, այնպես էլ բիզնեսի կողմից (ինչը նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը): Նպատակի ռեվեանտությունը, հարաբերակցվելով այլ ընդհանուր նպատակների հետ, կաշխատի ռազմավարական նպատակին հասնելու համար: Եվ վերջապես, ցանկացած նպատակին հասնելը պետք է լինի հստակ որոշված՝ ժամանակի առումով: Թվում էր, թե «ժողվարչապետը» կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կառավարության աշխատանքի անկյունաքարն անպայման կդարձներ SMART-տեխնոլոգիաների շուտափույթ ներդրման խնդիրը: Բայց ոչ: Նրան շատ ավելի հարմար էր առանձին գործարարների բանկային հաշիվները հրապարակելը, նրանց նշավակելը՝ չսպասելով դատական ատյանների վճիռներին: Ճիշտ ինչպես չհաջողված արկածային ֆիլմում, որտեղ գլխավոր հերոսը ոչ թե պետության ղեկավար է, այլ փառքի հետևից ընկած հարկային տեսուչ: Ավաղ, ստիպված ենք փաստել, որ Հայաստանի իշխանությունների կողմից խնդրի էությունը չհասկանալու պատճառով կոռուպցիայի դեմ պայքարը Ն. Փաշինյանի կառավարությունը ձախողել է:

Որոշակի խորհրդածությունների է մղում նաև ՀՀ բանկային համակարգի միջոցով Հայաստանի ֆիզիկական անձանց և Հայաստանից արվող դրամական փոխանցումների դինամիկան: Այսպես, եթե 2017թ. հունվար-օգոստոսին դրամական միջոցների զուտ հոսքը արտասահմանից դեպի ՀՀ կազմել է \$492 մլն 286 հազ., ապա ս. թ. հունվար-օգոստոսին այդ ցուցանիշը կազմել է \$396 մլն 829 հազ.: Այսինքն՝ տեղի է ունեցել զուտ դրամական հոսքի կրճատում \$95 մլն 457 հազարով կամ՝ 19,4%-ով: Եվ սա՝ այն պայմաններում, երբ ՀՀ-ից դրամական միջոցների արտահոսքը 2017թ. այդ նույն ժամանակահատվածում կազմել է \$582 մլն 105 հազ., իսկ արդեն ընթացիկ տարում, այդ նույն ժամանակահատվածում արտահոսքը կազմել է \$730 մլն 613 հազ. (ՀՀ ԿԲ տեղեկագիր, 2018թ. օգոստոս, էջ 75): Հայաստանից դրամական միջոցների ավելացող արտահոսքը՝ դրանց կրճատվող զուտ հոսքի պարագայում, վկայում է նաև այն մասին, որ ներդրումային միջավայրը ՀՀ-



ուն բարենպաստ չէ ՀՀ-ում ապրող ֆիզիկական անձանց և դրամական փոխանցումներ կատարող նրանց հարազատների ընկալումներում: Հատկանշական է, որ դա տեղի է ունենում այն պայմաններում, երբ անցած հինգ ամիսներին չի եղել մի դեպք, որ ՀՀ Աժ-ը չհաստատի Ն. Փաշինյանի կառավարության ներկայացրած գոնե մեկ օրինագիծ: Սրանով իսկ կցանկանայի նշել, որ կեղծ-հեղափոխական հռետորաբանությունը, հայ հասարակությունը «սևերի» և «սպիտակների», հեղափոխականների և հակահեղափոխականների բաժանելը չէին կարող չվախեցնել պոտենցիալ ներդրողներին, որոնց համար կանխատեսելիությունը և կայունությունը երկրում պարտադիր պայման են ներդրումներ կատարելու համար: Ընդ որում, նշենք, որ ՀՀ ֆինանսական միջոցների ներհոսքի կրճատումը՝ միաժամանակ երկրից դրանց արտահոսքի ավելացման պարագայում, ՀՀ առևտրային հաշվեկշռի աճող դեֆիցիտի պայմաններում, սպառնալի բնույթ է ստանում: Այսպես, եթե 2018թ. առաջին կիսամյակի արդյունքներով առևտրային հաշվեկշիռը բացասական էր և կազմել է մինուս \$1 մլրդ 145,7 մլն («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-հունիսին», էջ 116), ապա 2018թ. հունվար-օգոստոսի արդյունքներով առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կազմել է արդեն \$1 մլրդ 578,6 մլն, դեֆիցիտի աճը՝ \$272,4 մլն («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-օգոստոսին», էջ 80): Այստեղ հարկ է նշել, որ արտաքին առևտրի նման դինամիկայի պահպանման և ուղղակի օտարերկրյա ներդրումների էական ներհոսքի բացակայության պարագայում արդեն տարեվերջին մենք կդառնանք երկրի տնտեսությունում արժույթային պահուստների անբավարարության վկաները: Իսկ դա անխուսափելիորեն կհանգեցնի հայկական ազգային արժույթի՝ դրամի արժեզրկման և փոխարժեքի էական անկման՝ այստեղից բխող բացասական հետևանքներով: Նշենք դրանցից մի քանիսը. վստահության կորուստ արժեզրկվող արժույթի հանդեպ, գների բարձրացում ներքին շուկայում, մեր քաղաքացիների ազգային արժույթով ավանդների արժեզրկում առևտրային բանկերում, ներմուծման սահմանափակում դրա գների բարձրացման պատճառով: Նշենք, որ ներմուծվող ապրանքների թվում քիչ չեն առաջին անհրաժեշտության ապրանքները, ինչպիսիք են՝ ցորեն, սուրճ, թափամիս, խոզի միս, բրինձ, բուսայուղ, ծխախոտի արտադրանք, բենզին, դիզվառելիք: Այս ապրանքների ներմուծմանը բաժին է ընկնում օգտագործվող ռեսուրսների 50 և ավելի տոկոսը («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-հունիսին», էջ 292):

Հատկապես նշենք, որ արժեզրկման առավել լուրջ հետևանքը կդառնա պետական արժույթի արժեքի սրընթաց անկումը, ինչը կարող է լուրջ ցնցում առաջացնել երկրի տնտեսության համար՝ դրա անկում, իսկ ծայրահեղ դեպքում՝ դեֆոլտ: Իսկ դա, իր հերթին, կհարուցի հայրենական կապիտալի արտահոսք արտասահմանյան երկրներ (ինչն արդեն երևում է ՀՀ վճարային հաշվեկշռի դինամիկայի վերլուծությունից), գործարարության կտրուկ նվազում, գործազրկության աճ, հիպերինֆլյացիա և բնակչության

**Ա. ԳԵՂԱՄՅԱՆ**

զանգվածային արտագաղթ՝ ազգային անվտանգության և հենց հայկական պետականության պահպանման համար այստեղից բխող կործանարար հետևանքներով:

ՀՀ տնտեսությունում և ֆինանսական ոլորտում ստեղծված իրավիճակն առավել ամբողջական պատկերացնելու համար ներկայացնենք նաև տվյալներ ՀՀ տնտեսության իրական սեկտորում օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՈւՆ) մասին:

Այսպես, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-ապրիլին», էջ 110)՝ օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը ՀՀ տնտեսության իրական սեկտորում 2018թ. հունվար-մարտին ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1  
մլն դրամ

2017թ. հունվար-մարտ		2018թ. հունվար-մարտ		
Զուտ հոսքեր		Զուտ հոսքեր		
Ընդամենը ներդրումներ	Որոնցից՝ ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	Որոնցից՝ ուղղակի ներդրումներ	
Ընդամենը	6463,5	19743,2	33261,7	40307,2
Կամ դրվարով արտահայտված, մլն դրվար				
Ընդամենը	13,36*	40,81*	69,09**	83,73**

\* Փոխարժեքը՝ 483,78 դրամ 1 դոլարի դիմաց 2017թ. 1-ին կիսամյակում

\*\* Փոխարժեքը՝ 481,4 դրամ 1 դոլարի դիմաց 2018թ. 1-ին կիսամյակում

Օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը ՀՀ տնտեսության իրական սեկտորում 2018թ. հունվար-հունիսին ներկայացված է աղյուսակ 2-ում («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-հունիսին», էջ 114):

Աղյուսակ 2  
մլն դրամ

2017թ. հունվար-հունիս		2018թ. հունվար-հունիս		
Զուտ հոսքեր		Զուտ հոսքեր		
Ընդամենը ներդրումներ	Որոնցից՝ ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	Որոնցից՝ ուղղակի ներդրումներ	
Ընդամենը	-26237,6	15844,0	-25591,1	39196,1
Կամ դրվարով արտահայտված, մլն դրվար				
Ընդամենը	-54,23	32,75	-53,16	81,42

Աղյուսակներ 1-ի և 2-ի համադրումից երևում է, որ 2018թ. երկրորդ եռամսյակում տեղի է ունեցել ներդրումների արտահոսք մինչև \$122,25 մլն, այդ թվում՝ ՕՈւՆ արտահոսքը ս. թ. 2-րդ եռամսյակում կազմել է \$2,31 մլն:

Այս վիճակագրական տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի տնտեսությունում ստեղծված միտումների շարունակվելու պարագայում մեծ է ազգային արժույթի՝ դրամի փոխարժեքի փլուզիչ անկման

վտանգը՝ վերը նշված ծայրահեղ բացասական հետևանքներով երկրի տնտեսական և ազգային անվտանգության համար: Հայաստանի տնտեսության համար այս խիստ անբարենպաստ պայմաններում ապշեցնում է կառավարության գործողությունների լիակատար անհամարժեքությունը, որը, երկրի առնվազն տնտեսական անվտանգության մարտահրավերները և սպառնալիքները հաղթահարելու արդյունավետ միջոցներ ընդունելու փոխարեն ձեռնարկել է արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման միանգամայն ժամանակավրեպ մի քաջքուկ՝ նախկին իշխանությունների կողմից «հակահեղափոխական ռևանշի» կանխման ինչ-որ մտացածին պատրվակների ներքո: Այստեղ կուզենայի, որպես Հանրապետական կուսակցությունից ՀՀ ԱԺ պատգամավոր, ընդունել իմ անհատական պասիանատվության բաժինը Հայաստանում ստեղծված նման իրավիճակի համար:

Խոսքն այն մասին է, որ չափից ավելի նրբանկատ, զիջողական վերաբերմունքը Ն. Փաշինյանի կառավարության՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբակցություն ուղարկած ցանկացած խնդրանքի և առաջարկության հանդեպ՝ այսպես թե այնպես ստացել է դրական լուծում: Նման զիջողականության արդյունքում երկիրն ընդհուպ մոտեցել է վտանգավոր գծին, որից այն կողմ կարող է պետականության կործանումը լինել: Թե որն է նման զիջողականության պատճառը՝ առանձին վերլուծության թեմա է, բայց անվիճելի է, որ դա Հանրապետական կուսակցության ղեկավարության և պատգամավորների վախի արդյունքը չէ ժողովրդական զանգվածների հնարավոր ցասման առջև, ինչով անընդհատ ահաբեկում է Ն. Փաշինյանը: Ընդ որում, ընթերցողը կարող է միանգամայն արդարացիորեն հարց տալ. իսկ կա՞րողյոք ելք ստեղծված իրավիճակից: Այո, ելք կա, և դա ՀՀ Ազգային ժողովի կողմից կոնսենսուսի հիման վրա նոր բանիմաց վարչապետի հաստատումն է և Ազգային համաձայնության կառավարության նոր կազմի ձևավորումը, որի կորիզը պետք է կազմեն ձգնաժամի պայմաններում մենեջմենթի հմտություններին տիրապետող բարձր պրոֆեսիոնալները՝ անկախ իրենց կուսակցական պատկանելությունից: Որ այս մոտեցումը պահանջված է՝ դրանում համոզվում ես, երբ իմաստավորում ես Ն. Փաշինյանի հրաժարականի հայտարարության առանձին կանխադրույթներ, որոնք նա հնչեցրել է 2018թ. հոկտեմբերի 16-ին: Այսպես, «ժողվարչապետը», մասնավորապես, ասաց. «Իհարկե, շատերը մտավախություն ունեն և հարց են հնչեցնում. իսկ եթե խորհրդարանական ուժերը վարչապետի ուրիշ թեկնածու առաջադրեն, արդյո՞ք մենք պատրաստ ենք նման սցենարի: Ես նույնիսկ չեմ ուզում ասել, թե հոկտեմբերի 2-ի իրադարձությունները ցույց տվեցին, որ մենք առավել քան պատրաստ ենք ցանկացած սցենարի, որովհետև ժողովրդի կամքի ու ցանկության առաջ չի կարող կանգնել որևէ ուժ»: Սա լսելով՝ ուզում ես բացականչել. ցնձա՜, հայ ժողովուրդ, քանզի այս ուրախալի օրը քո ճակատագրում որոշակիություն մտցվեց. այսուհետ ապ-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

րելու ես մի պետությունում, որտեղ ամեն բան կանխորոշված է և չկա հայ ժողովրդի առաջնորդը լինելու ավելի արժանի թեկնածու, քան Նիկոլ Փաշինյանը (ինչպես հարուստ կենսափորձի, տնտեսության, աշխարհաքաղաքականության խորագիտակության առումով, այնպես էլ, իհարկե, որպես անգերազանցելի լրագրող, չէ՞ որ նա բնածին տաղանդ է ժուռնալիստիկայում, որն իր «համոզմունքների» համար նախկինում անգամ դատապարտվել է):

«Հ նոր կառավարության հաջորդ քայլը պետք է լինի պրոֆեսիոնալ կազմված Ծրագրի հաստատումը՝ ուղղված տնտեսությունում և ֆինանսների ոլորտում ստեղծված տագնապալի միտումների հաղթահարմանը, երկիրը դինամիկ զարգացման ռելսերի վրա դնելը, ընդ որում՝ ներառական տնտեսական աճի հիման վրա: Ընդ որում՝ այս խնդիրն իրագործելիս հարկ է օգտվել արդեն առկա դրույթներից, որոնք ներկայացված են «Հայաստանի զարգացման ռազմավարություն – 2030» փաստաթղթում: Նշենք, որ դեռևս 2018թ. ապրիլի 4-ին ՀՀ Նախագահի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում այս փաստաթուղթը քննարկելիս Սերժ Ազատի Սարգսյանն արտահայտեց հետևյալ գաղափարը. «Մասնավորապես, ուզում եմ ընդգծել կայուն և բարձր ներառական տնտեսական աճի անհրաժեշտությունը, որը պետք է շոշափելի լինի Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու, ինչպես նաև մեր համազգային նպատակներին հասնելու համար»:

Կես տարի անց նորից ու նորից համոզվում ես նման մոտեցման պահանջվածության մեջ՝ կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար: Այդ աշխատանքը պետք է իրականացվի՝ միաժամանակ համապատասխան օրենսդրական հենք մշակելով՝ տնտեսությունը զարգացման ներառական ռելսերի վրա փոխադրելու ինստիտուցիոնալ ապահովման նպատակով: Ավաղ, ցավով և տարակուսանքով պետք է ընդունենք, որ այս խնդիրների հրատապության իմաստավորումը ներկա իշխանությունում գտնվողների ուժերից վեր է, որոնք հավատացել են իրենց բացառիկությանը, ինչը ճիշտ է այն հարցում, որ նրանք բացարձակ անտեղյակ են պետության կառավարման գործում: Եվ այս երևույթը խորանում է նրանց չափից ավելի ինքնավստահությամբ, թե իրենց իրականացրած քաղաքականությունը (կամ, ավելի շուտ՝ դրա բացակայությունը) անվերապահորեն աջակցվում է ժողովրդի կողմից: Այս իմաստով միանգամայն այլ՝ չարագուշակ իմաստ են ստանում վարչապետ Ն. Փաշինյանի բազմակի դիմումները ժողովրդին՝ այն «անանց մտքի» անվերջ ու բարձրագույն կրկնությամբ, թե «թավշյա հեղափոխությունից» հետո որոշումները Հայաստանում ընդունում է ոչ թե Ն. Փաշինյանը, այլ ժողովուրդը: Մի խոսքով՝ շարունակելով տնտեսության և ֆինանսների կործանման ուղեգիծը՝ Ն. Փաշինյանն արդեն նշանակել է նաև դրա կործանարար հետևանքների պատասխանատուին, այսինքն՝ պետականության կործանման պատասխանատուին: Հայոց պետության կործանման պատասխանատու է նշանակված ժողովուրդը:

Դատավճիռը Ն. Փաշինյանի կողմից կայացվել և միտինգավորների գոռում-գոչյունի ներքո քանիցս հնչեցվել է, ուստի, քանի որ որոշումներ կայացնում է ոչ թե Հայաստանի վարչապետը, այլ ժողովուրդը, ուրեմն, կրկնում եմ, դրանց հետևանքների պատասխանատվությունն ընկնում է նաև ժողովրդի վրա: Մեր պարագայում՝ մեր համաքաղաքացիների մի մասի վրա, որոնք կամազուրկ են դարձել կարիքից դրդված, բթացվել են տոտալիտար կրոնական աղանդների կողմից և «ժողվարչապետի» ճղճղան սադրիչ ճառերից, որոնց կործանարար գործողությունները հնարավոր են դարձել, քանի որ Երևանի և Հայաստանի բնակիչների լուռ մեծամասնությունն իրեն բացարձակ հեռու է պահում այս ամենից:

Հ.Գ. Հանուն արդարության նշենք, որ Իրանի Իսլամական Հանրապետության շուրջ ստեղծված չափազանց լարված իրավիճակի պայմաններում ՀՀ տնտեսության և ֆինանսական համակարգի «փրկությունը» վերահաս կոլապսից միանգամայն իրականանալի խնդիր է: Այն կարելի է լուծել, օրինակ, առնվազն \$500 մլն ծավալով դրամական տրանշի տրամադրման ճանապարհով (հասկանալի է՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջոցով), ուժի համաշխարհային կենտրոններից մեկի հուշմամբ, բայց դա կլինի վարկ քաղաքական «բույրով»: Նման վարկի տրամադրման ծածուկ պայմանը կլինի, օրինակ, Հայաստանից 102-րդ ռուսական ռազմակայանի, Հարավային զինվորական օկրուգի՝ Էրեբունի օդանավակայանում տեղակայված ռուսական ավիաբազայի դուրսբերման, «Ռուսական Եկաթուղի» ԲԲԸ-ի հետ Հայաստանի երկաթուղային համակարգը «Հարավկովկասյան երկաթուղի» (ՀԿԵՈւ) ՓԲԸ-ի կառավարմանը հանձնելու մասին կոնցեսիոն պայմանագրի խզման համար օրենսդրական հիմքերի ստեղծումը (գուցե հենց այս նպատակով էլ կազմակերպվում են ՀՀ ԱԺ արտա-հերթ ընտրությունները, որոնցում, առողջ դատող քաղաքական ուժերի ընդարմացման պայմաններում, մեծամասնությունը նոր խորհրդարանում կպատկանի սորոսականներին, տոտալիտար աղանդավորներին): Չէ՞ որ այս ծայրահեղ վտանգավոր և Հայաստանի համար կործանարար գործընթացների նախաձեռնման փորձնական քայլերն արդեն ձեռնարկվել են (միջադեպը Փանիկ գյուղում ռուս զինվորականների հետ, ուխտադրուժ գիշերային դեսանտը ՀԿԵՈւ ծառայողական շենքում և այնտեղից հաշվապահական ողջ հաշվետվությունների առգրավումը): Ցավոք, իմ երկյուղները ռուսական հաստատությունների նպատակաուղղված դուրսմղման և ՀՀ ամենատարբեր կառույցներում հայտնի պրոֆիլի ֆունկցիոներների հաստատման վերաբերյալ բոլորովին էլ անհիմն չեն: Դրա անուղղակի հաստատումն է լուրջ ընդհատակյա պայքարը, որը վերջին ժամանակներս ծավալվում է «ժողվարչապետի» գլխավոր խորհրդականի պաշտոնի շուրջ, որի գործառույթների մեջ են մտնում Ռուսաստանի հետ Հայաստանի արտաքին քաղաքական և տնտեսական երկխոսության ապահովման գործնական խնդիրները: Այսպես, Սորոսի հիմնադրամի և ԱՄՆ Դեմոկրատական

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Կուսակցության (NED – National Endowment for Democracy) հիմնած «Eurasianet.org» տեղեկատվական կայքը ս. թ. հոկտեմբերի 12-ին հրապարակել է հոդված «Հայաստան. արտաքին քաղաքականության հարցերով գլխավոր խորհրդականը սիգարի բիզնեսի գործարար է՝ արտասահմանում ունեցած պարտքերով» վերնագրով («Armenia: Top foreign policy advisor is a cigar entrepreneur with debts abroad»): Հարգելի ընթերցողը կարող է զմայլանքի մեջ ընկնել սորոսյան նշված տեղեկատվական կայքի նման սրտացավությունից և հոգատարությունից, որն այդքան հոգում է ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդականի բարոյական կերպարի մասին, որպեսզի այս պաշտոնում լինի մարդ անբասիր հեղինակությամբ: Սակայն չչտապենք, քանի որ սույն հարցը շատ ավելի բանալ է. Սորոսի համար շատ կարևոր է, որպեսզի աշխատանքի այս տեղամասում լինի ոչ թե ԱՄՆ մի ինչ-որ պարզապես քաղաքացի, ոմն Արսեն Գասպարյան, որին ՋԼՄ-ները ներկայացնում են ոչ այլ կերպ, քան ԿՀՎ ներկայացուցիչ (այս մասին բացահայտ հայտարարում էին), այլ մեկը Սորոսի կողմից ֆինանսավորվող բազմաթիվ հասարակական կազմակերպությունների համակարգողներից, որոնք կանգնած են եղել «բավշյա հեղափոխության» ակունքներում: Հայոց պետականությունը խափանողների այդ համաստեղության առավել վառ ներկայացուցիչների մասին, որոնք խրամատավորվել են բավական պատասխանատու պետական կառույցներում, մենք արդեն գրել ենք:

Ամփոփելով՝ կցանկանայի նորից ու նորից ընդգծել, որ հայոց պետականության կործանման գործընթացը մտնում է եզրափակիչ փուլ: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն արդեն նշանակել է մեղավորին՝ հայ ժողովրդին: Մեղավորների թվին ես կավելացնեի նաև այն քաղաքական գործիչներին, մտավորականության ներկայացուցիչներին, գործարարներին, մեր այն բոլոր քաղաքացիներին, ովքեր Հայաստանի համար այս ճակատագրական ժամին կողմնակի դիտորդի դիրք են գրավել: Որպես արդարացում նրանցից շատերն ասում են, թե չեն ցանկանում ապականվել կեղտոտ քաղաքականությանն առնչվելով: Մի խոսքով՝ այնպես չստացվի, որ մենք էլ դառնանք Անտարբերների դավադրության նոր հայկական տարբերակի հեղինակներն ու հերոսները:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ Աժ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

«Իրավունք», 19. 10. 2018:

## АРТАШЕС ГЕГАМЯН: АРМЕНИИ ПО ПУТИ С МАНДЕЛОЙ ИЛИ МУГАБЕ

### ТАКУЮ СУДЬБУ ПРЕДРЁК АРМЕНИИ ПОСОЛ США РИЧАРД МИЛЛС

Итак, 15 октября т. г. Чрезвычайный и Полномочный Посол США, завершающий дипломатическую миссию в Республике Армения, Ричард Миллс в интервью англоязычному порталу EVNReport выступил с прощальными октябрьскими тезисами – поучениями Армении и армянскому народу. Примечательно, что, предваряя интервью с послом, портал как бы обозначил главные итоги (вехи) его деятельности: «После службы в Армении более трех лет посол США Ричард Миллс готовится покинуть страну, которая была глубоко преобразована (читай – под его непосредственным руководством. – *А. Г.*). Говоря о времени своего пребывания в Армении, посол Миллс размышляет о некоторых радикальных изменениях, произошедших после «бархатной революции» (Velvet Revolution), о проблемах по достижению прочного и мирного урегулирования конфликта в Арцахе (Нагорный Карабах) и о том, что армянской народ должен быть готов к сложным отношениям с Ираном в будущем» (U.S. Ambassador Mills: I leave inspired and hopeful или «Посол США Миллс: Я покидаю Армению с вдохновением и обнадеженный», [www.evnreport.com](http://www.evnreport.com), 15 октября 2018 г.). Что ж, звучит весьма откровенно – запланированная и годами тщательно готовившаяся Velvet Revolution (то есть государственный переворот) состоялась, а обнадеженность посла обусловлена тем, что прямыми угрозами и шантажом со стороны активистов тоталитарной религиозной секты «Слово жизни», агрессивных представителей ЛГБТ-сообщества и «интеллектуалов» из соровских общественных организаций и иже с ними сведена к минимуму реализация конституционного права по избранию Национальным Собранием Республики Армения (далее – НС РА) нового премьер-министра после отставки действующего, усугубившаяся фактом неприкрытой поддержки идеи проведения внеочередных выборов в НС РА в декабре т. г. так называемой Венецианской комиссией (консультативный орган по конституционному праву). Так вот председатель этой комиссии Джанни Букиккио на днях побил все рекор-

ды беспринципности и наглядной демонстрации двойных стандартов, но при этом и благодаря этому завоевал лавры ангажированного. Так, по итогам обсуждений между Венецианской комиссией и и.о. первого заместителя премьер-министра Армении Арарата Мирзояна в ходе 116-й сессии Венецианской комиссии председатель этого ведомства Джанни Букиккио выступил с заявлением, в котором «признает конкретную ситуацию в Армении, которая требует проведения досрочных выборов (с берегов Венецианского залива, видимо, сей «факт» четко просматривается. – А. Г.); приветствует приверженность властей Армении соблюдению международных стандартов при пересмотре Избирательного кодекса (пример чему он показывает лично, когда вместо положенных 6 месяцев для рассмотрения Избирательного кодекса выступает с заявлением по документу, который НС РА даже еще не утвержден. – А. Г.); отмечает, что предлагаемые поправки преследуют легитимные цели и кажутся в основном позитивными; приветствует, в частности, все шаги, предпринятые для содействия упрощению реализации права голоса, расширения доступа к средствам массовой информации, прав наблюдателей и в целом прозрачности избирательного процесса, а также борьбы с избирательными фальсификациями; приветствует отмену ограничений на число участников коалиций, которые будут сформированы после первого раунда в соответствии с ключевой рекомендацией Венецианской комиссии и БДИПЧ (Бюро по демократическим институтам и правам человека. – А. Г.)». Что ж, здорово, подумает читатель. Однако весь вопрос в том, что Избирательный кодекс, о котором столь бережно отзывается Дж. Букиккио, повторюсь, еще не обсужден на заседании НС РА ну и, естественно, не принят. Второе, что бросается в глаза, это то, что по имеющейся практике проект Избирательного кодекса направляется на рассмотрение Венецианской комиссии после его утверждения НС РА и официально направляется парламентом страны, а не представителем исполнительной власти, будь он и и.о. премьер-министра, тем более представляющего в парламенте политическую силу, по образному выражению Н. Пашиняна, с «тремя надёжными депутатскими голосами». Не говоря уже о том, что крупные изменения в избирательной системе – упразднение региональных списков кандидатов (рейтинговой системы), которые должны быть произведены в течение года, предшествующего выборам (как это определено предписаниями самой Венецианской комиссии), упоминаются в заявлении Дж. Букиккио между прочим, мельком. Председатель Венецианской комиссии одновременно отмечает, что эти оговорки менее актуальны, если между политическими силами существует консенсус относительно изменений. Заметим, что к моменту опубликования текста заявления еще никакого консенсуса по данному вопросу достигнуто не



было, а свидетельством имеющегося консенсуса может быть только консолидированное принятие всеми политическими силами, представленными в парламенте, Избирательного кодекса. Словом, уже стало очевидным, что отдельным влиятельным кругам Запада ну позарез нужны внеочередные парламентские выборы в Армении.

Возвращаясь к интервью посла, зададимся вопросом: а чем нас удивил посол США Ричард Миллс? Прямо скажем, в его интервью есть немало весьма опасных, а в отдельных случаях оскорбительных для Армении и армянского народа пассажей. Однако обо всем этом по порядку. Важно отметить другое – все перлы посла, которые можно охарактеризовать как открытое вмешательство во внутренние дела суверенной Армении, как и следовало ожидать, остались без адекватного реагирования со стороны действующих властей. Разве что и. о. премьер-министра РА Н. Пашинян весьма безлико среагировал на довольно-таки опасное провокационное заявление Р. Миллса: «Я был удивлен, когда впервые приехал сюда (в Армению. – *А. Г.*) и узнал, что большинство армян, которых я встречал, были категорически против возвращения оккупированных территорий в рамках переговорного процесса. Понимание переговорного процесса долгие годы заключалось в том, что эти территории изначально были заняты, чтобы в дальнейшем быть использованными в рамках формулы «территории (земли) – в обмен на мир». На подобное, прямо скажем, ложное высказывание посла и.о. премьер-министра Н. Пашинян ответил ничего не значащим предложением: «Заявление завершающего дипломатическую миссию в Республике Армения Чрезвычайного и Полномочного Посла Ричарда Миллса можно считать месседжем уходящего посла». А между тем Н. Пашиняну не помешало бы поинтересоваться у посла, кто его уполномочил исказить, причем грубо, суть 5 заявлений президентов США, России и Франции по нагорно-карабахскому конфликту, под каждым из которых стоит подпись президента США Барака Обамы. Неужели он так обижен на экс-президента США, который, к тому же летом 2014 года назначил его, Ричарда Миллса, послом в Армении, что столь цинично искажает суть документа, под которым стоит подпись Обамы. Ведь своим заявлением «территории (земли) – в обмен на мир» Р. Миллс, еще и еще раз повторяю, грубо искажает суть пяти совместных заявлений, сделанных – в 2009 г. в итальянской Аквиле, в 2010 г. в канадском Мускоке, в 2011 г. во французском Довиле, в 2012 г. в мексиканском Лос-Кабосе и, наконец, в 2013 г. в североирландском Эннискиллине (Лох-Эрн). Для справки еще раз заметим, что на всех этих документах стоит подпись президента США Барака Обамы, в то время как в разные годы заявления подписывали действующие президенты РФ Дмитрий Медведев и Владимир Путин, президенты Франции Николя

Саркози и Франсуа Олланд. Так вот ни в одном из пяти совместных заявлений не обозначена формула «территории (земли) – в обмен на мир». Более того, во всех пяти заявлениях президенты США, России и Франции последовательно и однозначно отвергали военное решение конфликта. Примечательно, что в тексте последнего совместного Лох-Эрнского заявления (от 18 июля 2013 г.) даны как бы обобщающие оценки, исключающие возможность разночтения. «Мы по-прежнему твердо уверены в том, что положения, содержащиеся в заявлениях наших стран, сделанных за последние четыре года, должны стать основой справедливого и прочного урегулирования нагорно-карабахского конфликта. Эти положения необходимо рассматривать как единое целое, так как любая попытка отдать предпочтение одному из них перед другими исключает возможность принятия сбалансированного решения», – говорится в заявлении президентов. Они также отметили: «Применение военной силы, в результате которого сложилась текущая ситуация конфронтации и нестабильности, не разрешит конфликт. Возобновление военных действий будет иметь катастрофические последствия для населения региона и приведет к человеческим жертвам, дальнейшим разрушениям, огромным финансовым затратам. Мы решительно призываем руководителей всех сторон еще раз подтвердить приверженность Хельсинкским принципам, в частности, принципам неприменения силы или угрозы применения силы, территориальной целостности, равноправия и права народов на самоопределение». Не хочется верить, что о наличии этого своего рода обобщающего документа не знали как Н. Пашинян, так и Р. Миллс. Тогда вполне резонно задаться вопросом: а чем обусловлен этот ничем не подкрепленный месседж американского посла и откровенно ни о чем не говорящий, беззубый ответ «народного» премьера Н. Пашиняна? Невольно приходишь к выводу, что Р. Миллс вполне осознанно сделал подобное заявление именно сейчас, накануне визита советника президента США по национальной безопасности Джона Болтона в Россию, Грузию, Азербайджан и Армению. Ведь не является секретом, что Вашингтон будет выстраивать новую политику в регионе Южного Кавказа, который граничит с двумя геополитическими противниками США – Ираном и Россией. Влияние на политические процессы в нашем регионе, естественно, будет преследовать вполне определенную цель – создать нестабильность в южном подбрюшье России и у северных границ Ирана. Поэтому отнюдь не случайно Р. Миллс в своем интервью откровенно заявил о том, что «армянский народ должен быть готов к сложным отношениям с Ираном». Чем они могут обернуться для Армении, у которой из четырех соседей границы с двумя из них закрыты, не трудно представить. А в качестве инструмента давления на официальный Ереван

посол продекларировал подобающую обстоятельствам провокационную и неприемлемую формулу «территории (земли) – в обмен на мир». Ведь своим этим заявлением Р. Миллс, по сути, провоцирует не подконтрольного себе Н. Пашиняна, а президента Азербайджана Ильхама Алиева, фактически подсказывая ему и азербайджанской аудитории мысль о том, что, дескать, посмотрите, как неконструктивны армяне, которые не хотят возвращать азербайджанские земли. То есть мы имеем дело с завуалированным призывом к Азербайджану начать войну. Слова посла звучат куда более зловеще, чем может показаться. Ведь он прекрасно знает, что в ходе всего переговорного процесса речь шла о формуле «территории (земли) – в обмен на статус Нагорного Карабаха». Однако справедливости ради отметим, что предложенная послом формула, скорее всего, не так уж чужда для и. о. премьера Н. Пашиняна. Вспомним, что на специальном заседании НС РА от 1 мая 2018 г., в повестке которого был вопрос о выборах премьер-министра РА, депутаты парламента от Республиканской партии Армении Арман Сагателян и Мигран Акопян в своих выступлениях озвучили и представили коллегам номер газеты «Айкакан жаманак» за 22 мая 2001 года, в котором была напечатана статья за подписью в тот период главного редактора этой газеты Никола Пашиняна. Статья вышла под патетическим заглавием «Землю сохраняют любовью, знайте». В ней Н. Пашинян, в частности, пишет: «И стало быть меня удивляет, что в нашей стране еще есть люди, которые имеют иллюзии относительно захваченных территорий. Давайте деликатно обойдем данную болезненную сторону вопроса и рассмотрим вопрос с точки зрения правил игры. Я не принимаю такую точку зрения, что хорошая дипломатия может сделать так, чтобы эти территории не были возвращены Азербайджану ... Ведь эта страна (имеется в виду Армения. – А. Г.) не имеет хозяина, и мы, кто должны быть хозяевами этой страны, оставив наше, хотим стать хозяевами чужого». Такие вот откровения, и на этом фоне, возрази Н. Пашинян американскому послу, тот мог бы ответить ему, как минимум, его же вышеприведенными «пацифистскими» мыслями.

Чтобы у читателей не сложилось впечатление, что я ушел от разъяснения об отмеченных ранее скрытых оскорблениях, содержащихся в интервью Р. Миллса в адрес Армении, приведу небольшую выдержку из его интервью: «Он (посол Миллс. – А. Г.) отметил, что происходящее в Армении может закончиться, как у Манделы и Мугабе». И он чувствует, что Армения следует путем Манделы, поэтому советует: «Вы должны быть бдительными и внимательными в этот переходный период, время перемен, как сказал премьер-министр». Таким образом, неся подобную ахирию, посол Р. Миллс, по сути, сравнивает Республику Армения до государственного переворота или так называемой «бархатной революции», а

по его же словам, до событий апреля-мая 2018 г., с режимом апартеида в Южно-Африканской Республике в период 1948 – 1994 годы, конец которому положил лидер Африканского национального конгресса (АНК) Нельсон Мандела, который после победы АНК в парламентских выборах ЮАР 10 мая 1994 года вступил в должность президента этой страны. Надо иметь, мягко выражаясь, не поддающуюся здравому смыслу фантазию, чтобы делать такое сравнение. Между тем, если внимательно вдуматься, в этом сравнении заключено, на первый взгляд, завуалированное иносказание, а скорее – недвусмысленная поддержка ими же самими созданной «новой Армении», которая уже подвела страну к опасной черте – расшатыванию государственности путем откровенной дискредитации институтов власти. Ведь грош цена государственным институтам, когда министры правительства освобождаются от занимаемых должностей на улице, под улюлюканье экзальтированной толпы, естественно, они снимаются с занимаемых министерских должностей отнюдь не из-за провалов в работе, а с целью публичной порки политических сил, которые наивно поверили в благие намерения «народного» премьера и содействовали его избранию.

Что же касается высказывания Р. Миллса о том, что «происходящее в Армении может закончиться, как у Манделы и Мугабе», то это умозаключение посла звучит сколь двусмысленно, столь же и зловеще. Двусмысленно в том смысле, что болезненное, неуёмное желание Н. Пашиняна любой ценой сохранить должность премьер-министра РА за собой путем торпедирования всякой возможности обсуждения на специальном заседании НС РА какой-либо другой кандидатуры на избрание в этой должности, кроме себя любимого, наталкивается на откровенный шантаж и угрозы «от имени народа», а на деле со стороны агрессивного меньшинства, что уже явным образом просматривается, а не от всего народа Армении. В этой связи следует отметить также неприкрытый факт втягивания в антиконституционные действия Президента РА Армена Саркисяна, который вот уже двадцатый день, в силу известных обстоятельств, не подписывает закон «О внесении изменений в Конституционный закон РА «О Регламенте Национального Собрания», принятый НС РА 2 октября т. г. Заметим, что на утверждение Президентом законов, принятых НС РА, отводится 21 день, срок которого в данном случае истекает 23 октября 2018 года. Не хочется выглядеть в роли такового провидца, однако логика происходящего в Армении подводит к мысли, что Президент РА перешлет этот закон на рассмотрение Конституционного суда Армении, хотя, по мнению квалифицированных специалистов по конституционному праву, никакой надобности в этом нет. Бесспорно, все, что происходит сегодня в РА, в дальнейшем будет осмыслено, и соответствующим образом квалифицировано и оценено.

Между тем мы прекрасно понимаем, что утверждение этого закона во многом поспособствовало бы созданию возможностей для гарантированного проведения заседания НС РА по избранию демократическим путем премьер-министра страны вместо ушедшего в отставку Н. Пашиняна. Более того, население страны, во всяком случае ее сознательная часть, которая ныне безмолвствует, смогла бы более беспристрастно оценить действия подстрекаемых Н. Пашиняном его почитателей из тоталитарной религиозной секты «Слово жизни», агрессивно настроенных представителей ЛГБТ-сообщества, сотен и сотен соросовских и иже с ними грантопоедателей. Может, у наших безмолвствующих ныне граждан пробудится желание объяснить тысячам обезволенных нуждой людей, нашим согражданам и честным молодым людям с горящими глазами, которые поверили в лозунги «народного» премьера, крайнюю опасность и авантюризм политики Н. Пашиняна, который, быть может, сам того не ведая, стал инструментом в противоборстве в регионе Южного Кавказа глобальных игроков. При этом сделанный «народным» премьером выбор покровителей из-за бугра грозит не только неизбежным его личным фиаско, но, что несоизмеримо важнее, потерей государственности Армении и Арцахской Республики. И это не преувеличение. Возвращаясь к аналогии с Мугабе, мы вправе подумать и о том, что Р. Миллс, хотя и не верится, может, усмотрел в поведении Н. Пашиняна стремление, как и у Мугабе, всеми правдами и неправдами оставаться 30 лет у власти. Что же касается возможного зловещего смысла в словах посла, то возможное отстранение Н. Пашиняна за неизбежный провал работы в должности премьер-министра РА, видимо, представляется Р. Миллсу как возврат Армении в состояние, идентичное с существованием Зимбабве при правлении этой страной диктатора Роберта Мугабе. Поэтому посол с улыбкой на лице, чтобы не нагнать страха, дает интервью, в котором поучает своих армянских воспитанников, как им быть и жить далее. Что называется – дожили, когда нынешнее руководство Армении с благоговением и раболепием внимает словам Р. Миллса, сравнивающего древнейшую армянскую христианскую цивилизацию с режимом апартеида или дикой диктатуры, при этом по-ковбойски бесцеремонно вмешивается во внутренние дела суверенного государства – Республики Армения. Впрочем, молчание властей предержавших Армении вполне объяснимо. Это молчание обусловлено либо абсолютной неадекватностью последних занимаемым ими должностям, либо осознанием собственной ангажированности со стороны дяди Сэма, а скорее всего – наличием одновременно этих двух факторов. Подобная бесцеремонность посла стала возможной также вследствие того, что, выступая в армяно-американской торговой палате 9 октября т. г., американский посол назидал: «Я озабочен поступающими ко мне (види-

## А. ГЕГАМЯН

мо, в его представлении, как к третьейскому судье. – А. Г.) сигналами о том, что кое-кто в правительстве Армении считает нужным сосредоточить ограниченные ресурсы правительства в высокотехнологичных секторах (подумать только, что за вопиющая «наглость» со стороны правительства самостоятельно перераспределять ограниченные ресурсы. – А. Г.). Мне известно о ресурсах, которые по этой причине уже были изъяты из таких отраслей, как виноделие, туризм и горнодобыча». И это, повторяюсь, при раболепном молчании «народного» премьера и руководимого им правительства. В этих условиях было вполне ожидаемо (с точки зрения последовательного отстаивания интересов своего стратегического союзника), когда 17 октября т. г. на традиционном брифинге официальный представитель МИД России Мария Захарова без обиняков назвала сие происходящее в Армении своими именами: «При этом о вмешательстве во внутренние дела суверенного государства (имеется в виду Армения. – А. Г.) посол (Ричард Миллс. – А. Г.) говорил без тени смущения, более того, с гордостью. Ведь якобы все это было оправданно и нужно для реализации благой цели – «сделать Армению более справедливым и транспарентным обществом».

P.S. В условиях засилия в армянском обществе всевозможных общественных организаций, разного рода коммерческих фондов, щедро финансируемых Фондом Сороса и подобными подрывными структурами, деятельность которых нацелена на расшатывание армянской государственности и создание зоны нестабильности у южных рубежей Российской Федерации, назрела острая необходимость объединения всех патриотических сил Армении с целью организации системного отпора действиям со стороны этих деструктивных сил. И благо, что осознание опасности, нависшей над армянской государственностью, породило искреннее стремление оказать помощь братскому армянскому народу в сложный период его новейшей истории, как не раз бывало и ранее, у наших российских коллег, испытанных друзей Армении и армянского народа. Речь о весьма востребованной и крайне актуальной инициативе, с которой на днях выступил известный политический деятель, депутат Государственной Думы Федерального Собрания Российской Федерации I, V, VI и VII созывов, первый заместитель председателя комитета Государственной Думы по делам СНГ и связям с соотечественниками, руководитель Института стран СНГ Константин Федорович Затулин, который выступил с предложением создать Лазаревский клуб. Даже выбор названия клуба – Лазаревский – продуман весьма тщательно. Ведь именно имя Ивана Лазаревича Лазарева символизирует особое отношение России к армянам, которым после обоснования в Российской империи предоставилась

возможность переселить в Россию десятки тысяч армян, обустроить, создать условия их просвещения, для развития культуры. Ведь в те годы Армения была лишена государственности и значительная часть ее населения проживала на исконных армянских землях, оказавшихся под властью Османской империи. Благородную деятельность Ивана Лазаревича Лазарева для судеб армянского народа невозможно переоценить. Он много добрых дел сделал и для своей второй родины – России, что не осталось незамеченным. Так, в 1774 году императрица Екатерина II жалует роду Лазаревых дворянство, а самого Ивана Лазарева назначает советником по восточным делам и советником Государственного банка России. Я специально раскрыл некоторые вехи из жизни нашего великого соотечественника, которые накладывают высокую ответственность на отцов-основателей и членов Лазаревского клуба. Не скрою, что замысел создания клуба, который станет добровольным объединением граждан России и Армении, нацелен на решение очень востребованных задач, четко и ясно сформулированных Константином Затулиным в проекте Обращения к российской и армянской общественности. Уверен, что Обращение будет встречено с одобрением со стороны искренних патриотов Республики Армения, а стало быть, и патриотов братской Российской Федерации.

В заключение хотелось бы завершающему свою дипломатическую миссию в Республике Армения послу США Ричарду Миллсу, который предрек Армении судьбу – идти путем Манделы или Мугабе, – откровенно заметить, что за 3 с небольшим года работы в Армении он так и не понял, в какой стране пребывал.

Обидно за Соединенные Штаты Америки, за эту великую страну.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии, сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству Национального Собрания РА и Федерального Собрания РФ, руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее Православия, председатель партии «Национальное Единение»

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՆԱԼՈՒ Է ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՍ ՄՈՒԳԱԲԵԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՄԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐ ԳՈՒՇԱԿԵՑ ԱՄՆ ԴԵՄՊԱՆ ՌԻՉԱՐԴ ՄԻԼՁԸ

Եվ այսպես, ս. թ. հոկտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող ԱՄՆ Արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլզը անգլալեզու EVNReport պորտալին տված հարցազրույցում հանդես է եկել Հայաստանին և հայ ժողովրդին ուղղված հրաժեշտի հոկտեմբերյան թեզիս-խրատներով: Հատկանշական է, որ նախապես տեղեկացնելով դեսպանի հետ հարցազրույցի մասին՝ պորտալը մատնանշել է դեսպանի գործունեության գլխավոր արդյունքները (ուղենիշերը), դիցուք՝ «Հայաստանում ավելի քան երեք տարվա ծառայությունից հետո ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզը պատրաստվում է թողնել երկիրը, որը խորապես փոխակերպվել է (իմա՝ նրա անմիջական ղեկավարությամբ – Ա. Գ.): Խոսելով Հայաստանում իր գտնվելու ժամանակի մասին՝ դեսպան Միլզը խորհրդածույն է որոշ արմատական փոփոխությունների մասին, որոնք տեղի են ունեցել թավշյա հեղափոխությամբ (Velvet Revolution), Արցախում (Լեռնային Ղարաբաղ) հակամարտության ամուր և խաղաղ կարգավորման հասնելու խնդիրների և այն մասին, որ հայ ժողովուրդը պետք է պատրաստ լինի ապագայում Իրանի հետ բարդ հարաբերություններին» (“U.S. Ambassador Mills: I leave inspired and hopeful” կամ «ԱՄՆ դեսպան Միլզ. Ես հեռանում եմ Հայաստանից ոգեշնչված և լիահույս», [www.evnreport.com](http://www.evnreport.com), 15 հոկտեմբերի 2018թ.): Դե ինչ, բավական անկեղծ է հնչում. ծրագրված և տարիներ շարունակ մանրակրկիտ նախապատրաստվող Velvet Revolution-ը (այսինքն՝ պետական հեղաշրջումը) տեղի ունեցավ, իսկ դեսպանի լիափութությունը պայմանավորված է նրանով, որ «Կյանքի խոսք» տոտալիտար կրոնական աղանդի ակտիվիստների, ԼԳՏԲ հանրույթի ագրեսիվ ներկայացուցիչների և սորոսյան հասարակական կազմակերպությունների «ինտելեկտուալների» և նրանց նմանների ուղղակի սպառնալիքների ու շանտաժի միջոցով նվազագույնի է հասցվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ ՀՀ ԱԺ) կողմից նոր վարչապետի ընտրության սահմանադրական իրավունքի իրականացումը գործող վարչապետի հրաժարականից հետո: Ավելին, այդ իրողությունը էլ ավելի է ամրապնդվել, այսպես



կոչված, Վենետիկի հանձնաժողովի (սահմանադրական իրավունքի խորհրդատվական մարմնի) կողմից ս. թ. դեկտեմբերին ՀՀ Աժ արտահերթ ընտրությունների անցկացման գաղափարին անթաքույց աջակցության խորացող փաստով: Եվ ահա, այդ հանձնաժողովի նախագահ Ջանի Բուկիկիոն օրերս խփել է անսկզբունքայնության և երկակի չափորոշիչների վառ ցուցադրման բոլոր ռեկորդները, բայց և դրանով իսկ նվաճելով կանխակալության բոլոր դափնիները: Այսպես, Վենետիկի հանձնաժողովի 116-րդ նստաշրջանի ընթացքում Վենետիկի հանձնաժողովի և Հայաստանի առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Արարատ Միրզոյանի միջև քննարկումների արդյունքներով այդ գերատեսչության նախագահ Ջանի Բուկիկիոն հանդես է գալիս հայտարարությամբ, որում «ընդունում է կոնկրետ իրավիճակը Հայաստանում (հավանաբար, Վենետիկի ծովածոցի ափերից սույն «փաստը» հստակ է երևում – Ա. Գ.), որը պահանջում է արտահերթ ընտրությունների անցկացում, ողջունում է Հայաստանի իշխանությունների հավատարմությունը միջազգային չափորոշիչներին Ընտրական օրենսգիրքը վերանայելու գործում (ինչի օրինակը նա ցույց է տալիս անձամբ, երբ Ընտրական օրենսգրքի քննարկման համար սահմանված 6 ամսվա փոխարեն հանդես է գալիս մի փաստաթղթի մասին հայտարարությամբ, որն Ազգային ժողովի կողմից անգամ իսկ հաստատված չէ – Ա. Գ.), նշում է, որ առաջարկվող փոփոխությունները հետապնդում են լեգիտիմ նպատակներ և հիմնականում դրական են թվում, մասնավորապես, ողջունում է բոլոր քայլերը, որոնք ձեռնարկվել են ձայնի իրավունքի իրականացման պարզեցմանը, զանգվածային լրատվամիջոցների հասանելիության, դիտորդների իրավունքների և առհասարակ Ընտրական օրենսգրքի թափանցիկությանը, ինչպես նաև ընտրակեղծիքների դեմ պայքարին նպաստելու համար, ողջունում է կոալիցիաների մասնակիցների թվի սահմանափակման չեղարկումը, որոնք կծեկավորվեն առաջին ռաունդից հետո՝ Վենետիկի հանձնաժողովի և ԺՄԻԳ (Ժողովրդական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակ – Ա. Գ.) գլխավոր հանձնարարականի համապատասխան»: Դե ինչ, հիանալի է՝ կմտածի ընթերցողը: Բայց ամբողջ հարցն այն է, որ Ընտրական օրենսգիրքը, որի մասին այդքան սրտացավությամբ է խոսում Ջ. Բուկիկիոն, կրկնում են, դեռևս չի քննարկվել ՀՀ Աժ նիստում և, բնականաբար, չի ընդունվել: Երկրորդ աչք ծակող հանգամանքն այն է, որ ըստ առկա ընթացակարգի՝ Ընտրական օրենսգրքի նախագիծն ուղարկվում է Վենետիկի հանձնաժողովի դիտարկմանը ՀՀ Աժ-ում դրա հաստատումից հետո և պաշտոնապես ուղարկվում է երկրի խորհրդարանի կողմից, այլ ոչ թե գործադիր իշխանության ներկայացուցչի, թեկուզ նա լինի փոխվարչապետի պաշտոնակատարը, որն առավել ևս խորհրդարանում ներկայացնում է մի քաղաքական ուժ, որը Ն. Փաշինյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «երեք հուսալի պատգամավորական ձայն» ունի: Էլ չենք ասում այն մասին, որ խոշոր փոփոխություններն ընտրական համակարգում՝ թեկնածուների շրջանային ցուցակների (ռեյտինգային համակարգի) չեղարկումը, որոնք

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

պետք է իրականացվեն ընտրություններին նախորդող մեկ տարում, ինչպես դա սահմանված է հենց Վենետիկի հանձնաժողովի կարգադրություններով, Զ. Բուկիկոյի հայտարարությունում հիշատակվում է իմիջիայլոց, թեթևակի: Վենետիկի հանձնաժողովի նախագահը միաժամանակ նշում է, որ այդ թերացումները պակաս ակտուալ են, եթե քաղաքական ուժերի միջև կա կոնսենսուս փոփոխությունների վերաբերյալ: Նշենք, որ հայտարարության տեքստի հրապարակման պահին սույն հարցի վերաբերյալ ոչ մի կոնսենսուս ձեռք բերված չէր, մինչդեռ ձեռք բերված կոնսենսուսի վկայություն կարող է հանդիսանալ միայն Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի կողմից Ընտրական օրենսգրքի համախմբված ընդունման դեպքում: Մի խոսքով՝ արդեն ակնհայտ է դարձել, որ Արևմուտքի որոշ ազդեցիկ շրջանակներին չափից ավելի են անհրաժեշտ արտահերթ խորհրդարանական ընտրությունները Հայաստանում:

Վերադառնալով դեսպանի հարցազրույցին՝ հարց տանք. իսկ ինչո՞վ մեզ զարմացրեց ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզը: Անկեղծ ասենք. նրա հարցազրույցում բավական վտանգավոր, իսկ որոշ դեպքերում՝ Հայաստանի և հայ ժողովրդի համար վիրավորական պասսժներ կան: Բայց այս ամենի մասին՝ հերթով: Կարևոր է նշել այլ բան. դեսպանի մտքի բոլոր գոհարները, որոնք կարելի է բնորոշել որպես բացահայտ միջամտություն ինքնիշխան Հայաստանի ներքին գործերին, ինչպես և պետք էր սպասել, մնացին առանց համարժեք արձագանքի գործող իշխանությունների կողմից: Միայն ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանն անատամ արձագանքեց Ռ. Միլզի բավական վտանգավոր հայտարարությանը, այն է. «Երբ ես եկել էի այստեղ (Հայաստան – Ա. Գ.), ինձ համար շատ անսպասելիորեն պարզեցի, որ իմ հանդիպած հայերի մեծ մասը կտրականապես դեմ է գրավյալ տարածքները վերադարձնելուն՝ բանակցային գործընթացի շրջանակներում: Բանակցային գործընթացը տարիներ շարունակ հասկացվում էր այնպես, որ այդ տարածքները սկզբում գրավվել էին, որպեսզի հետագայում օգտագործվեն «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևի շրջանակներում»: Դեսպանի այս ուղղակի սուտ արտահայտությանը վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանը պատասխանել է ոչինչ չասող նախադասությամբ. «Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունն ավարտող Արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլզի հայտարարությունը կարելի է համարել հեռացող դեսպանի մեսիջ»: Այնինչ, չէր խանգարի, որպեսզի Ն. Փաշինյանը հետաքրքրվեր դեսպանից, թե ով է նրան լիազորել խեղաթուրել, ընդ որում՝ կոպտորեն խեղաթուրել ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահների հայտարարությունների բովանդակությունը Դարաբաղյան հակամարտության վերաբերյալ, որոնցից յուրաքանչյուրի տակ դրված է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ստորագրությունը: Մի՞թե նա այդքան նեղացած է ԱՄՆ նախկին նախագահից, որն ինքն էր 2014թ. նրան՝ Ռիչարդ Միլզին դեսպան նշանակել Հայաստանում, որ կոպտորեն խեղաթուրում է միանգամից հինգ փաստաթղթերի բովանդա-

գահի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը համոզված է, որ ս. թ. դեկտեմբերին անպայման կայանալու են ՀՀ ԱԺ ընտրությունները: Այո, անշուշտ, ամերիկյան կողմը գիտե, որ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանը ՀՀ ԱԺ հերթական նիստում երկրորդ անգամ «կտապալի» վարչապետի պաշտոնին իր սեփական սիրելի անձի ընտրությունները, ինչն էլ ՀՀ ԱԺ ինքնավուծարման օրինական հիմքեր կտա: Բայց և միաժամանակ, հարց տանք, թե ինչո՞ւ Ջ. Բոլթոնը մտքով անգամ չի անցկացնում, որ, օրինակ, Հայաստանի այդ նույն Հանրապետական կուսակցությունը (այսուհետ՝ ՀՀԿ) խորհրդարանի հատուկ նիստում չի առաջադրի ՀՀ վարչապետի իր թեկնածուին: Փառք Աստծո, ՀՀԿ խմբակցությունում կան տասնյակ արժանավոր թեկնածուներ, ովքեր իրենց պրոֆեսիոնալ հատկանիշներով, կենսափորձով շատ ավելի բարձր են վարչապետի գործող պաշտոնակատարից: Էլ չեմ ասում ՀՀԿ այն արժանավոր թեկնածուների մասին, ովքեր այսօր աշխատում են խորհրդարանից դուրս: Ինձ կարող են առարկել, թե, իբր, պայմանավորվածություն կա քաղաքական ուժերի և Ն. Փաշինյանի միջև առ այն, որ խորհրդարանական խմբակցությունները վարչապետի թեկնածու չեն առաջադրի: Բայց կներեք, չէ՞ որ երկու ամիս առաջ կոնսենսուս էր ձեռք բերվել, չէ՞, այդ ակտորների միջև, որ ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունները կայանալու են 2019թ. ապրիլ-մայիսին: Եվ այդ պայմանավորվածությունը խախտեց ոչ այլ ոք, քան «ժողովարչապետը»: Ավելին, տառացիորեն օրերս ՀՀ Սահմանադրական դատարանը հանկարծ վերցնի ու միակ արդարացի եզրահանգումը տա այն մասին, որ «Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը լիովին համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, ինչը սահմանադրական իրավունքի մասնագետների կողմից կասկածի չի էլ ենթարկվում: Չէ՞ որ այս դեպքում Հայաստանի նոր վարչապետի ընտրությունը խորհրդարանի հատուկ նիստում շատ ավելի քիչ ենթակա կլինի Ն. Փաշինյանի մոլի կողմնակիցների՝ ավելի քան 80 հասարակական կազմակերպությունների ակտիվիստների շանտաժին, որոնք ահա արդեն ոչ մեկ տասնամյակ է ֆինանսավորվում են Սորոսի հիմնադրամից ու դրա նմաններից: Նրանց նպատակը, ընդ որում՝ միակ նպատակն է՝ տարատեսակ բարեհունչ կարգախոսների ներքո, որոնք լոկ խափանման գործիք են հանդիսանում, խարխուլել հայոց պետականության հիմքերը: Այստեղ չմոռանանք «Կյանքի խոսք» ագրեսիվ տոտալիտար կրոնական աղանդի և, իհարկե, Հայաստանի բավական կայտառ ու արկածախնդիր ԼԳԲՏ հանրույթի մասին, որոնց այդքան նուրբ պահում-պահպանում է Ն. Փաշինյանը (բայց այդ մասին՝ մի փոքր ավելի ուշ): Ուրեմն, ինչո՞ւ Ջ. Բոլթոնը բնավ հաշվի չի առնում Հայաստանում իրավիճակի զարգացման նշված բոլոր և միանգամայն հնարավոր տարբերակները: Որտեղի՞ց է վերցնում իր տեղեկություններն այն մասին, որ ՀՀ ԱԺ ընտրություններից հետո Ն. Փաշինյանի դիրքերն «ավելի շուտ, էլ ավելի կամրանան»: Եթե Երևան

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

քաղաքի ավագանու ընտրությունների արդյունքներն են նրան այդ վստահությունը տալիս, ապա հիշեցնենք, որ ընտրողների ավելի քան 53%-ը այդպես էլ չի մասնակցել քաղաքապետի ընտրություններին: Կարծում եմ, որ այդ ընտրություններին չմասնակցած մեր համաքաղաքացիները բնավ էլ գործող իշխանության կողմնակիցները չէին: Իսկ գուցե Ջ. Բոլթոնի վստահությունն այն է, որ Հայաստանում ժողովրդին մանիպուլացնելու լայնորեն կիրառվող տեխնոլոգիաները ՀՀ ԱԺ ընտրությունների պարագայում էլ անխափան կգործեն և ընտրողների կեսն այդպես էլ չի գնա ընտրությունների: Ավաղ, իրենց այս պարտվողական վարքագծով միայն գործող իշխանություններին իրենց բողոքն արտահայտող մեր ընտրողները չար կատակ կխաղան հայոց պետականության հետ:

Այո, հարգելի ընթերցող, այս բոլոր հարցերն ունեն գոյության իրավունք, բայց և այնպես, բաց է մնում զլխավոր հարցի պատասխանը. իսկ որտե՞ղ է թաղված շան գլուխը: Եվ այս հարցի պատասխանը պետք է փնտրել բոլորովին այլ հարթությունում: Այսպես, Ն. Փաշինյանի կողմից ս. թ. դեկտեմբերին ՀՀ ԱԺ ընտրություններ անցկացնելու մասին հայտարարությունը հնչեցնելու հենց հաջորդ օրը Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևը, որը Միլի մեջլիսի ընտրություններին այդքան սևեռուն ուշադրություն չի հատկացնում, որքան ՀՀ ԱԺ ընտրություններին, իր հարցազրույցներից մեկում հայտարարեց, որ մեծ հույս ունի, թե ՀՀ ԱԺ ընտրություններից հետո, վերջապես, կգտնվի Ղարաբաղյան հակամարտության կարգավորման լուծումը: Կարճ ժամանակ անց Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզը, իր հերթին, EVNReport պորտալին տված հարցազրույցում ասաց. «Երբ ես եկել էի այստեղ (Հայաստան – Ա. Գ.), ինձ համար շատ անսպասելիորեն պարզեցի, որ իմ հանդիպած հայերի մեծ մասը կտրականապես դեմ է գրավյալ տարածքները վերադարձնելուն՝ բանակցային գործընթացի շրջանակներում: Բանակցային գործընթացը տարիներ շարունակ հասկացվում էր այնպես, որ այդ տարածքները սկզբում գրավվել էին, որպեսզի հետագայում օգտագործվեն «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևի շրջանակներում»: Այսինքն՝ Իլիհամ Ալիևի կիսատ ասածը բացահայտեց դեսպան Ռ. Միլզը, կրկնենք, «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» կարճ բանաձևով: Իսկ այս թեման ավելի նուրբ ձևով, այլաբանորեն ս. թ. հոկտեմբերի 25-ին Երևանում մամուլի ասուլիսի ժամանակ հաստատեց Ջ. Բոլթոնը, որը հեռուստաալիքներից մեկի թղթակցի՝ «Եթե սկսվեն բանակցությունները (Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ – Ա. Գ.), ո՞վ պետք է նստի բանակցությունների սեղանի շուրջ՝ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը և Ադրբեջանը: Եվ ի՞նչ փաստաթուղթ է լինելու սեղանին, եթե նկատի ունենանք, որ մինչ այդ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մեջ իր կարճ ժամկետով գտնվելու ընթացքում Ռիչարդ Հոգլանդը (որը ԵԱՀԿ ՄԽ-ում ներկայացնում էր ԱՄՆ-ը – Ա. Գ.) ասել էր, որ

ներկա պահին բանակցությունների սեղանին ոչ թե Կազանի փաստաթուղթն է, ոչ թե Մադրիդյան սկզբունքները, այլ մի ինչ-որ նոր բան (համարձակվում են ենթադրել՝ փաստաթուղթ, որը հանգեցնելու է «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» ձևակերպմանը – Ա. Գ.): Ի՞նչ փոփոխություններ են եղել» հարցին պատասխանեց այսպես. «... Եթե վարչապետն այդ ընտրություններում անցնի և նրա կուսակցությունը ստանա այդ մանդատը (մեծամասնություն խորհրդարանում – Ա. Գ.), ապա դա լավ հնարավորություն է, որպեսզի վճռական և որոշիչ քայլեր արվեն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու համար: Եթե նման պատրաստակամություն լինի, ապա մենք պետք է աշխատենք, որպեսզի Ադրբեյջանի կողմից նույնպես համապատասխան արձագանք լինի»: Ալիև–Միլզ–Բոլթոնի հայտարարությունների ողջ տրամաբանությունը հանգում է մի բանի՝ վերսկսել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» կարգախոսի ներքո: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ ինչպես Կազանի փաստաթղթից (2011թ. մարտի 5-ին Սոչիում ներկայացվեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման փաստաթուղթ, որը մեկ ամիս անց, Կազանում, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Անատոլևիչ Մեդվեդևի հետ հանդիպման ժամանակ բանավոր համաձայնեցվեց Սերժ Ազատի Սարգսյանի և Իլհամ Ալիևի միջև), այնպես էլ Մադրիդյան սկզբունքներից, որոնք տեղ են գտել ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահների հինգ համատեղ հայտարարություններում, հրաժարվել է հենց Ի. Ալիևը: Մի խոսքով՝ «Ղարաբաղյան կարգավորման հարցում բեկման հասնելու Ն. Փաշինյանի ձեռնարկելիք վճռական քայլերի» բովանդակության ընկալումներում ադրբեյջանական և ամերիկյան կողմերը միասնական են, իսկ նրանց մոտեցումների միասնականությունը հանգում է «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևին: Ընդ որում, նկատենք, որ ոչ մի՝ անգամ ամենաանսկզբունքային քաղաքական գործիչ, ով ժամանակ առ ժամանակ, քաղաքական կոնյունկտուրայից ելնելով, պատրաստ է ամենամեծ ծնով, աչքն իսկ չթարթելով, արմատապես փոխել իր դիրքորոշումը Հայաստանի և Արցախի համար բախտորոշ հարցերում, օրինակ՝ Եվրասիական տնտեսական միությունից Հայաստանի դուրս գալը նախաձեռնելու հարցից ընդհուպ մինչև Ադրբեյջանին «եթե կուզեք՝ օկուպացված տարածքների ...» հանձնման վերաբերյալ [«և մենք, որ պետք է լինենք այս երկրի (Հայաստանի – Ա. Գ.) տերը, մերը թողած ուզում ենք տեր լինել ուրիշին (Ադրբեյջանի – Ա. Գ.)» (մեջբերում Ն. Փաշինյանի 2001թ. մայիսի 22-ի՝ «Հայկական ժամանակ» թերթում հրապարակված հոդվածից)], թույլ չի տա իրեն ներքաշել անվտանգության գոտու տարածքների հանձնման բացահայտ դավաճանական արկածախնդրության մեջ, ընդ որում՝ առանց Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի, նրա անվտանգության ապահովման մասին հստակ պայմանավորվածությունների՝ ԵԱՀԿ ՄԽ համանա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

խագահող երկրների նախագահների հինգ համատեղ հայտարարություններին համապատասխան: Բայց Ն. Փաշինյանի հարցում մենք միանգամայն այլ դեպք ունենք: Նա հիանալի գիտակցում է, որ անդրովկիանոսյան իր հովանավորներին Լեռնային Ղարաբաղի հանձնման մասին նախապես տված իր բոլոր խոստումները (ընդ որում, եթե ոչ ուղղակիորեն, ապա իր հարցազրույցների և հրապարակային ելույթների միջոցով, ինչի մասին ավելի վաղ գրել են) քաղաքական կամիկաձեի դերի հայտ ներկայացնելու համար չեն, այլ մի շատ ավելի վատ բանի: Մինևույն ժամանակ, Ն. Փաշինյանը գիտակցում է, որ իր կուրատորների առջև ավելի վաղ ընդունած պարտավորությունները նա նույնպես չի կարողանալու կատարել, և ահա ընտրություն է կատարել, իսկ ավելի շուտ՝ քաղաքական ուղեվարները նրան հուշել են, թե ինչ անի հետո: Իսկ անելու է հայ հասարակության պառակտման, այն «հեղափոխականների» և «հակահեղափոխականների», «սևերի» ու «սպիտակների» բաժանելու ամենաստոր քաղաքականության միջոցով: Ընդ որում, նա անպատկառություն ունեցավ փորձելու պետականության հիմքերի խարխլման քաղաքականություն վարել նաև Արցախի Հանրապետությունում: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, Ն. Փաշինյանի այս մտադրությունը շոնդալից տապալվեց՝ Արցախի բնակչության խորաթափանցության շնորհիվ (որն ահա արդեն 24 տարի հրադադարի համաձայնագրի կնքումից հետո ամեն օր, ամեն ժամ չի կորցնում իր զգոնությունը՝ քաջ գիտենալով Ադրբեյջանի նենգությունը): Արդյունքում՝ «ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարը հայտնվեց իր իսկ լարած ծուղակում, ուստի և բնավ պատահական չէ, որ երկրում լարվածության թեժացման գլխավոր գործող անձը դարձել է հենց ինքը՝ Ն. Փաշինյանը: Չէ՞ որ չի կարող խորհրդարանը, որը «համերաշխ» կողմ է քվեարկում ՀՀ կառավարության ներկայացրած բոլոր օրինագծերին, ապակայունացման աղբյուր լինել հանրապետությունում: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ ԱԺ կանոնակարգում փոփոխություններ կատարելու օրենքին, ապա այն ի ցույց դրեց Ն. Փաշինյանի գործողությունների ողջ հակասահմանադրականությունը, էլ չեն ասում «ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարի անթաքույց դիկտատորական պահվածքի մասին: Պարզ է, որ երկիրն ընկղմելով կառավարելի քաոսի վիճակի մեջ՝ «ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարը ստեղծում է բավական պարարտ հող ադրբեյջանական ներխուժման համար, որին ավշերոնյան սուլթանությունում պատրաստվում են ամբողջ թափով:

Վերադառնալով Զ. Բոլթոնի հարցազրույցին և մամուլի ասուլիսին՝ նշենք նաև առանձին լուսավոր պահերի մասին, որոնք պարունակվում էին նրա ասածներում: Այսպես, Հ. Թամրազյանի՝ «Ինձ թվում է, որ նրա (նկատի ունի Ն. Փաշինյանին – Ա. Գ.) հավանության արժանանալու վարկանիշը շատ բարձր է» հարցին Զ. Բոլթոնը պատասխանել է. «Ես նրան հարցրի, թե որն է գաղտնիքը: Նա հրաժարվեց տեղեկացնել: Գուցե ընտրություններից հետո՞ ասի»: Իհարկե, Զ. Բոլթոնի այս կատակը չի կարող հիացմունք և

խանդաղատանք չառաջացնել, ինչպես և Ն. Փաշինյանի արձագանքը, որը համեստաբար լռում էր և ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդականին չէր տեղեկացնում իր հաջողության գաղտնիքի մասին: Ում՝ ում, բայց «Ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարին լավ հայտնի է, որ ս. թ. ապրիլ-մայիսին նա օրինակելիորեն հետևում էր Զին Շարփի «ուսումնական ձեռնարկի» հանձնարարականներին՝ նախատեսված պետականությունը խարխլողների համար, որի վերնագիրն է՝ «Ոչ բռնի գործողությունների 198 մեթոդ» («198 METHODS OF NON VIOLENT ACTION” from The Politics of Nonviolent Action by Gene Sharp, Boston, Porter Sargent, 1973): Կամ էլ օգտվել է ամերիկացի վերլուծաբան, քաղաքական հրապարակախոս, փիլիսոփա և տեսաբան Ավրամ Նոամ Խոմսկու հանձնարարականներից, խորհուրդներից, որը ձևակերպել է ժողովրդին մանիպուլացնելու 10 միջոց:

Եթե մանրամասն վերլուծենք «Ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարի գործունեությունը, մենք կարող ենք առանձնացնել նրա գործողությունների տարբերակիչ գծերը, որոնք նույնությամբ պատճենում են Ա.Ն. Խոմսկու սահմանումները:

Այսպես, Ն. Փաշինյանը, երկրի տնտեսական զարգացման կարևոր խնդիրները լուծելու, կոռուպցիայի դեմ պայքարը ինստիտուցիոնալ հիմունքներով կարգավորելու, Հայաստանի ներդրումային գրավչության համար պայմաններ ստեղծելու փոխարեն, իր հրահրիչ ելույթներով հայ հասարակության ներսում ստեղծում է լարվածության և անկանխատեսելիության, վախի, շանտաժի և փողոցի կողմից ուղղակի սպառնալիքների մթնոլորտ, իսկ հետո էլ ձևացնում է, թե ինքն էլ լուծում է այդ խնդիրները: Նման մոտեցումը, այսպես ասենք, Ավրամ Նոամովիչը (ի դեպ, 1980 – 1992թթ. կենդանի գիտնականներից ամենամեջբերվողն է և ութերորդը առհասարակ մեջբերումների համար որպես աղբյուր օգտագործման հաճախականությամբ) նշում է որպես Միջոց № 1՝ Ուշադրության շեղում և Միջոց № 2՝ Ստեղծել խնդիրներ, իսկ հետո առաջարկել դրանց լուծման միջոցներ: Միջոց № 3-ը՝ Աստիճանական կիրառման միջոցը, նույնպես ներառված է Ն. Փաշինյանի զինանոցում: Օրինակ, ս. թ. հոկտեմբերի 24-ին, պատասխանելով «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանի այն հարցին, թե ինչպիսին է նրա վերաբերմունքը Հայաստանում ս. թ. նոյեմբերին «ԼԳԲՏ համաժողովի» անցկացմանը, «Ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարը պատմել է բավական «հուզիչ» պատմություն այն մասին, որ երբ ինքը Ֆրանսիայում սուրճ է պատվիրել հյուրանոցի համարում, այն բերել է մի երիտասարդ, որը, սենյակ մտնելով, հիացական ասել է. «Օ, բարև ձեզ, պարոն վարչապետ», ինչին ի պատասխան Փաշինյանը հարցրել է. «Դու հա՞յ ես», և ի պատասխան լսել՝ «Այո», իսկ այն հարցին, թե չի՞ մտածում արդյոք այդ երիտասարդը վերադառնալ հայրենիք «հեղափոխությունից» հետո, այս անհայտ սեռի սուբյեկտը պատասխանել է, որ «Հազիվ է փախել Հայաստա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

նից»: Այնուհետև «Ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարը պարզաբանել է, որ նա (այդ մատուցողը) Ֆրանսիայում ապրում է իր ընկերոջ հետ, որն այդ նույն հայկական քաղաքից է: Համաձայնեք, բավական խորհրդանշական զուգադիպություն է: Ահա այսպիսի բաներ: Հետո Ն. Փաշինյանին բնորոշ դեմագոգիան սկսվեց՝ «Կառավարությունն առայժմ կխուսափի այդ հարցից, բայց 10–20–30 տարի հետո կլինի մի կառավարություն, որը դեմ առ դեմ կհայտնվի այդ խնդրի հետ»-ի տիպի: «Եվ այդ կառավարությունը պետք է որոշի՝ արդյո՞ք տանկեր է հանում և «նրանց բոլորին ճզմում», թե՞ ընդունում է այդ մարդկանց (ԼԳԲՏ հանրությի – Ա. Գ.) գոյությունը Հայաստանում»: Այս պարագայում մենք Ավրամ Նոամ Խոմսկու միանգամից երկու հանձնարարական ունենք. Միջոց № 3՝ Աստիճանական կիրառման միջոց և Միջոց № 4՝ Կատարման հետաձգում: Կարելի է շարունակել Ն. Փաշինյանի կողմից փորձարկվող՝ ժողովրդի մանիպուլացման եղանակների մանրամասն նկարագրությունը, դիցուք, շեշտն ավելի շատ դնել հույզերի, քան խորհրդածությունների վրա, մարդկանց պահել տգիտության մեջ՝ սերմանելով միջակություն, քաղաքացիներին դրդել հիանալ միջակությամբ և այլն: Սակայն, կարծում եմ, դրա անհրաժեշտությունը չկա, բայց դրանից, այնուամենայնիվ, չի դադարում հանելուկ մնալ այն, թե՛ մի՞թե Ջ. Բոլթոնն իրականում չգիտեր Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Ավրամ Նոամ Խոմսկու այս տեխնոլոգիայի գոյության մասին: Իսկ եթե գիտեր, մի՞թե ցանկանում էր իր համար պարզել՝ արդյո՞ք վարչապետի պաշտոնակատարը գիտի այն մասին, որ Ն. Փաշինյանի քաղաքական ուղեվարները նրան սնում են Նոամ Խոմսկու՝ ժողովրդին մանիպուլացնելու բավական պոպուլյար տեխնոլոգիայով:

Այժմ, ըստ իս, ամենաէականի մասին, որը տեղի է ունեցել Ջ. Բոլթոնի և Ն. Փաշինյանի բանակցություններում, ինչը դուրս է սպրդել «Ազատ Եվրոպա ռադիո / Ազատություն ռադիոյի» հայկական ծառայության տնօրեն Հրայր Թամրազյանին տված բացառիկ հարցազրույցում: Այսպես, կարծում եմ, որ հարգելի ընթերցողը, իմանալով Ջ. Բոլթոնի պատասխանը Հ. Թամրազյանի՝ «Մենք գիտենք, որ, նորից, Ռուսաստանը հանդիսանում է խոշոր խաղացող անվտանգության առումով: Բայց ինչպիսի՞ն են այլընտրանքները տարածաշրջանի երկրների համար: Դա անդամակցությունն է ՆԱՏՕ-ին: Ի՞նչ է դա: Ավելի սերտ հարաբերություններ ՆԱՏՕ-ի՞, թե՞ ռազմական համագործակցություն ԱՄՆ-ի հետ: Որո՞նք են այլընտրանքները» հարցին, առանց ուղեղը լարելու կհասկանա, թե որն է մեր ամերիկյան գործընկերների վերջնախնդիրը, որի կատարումը դրվել է «Ժողովրդի վարչապետի» պաշտոնակատարի վրա. «... Եվ ինչպես ասացի վարչապետին, եթե խոսքը ռուսական ռազմական տեխնիկայի, թե ամերիկյանի գնման մասին է, ապա մենք կնախընտրեինք վերջինը: Մենք կարծում ենք, որ մեր տեխնիկան ամեն դեպքում ավելի լավն է, քան ռուսականը: Ուստի մենք ցանկանում ենք դիտարկել նման հնարավորությունը: Եվ ես կարծում եմ, որ

դա մեծացնում է Հայաստանի հնարավորությունները, երբ նա ամբողջովին կախված չէ մեկ խոշոր տերությունից: Ես հասկանում եմ աշխարհագրական դիրքն ու այս ամենի պատմական համատեքստը: Բայց ես կարծում եմ, որ հիմա ճիշտ ժամանակն է լավատես լինել այն իմաստով, որ Հայաստանը կարող է դուրս գալ միջազգային ասպարեզ»: Ինչպես ասում են՝ տեղ հասանք: Եվ այսպես, Հայաստանի՝ ՀԱՊԿ անդամ պետության վարչապետի պաշտոնակատարը ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդականի հետ քննարկում է ամերիկյան գեներլ զեման հարցեր, ավելին՝ նա և Ընկ-ը առանց համապատասխան արձագանքման են թողնում Զ. Բոլթոնի՝ «մեկ խոշոր տերությունից ամբողջովին կախված չլինելու», այլ ԱՄՆ-ից փափուկ կախվածությունն ինքնակամ ընդունելու ձգտումը: Եվ որքան անպատկառ են հնչում նրա խոսքերը Հայաստանի լավատեսության մասին «այն իմաստով, որ Հայաստանը կարող է դուրս գալ միջազգային ասպարեզ»: Ակամա տարակուսում ես և ցանկանում հարցնել. իսկ ո՞վ է խանգարում ԱՄՆ-ին «հուշել» մեր տարածաշրջանում ՆԱՏՕ-ի գծով իր մերձավոր դաշնակից Թուրքիային, որպեսզի բացի սահմանները Հայաստանի հետ: Այստեղ ուզում եմ հիշեցնել ԱՄՆ հարգարժան հյուրին այն մասին, որ Հայաստանի անկախության տարիներին ՀՀ Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի անմիջական մասնակցությամբ Ռուսաստանի Դաշնության ռազմատրանսպորտային ավիացիայի ավելի քան 1500 չվերթներով մեր հանրապետություն են հասցվել սպառազինություն և ռազմատեխնիկա: Չէ՞ որ այս տեղեկատվությունը պետական գաղտնիք չէ: Այս ամենը գրանցվում է արբանյակներով, այդ թվում և ԱՄՆ արբանյակներով, տիեզերքից, ընդհուպ մինչև, օրինակ, ՆԱՏՕ-ի թուրք սպաների ուսադիրների աստղերը: Ընդ որում՝ նկատենք, որ այդ գեներլ Հայաստանի Հանրապետությունը գնում էր ներռուսաստանյան գներով, ավելին՝ ռուսական վարկերով, իսկ ավիափոխադրումներն իրականացվում էին միանգամայն խորհրդանշական, չնչին վճարով: Անվիճելի է, որ սրանում զգալի դեր է խաղացել նաև Ռուսաստանի քաղաքական ղեկավարության հանդգլածությունն իրենց դաշնակիցների հուսալիության հարցում՝ հանձինս Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և, իհարկե, Սերժ Սարգսյանի, ով, հիշեցնենք, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նորագույն պատմության ամենապատասխանատու շրջանում եղել է նաև հայկական երկու պետությունների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարը: Մինչդեռ, իր հայտնություններով Զ. Բոլթոնը, պարզամտության բերումով, թե միտումնավոր, բացահայտում է վարչապետի պաշտոնակատարի հետ բանակցությունների մանրամասները, որոնք, արդեն կասկածելու հարկ չկա, ուղղված էին Ռուսաստանի և Հայաստանի միջև ռազմավարական գործընկերության մեջ սեպ խրելուն: Նա սա անում է՝ հիանալի տեղեկացված լինելով այն մասին, որ ներկայում իր ուղերձը պարարտ հող կգտնի Հայաստանում, որովհետև այսօր ՀՀ ղեկավարության ղեկին «իրենց տղան» է: Դրա համար էլ «իրենց

## Ա. ՊԵՐԱՄՅԱՆ

տղան» սեփական ապահովագրության համար չի դադարում տեղի-անտեղի, հրապարակավ ու խորամանկաբար հայտարարել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի հետ իր առանձնակի լավ հարաբերությունների մասին (իր գինն է բարձրացնում ամերիկացի մեր գործընկերների աչքում), բայց և բնավ չի շտապում ազատվել իր մերձավոր շրջապատում աշխատող ռուսատյաց ու ցինիկ բարձրաստիճան պաշտոնյաներից: Այս մասին արդեն գրել եմ:

Կարծում եմ, որ վերջին օրերի իրադարձությունների սույն հանգամանալի նկարագրությունն անհրաժեշտ էր, քանի որ իր ամբողջության մեջ այն կասկածներ չի թողնում, որ ամբողջ թափով ընթանում է «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» դավաճանական մտահղացումն իրագործելու պատրաստությունը: Եվ հենց այս համատեքստում է պետք դիտարկել վարչապետի բազմակի հայտարարություններն այն մասին, որ վերջին ժամանակներս սահմանին ադրբեջանական կողմը շատ ավելի քիչ է գնդակոծում Հայաստանի սահմանամերձ շրջաններն ու Արցախի Հանրապետության տարածքը: Ի՞նչ է սա: Երգող սիրենաների համատեղ իրագործվող նենգության հայկական արդի տարբերակ, սիրենաներ, որոնք թմրեցնում են սահմանամերձ բնակչության զգոնությունը, ավելին՝ նրանց մեջ արթնացնում կեղծ տպավորություն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման իբր նշմարվող հեռանկարների մասին, ինչի վերջնանպատակն է բնակչության կամքի թուլացումն ու ամեն գնով հայրենի հողի յուրաքանչյուր թիզը պաշտպանելու նրանց վճռականության խափանումը:

Կարելի է տասնյակ օրինակներ ներկայացնել՝ ի հաստատումն այն բանի, որ մեր ամերիկյան գործընկերները՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ լինելով, լրջորեն սևեռվել են Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական դաշինքը խզելու, Հայաստանը ՀԱՊԿ-ից դուրս բերելու (հենց դրան էր ուղղված Հայաստանի ղեկավարությունում քեռի Սեմի հայտնի դրածոների անշնորհք, ըստ էության, անտաշ վարմունքը ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի հանդեպ), ռուսական 102-րդ ռազմակայանը և Ռուսաստանի ռազմաօդային ուժերի «էրեբունի» թռիչքակայանը, ինչպես նաև Հայաստանում Ռուսաստանի Ազգային Դաշնային Ծառայության Սահմանապահ վարչության սահմանապահների ջոկատը Հայաստանից հանելու վրա: Իսկ Հայաստանի և Արցախի Հանրապետության համար կործանարար այս սցենարի իրագործման համապատասխան հող պետք է ապահովի Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը՝ «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով:

*Հետզորության փոխարեն:* Հայաստանում մայիսյան (2018թ.) պետական հեղաշրջումից հետո անցած ժամանակաշրջանում ինձ անընդհատ տանջում է նույն հարցը. մի՞թե այն, ինչ տեղի ունեցավ, անխուսափելի էր: Միևնույն ժամանակ, ես, բնականաբար, ուշադրության եմ առնում բազմա-



թիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրները, որոնք կուտակվել են Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին, բազմաթիվ դեպքերում օբյեկտիվ դժգոհությունը, որը տարիներ շարունակ հասունացել է հայ հասարակությունում, ինչն էլ փողոց դուրս բերեց մեր տասնյակ հազարավոր քաղաքացիներին, և այս հանգամանքից շատ հմտորեն օգտվեցին հայտնի ուժերը: Եվ, չգիտես ինչու, այս տանջալից հարցի պատասխանի փնտրտուքն ավարտելով՝ հակվում են այն մտքին, որ եթե այն ժամանակ Սերժ Ազատի Սարգսյանն այլ որոշում կայացներ, ապա Երևանի փողոցներում անպայման արյուն կհեղվեր, ինչը, անշուշտ, մտնում էր քաղաքական ուղեվարների և նրանց կողմից առաջնորդվող, այսպես կոչված, «թավշյա հեղափոխության» լիդերների հնարավոր սցենարների մեջ: Չէ՞ որ 2008թ. նախագահական ընտրություններից հետո պետական հեղաշրջում իրականացնելու անհաջող փորձը նրա կազմակերպիչների կողմից հենվում էր հենց արյունահեղություն սադրելու վրա: Եվ հենց այս պատճառով այսօր այդ ողբերգության մեղավորները արդարության հաստատման կողմնակիցների պատմուճան են հագել: Իսկ ավելի պարզ ասած՝ նրանց ընկալմամբ, տեղի ունեցած ողբերգության պատասխանատվության իրենց անձնական բաժինը փորձում են դնել ՀՀ այն ժամանակ գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանի վրա: Ինչո՞ւ են օգտագործում «մեղավորներ» տերմինը, որովհետև դատարանի արդարացնող վճիռ ինչպես Հայաստանում, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում այդպես էլ չի եղել:

Չէի ցանկանա հողվածս ավարտել տխուր նոտայով: Լավ է, որ աշխարհում դեռ կան Հայաստանի և հայ ժողովրդի բարի, գործով փորձված ու ստուգված բարեկամներ: Երբ գրում էի այս տողերը, Հայաստանի էլեկտրոնային ՋԼՄ-ներում լուսավոր լուր հայտնվեց. Դիմում ռուսաստանյան և հայկական հանրություններին՝ ստորագրված Ռուսաստանի հայրենասերների կողմից, որոնց համար չի կարող թանկ չլինել եղբայրական Հայաստանի ձակատագիրը: Խոսքը «Լազարյան ակումբի» հիմնադիր հայրերի մասին է: Կցանկանայի հատուկ շնորհակալություն հայտնել «Լազարյան ակումբի» հիմնադիր հայրերին՝ եղբայրական Ռուսաստանի հայրենասեր քաղաքացիներին, որոնց համար թանկ է Հայաստանի և հայ ժողովրդի ձակատագիրը: Ճանաչենք նրանց անուն առ անուն. Ավագումյան Կամո՝ ԱՎԻԼՈՆ ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ, Բաբայան Ռոման՝ լրագրող, հեռուստահաղորդավար, Ջատուլին Կոնստանտին՝ ՌԴ ԴԺ Պետական դումայի պատգամավոր, ԱՊՀ երկրների ինստիտուտի ղեկավար, «Լազարյան ակումբի» ստեղծման նախածեռնող, Կազիմիրով Վլադիմիր՝ Արտակարգ և լիազոր դեսպան, Ռուսաստանի ԱԳՆ Վետերանների խորհրդի նախագահ, Կարապետյան Սամվել՝ «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ, Կոլերով Մոդեստ՝ REGNUM տեղեկատվական գործակալության գլխավոր խմբագիր, Նավոյան Յուրի՝ ռուսաստանյան «Դիալոգ» հասարակական կազմակերպության նախագահ, Նիկոնով

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Վյաչեսլավ՝ ՌԴ ԴԺ Պետական Դումայի կրթության և գիտության հարցերով կոմիտեի նախագահ, Ռիժկով Նիկոլայ՝ Հայաստանի Հանրապետության հերոս, Ռուսաստանի Դաշնության խորհրդի անդամ, Սողոյան Ֆրիդրիխ՝ Ռուսաստանի, Հայաստանի և Ուկրաինայի ժողովրդական նկարիչ, քանդակագործ, Տորկունով Անատոլի՝ ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի ղեկավոր, ՌԳԱ ակադեմիկոս, Զիլինգարով Արթուր՝ ՌԴ ԴԺ Պետական Դումայի պատգամավոր, ՌԴ նախագահի՝ Արկտիկայում և Անտարկտիկայում միջազգային համագործակցության հարցերով հատուկ ներկայացուցիչ, Շահնազարով Կարեն՝ «Մոսֆիլմի» գլխավոր տնօրեն, կինոռեժիսոր:

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

- ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,
- ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում
- ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

«Իրավունք», 30. 10. 2018:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է  
«ՇԱՆԹ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱԳՐՈՂԻ ՀԱՐՑԵՐԻՆ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է  
ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
(31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.)

*ԼՐԱԳՐՈՂ – Պարոն Գեղամյան, ի՞նչ կարծիքի եք առաջիկա արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասին:*

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Ե՞րբ են լուծարվում խորհրդարանները: Երբ դրանք խոչընդոտում են, դիցուք, տնտեսության զարգացումը երաշխավորող կառավարության առաջադեմ օրենսդրական նախաձեռնությունների ընդունմանը: Մեր դեպքում ունենք ճիշտ հակառակ պատկերը:

Ցանկացած օրինագիծ գործող Ազգային ժողովի կողմից միահամուռ ընդունվել է: Կնշանակի, վերն ասված պատճառաբանությունը տվյալ դեպքում տեղին չէ, ուստիև այդ գործոնը մեջտեղից դուրս է գալիս: Երկրորդ. երբ մենք ականատեսն ենք, որ երկրի տնտեսական ոլորտում և ոչ մի շոշափելի առաջընթաց չկա, երբ կառավարության գործողությունները միայն ու միայն, ըստ էության, հանգեցնում են «մասկի շոուների», երբ լուրջ պայքար չի տարվում կոռուպցիայի դեմ, որովհետև դրա դեմ պայքարը նախևառաջ ենթադրում է ինստիտուցիոնալ փոփոխություններ: Այսինքն՝ պետք է ունենանք այնպիսի օրենսդրություն, պետք է այնպիսի քաղաքականություն վարվի, որ զրոյացվեն կոռուպցիայի դրսևորումների սողանցքները: Կա՞ն այդպիսի տեխնոլոգիաներ: Իհարկե, կան: Ասվե՞լ է դրա մասին: Այո, ասվել է: Մասնավորապես, իմ հոդվածներում: Որ չստացվի, թե վերացական են խոսում, նշեմ. գոյություն ունեն, այսպես կոչված, ՍՄԱԹ տեխնոլոգիաներ: Աշխարհում այսօր կոռուպցիայի դեմ պայքարում դրանք ամենաառաջադեմ տեխնոլոգիաներն են, որովհետև օբյեկտիվորեն նվազեցնում են բոլոր տեսակի կոռուպցիոն ռիսկերի հնարավորությունը: Մանրամասն գրել եմ, բայց նրանց խելքները, ցավոք, չի կտրում, որովհետև իրենք միայն ու միայն ընդունակ են թշնամի որոնել, այն էլ հայերիս մեջ, փոխանակ թուրք-ազերիների դեմ համախմբված, կոնսոլիդացված պայքարեն, հասարակությունը բաժանում են «սևի» ու «սպիտակի», «հեղափոխականների» և «հակահեղափոխականների» ...

## Ա. ԳԵՂԱՍՅԱՆ

*Լ. – Խոսքը ներկայի՞ս իշխանության մասին է:*

Ա.Գ. – Միանգամայն ճիշտ եք, բա էլ ո՞ւմ մասին է:

*Լ. – Միայն այդպիսի՞ զգացողություն ունեք:*

Ա.Գ. – Մյուսն էլ այն է, որ, թերևս, ժողովրդի մոտ երկրի ապագան նորովի տեսնելու և դա արարելու պատրաստակամություն ու համախմբվածություն երևաց: Փոխանակ այդ դրսևորումները կարողանային նպատակաուղղել համազգային խնդիրների լուծմանը, փոխանակ այդ կոնսուլիդացիան ծառայեցնեին Արցախի հիմնահարցի՝ աշխարհի համար ընկալելի և ընդունելի լուծմանը, փորձեցին կրկին ու կրկին հասարակությունը պառակտել, սևի-սպիտակի բաժանել:

*Լ. – Պարոն Գեղամյան, արտահերթ խորհրդարանական ընտրություններին պատրաստվո՞ւմ եք մասնակցել:*

Ա.Գ. – Բնականաբար, այո:

*Լ. – Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր մասնակցությունը:*

Ա.Գ. – Ասեմ, մասնավորապես, վերջին վեց ամիսների ընթացքում 14 ծավալուն վերլուծական հոդվածներ եմ գրել: Այդ հոդվածներից յուրաքանչյուրն ուղղված է եղել մեր երկրի համար կենսական հարցերի իմ տեսլականին, առկա մարտահրավերներին և խնդիրներին լուծումներ առաջարկելուն: Այդ ամենը միավորելով, փոքր-ինչ դրանց վրա աշխատելով, արդեն կունենանք պատրաստի ծրագիր: Այստեղ կարևոր եմ համարում առանձնահատուկ նշել. հրապարակելով ծրագիրը՝ խիղճս հանգիստ կլինի այն առումով, որ անկախ իմ ունեցած վերաբերմունքից գործող կառավարության, իշխանությունների նկատմամբ, ներկայացնում եմ երկրի առաջ ծառայած թե՛ տնտեսական, թե՛ աշխարհաքաղաքական մարտահրավերները հաղթահարելու համապարփակ ծրագիր: Ծրագիր, որի հիմնական դրույթները վերջին ամիսների ընթացքում մեր, ինչպես նաև միջազգային հանրության դատին են ներկայացվել «Իրավունք» և «Հայոց Աշխարհ» թերթերում, Ռուսաստանի REGNUM Դաշնային տեղեկատվական գործակալության կայքէջում:

## АРТАШЕС ГЕГАМЯН ОТВЕЧАЕТ НА ВОПРОСЫ КОРРЕСПОНДЕНТА ТЕЛЕКОМПАНИИ «ШАНТ»

АРТАШЕС ГЕГАМЯН ПРИМЕТ УЧАСТИЕ  
ВО ВНЕОЧЕРЕДНЫХ ПАРЛАМЕНТСКИХ ВЫБОРАХ  
(31 ОКТЯБРЯ 2018 Г.)

*КОРРЕСПОНДЕНТ. – Господин Гегамян, каково Ваше мнение относительно предстоящих парламентских выборов?*

АРТАШЕС ГЕГАМЯН. – В каком случае распускается парламент? Когда он препятствует, например, принятию прогрессивных законодательных инициатив правительства, гарантирующих развитие экономики. В нашем случае картина диаметрально противоположная.

Действующее Национальное собрание единодушно принимало любой законопроект. Стало быть, вышеприведенная причина в данном случае неуместна. Следовательно, этот фактор выпадает.

Второе: мы стали очевидцами того, что в экономике никаких ощутимых подвижек нет, действия правительства, по сути, выливаются исключительно в очередное «маски-шоу», серьезной борьбы против коррупции не ведется, ибо эта борьба прежде всего предполагает институциональные преобразования. Иными словами, у нас должно быть такое законодательство, должна проводиться такая политика, чтобы свести к нулю любую возможность коррупции. Существуют ли такие технологии? Конечно, существуют. Говорилось ли об этом? Да, говорилось. В частности – в моих статьях. Чтобы сказанное не выглядело голословным, отмечу: существуют так называемые SMART-технологии.

Сегодня это самые передовые технологии борьбы с коррупцией, поскольку объективно снижают вероятность любых коррупционных рисков. Я подробно писал обо всем этом, но, увы, это не их ума дело, они только и умеют, что выискивать врагов – причем среди своих, армян. Вместо того чтобы всем миром, консолидированно бороться против турко-азеров, раскалывают общество на «белых» и «черных», «чистых» и «нечистых», «революционеров» и «контрреволюционеров»...

*Корр. – Речь о нынешней власти?*

**А. ГЕГАМЯН**

А. Г. – Вы абсолютно правы – а о ком же еще?

*Корр. – У Вас только такое чувство?*

А. Г. – А другое состоит в том, что в обществе, пожалуй, обозначилось новое видение будущего и готовность строить его, а также консолидированность. И вместо того чтобы направить эту энергию на решение общенациональных проблем, чтобы эту консолидацию использовать для решения проблемы Арцаха – понятного и приемлемого для мира решения, они вновь и вновь пытаются расколоть общество, разделить его на «черное» и «белое».

*Корр. – Господин Гегамян, собираетесь ли Вы принять участие во внеочередных парламентских выборах?*

А. Г. – Разумеется, да.

*Корр. – А как Вы представляете свое участие?*

А. Г. – Скажу. В частности, за последние полгода я написал 14 объемных аналитических статей. Каждая из них содержала мое представление относительно жизненно важных для страны вопросов, предложения по решению актуальных проблем и вызовов. Собрав их и немного поработав над ними, мы можем получить готовую программу. В связи с этим считаю важным особо подчеркнуть: в случае опубликования программы совесть моя будет спокойна в том плане, что, вне зависимости от моего отношения к нынешнему правительству и к действующей власти, я представлю всеобъемлющую программу преодоления вставших перед страной вызовов – и экономических, и геополитических. Программу, основные положения которой в течение последних месяцев представили нашей и международной общественности газеты «Иравунк», «Айоц ашхар», а также сайт Федерального информационного агентства России REGNUM.

## АРТАШЕС ГЕГАМЯН: РАЗВЯЗАВ ВОЙНУ В НАГОРНОМ КАРАБАХЕ, БИТЬ ПО РОССИИ

### ЧТО НЕИЗБЕЖНО СТОЛКНЁТ РОССИЮ И ТУРЦИЮ И ПЕРЕРАСТЁТ В ГЛОБАЛЬНУЮ КАТАСТРОФУ

Осмысливая события последних месяцев, происходящие в регионе Южного Кавказа и вокруг него, невольно приходишь к выводу, что вот-вот грянет война. Нет, уважаемый читатель, это, к сожалению, не преувеличение, а результат беспристрастного анализа последовательно проводимой против Армении информационной войны. Войны, в арсенале которой самые современные технологии разрушения государства изнутри. Чтобы не быть голословным, сошлюсь на конкретные примеры, причем самые свежайшие.

Итак, 1 ноября 2018 года на специальном заседании Национального Собрания Республики Армения (далее – НС РА) и. о. премьер-министра Республики Армения Никол Пашинян, отвечая на вопрос депутата Рузанны Аракелян о будущем армяно-турецких отношений, рассказал о своей встрече с одним опытным дипломатом: «Я сказал, что две границы кажутся открытыми, но они открыты наполовину (подчеркнуто мною, ибо непонятно, почему «кажутся», – А.Г.). Армяно-иранская граница может закрыться в любое время вследствие политики США, армяно-грузинская граница может быть закрыта, скажем, из-за плохой погоды (видимо, ссылаясь на погоду, он имел в виду участок Верхнего Ларса грузино-российской границы – А.Г.). Армения готова к нормализации армяно-турецких отношений без предусловий».

На первый взгляд читателю может показаться: а что необычного в ответе и. о. премьера? Однако при несколько углубленном осмыслении сказанного приходишь к единственно возможному заключению, что Н. Пашинян «не ведает, о чём говорит». Но обо всем по порядку.

Первое, что бросается в глаза и тревожит – Н. Пашинян с трибуны НС РА, по сути, открыто заявляет о том, что отныне в регионе Южного Кавказа Армения выступает в качестве объекта международных отноше-

ний, а не самостоятельного субъекта, границы которого с двумя дружественными странами – Ираном и Грузией – могут быть закрыты и здесь мнение Армении не играет никакой роли. Причем возможное и допустимое по Н. Пашиняну закрытие границы с Ираном наводит на тревожные мысли. Чтобы полнее представить, о чём идет речь, вспомним события недавнего по историческим меркам прошлого. Так, 7 мая 1992 г. благодаря посредническим политическим усилиям Ирана в Тегеране было подписано Совместное заявление глав государств Исламской Республики Иран, Азербайджанской Республики и Республики Армения. Напомню, что, в соответствии с этим Заявлением, «Стороны договорились, что в течение недели по прибытии в регион специального представителя президента Ирана Махмуда Ваези после проведения переговоров с заинтересованными сторонами и при поддержке глав государств Армении и Азербайджана осуществляется прекращение огня и одновременно открываются все коммуникационные дороги с целью обеспечения экономических потребностей».

Проявление доброй воли руководства Ирана налицо, другое дело, что азербайджанская сторона грубо нарушила достигнутые договоренности и развязала войну против нагорного Карабаха. Заметим также, что во время резкого обострения нагорно-карабахского конфликта, то есть, по сути, начала войны, иранское руководство оказалось в весьма сложном положении, столкнувшись с серьезным давлением общественности своей страны, особенно со стороны азербайджанской общины, насчитывающей в Иране, по самым скромным подсчетам, свыше 20 млн человек. Однако иранская сторона изначально заняла равноудаленную позицию по отношению к сторонам конфликта, тем самым можно констатировать, что боевые действия в зоне конфликта 1992–1994 гг. разворачивались на фоне взвешенной политики Ирана. Более того, мировая общественность отметила важнейшую роль Ирана, который в самый сложный для армянской стороны период горячей войны с Азербайджаном занял позицию, при которой узкий участок границы между Арменией и Ираном стал «дорогой жизни» для Армении и Нагорного Карабаха, для армянского народа. И. о. премьера не только допускает, но и озвучивает, что «армяно-иранская граница может закрыться в любое время вследствие политики США», и тем самым готовит население Армении к подобному ходу развития событий. Естественно, напрашивается вопрос – а кто закроет эту границу? Известно, что с армянской стороны границу охраняют российские пограничники Пограничного управления Федеральной службы безопасности (ФСБ) РФ в Армении. Бесспорно, закрытие армяно-иранской границы в первую очередь станет враждебным актом по отношению к самой



Армении, сильнейшим ударом по интересам национальной безопасности РА. Более того, это не исходит из коренных интересов государств-членов ОДКБ, в частности, России и Казахстана. Отметим также, что иранская сторона совершенно недавно, 12 августа 2018 г., в Актау (Казахстан) подписала конвенцию по правовому статусу Каспийского моря, под которой стоят также подписи президентов России и Казахстана, являющихся членами ОДКБ, что подняло на качественно более высокий уровень партнерские отношения между этими странами. Заметим также, что подписанная конвенция полностью снимает имевшиеся ранее спорные экономические вопросы, в частности, между Россией и Ираном. Не говоря уже о том, что Россия, Иран и Турция являются стратегическими партнерами в сирийском урегулировании, и, как заявил 23 октября т. г. заместитель министра иностранных дел РФ Сергей Вершинин в ходе встречи с представителями МИД Ирана и Турции, взаимодействие России, Турции и Ирана решительно изменило ситуацию в Сирии. То есть имеет место широкий круг вопросов, решение которых сближает эти страны. Естественно, что в этих условиях закрытие ирано-армянской границы абсолютно не в интересах безопасности Ирана, более того, в силу сложившихся по факту стратегических, партнерских отношений между Россией и Ираном значение армяно-иранской границы приобретает особую важность. Так на кого же намекает Н. Пашинян, озвучивая подобное опасное заявление о закрытии границы? Не приходится сомневаться – на США. Ведь далеко не случайно, что в ходе визита советника президента США по национальной безопасности Джона Болтона последний заявил, что на фоне усиления США давления на Иран армяно-иранская граница станет «важным вопросом» и «мы будем давить на Иран, потому что считаем, что их поведение на Ближнем Востоке и мире в целом пагубно и требует изменений» (из интервью Дж. Болтона армянской службе радио «Свобода», 26 октября 2018 г.). То есть, по существу, и. о. премьера готовит армянское общество к восприятию опасной и откровенно предательской, недопустимой с точки зрения национальной безопасности мысли о возможности закрытия границы Армении с Ираном. Что это, очередное проявление полной некомпетентности, причем во вред себе, любимому, или же многозначительный жест понимания с армянской стороны озабоченности США в связи с Ираном, а заодно и сигнал американцам о том, что общественное мнение Армении уже готовится для реализации на практике и других заветов Дж. Болтона (из того же интервью радио «Свобода»): «Нынешние обстоятельства подчеркивают важность достижения удовлетворяющего обе стороны соглашения в карабахском конфликте ... Как только это произойдет,

## А. ГЕГАМЯН

сразу откроется армяно-азербайджанская граница ... Турецкая граница, я думаю, откроется наверняка».

Очевидно, что и. о. премьера вовсе не случайно, отвечая на вопрос о будущем армяно-турецких отношений, затронул и тему возможного закрытия армяно-иранской границы. Вместе с тем напомним читателям, что ответ Н. Пашиняна в полной мере укладывается в концепцию, известную как «Окно Овертона». С помощью этой концепции (технологии) в сознание общества даже с устоявшимися традиционными фундаментальными армянскими ценностями (институт семьи, брака, уважения к старшим, чувство преданности и благодарности по отношению к подлинным друзьям армянского народа, глубокую приверженность Армянской Апостольской Святой Церкви) насаждаются губительные для армянского государства идеи и мысли. Приходится констатировать, что уже не первый год как более 80 разного рода общественных организаций, финансируемых Фондом Сороса и другими структурами, ведут в Армении подрывную работу. Их деятельность нацелена на разрушение армянской государственности путем разрыхления и полного уничтожения моральных устоев и традиционных ценностей армянского общества. С тревогой следует констатировать, что в этом деле они уже добились значительных успехов. Безусловно, эта тенденция разрушения армянской государственности будет, к нашей беде, сохраняться и развиваться хотя бы по той веской причине, что в настоящее время во главе этого сатанинского проекта (сознавая это или нет) стоит и. о. «народного» премьер-министра Н. Пашинян. Уже ясно просматривается, что именно он и его соратники реализуют проект разложения и уничтожения нравственных понятий в армянском обществе. Причем делается это путем неприкрытой поддержки (справедливости ради отметим – обоюдной) действий ЛГБТ-сообщества, молчаливого одобрения тоталитарного агрессивного религиозного движения. Движения, которое кощунственно оскверняет наши религиозные святыни своим бесцеремонным вламыванием в резиденцию Верховного Патриарха и Католикоса Всех Армян, под гнусные лозунги требующего «нового католикоса в новой Армении». Эти гнусные действия лишь на первый взгляд направлены только против Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина II, по праву именуемого в Армении и диаспоре Гарегинотом Строителем. Их конечная цель – всеми путями поколебать веру армян в Армянскую Апостольскую Святую Церковь – непоколебимый гарант сохранения армянской цивилизации и армянского государства. По сути, эти бесноватые являются авангардом тоталитарной религиозной секты «Слово жизни», которая является чуть ли не главной опорой режима Н. Пашиняна.

Что же касается оптимистических высказываний и. о. премьера о том, что «Армения готова к нормализации армяно-турецких отношений без предусловий», сделанных после бравого заявления Дж. Болтона «турецкая граница, я думаю, откроется наверняка», то читатель может вполне резонно задаться вопросом – а что же в этом плохого или нового? Ведь еще 10 октября 2009 года главы МИД Турции и Армении Ахмет Давутоглу и Эдвард Налбандян подписали в Цюрихе Протокол об установлении дипотношений и Протокол о развитии двусторонних отношений. Это так, однако разница в том, что накануне подписания Цюрихских протоколов Президент Армении Серж Азатович Саргсян не выступал с публичными, вызывающими жалость и безволие заявлениями. Тем более с заявлениями, подобными пашиняновским, вывод из которых сводился к тому, что Армения может оказаться в безвыходной ситуации, так как «армяно-иранская граница может закрыться в любое время вследствие политики США, а армяно-грузинская граница может быть закрыта, скажем, из-за плохой погоды». Более того, 1 марта 2018 г. на заседании Совета национальной безопасности РА Президент РА Серж Азатович Саргсян сказал: «Армения сделала всё возможное для того, чтобы не оставлять грядущим поколениям бремя урегулирования отношений между нашей Республикой и Турецкой Республикой. Однако в течение прошедших после подписания протоколов девяти лет Анкара, возвратившись к своим бесосновательным предусловиям, не только не сделала ни шага для ратификации протоколов и их вступления в силу, но также не оставила никаких сомнений, что и не собирается осуществлять этот процесс». После столь взвешенной и достойной отповеди лидерам Турции вызывает недоумение и гнев беспринципная позиция и. о. премьер-министра РА в этом вопросе, которая приобретает зловещий смысл, если учесть, что Дж. Болтон открытие азербайджано-армянской и турецко-армянской границы увязал с урегулированием нагорно-карабахского конфликта. Но мы-то хорошо помним, что именно под давлением Азербайджана, Министерство иностранных дел которого в тот же день подвергло критике Турцию за подписание Цюрихских протоколов без урегулирования карабахского конфликта, Турция пошла на попятную, так и не ратифицировав их Великим национальным собранием своей страны.

Можно привести и другие примеры из выступлений и. о. премьер-министра РА, которые наглядно демонстрируют факт того, что политика, проводимая властями предержавными Армении, осуществляется в полном соответствии с концепцией, изложенной Джозефом (Иосифом) Овертоном (1960–2003 г.), которая после его гибели получила название «Окно Овертона». Согласно этой концепции, существует целая технология разрушения общественных институтов и легализации морально недо-

## А. ГЕГАМЯН

пустимых идей. При этом следует проделать всего ничего, лишь несколько шагов для «промывания мозгов», или, точнее, управления обществом (а на самом деле его разрушения) путем изменения «общепринятого» через внедрение хорошо налаженного метода обмана.

Чтобы не говорить загадками, отметим лишь некоторые из этих шагов, которые реализуются у нас на глазах.

В числе первых шагов следует отметить технологию, при которой легализуются совершенно чуждые, в нашем случае армянскому обществу, идеи – хамские действия тоталитарных религиозных сект, снисходительное отношение к агрессивным действиям ЛГБТ-сообщества со стороны полиции и органов юстиции, публичное оскорбление чувства собственного достоинства, размазывание по асфальту не угодных режиму граждан без каких-либо правовых оснований, повсеместное и чуть ли не ежедневное попрание принципа презумпции невиновности.

Следующий из шагов – широкое применение технологии легализации чего угодно. За примерами далеко ходить не надо. Вышеизложенное как раз и свидетельствует о широком применении этого шага из известной технологии.

Можно и далее, основываясь на конкретных примерах из повседневной практики деятельности правительства, продолжить перечисление фактов, совершаемых по предписаниям концепции «Окно Овертона», однако в этом нет необходимости. Отметим лишь, что технология «Окно Овертона» основана на базовых слабостях практически любой личности. В случае Армении есть и благодатная почва, когда около 30% населения страны пребывает за чертой бедности, а это неизбежно привело к обезволиванию нуждой большого сегмента армянского общества. В силу этих реалий часть общества стала наиболее подверженной разного рода манипуляциям, которые пробуждают в них чувство силы своей «принадлежностью к стае», иллюзию авторитета (безнаказанное вламывание в охраняемое здание Национального Собрания РА, имевшее место 2 октября т. г.). К сказанному можно добавить и незаконные уличные шествия представителей тоталитарных сект с выкрикиванием хамских лозунгов против Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина Второго и т. п. Повторюсь, безнаказанность за творимые беззакония порождает у этой категории людей иллюзию законности своих действий, а вслед за этим ложное представление о правильности совершаемых ими антиобщественных поступков.

Вызывают беспокойство и события в соседней дружественной Грузии, где на днях завершились выборы президента, которые так и не выявили победителя во время первого тура. Заметим, что в голосовании лидирует кандидат от правящей партии «Грузинская мечта – демократи-

ческая Грузия» Саломе Зурабишвили с 38,66% голосов, на втором месте оппозиционный кандидат от основанной экс-президентом Грузии Михаилом Саакашвили партии «Единое национальное движение» с 37,77% голосов избирателей. В этой связи напомним читателям, что по итогам визита в Грузию (накануне президентских выборов) советник президента США по национальной безопасности Джон Болтон оценил свои переговоры с грузинскими лидерами как «превосходные», а Грузию назвал страной «самых высоких стратегических интересов» для США и выразил надежду, что президентские выборы пройдут справедливо, «в полностью открытой и прозрачной среде». Так вот уже авторитетные грузинские эксперты едины во мнении, что «Единое национальное движение» в самое ближайшее время будет инициировать митинги, протестные движения под лозунгами о роспуске грузинского парламента, в котором большинство за партией «Грузинская мечта», созданной и возглавляемой миллиардером Бидзиной Иванишвили. Всё идет к тому, что обстановка в дружественной Грузии будет ежедневно накаляться, естественно, не без участия маэстро Михаила Саакашвили, который, несомненно, извлек уроки как из своей былой деятельности, так и из действий своего армянского фаворита Н. Пашиняна, которого за последние месяцы не переставал подбадривать и наставлять. Предвосхищая возможное удивление читателей, связанное с тем, что у Армении у самой хлопот невпроворот, а тут заладили анализ событий, происходящих в Грузии. Однако анализировать события в Грузии, сопереживать дружественному грузинскому народу за происходящее в их стране – это исторически сложившиеся реалии, которыми нам, армянам, следует дорожить. Достаточно вспомнить трагическое Спитакское (1988 г.) землетрясение, когда спустя считанные часы десятки машин «скорой помощи», сотни машин с гражданами из братской Грузии прибыли в Армению и оказали неоценимую помощь жителям зоны бедствия: неотложной медицинской помощью, спасением из-под завалов раненых людей, обеспечением их теплой одеждой и питанием. Такое никогда не забывается, и тут хочу надеяться, что бессильны разные «Окна Овертона» и другие технологии разрушения моральных устоев общества и государства. События последних месяцев в Армении и Грузии не могут не наложить своего отпечатка на внутривосточную ситуацию в соседнем Азербайджане, да, я не оговорился, в Азербайджане. Исходя же из того, что Армения, Азербайджан и Грузия имеют особое значение для Вашингтона, о чём прямо и неоднократно заявлял Дж. Болтон, в контексте противостояния с Ираном, то резонно предположить, что и в Азербайджане вполне ожидаема реализация так называемой «бархатной революции». Однако не вызывает сомнений, что, в отличие от армянского руководства, апшеронский султан пойдет на любое кровопролитие.

## А. ГЕГАМЯН

Нет, не на улицах Баку или Гянджи, а на карабахском фронте. А это, по мнению американских стратегов, побудит Н. Пашиняна проявить свои «лидерские качества» и подписать мирное соглашение по урегулированию нагорно-карабахского конфликта по формуле «территории (земли) – в обмен на мир», озвученной завершившим свою дипломатическую миссию в Армении послом США Ричардом Миллсом, поддержанной Ильхамом Алиевым и Джоном Болтоном.

Но было бы упрощением события, разворачивающиеся в последние месяцы, рассматривать в отрыве от глобальной политики США. Достаточно отметить один из месседжей Дж. Болтона по части Ирана, еще и еще раз напомним об этом: «Мы не хотим нанести ущерб нашим друзьям в процессе (в процессе оказания максимального давления на Иран. – А. Г.), потому я считаю, что разговор между правительством Армении и США будет очень важен. Но, как я сказал премьер-министру, мы будем применять эти санкции очень энергично (видимо, имелось в виду заставить Армению закрыть границу с Ираном. – А. Г.). Это не администрация Барака Обамы».

Уверен, что этот месседж адресован не только и не столько Армении, сколько России, а также государствам-членам ОДКБ. Закрытие армяно-иранской, а также армяно-грузинской границы погрузит Армению в полную блокаду. Расчет заокеанских стратегов сколь циничен, столь и прост: блокада приведет экономику Армении в состояние коллапса, к резкому ухудшению и без этого тяжелого социального положения граждан с параллельным «выявлением» виновника всех бед Армении, которым, не приходится сомневаться, лжестратегами от политики будет названа Россия.

Весь опыт последнего полугодия показал, что технологии оболванивания, «промывания мозгов», манипуляции общественным мнением безотказно действуют в «новой Армении». Бесспорно, в пользу безальтернативности такого утверждения можно привести с десятков аргументов из нашей жизни, более того, сделать это предметом отдельного анализа. Однако думается, что вышеизложенное убедительно свидетельствует об истинной цели заокеанских стратегов, а именно: развязав войну в Нагорном Карабахе, бить по России. А это неизбежно столкнет Россию и Турцию и перерастет в глобальную катастрофу. А возможность подобного сценария велика хотя бы в силу того, что лидер Турции Реджеп Тайип Эрдоган грезит о возрождении потерянного величия Османской империи. Словом, не прояви политический класс Армении, Азербайджана и Грузии политической прозорливости, он станет не только свидетелем, но и виновником опустошительной катастрофы, уготованной региону Южного Кавказа.

*Вместо послесловия.* Внимательно отслеживая события, происходящие в Армении и вокруг нее в течение минувшего полугодия, первое, о чём с тревогой думаю – это поиск ответа на вопрос: а правильно ли я, будучи депутатом пяти созывов Национального Собрания РА, кандидатом в президенты (2003 г.) Республики Армения, которому отдали свои голоса 17,6% избирателей, строил свою политику в это судьбоносное для моей страны и моего народа время. Да, я неоднократно выступал с критическими статьями в адрес главарей государственного переворота, именуемого ими и их политическими поводырями «бархатной революцией». Думаю, что на убедительной доказательной основе в своих статьях показывал всю опасность навязанной Армении из-за бугра «бархатной революции». «Революции», свершившейся под разного рода благовидными предложениями углубления демократии, соблюдения прав и свобод человека, справедливого урегулирования нагорно-карабахского конфликта и пр. Более того, на конкретных примерах показывал всю лживость лозунгов новоявленных «революционеров». Однако несмотря на всё это, в моем сознании укореняется мысль о не до конца выполненном долге перед Родиной. Чтобы сказанное не выглядело уж больно патетически и не смахивало на плагиат стиля и. о. «народного» премьера, поясню, о чём речь. Еще в первых числах мая т.г., анализируя реальную ситуацию, сложившуюся в Армении, когда многие десятки тысяч людей на непрекращающихся митингах в Ереване требовали избрания премьер-министром Н. Пашиняна, на заседании верховного органа Республиканской партии Армении (далее – РПА) я предложил, чтобы на предстоящем специальном заседании НС РА РПА выступила со своим кандидатом на избрание премьер-министром Армении. Благо в кадровом резерве РПА немало достойных кандидатов, которые по своим профессиональным навыкам значительно превосходят «выдвиженца народа». Более того, зная накал страстей, охвативших десятки тысяч митингующих, выразил и свою личную готовность баллотироваться. Увы, мое предложение не получило поддержки в силу каких-то обстоятельств, что является темой отдельного, надеюсь, очень интересного и важного анализа. Важного с той точки зрения, чтобы в своих дальнейших действиях вновь не наступать на одни и те же грабли. Дальше – больше. Н. Пашинян, на безальтернативной основе «избравшийся» (под шантажом и давлением улицы) премьер-министром РА, видимо, уверовав в свою незаменимость, конечно, не без подсказки своих политических поводырей, уже в октябре т. г. инициировал фарс под названием «подаю в отставку». Идея сего действия в том, чтобы, не избравшись на пост премьер-министра, добиться роспуска парламента, при этом полностью сохранив за собой всю полноту исполнительной власти, но с одной лишь приставкой и. о. Так вот и в этот раз, не

## А. ГЕГАМЯН

то чтобы мне не терпелось завоевать лавры политического камикадзе, я вновь поднял вопрос о необходимости выдвижения со стороны РПА своей (вовсе не обязательно моей) кандидатуры на избрание премьер-министром, при этом заявив также и о моей личной готовности. Преследуемая мною цель, думаю, была предельно ясна: ознакомившись на специальном заседании НС РА с программой кандидата РПА, даже самый предвзятый сторонник Н. Пашиняна в глубине души осознал бы ее качественно значительно более высокий профессиональный, научно обоснованный уровень. Не говоря уже об обоснованности ответов на возможные вопросы депутатов. Пишу об этом с уверенностью, потому что мои статьи последнего полугодия, которые были опубликованы российским ИА REGNUM (здесь не могу не выразить свою огромную благодарность главному редактору, патриоту-державнику Модесту Алексеевичу Колерову), затрагивали наиболее острые вопросы экономики и геополитики, содержали конструктивную критику в адрес правительства Н. Пашиняна, а после их публикации так и не были оспорены ими. Повторю, в статьях содержалась адресная критика деятельности как Н. Пашиняна, так и его ближайшего окружения. А это в своей совокупности, безусловно, в известном смысле отрезвило бы всё еще находящуюся в эйфории определенную часть читателей «народного» премьера, не говоря уже о сотнях тысяч наших сограждан, которые, видимо, за безысходностью (в их восприятии) сложившейся ситуации полностью самоустранились от общественной жизни страны. Словом, мое предложение в очередной раз не получило поддержки со стороны коллег по фракции РПА. Чтобы у читателей не сложилось ложное впечатление, что я готовлю почву для обвинения в тогу этакого непонятого и обиженного со стороны РПА, скажу однозначно – нет, с точностью до наоборот. Ведь с трибуны НС РА можно было сказать и о множестве достойных уважения, особенно в области внешней политики, действий, реализованных за последние годы под руководством РПА. Ясно и другое: выдвижение, притом неформальное, реальной альтернативной кандидатуры для избрания на должность премьер-министра РА выбило бы почву из-под ног отдельных политиков, сторонников теории заговора, которые уж очень сильно активизировались в последнее время, оценивая происходящее в Армении как некоторый заранее спланированный сценарий с заранее оговоренным финалом.

Впрочем, тут уместно не забывать бессмертные строки из Нагорной проповеди: «Не судите, да не судимы будете. Ибо каким судом судите, таким будете судимы. И какою мерою мерите, такую и вам будут мерить» (Евангелие от Матфея, 7.1,2).



P. S. Об этих предостережениях нашего Учителя Иисуса Христа не должны забывать разного рода политические временщики, учинившие в эти дни настоящую психологическую травлю в отношении талантливого организатора здравоохранения, патриота Армении и Арцахской Республики профессора Ара Микаеловича Минасяна и его, бесспорно, талантливого сына, который до вчерашнего дня был Чрезвычайным и Полномочным Послом Республики Армения в Ватикане, Микаела Араевича Минасяна.

Не хотелось бы завершать статью на грустной ноте, хотя для оптимизма, увы, слишком мало оснований. Но, пожалуй, есть большая надежда на Лазаревский клуб, на интеллектуалов, политологов высочайшей квалификации, отцов-основателей клуба, которые, несомненно, своим глубоко обоснованным анализом крайне сложной обстановки, сложившейся в Армении, помогут армянскому народу выйти на спасительную дорогу к Храму, которая ведет к Богу.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»



## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԱՆՁԱԶԵՐԾԵԼՈՎ՝ ԿԽՓԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ԻՆՉՆ ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻՈՐԵՆ ԿԳԺՏԵՑՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ  
ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՈՒ ԿՎԵՐԱՃԻ ԳԼՈՐԱԼ ԱՂԵՏԻ

Փորձելով իմաստավորել Հարավային Կովկասի տարածաշրջանում և նրա շուրջ վերջին ամիսներին տեղի ունեցող իրադարձությունները՝ ակամա գալիս ես այն եզրակացության, որ ուր որ է պատերազմ է սկսվելու: Ավաղ, հարգելի ընթերցող, սա, ցավոք, չափազանցություն չէ, այլ լուր արդյունքն է Հայաստանի դեմ հետևողականորեն վարվող տեղեկատվական պատերազմի անաչառ վերլուծության: Պատերազմ, որի զինանոցում ներառված են պետությունը ներսից քանդելու ամենաարդիական տեխնոլոգիաները: Որպեսզի ասածս մերկապարանոց չհնչի, բերեմ կոնկրետ, ընդ որում՝ ամենաթարմ օրինակներ:

Եվ այսպես, 2018 թ. նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ ՀՀ ԱԺ) հատուկ նիստում Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով պատգամավոր Ռուզաննա Առաքելյանի՝ հայ-թուրքական հարաբերությունների ապագայի վերաբերյալ հարցին, պատմեց մի փորձառու դիվանագետի հետ իր հանդիպման մասին. «Ես ասացի, որ երկու սահման, որոնք բաց են թվում, բայց դրանք կիսով չափ են բաց (ընդգծել եմ, որովհետև անհասկանալի է, թե ինչու «են թվում» – Ա. Գ.): Հայ-իրանական սահմանը կարող է փակվել ցանկացած պահի՝ ԱՄՆ քաղաքականության հետևանքով, հայ-վրացական սահմանը կարող է փակվել, ասենք, վատ եղանակի պատճառով (հավանաբար, եղանակի մասին նշելով՝ նա նկատի ուներ վրաց-ռուսական սահմանի Վերին Լարսի տեղամասը – Ա. Գ.): Հայաստանը պատրաստ է կարգավորել հայ-թուրքական հարաբերություններն առանց նախապայմանների»: Առաջին հայացքից ընթերցողին կարող է թվալ, թե ինչ արտասովոր բան կա վարչապետի պաշտոնակատարի պատասխանում: Սակայն ասվածի մեջ փոքր-ինչ խորանալով՝ գալիս ես միակ հնարավոր եզրակացությանն առ այն, որ Ն. Փաշինյանը «չի հասկանում, թե ինչի մասին է խոսում»: Բայց այս ամենի մասին՝ հերթով:

Առաջին բանը, որ աչքի է գարնում և տագնապի տեղիք է տալիս, այն է, որ Ն. Փաշինյանը ՀՀ ԱԺ ամբիոնից, ըստ էության, բացահայտ հայտարարում է այն մասին, որ այսուհետ Հարավկովկասյան տարածաշրջանում Հայաստանը հանդես է գալիս որպես միջազգային հարաբերությունների օբյեկտ, այլ ոչ թե ինքնուրույն սուբյեկտ, որի սահմանները բարեկամ երկու երկրների՝ Իրանի և Վրաստանի հետ, կարող են փակվել, և այստեղ Հայաստանի կարծիքը ոչ մի դեր չի խաղում: Ընդ որում՝ Իրանի հետ սահմանի հնարավոր և թույլատրելի, ըստ Փաշինյանի, փակումը բերում է տագնապալի մտքերի: Ավելի լավ պատկերացնելու համար այն, ինչի մասին խոսում ենք, հիշենք պատմական չափանիշներով ոչ վաղ անցյալի իրադարձությունները: Այսպես, 1992 թ. մայիսի 7-ին, Իրանի միջնորդական քաղաքական ջանքերի շնորհիվ, Թեհրանում ստորագրվեց Իրանի Իսլամական Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ղեկավարների համատեղ հայտարարությունը: Հիշեցնեն, որ այդ հայտարարության համաձայն՝ «Կողմերը պայմանավորվեցին, որպեսզի Իրանի նախագահի հատուկ ներկայացուցիչ Մահմուդ Վաեզիի՝ տարածաշրջան գալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում, շահագրգիռ կողմերի հետ բանակցությունների անցկացումից հետո և Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների աջակցությամբ իրականացվի հրադադար և միաժամանակ բացվեն հաղորդակցային բոլոր ճանապարհները՝ տնտեսական պահանջ-մունքների ապահովման նպատակով»: Իրանի ղեկավարության բարի կամքի դրսևորումն այստեղ ակնհայտ է, այլ բան է, որ ադրբեջանական կողմը կոպտորեն խախտեց ձեռք բերված պայմանավորվածությունները և պատերազմ սանձազերծեց Լեռնային Ղարաբաղի դեմ: Նշենք նաև, որ Ղարաբաղյան հակամարտության կտրուկ սրացման, այսինքն, ըստ էության, պատերազմն սկսվելու ժամանակ, Իրանի ղեկավարությունը հայտնվեց բավական բարդ իրավիճակում՝ բախվելով իր երկրի հասարակության, հատկապես ադրբեջանական համայնքի (որի թիվն Իրանում ամենահամեստ հաշվարկներով կազմում է ավելի քան 20 մլն մարդ) լուրջ ճնշմանը: Սակայն իրանական կողմը սկզբից ևեթ հավասարաչափ հեռավորություն պահպանելու դիրք գրավեց հակամարտության կողմերի հանդեպ, դրանով իսկ կարելի է փաստել, որ մարտական գործողությունները հակամարտության գոտում 1992 – 1994 թթ. ծավալվում էին Իրանի հավասարակշռված քաղաքականության ֆոնին: Ավելին, միջազգային հանրությունը նշեց Իրանի կարևորագույն դերի մասին, որը հայկական կողմի համար Ադրբեջանի դեմ թեժ պատերազմի ամենաբարդ շրջանում որդեգրեց մի դիրքորոշում, երբ Հայաստանի ու Իրանի միջև սահմանի նեղ հատվածը դարձավ «կյանքի ճանապարհ» Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի, հայ ժողովրդի համար: Վարչապետի պաշտոնակատարը ոչ միայն հնարավոր է համարում, այլև բարձրաձայնում է, որ «հայ-իրանական սահմանը կարող է փակվել ցան-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կացած պահի՝ ԱՄՆ քաղաքականության հետևանքով», և թվում է, թե դրանով իսկ Հայաստանի բնակչությանը նախապատրաստում է իրադարձությունների զարգացման նման ընթացքի: Բնականաբար, հարց է ծագում. իսկ ո՞վ է փակելու այդ սահմանը: Հայտնի է, որ հայկական կողմից սահմանը պահում են Հայաստանում ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) Սահմանապահ վարչության ռուսաստանցի սահմանապահները: Անվիճելի է, որ հայ-իրանական սահմանի փակումն առաջին հերթին թշնամական ակտ կլինի հենց Հայաստանի հանդեպ, ուժգին հարված ՀՀ ազգային անվտանգության շահերին: Ավելին, դա չի բխում ՀԱՊԿ անդամ պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի և Ղազախստանի արմատական շահերից: Նշենք նաև, որ իրանական կողմը բոլորովին վերջերս՝ 2018 թ. օգոստոսի 12-ին, Աքթաուում (Ղազախստան) ստորագրեց Կասպից ծովի իրավավիճակի մասին կոնվենցիա, որի տակ դրված են նաև Ռուսաստանի ու Ղազախստանի նախագահների ստորագրությունները, որոնք ՀԱՊԿ անդամ են հանդիսանում, ինչը որակապես ավելի բարձր մակարդակի բարձրացրեց գործընկերային հարաբերություններն այդ երկրների միջև: Նշենք նաև, որ ստորագրված կոնվենցիան լիովին չեղարկում է մինչ այդ առկա վիճելի տնտեսական հարցերը, մասնավորապես՝ Ռուսաստանի և Իրանի միջև: Էլ չեմ ասում այն մասին, որ Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան ռազմավարական գործընկերներ են սիրիական կարգավորման հարցում և, ինչպես ս. թ. հոկտեմբերի 23-ին հայտարարեց ՌԴ փոխարտգործնախարար Սերգեյ Կերչինինը Իրանի և Թուրքիայի ԱԳՆ ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի փոխգործակցությունը վճռականորեն փոխել է իրավիճակը Սիրիայում: Այսինքն՝ կա հարցերի լայն շրջանակ, որոնց լուծումը մերձեցնում է այս երկրներին: Բնական է, որ այս պայմաններում իրանա-հայկական սահմանի փակումը բնավ չի բխում Իրանի անվտանգության շահերից, ավելին՝ Ռուսաստանի և Իրանի միջև ռազմավարական, գործընկերային հարաբերություններից ելնելով՝ հայ-իրանական սահմանի նշանակությունը ձեռք է բերում հատուկ կարևորություն: Ուրեմն, ո՞ւմ է ակնարկում Ն. Փաշինյանը՝ սահմանի փակման մասին նման վտանգավոր հայտարարություն հնչեցնելով: Չարժե կասկածել, որ նկատի ունի ԱՄՆ-ը: Չէ՞ որ բնավ պատահական չէ, որ ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնն իր Հայաստան այցի ժամանակ ասել էր, որ Իրանի վրա ԱՄՆ ճնշման սաստկացման ֆոնին հայ-իրանական սահմանը «կարևոր հարց» կդառնա, և «մենք ճնշում կգործադրենք Իրանի վրա, որովհետև կարծում ենք, որ նրանց պահվածքը Մերձավոր Արևելքում և ընդհանրապես աշխարհում կործանարար է և փոփոխություններ է պահանջում» («Ազատություն» ռադիոյի հայկական ծառայությանը 2018 թ. հոկտեմբերի 26-ին Ջ. Բոլթոնի տված հարցազրույցից): Այսինքն, ըստ էության, վարչապետի պաշ-

տոնակատարը հայ հանրությանը նախապատրաստում է Իրանի հետ Հայաստանի սահմանի փակման հնարավորության մասին վտանգավոր և բացահայտ դավաճանական, ազգային անվտանգության տեսակետից անթույլատրելի մտքի ընկալմանը: Ի՞նչ է սա՝ լիակատար անձեռնհասության հերթական դրսևորում, ընդ որում՝ ի վնաս իր սեփական սիրելի անձի, թե՞ հայկական կողմից Իրանի հետ կապված ԱՄՆ մտահոգությունը հասկանալու բազմանշանակ ժեստ, հետոն էլ՝ ազդանշան ամերիկացիներին, թե Հայաստանի հանրային կարծիքն արդեն պատրաստ է գործնականում իրականացնելու Զ. Բոլթոնի մյուս պատգամները նույնպես («Ազատություն» ռադիոյի այդ նույն հարցազրույցից), դիցուք. «Ներկայիս հանգամանքներն ընդգծում են Ղարաբաղյան հակամարտությունում երկու կողմերին բավարարող համաձայնության ձեռքբերման կարևորությունը ... Հենց որ դա տեղի ունենա, անմիջապես կբացվի հայ-ադրբեջանական սահմանը ... Թուրքական սահմանը, ես կարծում եմ, հաստատ կբացվի»: Ակնհայտ է, որ վարչապետի պաշտոնակատարը բնավ պատահական չէ, որ պատասխանելով հայ-թուրքական հարաբերությունների ապագայի վերաբերյալ հարցին՝ անդրադարձավ նաև հայ-իրանական սահմանի հնարավոր փակման թեմային: Միևնույն ժամանակ, ընթերցողներին հիշեցնենք, որ Ն. Փաշինյանի պատասխանը լիովին տեղավորվում է որպես «Օվերթոնի պատուհան» հայտնի հայեցակարգում: Այդ հայեցակարգի (տեխնոլոգիայի) օգնությամբ անգամ ամուր ավանդական հիմնարար արժեքներ (ընտանիքի, ամուսնության, ավագների հանդեպ հարգանքի ինստիտուտը, հավատարմության և երախտագիտության զգացումը հայ ժողովրդի իսկական բարեկամների հանդեպ, նվիրվածությունը Հայ Առաքելական սուրբ եկեղեցուն) ունեցող այնպիսի հասարակության, ինչպիսին հայկականն է, գիտակցության մեջ սերմանվում են հայոց պետականության համար կործանարար գաղափարներ և մտքեր: Ստիպված ենք փաստել, որ ահա արդեն քանի տարի Սորոսի հիմնադրամից և այլ կառույցներից ֆինանսավորվող ավելի քան 80 տարատեսակ հասարակական կազմակերպություններ Հայաստանում իրականացնում են խափանարար աշխատանք: Նրանց գործունեությունն ուղղված է հայոց պետականության խարխլմանը, հայ հասարակության բարոյական սկզբունքների և ավանդական արժեքների քայքայմանն ու լիակատար ոչնչացմանը: Տազնապով պետք է փաստենք, որ այս գործում նրանք արդեն զգալի հաջողությունների են հասել: Անշուշտ, հայոց պետականության քայքայման այդ միտումը, ի դժբախտություն մեզ, կպահպանվի և կզարգանա, թեկուզև այն ծանրակշիռ պատճառով, որ ներկայում սատանայական այդ նախագծի գլխին (գիտակցելով դա, թե ոչ) կանգնած է «ժողովարչապետի» պաշտոնակատար Ն. Փաշինյանը: Արդեն հստակ երևում է, որ հենց նա և նրա զինակիցներն են իրականացնում բարոյական սկզբունքների քայքայմանն ու ոչնչացմանն նախագիծը հայ հասարակությունում: Ընդ որում՝ դա արվում է

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

ԼԳԲՏ հանրույթի գործողություններին անթաքույց սաստարման (ընդ որում՝ հանուն արդարության նշենք, որ երկու կողմից էլ), տոտալիտար ագրեսիվ կրոնական շարժմանը լռելյայն հավանություն տալու ճանապարհով: Շարժում, որը պղծում է մեր կրոնական սրբությունները Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայր իր լկտի ներխուժմամբ՝ «նոր կաթողիկոս նոր Հայաստանին» ստոր կարգախոսների ներքո: Այդ զգվելի գործողությունները լոկ առաջին հայացքից են ուղղված միայն Ամենայն Հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին II-ի դեմ, ով իրավամբ Հայաստանում և Սփյուռքում արժանացել է Շինարար կոչմանը: Նրանց վերջնականատակն է ամեն գնով սասանել հայերի հավատը Հայ Առաքելական սուրբ եկեղեցու՝ հայկական քաղաքակրթության և հայոց պետականության անխախտ երաշխավորի հանդեպ: Ըստ էության, այս դիվոտածները հանդիսանում են «Կյանքի խոսք» տոտալիտար կրոնական աղանդի ավանգարդը, որը Ն. Փաշինյանի ռեժիմի գլխավոր նեցուկներից մեկն է:

Իսկ ինչ վերաբերում է վարչապետի պաշտոնակատարի լավատեսական այն մտքին, թե «Հայաստանը պատրաստ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն առանց նախապայմանների», որը հնչեցրել է Զ. Բոլթոնի «Թուրքական սահմանը, ես կարծում եմ, հաստատ կբացվի» խրոխտ հայտարարությունից հետո, ընթերցողը կարող է միանգամայն իրավացիորեն հարցնել. իսկ ի՞նչ վատ կամ նոր բան կա դրանում: Չէ՞ որ դեռևս 2009 թ. հոկտեմբերի 10-ին Թուրքիայի և Հայաստանի արտաքին գործերի նախարարներ Ահմեթ Դավութօղլուն և Էդվարդ Նալբանդյանը Ցյուրիխում ստորագրեցին «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունը» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունը»: Այո, այդպես է, բայց տարբերությունն այն է, որ Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրման նախօրեին Հայաստանի Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանը հանդես չէր գալիս խղճահարություն և կամազրկություն արտահայտող հրապարակային հայտարարություններով: Առավել ևս՝ փաշինյանականին նման հայտարարություններով, որոնցից արվող եզրահանգումն այն է, որ Հայաստանը կարող է հայտնվել անելանելի վիճակում, քանի որ «Հայ-իրանական սահմանը կարող է փակվել ցանկացած պահի՝ ԱՄՆ քաղաքականության հետևանքով, հայ-վրացական սահմանը կարող է փակվել, ասենք, վատ եղանակի պատճառով»: Ավելին, 2018 թ. մարտի 1-ին, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նիստում ՀՀ Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանն ասաց. «Հայաստանը հնարավոր ամեն բան արել է, որպեսզի գալիք սերունդներին չթողնի մեր հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորման բեռը: Բայց արձանագրությունների ստորագրումից հետո անցած ինը տարվա ընթացքում Անկարան, վերադառնալով իր անհիմն նախապայմաններին, ոչ միայն ոչ մի քայլ չարեց արձանագրությունների վավերացման և ուժի մեջ մտնելու համար, այլև ոչ մի կասկած չթողեց, որ չի էլ

պատրաստվում իրականացնել այդ գործընթացը»: Թուրքիայի ղեկավարներին այսքան կշռադատված և արժանի շշպռանքից հետո տարակուսանք ու ցասում է առաջացնում ՀՀ վարչապետի պաշտոնակատարի անսկզբունքային դիրքորոշումն այս հարցում, որը չարագուշակ իմաստ է ստանում, եթե նկատի ունենանք այն, որ Ջ. Բոլթոնը ադրբեջանա-հայկական և թուրք-հայկական սահմանի բացումը շաղկապեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ: Բայց մենք հո լավ ենք հիշում, որ հենց Ադրբեջանի ճնշման ներքո է (որի արտաքին գործերի նախարարությունն այդ նույն օրը քննադատության ենթարկեց Թուրքիային առանց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրման համար), որ Թուրքիան նահանջեց՝ այդպես էլ չվավերացնելով դրանք իր երկրի Ազգային մեծ ժողովում:

Կարելի է այլ օրինակներ էլ բերել ՀՀ վարչապետի պաշտոնակատարի ելույթներից, որոնք ցայտուն ցուցադրում են այն փաստը, որ Հայաստանում իշխանության ղեկին գտնվողների վարած քաղաքականությունն իրականացվում է Ջոզեֆ (Իոսիֆ) Օվերթոնի (1960 – 2003 թթ.) հայեցակարգին լիովին համապատասխան, որը նրա վախճանից հետո ստացավ «Օվերթոնի պատուհան» անվանումը: Այդ հայեցակարգի համաձայն՝ գոյություն ունի հասարակական ինստիտուտների քայքայման և բարոյապես անթույլատրելի գաղափարների լեգալացման մի ամբողջ տեխնոլոգիա: Միննույն ժամանակ, առանձնապես անելու բան էլ չկա՝ ընդամենը մի քանի քայլ «ուղեղի լվացման» կամ, ավելի ճիշտ՝ հասարակության կառավարման (իսկ իրականում՝ նրա քայքայման) համար, ստի լավ մշակված մեթոդի ներդրման միջոցով «համընդհանուր ընդունվածը» փոխելու ճանապարհով:

Հանելուկներով չխոսելու համար նշենք այդ քայլերից ընդամենը մի քանիսը, որոնք իրականացվում են մեր աչքերի առջև:

Առաջին քայլերի մեջ հարկ է նշել այն տեխնոլոգիան, որի ժամանակ իրականացվում են՝ մեր դեպքում հայկական հասարակությանը միանգամայն խորթ գաղափարներ, դիցուք. տոտալիտար կրոնական աղանդների անպատկառ գործողություններ, ներողամիտ վերաբերմունք ԼԳԲՏ հանրությանի ագրեսիվ գործողություններին ոստիկանության և արդարադատության մարմինների կողմից, ռեժիմին անհարմար քաղաքացիների սեփական արժանապատվության հրապարակային վիրավորում, ասֆալտին փռում՝ առանց որևէ իրավական հիմնավորման, անմեղության կանխավարկածի սկզբունքի ամենուրեք և գրեթե ամենօրյա ոտնահարում:

Քայլերից հաջորդն այն է, որ լայնորեն կիրառվում է ինչ ասես լեգալացնելու տեխնոլոգիան: Օրինակներ՝ որքան ուզես: Վերը ներկայացվածն էլ հենց վկայում է հայտնի տեխնոլոգիայի այս քայլի լայն կիրառման մասին:

Կարելի է, հենվելով կառավարության գործունեության ամենօրյա պրակտիկայի կոնկրետ օրինակների վրա, շարունակել այն փաստերի թվարկումը, որոնք կատարվում են ըստ «Օվերթոնի պատուհանի» հայեցա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կարգի դրույթների, բայց դրա անհրաժեշտությունը չկա: Նշենք միայն, որ «Օվերթոնի պատուհան» տեխնոլոգիան հիմնված է գրեթե յուրաքանչյուր անհատի բազային թուլությունների վրա: Հայաստանի պարագայում նաև պարարտ հող կա, երբ երկրի բնակչության մոտ 30%-ը գտնվում է աղքատության շեմից անդին, իսկ դա անխուսափելիորեն հանգեցրել է այն բանին, որ հայ հասարակության մի մեծ հատված կարիքից կամազուրկ է դարձել: Այս իրողությունների պատճառով հասարակության մի մասն ավելի ընկալունակ է դարձել տարատեսակ մանիպուլյացիաների հանդեպ, որոնք նրանց մեջ արթնացնում են ուժի զգացողություն «երամին պատկանելության մեջ», հեղինակության պատրանք (անպատիժ ներխուժումը ՀՀ Ազգային ժողովի պահպանվող շենք, որը տեղի ունեցավ ս. թ. հոկտեմբերի 2-ին): Ասվածին կարելի է հավելել նաև տոտալիտար աղանդների ներկայացուցիչների անօրինական փողոցային քայլերթերը՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի դեմ անպատկառ կարգախոսների գոռում-գոչումներով և այլն: Կրկնում են, կատարած ապօրինությունների համար անպատժելիությունն այս տեսակի մարդկանց մեջ առաջ է բերում իրենց գործողությունների օրինականության պատրանք, որին հետևում է կեղծ պատկերացումը, թե իրենց կատարած հակահասարակական արարքները ճիշտ են:

Մտահոգիչ են նաև հարևան բարեկամական Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները, որտեղ օրերս ավարտվեցին նախագահի ընտրությունները, որոնք այդպես էլ առաջին փուլում չպարզեցին հաղթողին: Նշենք, որ քվեարկության արդյունքներով առաջին տեղում է կառավարող «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան» կուսակցության թեկնածու Սալոմե Ջուրաբիշվիլին՝ ձայների 38,66%–ով: Երկրորդ տեղում է Վրաստանի նախկին նախագահ Միխայիլ Սաակաշվիլու հիմնած «Միասնական ազգային շարժում» կուսակցության ընդդիմադիր թեկնածուն՝ ընտրողների 37,77% ձայներով: Այս առնչությամբ ընթերցողներին հիշեցնենք, որ Վրաստան կատարած այցի արդյունքներով (նախագահական ընտրությունների նախօրեին) ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնն իր բանակցությունները վրաց ղեկավարների հետ «գերազանց» է գնահատել, իսկ Վրաստանն անվանել է «ԱՄՆ-ի համար ամենաբարձր ռազմավարական շահերի» երկիր և հույս է հայտնել, որ նախագահական ընտրությունները կանցնեն արդար, «լիակատար բաց և թափանցիկ միջավայրում»: Եվ ահա, արդեն հեղինակավոր վրացի փորձագետներն են միակարծիք այն հարցում, որ «Միասնական ազգային շարժումն» ամենամոտ ժամանակներս կնախաձեռնի հանրահավաքներ, բողոքի շարժումներ՝ վրացական խորհրդարանը (որտեղ մեծամասնությունը միլիարդատեր Բիժինա Իվանիշվիլու ստեղծած և գլխավորած «Վրացական երազանքին» է) ցրելու կարգախոսների ներքո: Ամեն բան տանում է նրան, որ իրավիճակը բարեկամական Վրաստանում օրեցօր կթեժանա, բնականաբար, ոչ առանց մատուրո Միխայիլ Սաակաշվիլու



մասնակցության, որը, անշուշտ, դասեր է քաղել ինչպես իր նախկին գործունեությունից, այնպես էլ իր հայ ֆավորիտ Ն. Փաշինյանի գործողություններից, որին վերջին ամիսներին անընդհատ քաջալերել ու խրատներ է տվել: Կանխելով ընթերցողների հնարավոր զարմանքը՝ կապված այն բանի հետ, թե Հայաստանն ինքն ինչքան ասես խնդիրներ ունի, իսկ մենք վերլուծում ենք իրադարձությունները Վրաստանում, սրտակցում բարեկամ վրացի ժողովրդին իր երկրում տեղի ունեցողի համար՝ ասենք, որ դրանք պատմականորեն ստեղծված իրողություններ են, որոնք մենք՝ հայերս, պետք է թանկ գնահատենք: Բավական է հիշել Սպիտակի ողբերգական երկրաշարժը (1988 թ.), երբ հաշված ժամեր անց շտապօգնության տասնյակ մեքենաներ, եղբայրական Վրաստանի քաղաքացիներով լի հարյուրավոր մեքենաներ Հայաստան հասան և անգնահատելի օգնություն ցուցաբերեցին աղետի գոտու բնակիչներին՝ անհապաղ բժշկական օգնությամբ, ավերակների տակից վիրավորներին փրկելով, նրանց տաք հագուստով և սննդով ապահովելով: Նման բանը երբեք չի մոռացվում, և այստեղ, հույս ունեն, որ անգոր են ամեն տեսակ «Օվերթոնի պատուհանները» և հասարակության ու պետության բարոյական հիմքերի քայքայման այլ տեխնոլոգիաները: Եվ ահա, Հայաստանի և Վրաստանի վերջին ամիսների իրադարձությունները չեն կարող իրենց կնիքը չթողնել հարևան Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի վրա, այո, ես չսխալվեցի Ադրբեջան ասելով: Ելնելով այն բանից, որ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը հատուկ նշանակություն ունեն Վաշինգտոնի համար, ինչի մասին ուղղակիորեն և քանիցս հայտարարել է Ջ. Բոլթոնը՝ Իրանի հետ դիմակայության համատեքստում, միանգամայն տեղին կլինի ենթադրել, որ Ադրբեջանում նույնպես լիովին սպասելի է, այսպես կոչված, «թավշյա հեղափոխության» իրականացումը: Սակայն կասկած չի հարուցում, որ ի տարբերություն Հայաստանի ղեկավարության՝ ավիշերոնյան սուլթանը կգնա ցանկացած արյունահեղության: Բայց ոչ թե Բաքվի կամ Գյանջայի փողոցներում, այլ Ղարաբաղյան ձակատում: Իսկ դա, ամերիկյան ստրատեգների կարծիքով, կդրդի Ն. Փաշինյանին դրսևորելու իր «առաջնորդական հատկանիշները» և ստորագրելու Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ հաշտության համաձայնագիր՝ «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով, որը հնչեցրեց իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում ավարտած ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզը և որն արժանացավ Իլիամ Ալիևի ու Ջոն Բոլթոնի հավանությանը:

Բայց ճիշտ չի լինի վերջին ամիսներին ծավալվող իրադարձությունները դիտարկել ԱՄՆ գլոբալ քաղաքականությունից կտրված: Բավական է նշել Ջ. Բոլթոնի մեփիջներից մեկն Իրանի մասով: Նորից ու նորից հիշեցնենք այդ մասին. «Մենք չենք ուզում վնաս հասցնել մեր բարեկամներին (Իրանի վրա առավելագույն ճնշում գործադրելու – Ա. Գ.) գործընթացում: Ուստի ես կարծում եմ, որ Հայաստանի կառավարության և ԱՄՆ-ի միջև

## Ա. ԳԵՂԱՍՅԱՆ

խոսակցությունը շատ կարևոր կլինի: Բայց, ինչպես ես ասացի վարչապետին, մենք այդ պատժամիջոցները կկիրառենք շատ եռանդուն (հավանաբար, նկատի էր առնվում Հայաստանին ստիպելը՝ փակել Իրանի հետ սահմանը – Ա. Գ.): Սա Բարաք Օբամայի վարչակազմը չէ»: Վստահ եմ, որ այս մեսիջը հասցեագրված է ոչ միայն և ոչ այնքան Հայաստանին, որքան Ռուսաստանին, ինչպես նաև ՀԱՊԿ անդամ պետություններին: Հայ-իրանական սահմանի, ինչպես նաև հայ-վրացական սահմանի փակումը Հայաստանը կնետի լիակատար շրջափակման մեջ: Անդրովկիանոսյան ստրատեգների հաշվարկը որքան ցինիկ, նույնքան էլ պարզ է. շրջափակումը Հայաստանի տնտեսությունը կզցի կոլապսի վիճակի մեջ, կտրուկ կվաթարացնի քաղաքացիների առանց այդ էլ ծանր սոցիալական դրությունը՝ Հայաստանի բոլոր դժբախտությունների մեղավորի զուգընթաց «վերհանմամբ», որը, կասկած չի հարուցում, քաղաքականության կեղծ ստրատեգների կողմից նշվելու է Ռուսաստանը:

Չէ՞ որ վերջին կես տարվա փորձը ցույց տվեց, որ բթացման, «ուղեղների լվացման» տեխնոլոգիաները, հանրային կարծիքի մանիպուլացիաներն անխափան աշխատում են «նոր Հայաստանում»: Իհարկե, հոգուտ այս պնդման անայլընտրանքայնության կարելի է տասնյակ հիմնավորումներ բերել մեր կյանքից, ավելին՝ դա դարձնել առանձին վերլուծության առարկա: Բայց կարծում եմ, որ վերը ներկայացվածը համոզիչ կերպով վկայում է անդրովկիանոսյան ստրատեգների իսկական նպատակի մասին՝ պատերազմ սանձազերծելով Լեռնային Ղարաբաղում՝ խփել Ռուսաստանին: Իսկ դա անխուսափելիորեն կգժտեցնի Ռուսաստանին և Թուրքիային ու կվերաճի գլոբալ աղետի: Իսկ նման սցենարի հավանականությունը մեծ է, թեկուզև այն պատճառով, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն անրջում է Օսմանյան կայսրության կորսված վեհությունը վերադարձնելու մասին: Մի խոսքով, եթե Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական դասը խորաթափանցություն չցուցաբերի, ապա կդառնա Հարավ-կովկասյան տարածաշրջանի համար պատրաստվող ավերիչ աղետի ոչ միայն վկան, այլև մեղավորը:

*Հետգրության փոխարեն:* Ուշադիր հետևելով Հայաստանում և նրա շուրջ վերջին կես տարում տեղի ունեցող իրադարձությունները՝ առաջինը, ինչի մասին մտածում եմ տազնապով, այն հարցի պատասխանի որոնումն է, թե՞ արդյո՞ք ճիշտ եմ ես, որպես ՀՀ Ազգային ժողովի հինգ գումարումների պատգամավոր, Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու (2003 թ.), որին իր ձայնն էր տվել ընտրողների 17,6%-ը, կառուցել իմ քաղաքականությունը երկրիս ու ժողովրդիս համար այս բախտորոշ ժամանակաշրջանում: Այո, ես քանիցս հանդես եմ եկել պետական հեղաշրջման պարագլուխների հասցեին քննադատական հողվածներով, որն իրենք և իրենց քաղաքական ուղեվարներն անվանում են «թավշյա հեղափո-

խութուն»։ Կարծում եմ, որ իմ հողվածներում համոզիչ ապացուցողական հիմքի վրա ցույց եմ տվել Հայաստանին արտասահմանից պարտադրված «թավշյա հեղափոխության» ողջ վտանգավորությունը։ «Հեղափոխություն», որը կատարվեց ժողովրդավարության խորացման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, Ղարաբաղյան հակամարտության արդարացի կարգավորման և տարատեսակ այլ բարեհունչ պատրվակների ներքո։ Ավելին, կոնկրետ օրինակներով ցույց եմ տվել նորահայտ «հեղափոխականների» կարգախոսների ողջ սնանկությունը։ Սակայն, չնայած այս ամենին՝ իմ գիտակցության մեջ արմատանում է միտքը, թե մինչև վերջ չեմ կատարել պարտքս Հայրենիքի հանդեպ։ Որպեսզի ասածս շատ պաթետիկ չհնչի և «ժողվարչապետի» պաշտոնակատարի ոճից բանագողություն չհիշեցնի՝ բացատրեմ, թե ինչի մասին է խոսքը։ Դեռևս ս. թ. մայիսի առաջին օրերին, վերլուծելով Հայաստանում ստեղծված ռեալ իրականությունը, երբ տասնյակ հազարավոր մարդիկ Երևանում, չղադարող հանրահավաքների ժամանակ պահանջում էին վարչապետ ընտրել Ն. Փաշինյանին, Հայաստանի Հանրապետական կուսակցության (այսուհետ՝ ՀՀԿ) գերագույն մարմնի նիստում ես առաջարկեցի, որպեսզի ՀՀ ԱԺ առաջիկա հատուկ նիստում ՀՀԿ-ն Հայաստանի վարչապետի իր թեկնածուն ներկայացնի։ Փառք Աստծո, ՀՀԿ կադրային ռեզերվում արժանի թեկնածուների պակաս չկա, ովքեր իրենց պրոֆեսիոնալ հմտություններով զգալիորեն գերազանցում են ժողովրդի «թեկնածուին»։ Ավելին, իմանալով տասնյակ հազարավոր ցուցարարներին համակած թեժ կրքերի մասին՝ առաջադրվելու նաև իմ անձնական պատրաստակամությունը հայտնեցի։ Ավաղ, իմ առաջարկությունն աջակցություն չստացավ՝ ինչ-ինչ հանգամանքների բերումով, ինչն առանձին, հույս ունեմ, շատ հետաքրքիր ու կարևոր վերլուծության թեմա է։ Կարևոր՝ այն առումով, որպեսզի հետագա գործողություններում նորից նույն փոցխին չկանգնենք։ Հետո ավելի հետաքրքիր է։ Ն. Փաշինյանը, որն անայլընտրանքային հիման վրա «ընտրվեց» (փողոցի շանտաժի և ճնշման ներքո) ՀՀ վարչապետ, ըստ երևույթին, հավատալով, որ ինքն անփոխարինելի է, իհարկե՝ ոչ առանց իր քաղաքական ուղեվարների հուշման, արդեն ս. թ. հոկտեմբերին նախաձեռնեց «հրաժարական եմ տալիս» անունը կրող ֆարսը։ Սույն արարմունքի գաղափարն այն է, որպեսզի վարչապետի պաշտոնին չընտրվելով հասնի խորհրդարանը ցրելուն՝ միևնույն ժամանակ իր համար լիովին պահպանելով գործադիր իշխանության ողջ լիազորությունը, բայց միայն պաշտոնակատար մակդիրով։ Եվ ահա այս անգամ էլ, ոչ թե նրա համար, որ երազում էի քաղաքական կամիկաձեի դափնիները նվաճել, ես նորից բարձրացրի վարչապետի պաշտոնին ՀՀԿ-ի կողմից իր (բնավ պարտադիր չէր անպայման իմ) թեկնածուի առաջադրման անհրաժեշտության հարցը՝ միևնույն ժամանակ հայտարարելով նաև իմ անձնական պատրաստակամության մասին։ Իմ հետապնդած նպատակը, կարծում եմ, չափից ավելի պարզ էր. ՀՀ ԱԺ հատուկ նիստում ներկայաց-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

նելով իմ ծրագիրը՝ Ն. Փաշինյանի անգամ ամենակողմնակալ զինակիցը հոգու խորքում կգիտակցեր դրա որակապես շատ ավելի բարձր պրոֆեսիոնալ, գիտականորեն հիմնավորված մակարդակը: Էլ չեմ ասում պատգամավորների հնարավոր հարցերին պատասխանների հիմնավորվածության մասին: Այս մասին գրում եմ վստահաբար, քանի որ վերջին կես տարվա իմ հոդվածները, որոնք հրապարակվել են ռուսաստանյան REGNUM տեղեկատվական գործակալության կողմից (այստեղ չեմ կարող իմ խորին երախտագիտությունը չհայտնել գլխավոր խմբագիր, հայրենասեր-դերժավնիկ Մոդեստ Ալեքսեևիչ Կոլերովին), շոշափել են տնտեսության և աշխարհաքաղաքականության ամենասուր հարցերը, դրանցում հնչել է կառուցողական քննադատություն Ն. Փաշինյանի կառավարության հասցեին, իսկ դրանց հրապարակումից հետո այդպես էլ չեն վիճարկվել նրանց կողմից: Կրկնում եմ, հոդվածներում հասցեական քննադատություն է հնչել ինչպես Ն. Փաշինյանի, այնպես էլ նրա մերձավոր շրջապատի գործունեության մասին: Իսկ դա իր ամբողջության մեջ, անշուշտ, հայտնի իմաստով կզգոնացնեն «Ժողովարչապետի» երկրպագուների՝ դեռևս էյֆորիայի մեջ գտնվող որոշակի մասին, էլ չեմ ասում հարյուր հազարավոր մեր այն քաղաքացիների մասին, ովքեր, հավանաբար, ստեղծված իրավիճակի անելանելիության (ըստ իրենց) պատճառով լրիվ ինքնամեկուսացվել են երկրի հասարակական կյանքից: Մի խոսքով՝ իմ առաջարկը հերթական անգամ աջակցություն չստացավ ՀՀԿ խմբակցության գործընկերներին կողմից: Որպեսզի ընթերցողները կեղծ տպավորություն չստանան, թե հող եմ նախապատրաստում մի ինչ-որ անհասկանալի և ՀՀԿ-ի կողմից նեղացվածի պատմուճան հագնելու համար, միանշանակ ասեմ՝ ոչ, ուղիղ հակառակը: Չէ՞ որ ՀՀ ԱԺ ամբիոնից կարելի կլիներ ասել նաև հարգանքի արժանի, հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում, բազմաթիվ գործողությունների մասին, որոնք վերջին տարիներին իրագործվել են ՀՀԿ ղեկավարությամբ: Պարզ է նաև մեկ այլ բան, որ ՀՀ վարչապետի պաշտոնին իրական, այլընտրանքային թեկնածուի, ընդ որում՝ ոչ ֆորմալ առաջադրումը կզինաթափեր առանձին քաղաքական գործիչների, դավադրության տեսության կողմնակիցների, որոնք չափից ավելի են ակտիվացել վերջին ժամանակներս՝ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները գնահատելով որպես մի ինչ-որ նախապես պլանավորված սցենար՝ նախապես պայմանավորված վերջաբանով:

Ի դեպ, այստեղ տեղին է հիշել Նոր Կտակարանի անմահ տողերը. «Մի դատեք, որ չդատվեք: Որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք, և ինչ չափով որ չափում եք, նրանով կչափվի ձեզ» (Ավետարան ըստ Մատթեոսի, 7.1,2):

Հ.Գ. Մեր Ուսուցչի՝ Հիսուս Քրիստոսի այս նախազգուշացումները չպետք է մոռանան տարատեսակ քաղաքական պատեհապաշտները, ով-

քեր այս օրերին իսկական հոգեբանական հալածանք են սկսել առողջապահության տաղանդավոր կազմակերպիչ, Հայաստանի և Արցախի Հանրապետության հայրենասեր զավակ, պրոֆեսոր Արա Միքայելի Մինասյանի ու նրա անվիճելիորեն տաղանդավոր որդու՝ Միքայել Արայի Մինասյանի դեմ, ով մինչև երեկ Վատիկանում Հայաստանի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպանն էր:

Չէի ցանկանա հողվածս ավարտել տխուր նոտայով, թեև լավատեսության համար, ավաղ, հիմքերը չափից ավելի քիչ են: Բայց, թերևս, կա մեծ հույս՝ կապված «Լազարյան ակումբի», ինտելեկտուալների, ամենաբարձր որակավորմամբ քաղաքագետների, ակումբի հիմնադիր հայրերի հետ, որոնք, անկասկած, Հայաստանում ստեղծված չափազանց բարդ իրավիճակի իրենց խոր և հիմնավորված վերլուծությամբ կօգնեն հայ ժողովրդին դուրս գալ դեպի Տաճար տանող փրկարար ճանապարհ, որը կուղղորդի դեպի Աստված:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Հ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ



ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍ ԵՆՔ ԱՊԱՑՈՒՑԵԼ, ՈՐ ՉԻ ԿԱՐԵԼԻ  
ԴՆԵԼ ՈՒ ՍԵՎԱՑՆԵԼ ՀՍԿԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ,  
ՈՐԸ ԿԱՏԱՐԿԵԼ Է ՀՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ. Ա. ԳԵՂԱՄՅԱՆԸ՝  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առավել քան պատրաստական ենք հենց Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) հետ մեր հանրությանն ապացուցել, որ չի կարելի հսկայական աշխատանքը, որը կատարվել է ՀՀԿ-ի, հատկապես՝ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից, դնել ու սևացնել՝ անուրը դնելով «հեղափոխություն»:

Այս մասին Tert.am-ի հետ զրույցում ասաց «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Արտաշես Գեղամյանը՝ պատասխանելով հարցին, թե պատրաստվում է արդյոք առաջադրվել արտահերթ խորհրդարանական ընտրություններին:

«Ես 2008 թվականից իմ գլխավորած կուսակցության հետ դաշնակցային կապերի մեջ եմ ՀՀԿ-ի հետ, սերտորեն համագործակցում ենք, և երկու անգամ անընդմեջ պատգամավոր եմ դարձել շնորհիվ այն բանի, որ անդամագրված եմ եղել ՀՀԿ-ի միասնական ընտրացուցակին: Կարծում եմ, որ շատ ազնվորեն աշխատել եմ», – ասաց նա:

Ինչ վերաբերում է հարցին, թե ցուցակի որ հորիզոնականում է իրեն տեսնում, Արտաշես Գեղամյանը պատասխանեց. «Տեսնում եմ ինձ այն հորիզոնականում, որում տեսնում է ինձ Սերժ Սարգսյանը՝ իմանալով մի պարզ բան, որ հատկապես ընդդիմադիր քաղաքական միջավայրն ինձ շատ ավելի հոգեհարազատ է, քան իշխանականը: Դա արդեն բնավորության գիծ է, չհաշված, որ նաև կենսագրական է»:

Ա. Գեղամյանը հայտարարեց, որ բացարձակապես ոչ մի խնդիր չի տեսնում նաև ռեյտինգային ընտրակարգով առաջադրվելու հետ կապված, որոշողը ՀՀԿ-ն է լինելու. պատգամավորը հավելեց, որ իր սրտով կլինի Երևանի Դավթաշեն համայնքը:

Ա. Գեղամյանն ասաց, որ շատ քիչ ժամանակ կանցնի, և ՀՀԿ-ի պատմական դրական դերակատարումն ակնհայտ կդառնա: «Այս փոթորկահույզ աշխարհում ՀՀԿ-ի նախագահի շնորհքն էր, որ Հայաստանի Հանրապետությունը, դառնալով ԵԱՏՄ անդամ, ՀԱՊԿ անդամ, կարողացավ Եվրամիության հետ կնքել համապարփակ և ընդլայնված համագործակցության

համաձայնագիր, և մենք ունեցանք ժամանակակից պատմության մեջ եզակի դեպք, երբ իրար, պայմանական ասած, հակադիր ճամբարներում՝ ԵԱՏՄ-ում և ԵՄ-ում, կնքվեց նման համագործակցություն համաձայնագիր», – ասաց նա և նշեց, որ այս նվաճումը մոռացվել է: «Մոռանում են նաև, որ Սերժ Սարգսյանն իր ելույթներում ասել է, որ ՀՀ ապագան ներառական էկոնոմիկայի հիման վրա պետք է հիմնված լինի, այսինքն՝ ուրվագծվել էր այն զարգացումը, որը թույլ չտվեցին ի կատար ածել ոչ թե Նիկոլ Փաշինյանը, այլ այն ուժերը, որոնք կանգնած էին հիշատակածս անձի հետևում: Սա պետք է հասցնել ընտրողին», – ընդգծեց Ա. Գեղամյանը: Ապա հավելեց, որ նկատի ունի այն պետություններին, որոնք 80-ից ավելի հասարակական կազմակերպություններ էին ֆինանսավորում ու այժմ էլ ֆինանսավորում են և «երբ նրանք օվկիանոսից անդին հրահանգը ստացան, կանգնեցին հրապարակում»:

Ա.Գեղամյանը նշեց, որ այս ամենի մասին պատրաստ է անկաշկանդ խոսել, քանի որ իրեն չեն կարող կոռուպցիայի, խարդախությունների մեջ մեղադրել. «Մի բան կարող եմ 100 տոկոսով ասել, որ այն վերլուծական-քննադատական խոսքը, որ կարող եմ ես ասել և պաշտպանված լինել իմ կենսագրությամբ, ոչ մի խարդավանք, անազնիվ բան դեմս չեն կարող դնել, դրա համար լեզուս երկար է լինելու, ուղեղային հնարավորություններս էլ սակավ չեն»:

Ի դեպ, պատգամավորն ասաց, որ «գարշում է» մարդկային այն տեսակից, ովքեր դուրս են գալիս քաղաքական թիմից ու դրանից հետո ցեխ շարտում նախկին գործընկերների վրա և գտնում է, որ դա վտանգավոր տեսակ է: «Աստված մի արասցե, եթե թուրքն ու ազերին հանկարծ մի բան սկսեն, չլինի՞ քաղաքական ուժ, որի ղեկավարը Արցախի հերոս է և սկզբից մինչև վերջ այդ ամենի անատոմիան գիտի», – իր խոսքն ավարտեց Ա.Գեղամյանը:

ԼԻԱՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

## ГОТОВЫ ДОКАЗАТЬ, ЧТО НЕЛЬЗЯ ПРОСТО ВЗЯТЬ И ОЧЕРНИТЬ ТУ КОЛОССАЛЬНУЮ РАБОТУ, КОТОРУЮ ПРОДЕЛАЛА РПА: АРТАШЕС ГЕГАМЯН ОБ УЧАСТИИ В ВЫБОРАХ

«Мы более чем готовы именно вместе с Республиканской партией Армении (РПА) доказать нашему обществу, что ту колоссальную работу, которую проделала РПА – особенно Серж Саргсян, нельзя просто так взять и очернить, и все это назвать «революцией».

Об этом в беседе с Tert.am сказал председатель партии «Национальное Единение», депутат парламента от Республиканской партии Армении Арташес Гегамян, отвечая на вопрос, собирается ли он баллотироваться на предстоящих парламентских выборах.

«С 2008 года я вместе с возглавляемой мною партией нахожусь в союзнических отношениях с РПА. Мы тесно сотрудничаем, и я дважды подряд избирался депутатом благодаря тому, что был в едином избирательном списке РПА. Полагаю, я работал предельно честно», – сказал он.

Что касается того, какую строчку списка он предполагает занять, Арташес Гегамян ответил: «Я вижу себя на той строчке, на какой видит меня Серж Саргсян, который отлично знает простую вещь – как раз оппозиционная политическая среда близка моей душе более, чем властная. Это уже черта моего характера, не говоря уже о моей биографии».

Арташес Гегамян заявил, что не видит проблемы и в том, чтобы выдвигаться по рейтинговой системе, но это уже решать Республиканской партии. При этом он добавил, что ему больше по душе ереванская община Давидашен.

Гегамян сказал также, что пройдет совсем немного времени, и позитивная историческая роль РПА станет очевидна всем. «В этом бурлящем мире именно благодаря таланту лидера РПА Армения, вступив и ЕАЭС и ОДКБ, сумела заключить с Евросоюзом Соглашение о всеобъемлющем и расширенном партнерстве с ЕС. И мы стали свидетелями того уникального случая в современной новейшей истории, когда между двумя, условно говоря, противоположными лагерями – ЕАЭС и ЕС – стало возможным заключение подобного соглашения и налаживание сотрудничества», –



сказал Гегамян, подчеркнув, что это достижение почему-то ныне предано забвению. «Забыли также, что в своих выступлениях Серж Саргсян неизменно утверждал, что будущее Армении должно зиждиться на фундаменте инклюзивной экономики. Иными словами, он обрисовал контуры тех процессов, которым не дал реализоваться не Никол Пашинян, а те силы, которые стояли за упомянутой фигурой. И это необходимо донести до избирателя», – сказал он, отметив, что имеет в виду те государства, которые финансировали и финансируют 80 общественных организаций, и «когда они получили указания из-за океана, по указке собрались на площади».

Он отметил, что готов говорить об этом свободно, поскольку его уж никак не смогут обвинить ни в коррупции, ни в интригах. «Одно могу сказать со стопроцентной уверенностью: в ответ на ту аналитическую критику, которую я могу высказать и при этом быть надежно защищен собственной биографией, мне не могут предъявить ничего нечестного, никакой интриги, поэтому я ничем не буду скован, а уж в моих умственных способностях недостатка не наблюдается», – сказал Гегамян.

Кстати, он еще сказал, что его «тошнит» от того типа людей, которые просто выходят из политической команды и закидывают других грязью, считая, что это весьма опасная категория. «Не приведи Господь, если вдруг турки и азеры предпримут что-нибудь, в этом случае должна быть в парламенте сила, во главе которой стоит Герой Арцаха и кто знает альфу и омегу всего этого, анатомию всей этой ситуации», – завершил свои мысли Арташес Гегамян.

ЛИАНА АРАКЕЛЯН

**ВЫСТУПЛЕНИЕ АРТАШЕСА ГЕГАМЯНА НА  
ЗАСЕДАНИИ МЕЖДУНАРОДНОГО СЕКРЕТАРИАТА  
МЕЖПАРЛАМЕНТСКОЙ АССАМБЛЕИ ПРАВОСЛАВИЯ  
(16 НОЯБРЯ 2018 Г., КАИР)**

Уважаемые коллеги, мы являемся свидетелями того, что в современном мире на государственном уровне кому ни лень вмешиваются в межцерковные дела, в дела, вершителем и судьей которых является Всевышний. Слушая выступление Константина Федоровича Затулина, я невольно вспомнил роман бессмертного Эрнеста Хемингуэя «По ком звонит колокол», а скорее всего эпиграф к этому роману. Стихотворение, автором которого является Джон Донн, великий английский поэт XVII века и настоятель собора Святого Павла в Лондоне. Вот что он написал в своем стихотворении «По ком звонит колокол»: «Ни один человек не является островом, сам по себе, каждый человек есть часть Материка, часть Суши; и если волной снесёт в море береговой Утёс, меньше станет Европа ... Смерть каждого Человека умяляет и меня, ибо я един со всем Человечеством, а потому не спрашивай никогда, по ком звонит Колокол: он звонит по Тебе». Я не стану раскрывать глубокий смысл каждой строчки этого стихотворения, а процитирую последние строки «... не спрашивай никогда, по ком звонит Колокол: он звонит по Тебе».

В случае с Русской Православной Церковью мы имеем как раз тот случай, о котором сейчас предупреждал Генеральный секретарь Межпарламентской Ассамблеи Православия (далее – МАП) господин Андреас Михайлидис, когда особо подчеркнул, что МАП является политической организацией, а политическая организация не вправе вмешиваться во внутрицерковные дела. Так вот мы в недавних действиях Соединенных Штатов Америки имеем наглядный пример грубого вмешательства политики, в данном случае со стороны политиков американского государства, в межцерковные дела Русской Православной и Украинской Православной Церквей на стороне последней. У вас может возникнуть естественный вопрос – а при чем тут последователь Армянской Апостольской Церкви, который столь ревностно печется о единстве Русской Православной Церкви. Весь вопрос заключается в том, что сегодня в Армении мы

являемся свидетелями аналогичного грубого политического вмешательства со стороны внешних сил в дела Армянской Апостольской Церкви. Опять-таки со стороны вышеназванной страны. Достаточно сказать, что в Армении, в государстве, где Армянская Апостольская Церковь, которая на протяжении двадцати столетий, из поколения в поколение пользовалась непререкаемым авторитетом у всего армянского народа, да и всей христианской паствы Малой Азии, сегодня подвергается нападкам со стороны тоталитарной религиозной секты под мудрёным названием «Слово жизни», щедро финансируемой Фондом Сороса, так называемого открытого общества. Да, Межпарламентская Ассамблея Православия, будучи политической организацией, должна обязательно дать свою политическую оценку не только и не столько действиям разного рода раскольников, представителям тоталитарных сект, а поводырям, неприкрыто поддерживающим их. Речь об известном государстве, щедро финансирующем религиозные секты, которое всей своей деятельностью старается расколоть Армянскую Апостольскую Церковь и тем самым расшатать армянскую государственность.

Уважаемые коллеги, ни для кого не является секретом, что современная Россия под руководством Владимира Владимировича Путина является полюсом, утверждающим справедливость в формирующемся новом многополярном мире. И все, что делается против России и вокруг нее, в частности, в Армении, призвано служить одной цели – по периметру границ Российской Федерации расшатать государственность стран-союзниц России. Поэтому сегодня мы должны заявить о том, что МАП, являясь политической организацией, будет оберегать церковь от наносного внешнего вмешательства и политического давления, нацеленного на инициирование раскола внутри традиционных церквей, в числе которых, конечно, Русская Православная Церковь, которая является надеждой и опорой Православия во всем мире. Да не будет это преувеличением, ибо я это утверждаю, являясь ревностным последователем Армянской Апостольской Церкви.

Спасибо за внимание.

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՈՒՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ  
(16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ., ԿԱՀԻՐԵ)

Հարգելի գործընկերներ, այսօր մենք վկաներն ենք այն երևույթի, երբ արդի աշխարհում պետական մակարդակով ով ասես չի միջամտում միջ-եկեղեցական գործերին, գործեր, որոնց արարիչն ու դատավորը Բարձրյալն է: Լսելով Կոնստանտին Ֆյոդորովիչ Ջատուլինի ելույթը՝ ակամա մտաբե-րեցի անմահ Էռնեստ Հեմինգուեյի «Ում համար է դողանջում զանգը» վեպը, ավելի ճիշտ՝ վեպի բնաբանը: Բնաբան, որի հեղինակն է XVII դ. անգլիացի մեծ բանաստեղծ և Լոնդոնի Սուրբ Պողոս տաճարի ավագ քահանա Ջոն Դոնը: Եվ ահա թե ինչ է նա գրել «Ում համար է դողանջում զանգը» բա-նաստեղծությունում. «Ոչ մի մարդ մեկուսացած, ինքն իր համար ապրող կղզի չէ: Յուրաքանչյուր մարդ մի կտորն է Մայրցամաքի, մի մասն ամբողջ Ցամաքի: Եվ եթե ծովը քշի-տանի մերձափնյա ժայռը, Եվրոպան կփոք-րանա, ինչպես կփոքրանար, եթե տաներ մի հրվանդան ... Յուրաքանչյուր Մարդու մահը փոքրացնում է նաև ինձ, որովհետև իմ մեջ ամբողջ Մարդ-կությունն է: Եվ դրա համար էլ երբեք մի՛ հարցրու, թե ում մահն է գուժում Ջանգը: Քո՛ մահն է գուժում»: Չեն վերլուծի այս բանաստեղծության յուրա-քանչյուր տողի խոր իմաստը, այլ նորից կկրկեն մերջին տողերը. «Եվ դրա համար էլ երբեք մի՛ հարցրու, թե ում մահն է գուժում Ջանգը: Քո՛ մահն է գուժում»:

Ռուս Ուղղափառ եկեղեցու պարագայում գործ ունենք հենց այն դեպքի հետ, որի մասին հենց նոր նախազգուշացրեց Ուղղափառության միջ-խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ ՈւՄՎ) գլխավոր քարտուղար պարոն Անդրեաս Միխայլիդիսը, երբ առանձնապես ընդգծեց, որ ՈւՄՎ-ն քաղաքական կազմակերպություն է, իսկ քաղաքական կազմակերպությունն իրավունք չունի միջամտելու ներեկեղեցական գործերին: Եվ ահա, Ամե-րիկայի Միացյալ Նահանգների վերջին գործողություններում մենք տեսնում ենք քաղաքականության, սույն պարագայում՝ ամերիկյան պետության քա-ղաքական գործիչների կոպիտ միջամտության ցայտուն օրինակ Ռուս Ուղղափառ և Ուկրաինական Ուղղափառ եկեղեցիների միջեկեղեցական գործերին՝ հօգուտ վերջինի: Չեր մեջ կարող է բնական հարց ծագել. իսկ Հայ

Առաքելական եկեղեցու հավատացյալի ի՞նչ գործն է սա, որ այսքան նախանձախնդիր հոգում է Ռուս Ուղղափառ եկեղեցու միասնության մասին: Եվ պիտի ասեմ, որ ամբողջ հարցն այն է, որ Հայաստանում այսօր մենք վկաներն ենք նման կոպիտ քաղաքական միջամտության Հայ Առաքելական եկեղեցու գործերին արտաքին ուժերի կողմից: Նորից՝ վերոնշյալ երկրի կողմից: Բավական է ասել, որ Հայաստանում, մի պետություն, որտեղ Հայ Առաքելական եկեղեցին, որը քսան հարյուրամյակ, սերնդեսերունդ վայելել է անբեկանելի հեղինակություն հայ ժողովրդի և Փոքր Ասիայի ողջ քրիստոնյա հոտի կողմից, այսօր ահա այդ եկեղեցին ենթարկվում է հարձակումների, այսպես կոչված, բաց հասարակության «Կյանքի խոսք» անվանյալ տոտալիտար կրոնական աղանդի կողմից, որը շռայլորեն ֆինանսավորվում է Սորոսի հիմնադրամից: Այո, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովը՝ քաղաքական կազմակերպություն լինելով, պետք է անպայման տա իր քաղաքական գնահատականը ոչ միայն և ոչ այնքան տարատեսակ հերձվածողներին, տոտալիտար աղանդների ներկայացուցիչներին, որքան նրանց անթաքույց աջակցող ուղեվարներին: Խոսքը հայտնի պետության մասին է, որն իր կողմից ֆինանսավորվող կրոնական աղանդների գործունեությամբ ջանում է Հայ Առաքելական եկեղեցին պառակտելով սասանել հայկական պետականությունը:

Հարգելի գործընկերներ՝ ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ արդի Ռուսաստանը՝ Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի ղեկավարությամբ, այն բևեռն է, որն արդարություն է հաստատում ձևավորվող նոր բազմաբևեռ աշխարհում: Եվ այն ամենը, ինչ կատարվում է Ռուսաստանի դեմ ու նրա շուրջ, մասնավորապես՝ Հայաստանում, կոչված է ծառայելու մի նպատակի՝ Ռուսաստանի Դաշնության սահմանների պարագծով սասանել Ռուսաստանի դաշնակից երկրների պետականությունը: Ուստի, մենք այսօր պետք է հայտարարենք այն մասին, որ ՄԱՊ-ը քաղաքական կազմակերպություն լինելով՝ պետք է պաշտպանի եկեղեցին օտարամուտ՝ արտաքին միջամտությունից և քաղաքական ճնշումից՝ ուղղված ավանդական եկեղեցիների ներսում պառակտում մտցնելուն, եկեղեցիներ, որոնց թվում է, իհարկե, Ռուս Ուղղափառ եկեղեցին, որն Ուղղափառության հույսն ու նեցուկն է ողջ աշխարհում: Եվ թող սա չափազանցություն չթվա, քանի որ սա ես ասում եմ՝ հանդիսանալով Հայ Առաքելական եկեղեցու հավատավոր հետևորդը:

Շնորհակալություն ուշադրության համար:

## АРТАШЕС ГЕГАМЯН: ПРИШЛО ВРЕМЯ ПРИНИМАТЬ НОВОЕ БЕЛОВЕЖСКОЕ СОГЛАШЕНИЕ

### ПОЛНОСТЬЮ ПРОТИВОПОЛОЖНОЕ ПРЕДЫДУЩЕМУ

22 ноября 2018 года по инициативе председателя Комитета Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по делам СНГ, евразийской интеграции и связям с соотечественниками Леонида Ивановича Калашникова в Государственной Думе состоялась Международная конференция «Роль взаимодействия фракций политических партий и блоков в межпарламентском сотрудничестве стран СНГ». Фракция Республиканской партии Армении Национального Собрания Республики Армения доверила мне, Арташесу Гегамяну, принять участие в работе конференции и выступить по повестке дня, что я и сделал с высокой ответственностью.

Осмысливая итоги конференции, отмечу, что ее созыв и проведение, бесспорно, были востребованы. Не буду отдельно останавливаться на весьма и весьма содержательных выступлениях руководителей всех фракций Государственной Думы, это тема отдельного анализа, однако, вне всякого сомнения, они в своей совокупности раскрыли всё многообразие и сложность существующих реалий международной жизни, а самое главное – убедительно показали, что действия российских парламентариев нацелены на созидание, на оказание всемерной помощи политическому руководству страны в утверждении нового, справедливого мирового порядка при полном осознании всей серьезности угроз, исходящих от США и НАТО, препятствующих установлению многополярного миропорядка. Однако в данной статье хотелось бы поделиться моим видением динамики развития событий в Республике Армения, Арцахской Республике и регионе Южного Кавказа в целом, что и было стержнем моего выступления на конференции. Чтобы сделать объективный анализ создавшегося положения в регионе Южного Кавказа, вокруг Исламской Республики Иран и Сирии, думается, будет вполне закономерно изначально подчеркнуть, что России и ее военно-стратегическому союзнику, Армении, уже не первый год объявлена гибридная война. При этом подчеркну, что россий-

ские коллеги из Государственной Думы прекрасно осведомлены об этом, более того, в ежедневном режиме разоблачают и противодействуют разного рода провокациям и политическим диверсиям, классическими примерами которых явились: надуманная история, а на самом деле чистейшая провокация с отравлением экс-полковника ГРУ Скрипаля и его дочери; навязанная России, аж с 2015 года после всенародного референдума в Крыму, санкционная экономическая война; односторонний выход США из Договора о ракетах средней и малой дальности. При этом отметим, что о подлинных причинах развязывания гибридной войны со стороны США и НАТО весьма доходчиво (прежде всего для самих же организаторов) объяснил министр иностранных дел Российской Федерации Сергей Викторович Лавров в своем выступлении 11 августа 2017 года на встрече с участниками Всероссийского образовательного молодежного форума «Территория смыслов» на Клязьме.

«Чтобы обосновать свое желание сохранить миропорядок, который был бы западнцентричным, выдвигаются и такие теории, как «многополярность – это путь к хаосу», якобы много игроков никогда не смогут договориться между собой, – отметил в своем выступлении на форуме Сергей Лавров. – Когда где-то в далеких регионах происходит постоянная турбулентность, наверное, страны, которые соседствуют с районами кризисов, больше заняты успокоением этой ситуации и меньше заняты укреплением собственной экономики и своих возможностей на мировой арене».

И если с этих, на мой взгляд, весьма обоснованных позиций проанализировать положение, складывающееся в Республике Армения и в регионе Южного Кавказа, то уже на этом этапе можно сделать вывод о том, что в случае непринятия действенных мер по пресечению четко продуманной и уже реализуемой стратегии по разрыхлению армянской государственности, развязыванию новых и новых диверсий со стороны Азербайджана против Арцахской Республики нам не удастся приостановить трансформацию гибридной войны в широкомасштабную горячую войну. Увы, сказанное не есть преувеличение. Но обо всем по порядку.

Итак, со 2 января 2015 г. по непосредственной инициативе Президента РА Сержа Азатовича Саргсяна Армения стала полноправным членом Евразийского экономического союза (ЕАЭС). Заметим, что соответствующее соглашение было подписано в октябре 2014 года. При этом примечательно, что если в 2013 году общая сумма ассигнований (помощи) для Армении со стороны США составила \$ 35,7 млн, то уже на 2016 финансовый год (начинается 1 октября 2015 года) администрация президента США Барака Обамы заложила в бюджет США предоставление помощи Армении в размере \$ 18,36 млн. Это была первая реакция наших американских партнеров на присоединение Армении к ЕАЭС, так назы-

ваемое наказание долларом. Однако в дальнейшем заявления властей РА о намерении заключить с Европейским Союзом соглашение о всеобъемлющем и расширенном партнерстве внесли определенные коррективы в политику США в отношении Армении. Так, в июне 2016 года помощник государственного секретаря США по вопросам демократии и прав человека Томас Мелиа заявил: «Наша помощь Армении даст возможность стране снизить экономическую зависимость (имеется в виду Армении. – А. Г.) от России. Часть помощи будет направлена на укрепление местного самоуправления», – цитировал помощника Госсекретаря США «Голос Америки» (от 11 июня 2016 года).

Согласно проекту госбюджета США на 2017 год, предполагалось помощь США Армении увеличить на 22% в сравнении с 2015 годом и довести до \$ 22 млн. Примечательно, что факт предоставления экономической помощи открыто увязывается со «снижением экономической зависимости от России», и это, повторюсь, озвучивает помощник госсекретаря США по вопросам демократии и прав человека. Можно привести и множество других примеров, подтверждающих открытую политическую направленность финансовой помощи США, оказываемой Армении. При этом заметим, что американцы и не скрывают свои истинные намерения.

Приведем и другой, не менее интересный пример. Так, в июне 2017 года (в соответствующих комиссиях Конгресса) США одобрили сокращение финансовой помощи Армении в 2018 году, которая должна была составить лишь \$6,8 млн против \$20,4 млн в 2016 году. За этими цифрами можно усмотреть прямую оценку действиям руководства Армении со стороны США, бесспорно, свидетельствующую о верности нашей страны своим обязательствам в рамках ЕАЭС и ОДКБ. Однако уже в октябре 2018 года (после майского 2018 г. государственного переворота в Армении) появилась информация о том, что Государственный департамент США в 2019 финансовом году, который начинается 1 октября 2018 г., выделит Армении финансовую помощь порядка \$26 млн, что на \$20 млн больше изначально предусмотренной. При этом было заявлено, что часть средств будет направлена на реализацию программ, которые стимулируют становление гражданского общества и независимых медиа. Видимо, именно эти факторы в представлении американских стратегов способны существенно сократить уровень бедности населения Армении, который составляет 29,2%. Не говоря уже о так называемых независимых масс-медиа, которых объединяет отнюдь не стремление обеспечить свободу слова, а одно-единственное желание – демонизировать Россию и маргинализировать политиков, убежденных в безальтернативности стратегического союза России и Армении. При этом не давая им возможности отстаивать свою позицию на страницах этих же «независимых» масс-



медиа. Далее в обоснование необходимости выделения дополнительных миллионных долларовых вливаний говорилось о том, что эти программы будут содействовать новому политическому руководству страны в переходный период, становлению многопартийной системы. Под этой формулировкой следует понимать продолжение финансирования разного рода общественных организаций антироссийской направленности с перспективой формирования на их основе политических партий. При этом не приходится говорить о значительных финансовых вливаниях в ныне действующие в Армении партии прозападной ориентации.

Еще об одном весьма примечательном факте. Так, 22 мая 2018 г. ТАСС выступил с следующим сообщением о том, что Соединенные Штаты готовы рассмотреть вопрос о выделении финансовой помощи Армении в размере \$140 млн (спустя лишь 20 дней после государственного переворота в Армении) на проведение реформ нового правительства во главе с Николом Пашиняном. «Мы готовы рассмотреть вопрос о выделении Армении гранта по линии корпорации «Вызовы тысячелетия», но Армении необходимо изложить информацию о позитивных изменениях (имеются в виду произошедших в стране. – *А. Г.*) в заявке для участия в проекте», – отмечается в письме государственного секретаря США Майка Помпео Армянскому национальному конгрессу Америки.

Что следует понимать под «позитивными изменениями», о которых говорит госсекретарь США? Так это вовсе не подлежит сомнению, а именно: создание предпосылок по выходу Армении из Евразийского экономического союза и ОДКБ, причем с мотивировками, дискредитирующими эти организации. Следующим шагом в направлении «позитивных изменений», в понимании американских коллег, будет создание условий для вывода из Армении 102-й российской военной базы, дислоцированной в Гюмри. Этому последует вывод контингента российских пограничников Погрануправления ФСБ Российской Федерации в Армении, пограничников, которые охраняют государственную границу Республики Армения с Исламской Республикой Иран и Турцией, военно-воздушной базы ВВС России с аэропорта «Эребуни».

Естественно, что для достижения этих целей, подрывающих национальную безопасность Армении, особое внимание уделяется информационной войне, нацеленной на разрушение традиционных армянских ценностей – незыблемости института семьи, веры, уважения к старшему поколению. А в плане внешней политики – подрыв российско-армянского стратегического партнерства, гнусное осквернение священных братских отношений между народами России и Армении путем массового распространения лжи и наветов, вызывающих смятение в умах и сердцах граждан Армении, особенно неискушенных в политике или обезволенных нуж-

дой людей. Следует с тревогой признать, что в этом вопросе недруги Армении уже добились некоторых успехов. Так, по данным Всероссийского центра изучения общественного мнения (ВЦИОМ) на 25 ноября 2008 года в Армении подавляющее большинство граждан – 86% считали Россию дружественной страной. Однако в ежегодном исследовании Центра интеграционных исследований Евразийского банка развития «Интеграционный барометр ЕАБР» читаем, что за пять лет наблюдений (за 2011 – 2016 гг.) показатель восприятия России как дружественной страны для Армении сократился с 86% до 69%. Здесь хотелось упомянуть и о другом исследовании. Так, как передает «Интерфакс» (16 июня 2018 г.) результаты опроса «Левада-центра», в «пятерку наиболее дружественных стран (имеется в виду России. – А. Г.), по данным опроса, вошли Китай (40% респондентов), Казахстан (32%), Сирия (21%) и Индия (19%). Еще 11% участников опроса наиболее дружественным для РФ государством назвали Армению и столько же Кубу и Узбекистан». Чем обусловлена столь большая разница в восприятии взаимных дружественных отношений – 69% и 11% – это тема отдельного анализа, причем очень востребованного. Далее исследователи делают вывод, что «такой результат, по-видимому, связан с разочарованием жителей Армении позицией ЕАЭС и ОДКБ (и прежде всего России) по поводу нового витка противостояния с Азербайджаном вокруг Нагорного Карабаха [(имеют в виду Апрельскую (2016 г.) четырехдневную войну, развязанную Азербайджаном против Арцахской Республики. – А. Г.)]», – отмечается в исследовании. В этой связи можно с уверенностью сказать, что западные стратеги, ознакомившись с этим исследованием, сделают для себя весьма важные выводы, а именно: подталкивание Азербайджана к новой военной агрессии против Арцахской Республики при надлежащем дирижировании может нанести серьезный удар союзническим отношениям между Россией и Арменией. Ведь их конечная цель – подрыв веры в армянском обществе в несокрушимости многовековой дружбы армянского и русского народов. Не говоря уже о том, что новая война между Азербайджаном и Арцахской Республикой приведет к невосполнимым человеческим потерям с обеих сторон. Нас вовсе не успокаивает изначально предрешенный исход возможной войны – сокрушительное поражение Азербайджана. Исход войны будет предрешен по той причине, что со стороны Азербайджана война будет вестись за возврат территорий, которые исторически никогда и не принадлежали этой стране, а для армян Нагорного Карабаха – это будет война по защите своей Родины, своего Отечества, независимой Арцахской Республики, самоопределившейся в полном соответствии с Уставом ООН.

Естественно, что в столь сложной ситуации, когда между Азербайджаном, с одной стороны, и нашими союзниками по ЕАЭС и ОДКБ – Ка-

захстаном и Белоруссией, с другой стороны, сложились стратегические партнерские отношения, путь по мирному урегулированию нагорно-карабахского конфликта будет не из легких. Но он, безусловно, есть. Президенту Азербайджана Ильхаму Алиеву, который в своих публичных выступлениях придерживается кустарной, давно изжившей себя формулы – кнута и пряника, и все время говорит о несокрушимости азербайджанской армии (справедливости ради отметим, что на ее перевооружение за последние 7–8 лет было потрачено более \$ 8 млрд), следует серьезно задуматься о последствиях войны. При анализе его выступления складывается впечатление, что И. Алиев сам себя убеждает в том, что в случае нерешения нагорно-карабахского конфликта мирным путем Азербайджан сделает это военным путем. В этой связи хотелось бы подчеркнуть, что в настоящее время ему представляется шанс доказать свою искренность в желании урегулировать конфликт мирным путем. Для этого И. Алиеву следует воспользоваться единственно верным выходом из тупика, в который он сам себя загнал. Так каков же выход?

Думается, что в случае одновременного принятия независимой суверенной Арцахской Республики и Азербайджанской Республики в ЕАЭС и ОДКБ в качестве двух самостоятельных субъектов международного права все остальные спорные вопросы по урегулированию нагорно-карабахского конфликта можно будет решить в рамках основополагающих документов ЕАЭС и ОДКБ. Альтернатива этому подходу – война. Причем война, в которую, не приходится сомневаться, будут вовлечены не только Турция, Россия и Иран, но также, вне всякого сомнения, США, а опосредованно и Израиль. Ведь зона безопасности Арцахской Республики имеет границу с Ираном протяженностью около 100 км. В условиях крайней поляризации отношений США и Израиля с Ираном не трудно будет предположить, в какую катастрофу будет ввергнут наш регион в случае развязывания военной агрессии против Арцахской Республики со стороны азербайджанского руководства. При этом можно быть уверенным в том, что на эту страну будет оказано как неприкрытое, так и самое изощренное «мягкое» давление со стороны США и Израиля для развязывания новой войны против Арцахской Республики. Главная же цель подстрекателей – расчленение Исламской Республики Иран, что неизбежно значительно обострит ситуацию также и в Сирии. Но это тема другого анализа.

P.S. Бесспорно, одаренный руководитель фракции политической партии ЛДПР Владимир Вольфович Жириновский уже в неформальной обстановке весьма образно подытожил итоги состоявшейся накануне в Государственной Думе международной конференции «Роль взаимодействия фракций политических партий и блоков в межпарламентском сот-

## А. ГЕГАМЯН

рудничестве стран СНГ». Он вспомнил драматические события 27-летней давности, 8 декабря 1991 года, когда президенты Республики Беларусь, Российской Федерации (РСФСР) и Украины (как государства-учредители Союза ССР, подписали Договор об образовании СССР) в 1992 г. в Беловежской пуще подписали Соглашение о создании Содружества Независимых Государств, в котором констатировалось прекращение существования СССР как «субъекта международного права и геополитической реальности» и заявлялось о создании Содружества Независимых Государств, Так вот, выступления участников международной конференции, по вполне объективным наблюдениям политического провидца Владимира Вольфовича, который никогда ради красного словца ничего не утверждает, навели его на мысль о неизбежности заключения нового Беловежского соглашения, в соответствии с которым будет образован новый Союз. Союз, который в ходе своего формирования извлечет правильные уроки из геополитической катастрофы конца XX века – прекращения существования Союза ССР, примет во внимание и уроки из истории становления Европейского Союза, что позволит новому межгосударственному объединению независимых суверенных государств стать мощным, дееспособным, самодостаточным союзом, новым полюсом формирующегося многополярного мира. Объединением государств, которому будет под силу преодолевать угрозы национальной безопасности, нависшие над каждой отдельной страной. Словом, пришло время принимать новое Беловежское соглашение, которое будет с точностью до наоборот предыдущему.

Перепрашивая классика, завершу статью диалогом князя Петра Ивановича Багратиона и Дениса Давыдова. Багратион: «Сегодня будет бой, я думаю, Денис». – Денис Давыдов: «Князь, Вашими устами да мёд пить. Все боя ждаты устали...»

Словом, Владимир Вольфович, Вашими устами да мёд пить.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА от Республиканской партии,  
сопредседатель Межпарламентской комиссии по сотрудничеству  
Национального Собрания РА и Федерального Собрания РФ,  
руководитель делегации НС РА в Межпарламентской Ассамблее  
Православия, председатель партии «Национальное Единение»

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ԵԿԵԼ Է ՆՈՐ ԲԵԼՈՎԵԺՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ՈՐԸ ԿԼԻՆԻ ՆԱԽՈՐԴԻ ՈՒՂԻՂ ՀԱԿԱՌԱԿԸ

2018թ. նոյեմբերի 22-ին Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական Դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահ Լեոնիդ Իվանովիչ Կալաշնիկովի նախաձեռնությամբ Պետական դումայում տեղի ունեցավ «Քաղաքական կուսակցությունների խմբակցությունների և դաշինքների փոխգործակցության դերը ԱՊՀ երկրների միջխորհրդարանական համագործակցությունում» միջազգային գիտաժողովը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Հանրապետական կուսակցության խմբակցությունը ինձ՝ Արտաշես Գեղամյանիս վստահեց գիտաժողովին մասնակցելու և օրակարգին համապատասխան ելույթ ունենալու աշխատանքը, որն էլ ես կատարեցի մեծ պատասխանատվությամբ:

Անդրադառնալով գիտաժողովի արդյունքներին՝ նշեմ, որ դրա գումարումն ու անցկացումը, անշուշտ, պահանջված էին: Կանգ չեմ առնի Պետական դումայի բոլոր խմբակցությունների ղեկավարների բավական բովանդակալից ելույթների վրա, դա առանձին վերլուծության թեմա է, բայց, կասկածից վեր է, որ դրանք իրենց ամբողջության մեջ վեր հանեցին միջազգային կյանքի առկա իրողությունների ողջ բազմազանությունն ու բարդությունը, և որ գլխավորն է՝ համոզիչ կերպով ցույց տվեցին, որ ռուսաստանցի խորհրդարանականների գործողություններն արարման, նոր, արդարացի աշխարհակարգի հաստատման գործում երկրի քաղաքական ղեկավարությանը համակողմանի օգնության ցուցաբերման ուղղվածություն ունեն՝ լիովին գիտակցելով սպառնալիքների ողջ լրջությունը, որոնք բխում են ԱՄՆ-ից ու ՆԱՏՕ-ից և խոչընդոտում են բազմաբևեռ աշխարհակարգի հաստատմանը: Սակայն սույն հոդվածում կուզենայի ներկայացնել իմ տեսլականը Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում և ընդհանրապես Հարավկովկասյան տարածաշրջանում իրադարձությունների զարգացման դինամիկայի մասին, ինչն էլ գիտաժողովում իմ ելույթի առանցքն էր կազմում: Հարավկովկասյան տարածաշրջանում, Իրանի Իսլամական Հանրապետության և Սիրիայի շուրջ ստեղծված դրության օբ-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

յեկտիվ վերլուծության համար միանգամայն օրինաչափ կլինի սկզբից ևեթ ընդգծել, որ Ռուսաստանին և նրա ռազմավարական դաշնակից Հայաստանին ահա արդեն ո՛չ մեկ տարի հայտարարված է հիբրիդային պատերազմ: Ընդ որում՝ ընդգծեմ, որ Պետական դումայի մեր ռուսաստանցի գործընկերները հիանալի տեղեկացված են այդ մասին, ավելին՝ ամենօրյա ռեժիմով մերկացնում և հակազդում են տարատեսակ սադրանքներին ու քաղաքական դիվերսիաներին, որոնց դասական օրինակներն են՝ ՉՀՎ նախկին գնդապետ Սկրիպալի և նրա դստեր թունավորման հետ կապված մտացածին պատմությունը, իսկ իրականում՝ կատարյալ սադրանքը, 2015-ից՝ Ղրիմում համաժողովրդական հանրաքվեի անցկացումից հետո Ռուսաստանին պարտադրված պատժամիջոցների տնտեսական պատերազմը, ԱՄՆ-ի միակողմանի դուրս գալը Միջին և փոքր հեռահարության հրթիռների մասին պայմանագրից: Ընդ որում՝ նշենք, որ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի կողմից հիբրիդային պատերազմ սանձազերծելու իսկական պատճառների մասին բավական մատչելի (առաջին հերթին հենց իրենց՝ կազմակերպիչների համար) բացատրել է Ռուսաստանի Ղաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Վիկտորովիչ Լավրովը 2017թ. օգոստոսի 11-ին Կյազմայում «Իմաստների տարածք» համառուսական կրթական երիտասարդական համաժողովի մասնակիցների հետ հանդիպման ժամանակ ունեցած իր ելույթում: «Որպեսզի հիմնավորեն այն աշխարհակարգը պահպանելու իրենց ցանկությունը, որը կլինեք արևմտակենտրոն, նաև այնպիսի տեսություններ են առաջ քաշում, ինչպիսին է «բազմաբևեռությունը դեպի քաոս տանող ճանապարհ է», իբր շատ դերակատարները երբեք չեն կարողանա պայմանավորվել միմյանց հետ, – համաժողովում ունեցած իր ելույթում նշեց Սերգեյ Լավրովը, – երբ ինչ-որ տեղ՝ հեռու տարածաշրջաններում տեղի է ունենում մշտական տուրբուլենտություն, հավանաբար՝ այն երկրները, որոնք գտնվում են ճգնաժամային շրջանների հարևանությամբ, ավելի շատ զբաղվում են այդ իրավիճակը հանդարտեցնելով և ավելի քիչ են զբաղվում սեփական տնտեսության և միջազգային ասպարեզում իրենց հնարավորությունների ամրապնդմամբ»: Եվ եթե, ըստ իս՝ բավական հիմնավորված այս դիրքերից վերլուծելու լինենք Հայաստանի Հանրապետությունում և Հարավկովկասյան տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, ապա արդեն այս փուլում կարելի է եզրակացնել, որ եթե չձեռնարկենք հայոց պետականության խարխլմանն ուղղված, հստակ մտածված և արդեն իրականացվող ռազմավարության, Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծվող նորանոր դիվերսիաների կասեցման գործուն միջոցներ, ապա մեզ չի հաջողվի այնպես անել, որպեսզի հիբրիդային պատերազմը չվերածվի լայնածավալ թեժ պատերազմի: Ավաղ, ասվածը չափազանցություն չէ: Բայց այս ամենի մասին՝ հերթով:

Եվ այսպես, 2015թ. հունվարի 2-ին ՀՀ Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ Հայաստանը դարձավ Եվրասիա-

կան տնտեսական միության (ԵԱՏՄ) լիիրավ անդամ: Նշենք, որ համապատասխան համաձայնագիրը ստորագրվել էր 2014թ. հոկտեմբերին: Մինևույն ժամանակ, հատկանշական է, որ եթե 2013թ. ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրված հատկացումների (օգնության) ընդհանուր գումարը կազմում էր \$35,7 մլն, ապա արդեն 2016 ֆինանսական տարում (սկսվում է 2015թ. հոկտեմբերի 1-ին) ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը ԱՄՆ բյուջեում Հայաստանին օգնության տրամադրման համար նախատեսեց գումար \$18,36 մլն-ի չափով: Սա մեր ամերիկյան գործընկերների առաջին ռեակցիան էր Հայաստանի անդամակցությանը ԵԱՏՄ-ին՝ այսպես կոչված պատիժը դրվարով: Սակայն հետագայում ՀՀ իշխանությունների հայտարարությունները Եվրամիության հետ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր կնքելու մտադրության մասին որոշակի շտկումներ մտցրին Հայաստանի հանդեպ ԱՄՆ քաղաքականությունում: Այսպես, 2016թ. հունիսին ԱՄՆ պետքարտուղարի ժողովրդավարության և մարդու իրավունքների հարցերով օգնական Թոմաս Մելիան հայտարարեց. «Մեր օգնությունը Հայաստանին երկրին հնարավորություն կտա նվազեցնել կախվածությունը (նկատի ունի Հայաստանի կախվածությունը – Ա.Գ.) Ռուսաստանից: Օգնության մի մասը կուղղվի տեղական ինքնակառավարման ամրապնդմանը», – ԱՄՆ պետքարտուղարի օգնականի խոսքը մեջբերել է «Ամերիկայի ձայնը» (2016թ. հունիսի 11): ԱՄՆ 2017թ. պետբյուջեի նախագծի համաձայն՝ ենթադրվում էր Հայաստանին ԱՄՆ օգնությունն ավելացնել 22%-ով՝ 2015թ. համեմատ, և այն հասցնել \$22 մլն-ի: Հատկանշական է, որ տնտեսական օգնության տրամադրման փաստը բացահայտ շաղկապվում է «Ռուսաստանից տնտեսական կախվածության նվազեցման հետ», և դա, կրկնում են, հնչեցնում է ԱՄՆ պետքարտուղարի ժողովրդավարության և մարդու իրավունքների հարցերով օգնականը: Կարելի է բազմաթիվ այլ օրինակներ էլ բերել, որոնք հաստատում են Հայաստանին ցուցաբերվող ԱՄՆ ֆինանսական օգնության բացահայտ քաղաքական ուղղվածությունը: Ընդ որում՝ նշենք, որ ամերիկացիները չեն էլ թաքցնում դա, այսինքն՝ իրենց իսկական մտադրությունները:

Մեկ այլ՝ ոչ պակաս հետաքրքիր օրինակ էլ ներկայացնենք: Այսպես, 2017թ. հունիսին (Կոնգրեսի համապատասխան հանձնաժողովներում) ԱՄՆ-ը հավանություն տվեց 2018թ. Հայաստանին ցուցաբերվող ֆինանսական օգնությունը կրճատելուն, որը պետք է կազմեր ընդամենը \$6,8 մլն 2016-ի \$20,4 մլն-ի դիմաց: Մի՞թե այս թվերի հետևում իմաստ չունի տեսնել ԱՄՆ-ի կողմից Հայաստանի ղեկավարության գործողությունների ուղղակի գնահատականը, գործողություններ, որոնք, անշուշտ, վկայում են մեր երկրի հավատարմությունը ԵԱՏՄ և ՀԱՊԿ շրջանակներում ստանձնած պարտավորություններին: Սակայն արդեն 2018թ. հոկտեմբերին (Հայաստանում 2018թ. մայիսյան պետական հեղաշրջումից հետո) ի հայտ եկավ տեղեկություն այն մասին, որ ԱՄՆ պետդեսպարտամենտը 2019 ֆինանսական տա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

րում, որն սկսվում է 2018թ. հոկտեմբերի 1-ին, Հայաստանին կտրամադրի \$26 մլն-ի կարգի ֆինանսական օգնություն, ինչը \$20 մլն-ով ավելի է սկզբում նախատեսվածից: Ընդ որում՝ հայտարարվել է, որ միջոցների մի մասը կուղղվի այն ծրագրերի իրագործմանը, որոնք խթանում են քաղաքացիական հասարակության և անկախ մեդիաների կայացումը: Հավանաբար, հենց այս գործոններն են ամերիկյան ստրատեգների պատկերացմամբ ի վիճակի էապես կրճատելու Հայաստանի բնակչության աղքատության մակարդակը, որը կազմում է 29,2%: Էլ չեմ ասում այսպես կոչված անկախ մաս-մեդիաների մասին, որոնց միավորում է բնավ ո՛չ խոսքի ազատությունն ապահովելու ծգտումը, նրանց առաջ է մղում միայն մի ցանկություն՝ դեմոնիզացնել Ռուսաստանը և մարզինալացնել քաղաքական այն գործիչներին, ովքեր համոզված են, որ Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական դաշինքն այլընտրանք չունի: Ընդ որում՝ նրանց հնարավորություն չտալով իրենց դիրքորոշումը պաշտպանել այդ նույն «անկախ» մաս-մեդիաների էջերում: Այնուհետև, հավելյալ միլիոն դոլարների տրամադրման անհրաժեշտության հիմնավորման մեջ ասվում էր այն մասին, որ այդ ծրագրերն օժանդակելու են երկրի նոր քաղաքական ղեկավարությանը անցումային փուլում բազմակուսակցական համակարգի կայացմանը: Այս ձևակերպման ներքո հարկ է հասկանալ հակառուսական ուղղվածության տարատեսակ հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման շարունակումը՝ դրանց հիման վրա քաղաքական կուսակցություններ կազմավորելու հեռանկարով: Ընդ որում՝ էլ չենք ասում Հայաստանում ներկայում գործող արևմտամետ ուղղվածության կուսակցություններին տրամադրվող ֆինանսական զգալի ներարկումների մասին:

Եվս մեկ հատկանշական փաստ: 2018թ. մայիսի 22-ին ՏԱՍՍ-ը հանդես եկավ հետևյալ հաղորդմամբ առ այն, որ Միացյալ Նահանգները պատրաստ է վերանայել Հայաստանին \$140 մլն-ի չափով ֆինանսական օգնություն տրամադրելու հարցը (Հայաստանում պետական հեղաշրջումից ընդամենը 20 օր անց)՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ նոր կառավարության բարեփոխումներն իրականացնելու համար: «Մենք պատրաստ ենք վերանայել Հայաստանին դրամաշնորհի հատկացնելու հարցը «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի գծով, բայց Հայաստանը պետք է տեղեկատվություն ներկայացնի դրական փոփոխությունների մասին (նկատի ունեն երկրում տեղի ունեցած փոփոխությունները – Ա.Գ.) նախագծին մասնակցության հայտում», – նշվում է ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի՝ Ամերիկայի Հայ ազգային կոնգրեսին հղած նամակում: Ի՞նչ պետք է հասկանալ «դրական փոփոխությունների» տակ, որոնց մասին ասում է ԱՄՆ պետքարտուղարը: Բնավ կասկած չի հարուցում, որ նկատի ունի Եվրասիական տնտեսական միությունից և ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու նախադրյալների ստեղծումը, ընդ որում՝ այդ կազմակերպությունը վարկաբեկող պատճառաբանումներով: «Դրական փոփոխությունների» ուղղութ-



յամբ արվելիք հաջորդ քայլը, ամերիկյան գործընկերների պատկերացմամբ, լինելու է Գյումրիում տեղակայված 102-րդ ռազմակայանը Հայաստանից դուրս բերելու պայմանների ստեղծումը: Դրան հետևելու է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության ԱԴԾ Սահմանապահ վարչության ռուսաստանցի սահմանապահների զորակազմի դուրսբերումը, սահմանապահներ, որոնք պահպանում են Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, և վերջապես, Ռուսաստանի Դաշնության ռազմածոյային կայանի դուրսնդումը «երեբունի» օդանավակայանից:

Բնականաբար, Հայաստանի ազգային անվտանգությունը խափանող նման նպատակներին հասնելու գործում հատուկ տեղ է հատկացվում տեղեկատվական պատերազմին, որն ուղղվում է հայ ավանդական արժեքների՝ ընտանիքի ինստիտուտի, հավատքի, ավագ սերնդի հանդեպ հարգանքի անսասանության խարխլմանը: Իսկ արտաքին քաղաքականության առումով՝ ռուս-հայկական ռազմավարական գործընկերության խափանմանը, Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև սրբազան եղբայրական հարաբերությունների ստոր նսեմացմանը՝ կեղծիքի և զրպարտության զանգվածային տարածման միջոցով, ինչը շփոթմունք է առաջացնում Հայաստանի քաղաքացիների, հատկապես նրանց մտքերում ու սրտերում, ովքեր անփորձ են քաղաքականության մեջ կամ էլ մարդիկ են, որոնց կամազուրկ է դարձրել կարիքը: Հարկ է տազնապով արձանագրել, որ այս հարցում Հայաստանի բարին չկամեցողներն արդեն հասել են որոշ հաջողությունների: Հանրային կարծիքի ուսումնասիրման համառուսական կենտրոնի (ՀԿՈՒՀԿ, ВЦИОМ) 2008թ. նոյեմբերի 25-ի տվյալներով՝ Հայաստանում քաղաքացիների ճնշող մեծամասնությունը՝ 86%-ը, Ռուսաստանը համարում էր բարեկամ երկիր: Սակայն Ջարգացման Եվրասիական բանկի Ինտեգրացիոն հետազոտությունների կենտրոնի «ՋԵԱԲ ինտեգրացիոն բարոմետր» ամենամյա հետազոտությունում կարդում ենք, որ դիտարկումների հինգ տարվա ընթացքում (2011 – 2016թթ.) Ռուսաստանը որպես բարեկամ երկիր ընկալելու ցուցիչը Հայաստանի համար իջել է՝ 86-ից հասնելով 69%-ի: Այստեղ կուզենայի հիշատակել նաև մեկ այլ հետազոտության մասին: Այսպես, ինչպես «Լևադա-կենտրոնի» հարցման արդյունքները փոխանցում է «Ինտերֆաքսը» (2018թ. հունիսի 16), «առավել բարեկամական երկրների հնգյակում են (նկատի է առնվում Ռուսաստանի հանդեպ – Ա. Գ.), հարցման տվյալներով, Չինաստանը (հարցվողների 40%), Ղազախստանը (32%), Սիրիան (21%) և Հնդկաստանը (19%): Հարցման մասնակիցների ևս 11%-ը ՌԴ-ի համար առավել բարեկամական պետություն է նշել Հայաստանը, նույնքան էլ՝ Կուբան և Ուզբեկստանը»: Թե ինչով է պայմանավորված փոխադարձ բարեկամական հարաբերությունների ընկալման այսքան մեծ տարբերությունը՝ 69% և 11%, առանձին վերլուծության թեմա է, որը, ի դեպ, շատ անհրաժեշտ է: Այնուհետև հետազոտողները եզրակացնում են, որ

## Ա. ՊԵՆՍՅԱՆ

«նման արդյունքը, ըստ երևույթին, կապված է այն բանի հետ, որ Հայաստանի բնակիչները հիասթափվել են ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի (և առաջին հերթին՝ Ռուսաստանի) դիրքորոշումից՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ դիմակայության նոր պտույտի առիթով» (նկատի ունեն 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը, որը սանձազերծեց Ադրբեջանը Արցախի Հանրապետության դեմ – Ա.Պ.), – նշվում է հետազոտությունում: Այս առնչությամբ կարելի է վստահաբար ասել, որ արևմտյան ստրատեգները, ծանոթանալով այս հետազոտությանը, իրենց համար բավական կարևոր եզրահանգումներ կանեն, այն է՝ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանին նոր ռազմական ագրեսիայի դրդելը «պատշաճ» ուղղորդման դեպքում կարող է լուրջ հարված հասցնել Ռուսաստանի և Հայաստանի միջև դաշնակցային հարաբերություններին: Չէ՞ որ նրանց վերջնականապես կայ հանրության մեջ հայ և ռուս ժողովուրդների բազմադարյա բարեկամության անսասանության հավատի փլուզումն է: Ել չեն ասում այն մասին, որ նոր պատերազմը Ադրբեջանի ու Արցախի Հանրապետության միջև կհանգեցնի անդառնալի մարդկային կորուստների երկու կողմից էլ: Մեզ բնավ չի հանգստացնում հնարավոր պատերազմի նախապես կանխորոշված ելքը՝ Ադրբեջանի ջախջախիչ պարտությունը: Պատերազմի ելքը կկանխորոշվի այն պատճառով, որ պատերազմն Ադրբեջանի կողմից վարվելու է այն տարածքները վերադարձնելու համար, որոնք պատմականորեն երբեք չէին էլ կարող պատկանել այդ երկրին, իսկ Լեռնային Ղարաբաղի հայերի համար դա կլինի պատերազմ հանուն Հայրենիքի՝ մայր հողի, Արցախի անկախ Հանրապետության պաշտպանության, որն ինքնորոշվել է լիովին ՄԱԿ Կանոնադրությանը համապատասխան:

Բնականաբար, այսքան բարդ իրավիճակում, երբ մի կողմից՝ Ադրբեջանի և մյուս կողմից՝ ԵԱՏՄ և ՀԱՊԿ գծով մեր դաշնակիցների՝ Ղազախստանի և Բելառուսի միջև հաստատվել են ռազմավարական գործընկերային հարաբերություններ, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ճանապարհը դյուրիններից չի լինելու: Բայց այն, իհարկե, կա: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, որն իր հրապարակային ելույթներում հետևում է բլիթի և մահակի պարզունակ, վաղուց իրեն սպառած բանաձևին ու անընդհատ խոսում է ադրբեջանական բանակի անպարտելիության մասին (հանուն արդարության նշենք, որ դրա վերազինման համար վերջին 7–8 տարիներին ծախսվել է ավելի քան \$8 մլրդ), պետք է լրջորեն մտածի պատերազմի հետևանքների մասին: Վերլուծելով նրա ելույթները՝ տպավորություն ես ստանում, թե Ի.Ալիևը ինքն իրեն համոզում է, որ Ղարաբաղյան հակամարտության՝ խաղաղ չլուծվելու պարագայում Ադրբեջանը դա կանի ռազմական ճանապարհով: Այս առնչությամբ կուզենայի ընդգծել, որ ներկայում նրան հնարավորություն է ընձեռվում ապացուցել իր անկեղծությունը խաղաղ ճանապարհով հակամարտությունը լուծելու ցանկության հարցում: Դրա համար Ի.Ալիևը պետք է օգտվի փակուղուց (որտեղ

հայտնվել է սեփական կամքով) դուրս գալու միակ ճիշտ ելքից: Ուրեմն, ո՞րն է այդ ելքը:

Կարծում եմ, որ եթե անկախ ու ինքնիշխան Արցախի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը միաժամանակ ընդունվեն ԵԱՏՄ ու ՀԱՊԿ՝ որպես միջազգային իրավունքի երկու ինքնուրույն սուբյեկտներ, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մնացած բոլոր վիճելի հարցերը կարելի կլինի լուծել ԵԱՏՄ և ՀԱՊԿ հիմնարար փաստաթղթերի շրջանակներում: Այս մոտեցման այլընտրանքը պատերազմն է: Ընդ որում՝ պատերազմ, որում, կասկած չի հարուցում, կներքաշվեն ոչ միայն Թուրքիան, Ռուսաստանն ու Իրանը, այլ նաև, անկասկած, ԱՄՆ-ը, և միջնորդավորված ձևով՝ Իսրայելը: Չէ՞ որ Արցախի Հանրապետության անվտանգության գոտին Իրանի հետ մոտ 100 կմ երկարությամբ սահման ունի: Իրանի հետ ԱՄՆ-ի և Իսրայելի հարաբերությունների ծայրահեղ բևեռացման պայմաններում դժվար չի լինի պատկերացնել, թե ինչ աղետի կենթարկվի մեր տարածաշրջանը Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանական ղեկավարության կողմից ռազմական ագրեսիայի սանձազերծման պարագայում: Ընդ որում՝ կարելի է վստահ լինել, որ այդ երկրի վրա կգործադրվի ինչպես անթաքույց, այնպես էլ «փափուկ» ճնշում ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից՝ Արցախի Հանրապետության դեմ նոր պատերազմ սկսելու համար: Իսկ սադրիչների գլխավոր նպատակը Իրանի Իսլամական Հանրապետության մասնատումն է, ինչն անպայման զգալիորեն կսրի իրավիճակը նաև Սիրիայում: Բայց սա այլ վերլուծության թեմա է:

Հ.Գ. Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական Դումայի Լիբերալ-դեմոկրատական քաղաքական կուսակցության խմբակցության հիրավի տաղանդավոր ղեկավար Վլադիմիր Վոլֆովիչ ժիրինովսկին արդեն ոչ պաշտոնական միջավայրում բավական պատկերավոր ամփոփեց նախօրեին Պետական Դումայում տեղի ունեցած «Քաղաքական կուսակցությունների խմբակցությունների և դաշինքների փոխգործակցության դերը ԱՊՀ երկրների միջխորհրդարանական համագործակցությունում» միջազգային գիտաժողովը: Նա հիշեց 27-ամյա վաղեմության՝ 1991թ. դեկտեմբերի 8-ի դրամատիկ իրադարձությունները, երբ Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության (ՌԽՖՍՀ) և Ուկրաինայի (որպես ԽՍՀ Միության հիմնադիր պետություններ, որոնք ստորագրել են ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրը) նախագահները 1992թ. Բելովեժյան թավուտում ստորագրեցին «Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը», որում փաստվում էր ԽՍՀՄ գոյության դադարեցումը՝ որպես «միջազգային իրավունքի սուբյեկտի և աշխարհաքաղաքական իրողության» և հայտարարվում էր Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին: Եվ ահա, միջազգային գիտաժողովի մասնակիցների ելույթները, քաղաքական մարզարե Վլադիմիր Վոլֆովիչի միանգամայն օբ-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

յեկտիվ դիտարկումներով, որը երբեք հենց այնպես որևէ բան չի պնդում, նրան հանգեցրին այն մտքին, որ անհրաժեշտ է կնքել նոր Բելովեժյան համաձայնագիր, որի համաձայն՝ կձևավորվի նոր Միություն: Միություն, որն իր կազմավորման ընթացքում ճիշտ դասեր կքաղի 20-րդ դարավերջի աշխարհաքաղաքական աղետից՝ ԽՍՀ Միության գոյության դադարեցումից, ուշադրության կառնի նաև Եվրամիության կայացման պատմության դասերը, ինչը թույլ կտա անկախ, ինքնիշխան պետությունների նոր միջպետական միավորմանը դառնալ հզոր, գործունակ, ինքնաբավ միություն, ձևավորվող բազմաբևեռ աշխարհի նոր բևեռ: Պետությունների միավորում, որն ի գորու կլինի հաղթահարել յուրաքանչյուր առանձին երկրի ազգային անվտանգության սպառնալիքները: Մի խոսքով՝ եկել է նոր Բելովեժյան համաձայնագիր ընդունելու ժամանակը, որը կլինի նախորդի ուղիղ հակառակը:

Վերաձևակերպելով դասականին՝ հողվածս ավարտեմ իշխան Պյոտր Իվանովիչ Բագրատիոնի և Դենիս Դավիդովի երկխոսությամբ: «Բագրատիոն. «Այսօր մարտ է լինելու, կարծում եմ, Դենիս: Դենիս Դավիդով. «Իշխան, բերան չէ՝ տաճար է: Բոլորս ենք հոգնել մարտին սպասելուց ...»:

Մի խոսքով՝ Վլադիմիր Վոլֆովիչ, բերան չէ՝ տաճար է:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հանրապետական կուսակցությունից,  
ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության  
Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ,  
Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում  
ՀՀ Աժ պատվիրակության ղեկավար,  
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

ՆԱԽՈՒՍՏՐԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃ.  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԵԹԵՐՈՒՄ

Եթերում են նաև նախընտրական բանավեճի մոդերատորներ Պետրոս Ղազարյանն ու Արաքս Թադևոսյանը, ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանը, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Միքայել Մելքումյանը և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախկին նախարար Արծվիկ Մինասյանը  
(29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.)

*ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ – Սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, տնտեսության զարգացման ուղիները: Դուք ունեք 2 թույլ ցույց տալու այն տեսլականը, որ կանեք երկրի հետ հաղթանակից հետո:*

ԳԵՂԱՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ – Նախ, շնորհակալություն հրավերի համար: Բնականաբար, այս օրերին յուրաքանչյուր մարդ մտածում է, թե ինչպիսին է ուզում տեսնել Հայաստանը, որն է իր տեսլականը: Եվ, կամա թե ակամա, հայացք ես նետում զարգացած երկրներին և մտածում. ո՞րն էր նրանց առաջընթացի գաղտնիքն ու բանալին, ի՞նչ ցուցանիշներ էին որպես թիրախներ դրել իրենց առաջ, որոնց հասնելով պետք է ապահովելին ազգաբնակչության բարձր կենսամակարդակ և ապրուստ: Նման հարցերի քննարկմանն անդրադարձ եղավ 2018 թ. հունվարի 22-ից 24-ը Դավոսում տեղի ունեցած Համաշխարհային տնտեսական ֆորումում, որը դասակարգեց կենսամակարդակով առավել զարգացած երկրներին: Առաջատարների շարքում ընդգրկվեցին Նորվեգիան, Իսլանդիան, Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան, Դանիան, Շվեդիան, Նիդեռլանդները, Իռլանդիան և այլն: Ֆորումի ընթացքում նշվեց, թե դրանց մոտ ինչն է ընդհանրականը, որն ապահովում է նման բարձր կենսամակարդակ: Վերլուծության արդյունքում պարզվեց, որ այս երկրները տնտեսության ներառականության մակարդակը բնութագրող 12 ցուցանիշներով գերազանցում են նմանատիպ ցուցանիշներ դասակարգում ունեցող այլ երկրներին: Եվ ֆորումի մասնակիցները այդ ցուցանիշները միավորեցին որպես մեկ ընդհանրական ցուցանիշ և անվանեցին ին-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կյուզիվ զարգացման ինդեքս: Այդ 12 ցուցանիշներով միավորված են երեք խմբերում և ամեն խմբում ընդգրկված են դրանից չորսը, ընդունենք. աճ և զարգացում (ընդգրկում է ՀՆԱ-ի աճ, զբաղվածություն, աշխատանքի արտադրողականություն, կյանքի սպասվող տևողություն), ներառականություն (ընդգրկում է աղքատության մակարդակ և անհավասարություն) և միջ-սերնդային արդարություն և կայունություն (խնայողությունների մակարդակ, ժողովրդագրական բեռնվածություն, պետական պարտք և շրջակա միջավայրի աղտոտվածություն): Այս երեք խմբերում մանրամասն բացված և ընդգրկված են այն բոլոր ցուցանիշները, որոնցում առաջընթաց գրանցելու պայմաններում երաշխիք կա պնդելու, որ երկիրը զարգացում է արձանագրում: Նշված ցուցանիշների միասնականությունը ստացել է ներառական զարգացման ինդեքս անվանումը: Ահա հենց ներառական էկոնոմիկայի մասին էր, որ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը 2018 թ. ապրիլին հայտարարեց, երբ քննարկվում էր Հայաստանի Հանրապետության 2020-2030 թթ. ռազմավարական ծրագիրը, ուր խնդիր դրվեց, որպեսզի երկրի տնտեսության զարգացման ապագան պայմանավորված լինի ներառական էկոնոմիկային անցում կատարելով:

*Ղ. Պ. – Գրեթե բոլոր քաղաքական ուժերը մի հարցում համակարծիք են, որ սովորական գործիքակազմով երկիրը զարգացնելը շատ դժվար է լինելու: Եթե կարճ ձևակերպենք, ի՞նչ է նշանակում տնտեսական հեղափոխություն, որովհետև «հեղափոխություն» և «տնտեսություն» բառերը դասական առումով իրար հետ լավ չեն գնում: Բայց մյուս առումով, մենք ունենք ոչ ստանդարտ իրավիճակ: Հանքանյութ արտահանող և ագրարային երկրից ինչպե՞ս եք պատկերացնում երկրի ապագան:*

Գ. Ա. – Նախ, ասեմ, որ այստեղ հնչած բոլոր առաջնահերթությունները, բարեբախտաբար, ընդգրկված են ինկյուզիվ՝ ներառական էկոնոմիկա բնութագրող ցուցանիշների մեջ և կազմում են դրանց բաղկացուցիչ մասը: Այսինքն, մայր խնդիրը ներառական էկոնոմիկային անցումն է: Ինչ վերաբերում է հեղափոխականությանը, ապա հեղափոխությունը և տնտեսական աճը իրարամերժ հասկացություններ են, գոնե էկոնոմիկայում: Ուրիշ բան, որ էկոնոմիկայի թռիչքածն զարգացման ապահովման համար որոշակի տնտեսագիտական գործիքներ, գործիքակազմ կիրառելով կարող ենք նման աճ ապահովել տնտեսության այս կամ այն ոլորտում: Դրա համար 2 տարի առաջ նույն Ղավոսում կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումում շատ ճիշտ էր նշվել, երբ խոսվեց 4-րդ՝ տեխնոլոգիական հեղափոխության մասին: Հիմա մեզ հեծանիվ հորինել պետք չէ: Մեզ պետք է, որպեսզի այն բոլոր մշակումները, որոնք կան, կարողանանք տեղայնացնել, կիրառել մեր երկրի էկոնոմիկայում: Հարց է առաջանում՝ դա անելու համար անհրաժեշտ տնտեսական բազա ունե՞նք, այո, ունե՞նք: Դիցուք այն, որ անցած տասը տարիների ընթացքում դուրարային արտահայտությամբ մեր տնտեսություն

աճել է. եթե գնողունակության պարիտետի հաշվարկով ենք նայում, ապա ունեցել ենք 167 տոկոս աճի տեմպ, մինչդեռ համաշխարհային աճի տեմպը դոլարային արտահայտությամբ կազմել է 145 տոկոս: Այսինքն՝ Հայաստանում եղել է տնտեսության աճ, մեր էկոնոմիկան հասել է այն մակարդակի, որ նոր վարչակազմը իշխանության գալուց ընդամենը վեց ամիս հետո, մատը մատին չխփելով, բոլոր ցուցանիշների գծով գահավիժում արձանագրելով՝ դրա հետ մեկտեղ 2019 թ. ծրագրում է աղքատությունը կրճատել:

Ղ. Պ. – *Ղա Ձե՞ր շնորհքն է, Ձե՞ր կառավարման:*

Գ. Ա. – Մեր չէ, Հանրապետական կուսակցության և իր դաշնակիցների, կոալիցիոն կառավարությունների աշխատանքի արդյունքն է:

*ԱՎԻՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ – Պարոն Գեղամյան, երբ Դուք խոսում եք GDP-ի մասին (խոսքը ՀՆԱ-ի մասին է – Ա. Գ.), եկեք նաև GDP-ի նոմինալը հիշենք, որովհետև 2007 – 2017 թ. մեր համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)՝ նոմինալ արդյունքը, նվազել է 3,2 %-ով, եթե չեն սխալվում: Եվ սա նշանակում է, որ, ընդհանուր առմամբ, աշխարհի համեմատ, եթե դոլարային արտահայտությամբ նայենք, ապա մեր երկրում համախառն ներքին արդյունքը նվազել է:*

Գ. Ա. – Բացարձակապես այդպես չէ, ցավոք, Ձեր բերած թվերը կոռեկտ չեն: Վերցրեք [cia.gov](http://cia.gov) կայքէջում The world Factbook բաժինը (ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության էլեկտրոնային կայքէջն է), չեն կարծում, որ ԱՄՆ-ի մեր լավ բարեկամները սխալվում են՝ նշելով ճիշտ այն թվերը, որոնց մասին ասացի: Երբեք ու երբեք ՀՆԱ-ի հաշվարկներում նոմինալ GDP-ի թվերը որպես վերլուծության հիմնական ցուցանիշ չեն բերվում: Հաշվարկներում խոսում են գնողունակության պարիտետով հաշվարկված GDP ցուցանիշի մասին, ողջամիտ բոլոր տնտեսագետները դա են վերլուծություններում որպես հիմք ընդունում:

Ղ. Պ. – *Ես չգիտեմ ողջամիտ տնտեսագետներն ինչ են ասել, պարոն Գեղամյան, բայց հիշում եմ, որ Ձեր վարչապետը, վերջին վարչապետը, եկավ, ասաց, որ «տնտեսությունը խայտառակ վիճակում է գտնվում:*

Գ. Ա. – Ինքը զարգացման նոր տեսլական ուներ, իր տեսլականի համեմատ էր դա ասում:

Ա. Տ. – *Պարոն Գեղամյան, Դուք մի ուժի ներկայացուցիչ եք, ով վերջին տասը տարիների ընթացքում ապահովել է նոմինալ ՀՆԱ-ի նվազում, Հայաստանի Հանրապետության 260,0 հազար քաղաքացիների արտագաղթ երկրից, արտաքին պարտքի քառապատկում և աղքատություն, այն ժամանակ 26 տոկոս էր աղքատությունը, 2017 թ. 29,4 տոկոս է դարձել: Պարոն Գեղամյան, սա այն պարագայում, երբ Հայաստանի Հանրապետության 260,0 հազար քաղաքացի լքել է երկրը: Հիմա մենք ինչի՞ շուրջ ենք բանավիճում: Դուք, Ձեր ուժը տապալվել էք, ամբողջությամբ՝ տնտեսապես, քաղաքականապես ...*

## Ա. գեղաստ

Գ. Ա. – Ձեր իսկ կառավարության տապալման դասական օրինակները գծապատկերով ես բերել եմ: Այս գծապատկերում բերված է տնտեսական ակտիվության ցուցանիշը, այս կարմիրով նշվածը, որ սիրուն սայթաքում է ներքև, ասես, Ծաղկաձորի Քաչալ սարից, սա տնտեսական ակտիվության ցուցանիշն է, որ գահավիժել է Ձեր կառավարման ամիսներին: Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպը 2018 թ. 3-րդ եռամսյակում 1-ին եռամսյակի համեմատ 3 անգամ պակաս է եղել: Ասեմ ավելին, 2018թ. 2-րդ եռամսյակում ներդրումները գրեթե զրոյացել են: Ինչո՞ւ եմ սա ասում, ոչ թե չարախնդում եմ, այլ պարզապես հնչեցնում եմ Ձեր կառավարման արդյունքը բնութագրող ցուցանիշները:

*Ղ. Պ. – Հեռուստադիտողներին ասեք, ո՞րն է 2-րդ եռամսյակը:*

Գ. Ա. – 2-րդ եռամսյակը, Պետրոս ջան, եթե այս աշխարհում բան չի փոխվել, ուրեմն, սկսում է ապրիլից՝ վերջանում հունիսով: Ընդամենը մեկ թիվ նշեմ, 2017 թ. ՀՀ-ում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 3872 դոլար, մինչդեռ 2000 թ. եղել է՝ 593 դոլար: Ընդունեցինք, որ 260,0 հազար մեր քաղաքացիները գնացել են երկրից: Անգամ այս պարագայում մենք ունենք ՀՆԱ-ի առնվազն 160–173 տոկոսի աճի տեմպ, այն էլ դոլարային արտահայտությամբ, կրկնեմ, մեկ շնչին ընկնող՝ իրական եկամուտի հաշվարկով, ոչ թե բնակչության վիճակագրական ցուցանիշների հաշվարկով, որ կարող եք վիճարկել, այլ Ձեր բերած թվերով: Ուրիշ բան, դա գոհացնո՞ւմ է Հանրապետականին, իհարկե, չի գոհացնում: Քննադատվե՞լ է դա, քննադատվել է անձամբ երկրի Նախագահի կողմից ու ամենևին պատահական չի եղել, որ խնդիր է դրվել անպայմանորեն անցնել երկրի էկոնոմիկայի ներառական զարգացմանը: Հենց այդ նույն ընթացքում, ինչո՞ւ չեք ասում, որ 3,7 անգամ աճել է նվազագույն կենսաթոշակը՝ 10 900 - ից դառնալով 40 634 դրամ:

*ԹԱՂԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍ – Որքան ժամանակում:*

Գ. Ա. – Հենց հիշատակած տարիների ընթացքում: Վերցրեք և ուսումնասիրեք: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ հունվար-սեպտեմբերին», էջ 199-րդ, ներքևից 4-րդ տողն է, գրված է՝ նվազագույն պարենային զամբյուղի արժեքը՝ 33 930, 8 դրամ: Երկու տող ներքև՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն է՝ 60 057, 5 դրամ, ըստ որում՝ հետաքրքրականն այն է, որ 3-րդ եռամսյակում, թե՛ պարենային նվազագույն զամբյուղի, թե՛ սպառողական նվազագույն զամբյուղի աճի տեմպը 2017 թ. 3-րդ եռամսյակի համեմատ կազմել է համապատասխանաբար 109, 3 % և 110,8 %: Սա Վիճակագրական ծառայության տվյալներն են: Գիտեք, ես պետք է տարրական դասընթացներ անցկացնեմ, Ձեզ հետ չէ, այլ նրանց հետ, ով Ձեզ հուշել է, որ նման հարցով ինձ դիմեք:

*Ա. Տ. – Եկամտային հարկման աստիճանական ներդրման, աստիճանային հարկման մեխանիզմի մասին դրույթներին անդրադառնանք: Կուզենայի մի փոքր հիմնավորումներ լսել Ձեր կողմից, որի շուրջ, նաև կարծում*



են, կարելի է բանավիճել: Ձեր ծրագրում գլոբալ ասելիք չկա, որովհետև այն ծրագիր չէ, սիրուն, գեղեցիկ բառերի կույտ է:

Գ. Ա. – Գիտե՞ք, ամբողջ խնդիրն այն է, որ մեր ծրագրի հետ կապված Դուք ասելիք չունեք: Դուք կամ չեք տիրապետում այդ հարցին, կամ չեք կարդացել: Միայն առանձին ծրագիր կա Հանրապետականի ընտրացուցակում թիվ 10-րդ համարի ներքո ներգրաված թեկնածու Արտաշես Գեղամյանի մոտ. դա իմ 270 էջանոց ծրագիրն է, որը միանգամայն համահունչ է Հանրապետականի ծրագրին: Ցավոք, մենք դադարել ենք միմյանց լսել: Խոսում են կենսաթոշակի մասին, մոռանում են ասել, կրկնում են, որ վերջին տասը տարիների ընթացքում միջին կենսաթոշակը 3,7 անգամ աճ է արձանագրել, ուրեմն՝ միջին անվանական աշխատավարձն աճել է 2,3 անգամ: Իսկ դա գոհացրե՞լ է Հանրապետականին, իհարկե, ո՛չ:

Ղ. Պ. – Գիտե՞ք ի՞նչն է զարմանալի, որ ոչ մի ուժ անցյալից չի խոսում, պարոն Գեղամյանն անընդհատ անցյալից է խոսում:

Գ. Ա. – Որովհետև անցյալն աղավաղում են: Այստեղ խոսում են հեղափոխությունից, ես էլ Ձեզ մի հետաքրքիր բան պատմեմ: Ուրեմն, երջանկահիշատակ Զին Շարփը, մի քանի ամիս առաջ մահացավ, վաղամեռիկ էր՝ 90 տարեկան էր, ինչևէ, գրել էր «Դիկտատուրայից դեմոկրատիա» վերնագրով գիրքը, որի հավելվածը՝ «Իշխանության ոչ բռնի տապալման 198 մեթոդներ», լայնորեն կիրառվեց ս.թ. ապրիլ–մայիսին մեր հանրապետությունում: Այդ հավելվածում առկա 198 երաշխավորություններից 42-ը կիրառվել էին տող առ տող, կետ առ կետ 2018 թ. ապրիլ–մայիս ամիսներին: Տեղի ունեցածը դասական պետական հեղաշրջում էր: Դրա մասին գրել էի:

низаций. Этому последовали бы закрытие 102-й российской военной базы в Гюмри, вывод российских пограничников Управления пограничных войск ФСБ в Армении с армяно-турецкой и армяно-иранской государственной границы, закрытие военно-воздушной базы ВВС России в «Эребуни». Всему этому не бывать, так что политическим и финансовым спонсорам Н. Пашиняна пора осознать, что Никол Пашинян сделал свое дело, правда, не до конца, но он, Никол Пашинян, может уходить.

P.S. Не хотелось на грустной ноте завершать статью. Итак, 27 января 2019 года исполнилось 80-лет со дня рождения бывшего министра внутренних дел Армянской ССР, депутата Верховного Совета Республики Армения (1990–1995 гг.), члена правления партии «Национальное Единение», полковника запаса Левона Акоповича Галстяна. Замечу, что 27 мая 1990 года мне как мэру г. Еревана удалось предотвратить гнусную провокацию известных лиц (чьи последователи сейчас властвуют в Армении), чреватую большим кровопролитием, благодаря самоотверженным действиям командира отряда «Сасна црер» Рубена Геворкяна, Мацика из Киликии, Вардана Акопяна, Манвела Кочаряна и, конечно же, благодаря профессионализму начальника Ереванского городского управления внутренних дел доброй памяти Сергея Гургеновича Атарбекяна. Не хотелось бы подробнее останавливаться на этих событиях. Важен был результат: если в ходе аналогичных провокаций, контролируемых и насаждаемых из одного и того же центра по координации разрушения Советского Союза, число жертв в Баку и Тбилиси исчислялось несколькими сотнями, то в Армении мы потеряли 17 наших граждан, что, конечно, очень и очень большая трагедия для нашего народа. Естественно, такой «малокровный» исход событий мая 1990 года не мог удовлетворить идеологов подобных провокаций, которые в то тревожное время вспыхивали в тех или иных районах Советской Армении и немедленно «затухали» благодаря высокопрофессиональным оперативным действиям министра внутренних дел Армянской ССР полковника Левона Акоповича Галстяна. Так вот собравшиеся в офисе партии «Национальное Единение» сподвижники и коллеги Левона Акоповича, несмотря на свой уже немолодой возраст, все же питали иллюзии и надеялись, что полковника Галстяна Левона Акоповича хотя бы кто-то из руководства Республики Армения поздравит с его славным 80-летием. Ну в крайнем случае это поручат сделать начальнику Полиции Республики Армения Валерию Осипяну, полковнику с не поддающейся пониманию выдержкой и хладнокровием, который, будучи заместителем начальника полиции г. Еревана, ответственным за соблюдение правопорядка во время митингов, 14 апреля 2018 года так и не воспрепятствовал штурму здания Общественного

**А. ГЕГАМЯН**

радио Армении. Ему хватило выдержки сохранить «стойкость» и «нейтралитет» также и 17 апреля 2018 года при захвате митингующими, подстрекаемыми Николом Пашиняном, территории, прилегающей к зданию Национального Собрания, а в дальнейшем беспрепятственно по сути захватившими и само здание НС. Поздравив своего коллегу, В. Осипян, думаю, этим шагом многое бы сделал для самого себя. Увы, ничего этого не последовало. Однако кому-кому, а нам, знающим технологию разрушения государства, коей вооружены сподвижники Н. Пашиняна, должно было быть хорошо известно, что поздравление с юбилеем достойного руководителя советской милиции было бы своеобразным проявлением преемственности поколений, между тем пропаганда преемственности поколений, упоминание всего того, что облагораживало облик советского милиционера, прямо противоречит установкам, изложенным в 198 рекомендациях по ненасильственной смене власти.

АРТАШЕС ГЕГАМЯН

Председатель партии «Национальное Единение»

## ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՐԵՑ ԻՐ ԳՈՐԾԸ

### ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԵՌԱՆԱԼ

Ուշադիր վերլուծելով վերջին ինն ամիսների իրադարձությունները Հայաստանում 2018թ. ապրիլ–մայիսի պետական հեղաշրջումից հետո, ինչպես նաև Արևմուտքի երկրների, Թուրքիայի, Ադրբեջանի և, իհարկե, դաշնակից Ռուսաստանի ու Հայաստանի լրատվամիջոցներում տեղ գտած իրապարակումներն ու վերլուծական նյութերը, գալիս ես որոշակի, բայց և բավական անմխիթարական եզրահանգումների: Ի՞նչ նկատի ունեմ: Սկզբում՝ մի փոքր անդրադարձ պատմությանը: 2017թ. ապրիլի 2-ին Հայաստանի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրություններին մասնակցող 9 դաշինքների և կուսակցությունների թվում էր նաև Հայ ազգային կոնգրեսի (այսուհետ՝ ՀԱԿ) և Հայաստանի ժողովրդական կուսակցության դաշինքը: Ընթերցողներին հիշեցնենք, որ Հայաստանի Հանրային հեռուստատեսությամբ նախընտրական հարցազրույցի ընթացքում ՀԱԿ կուսակցության առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն (ԼՏՊ) ասաց, որ թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը պատրաստ են փոխադարձ զիջումների (ասացեք, որ զարմանալի իրազեկություն է Ադրբեջանի պլանների մասին – Ա. Գ.), և որ կողմերին մնացել է պայմանավորվել լոկ ցայժմ չլուծված կետերի շուրջ: Այնուհետև նա ընդգծեց, որ ՀԱԿ-ից բացի ուրիշ ոչ ոք չի կարող առաջարկել խաղաղարար նոր ռազմավարություն, որը կնախատեսի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մշակված Մադրիդյան սկզբունքների իրագործումը, որոնցից ԼՏՊ մեջբերեց լոկ «տարածքների վերադարձը», «ուժի երաշխավորված չկիրառումը» և «Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի սահմանումը»: Հատկանշական է, որ դեռևս 2016թ. դեկտեմբերի 17-ին ՀԱԿ համագումարում նա պնդում էր. «Անտեսանելի քաղաքական փիլիսոփայությունը, որը 1998-ից (Հայաստանում ԼՏՊ-ի պաշտոնանկությունից հետո՝ Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում պարտվողական մոտեցումների պատճառով – Ա. Գ.) դրված էր հայոց պետականության գործունեության հիմքում, դա, այլ խոսքով՝ Ղարաբաղյան ստատուս-քվոյի պահպանման և ևս 100 տարի շրջափակման պայմաններում զարգանալու ռազմավարությունն է»: Ընդ որում՝ ԼՏՊ-ն,

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

չգիտես ինչու, չհիշատակեց, որ 2016թ. դեկտեմբերի 8-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտաքին գործերի նախարարները Համբուրգում համատեղ հայտարարություն էին ընդունել Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ: Դրանում, մասնավորապես, ասվում էր. «Կողմերին հիշեցնում ենք, որ կարգավորումը պետք է հիմնվի Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնական սկզբունքների վրա. դիցուք՝ ուժի չկիրառում, տարածքների ամբողջականություն և ժողովուրդների ինքնորոշում, ինչպես նաև լրացուցիչ տարրեր, ինչպես դա առաջարկվել էր համանախագահող երկրների նախագահների կողմից, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձ Ադրբեյջանի վերահսկողության ներքո, Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ անվտանգության երաշխիքների և ինքնորոշման ապահովման համար, Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցքի ապահովում, Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավավիճակի սահմանում պարտադիր իրավաբանական ուժ ունեցող կամարտահայտման միջոցով, բոլոր ներքին տեղահանված անձանց և փախստականների՝ նախկին բնակավայրեր վերադառնալու իրավունք; անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղարար գործողությունը: Մեր երկրները կշարունակեն աշխատել կողմերի հետ սերտ շփման մեջ, և մենք կոչ ենք անում նրանց լիովին օգտվել համանախագահների Մինսկի խմբի աջակցությունից՝ որպես միջնորդների»: Ընդ որում՝ նշենք, որ հայկական կողմը հավանություն է տվել այս հայտարարությանը՝ որպես բանակցությունների վերսկսման հիմք, այն դեպքում, երբ պաշտոնական Բաքուն միտումնավոր խեղաթուրեց այս փաստաթղթի բովանդակային էությունը՝ այդպես էլ իր հստակ դիրքորոշումը չարտահայտելով այս հարցի վերաբերյալ: Եվ սա սկզբունքորեն կարևոր է, քանի որ Հայաստանի իշխանությունների համաձայնությունը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտագործնախարարների հայտարարության շրջանակներում բանակցությունները շարունակելու համար, վկայում է, որ հայկական կողմը լիովին ունակ է պայմանագրեր կնքելու: Եվ միանգամայն սպասելի էր, որ 2017թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, սկզբից եթե ապակառուցողական լինելու, ընդ որում՝ Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ կտրուկ դիրքորոշման պատճառով ՀԱԿ – ՀԺԿ դաշինքը ընդամենը 1,66% ընտրածայն հավաքեց և չանցավ ՀՀ VI գումարման Ազգային ժողով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրենց վճռական «ոչն» ասացին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԼՏՊ մոտեցմանը, որի էությունը վերջին հաշվով նշանակում էր՝ «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց»: ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներով արտաքին ուժերին, որոնք Հայաստանում աջակցում էին Ղարաբաղյան հակամարտության՝ այս բանաձևով կարգավորմանը, չհաջողվեց այդ բանաձևն ընդունելու համար բավականաչափ ձայներ ապահովել օրենսդիր ժողովում: Բայց 2017թ. ընտրությունների արդյունքներով ՀՀ

Աժ մտավ «Ելք» խմբակցությունը, որի առաջնորդ Նիկոլ Փաշինյանը պակաս «արմատական» մոտեցում չունենալու և Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում, քան իր հոգևոր հայր ու քաղաքական ուղեվար ԼՏՊ-ն: Այս մասին արդեն առիթ ունեցել են գրելու, բայց նորից հիշեցնեն ընթերցողներին սույն քաղաքական գործչի մտքի զոհարների մասին: Եվ այսպես, 2018թ. մարտի 1-ին ՀՀ Աժ հանրապետության վարչապետի ընտրությանը նվիրված հատուկ նիստի ժամանակ Հանրապետական կուսակցության խմբակցության պատգամավոր Արման Սարգսյանը հատված կարդաց «Հայկական ժամանակ» թերթի 2001թ. մայիսի 22-ի հրապարակումից, որը պատկանում էր Նիկոլ Փաշինյանի գրչին, որում վերջինն ասում է. «Ինձ զարմացնում է, որ մեր երկրում կան մարդիկ, ովքեր պատրանքներ ունեն գրավյալ, եթե կուզեք ազատագրված, եթե կուզեք օկուպացված տարածքների վերաբերյալ: Ես չեմ ընդունում այն տեսակետը, թե լավ դիվանագիտությունը կարող է այնպես անել, որ այդ տարածքները չվերադարձվեն Ադրբեյջանին: Մերը թողած ուզում ենք տերը լինել ուրիշին»: Նշենք, որ Ն. Փաշինյանն իրեն արդարացնելու համար ասաց, որ սա սոցցանցերում լայնորեն տարածվող «բոլորին հայտնի ապատեղեկատվություն» է, որն ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, քանիցս հերքել է: Թե ինչու սա նա չարեց դատական կարգով՝ առանձին վերլուծության թեմա է: Իմանալով, որ ես անպայման վերաբերմունքս կարտահայտեմ այս դավաճանական մոտեցման հանդեպ, որը որդեգրել են ԼՏՊ-ն, Նիկոլ Փաշինյանն ու նրանց նմանները, որը վկայում է նրանց, մեղմ ասած, պարտվողական, ընդ որում՝ ըստ իրենց, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միակ հնարավոր մոտեցման մասին, ես նույն օրը շրջահայացորեն վերցրի այդ թերթի մի օրինակ որպես, այսպես ասենք՝ իրեղեն ապացույց, որը կմերկացներ Ն. Փաշինյանին ՀՀ Ազգային ժողովի ամբիոնից հնչեցրած անխիղճ ստի մեջ: Հիմա արդեն, մեկ տարի ինն ամիս անց ՀՀ Աժ 2017թ. ապրիլի 2-ի ընտրություններից հետո, միանգամայն նորովի են երևում դրանց արդյունքները, մասնավորապես՝ ընտրողների 7,78% ձայները, ընտրողներ, որոնք իրենց ձայնը տվել էին Ն. Փաշինյանի գլխավորած «Ելք» դաշինքին: Անվիճելի է, որ իր կայուն ընտրազանգվածն ուներ «Ելք» դաշինքի մեջ մտնող «Հանրապետություն» կուսակցության նախագահ, հարգարժան Արամ Սարգսյանը՝ ողբերգականորեն զոհված, Հայաստանի Ազգային հերոս Վազգեն Սարգսյանի եղբայրը: Նույնը կարելի է ասել նաև «Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրազանգվածի հնարավորությունների մասին, որի առաջնորդն է Էդմոն Մարությանը և որը 2012թ. բավական վիճելի ընտրարշավում, պատգամավորի թեկնածու, ընդդիմադիր ուժերի արժանավոր ներկայացուցիչ Վիկտոր Դալլաքյանի հետ պայքարում կարողացավ դառնալ ՀՀ Աժ V գումարման պատգամավոր: Ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ Աժ V գումարման պատգամավոր ընտրվեց ՀԱԿ համամասնական ցուցակով: Մի խոսքով՝ այս երեք քաղաքական ուժերի միավորումը սիներգետիկ է ֆեկտ ունեցավ, և ակնհայտ դարձավ, որ

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

արդեն VI գումարման ՀՀ ԱԺ-ը անպայման ներկայացվելու է «Ելք» կուսակցությունների դաշինքով, որը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման կողմնակիցն է «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով, ընդ որում՝ ինքնին հասկանալի է, որ այն ներկայանում է որպես Եվրամիության ու ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի ռազմավարական գործընկերության խորացման կողմնակից, որը ՀԱՊԿ-ից ու ԵԱՏՄ-ից Հայաստանի դուրս գալու մոլի ջատագովն է: Եվ համաշխարհային քաղաքականության հայտնի կենտրոնի՝ այս չարաբաստիկ բանաձևի հեղինակի ընտրությունը կանգ առավ «Ելք» դաշինքի վրա: Հայաստանի իշխանությունների կողմից սույն ընտրության հանդեպ Արևմուտքի բարի վերաբերմունքը քամահրելը կնշանակեր հետագայում դառնալ քաղաքական շանտաժի առարկա, բուն Հայաստանում միջազգային և հասարակական կազմակերպությունների, մարդու իրավունքների պահպանման, դեմոկրատիայի խորացման և քաղաքացիական հասարակության դերի բարձրացման ջատագովների կողմից ընտրությունները վարկաբեկող տարատեսակ նյութերի հրապարակման վկա և թիրախ: Մի խոսքով՝ աննկարագրելի տիեզերական աղմուկ կբարձրանար ընտրությունների իբր կոպիտ կեղծումների, ընտրողներին կաշառելու, վարչական ռեսուրսի չարաշահման և այլնի մասին:

Ժամանակի ընթացքում, համոզվելով, որ գործնականում «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևի իրագործումը ՀՀ երրորդ նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի օրոք դատապարտված էր ձախողման, գործի դրվեց պլան «Բ»-ն, որով ենթադրվում էր ասպարեզ դուրս բերել քաղաքական գործչի, որը Ղարաբաղյան հակամարտության լուծման համոզված կողմնակիցն էր՝ այդ բանաձևին լիովին համապատասխան: Այդ քաղաքական գործիչը Նիկոլ Վովայի Փաշինյանն էր, որին օգնեցին կազմակերպել սարքովի պետական հեղաշրջում Հայաստանում, որի ճարտարապետների բացահայտումը միանգամայն նշանակալի վերլուծության թեմա է, բայց այդ մասին՝ մեկ ուրիշ անգամ: Այնուհետև ամեն բան տեղի ունեցավ մեր աչքերի առջև. արդեն Հայաստանի վարչապետի ոչ պաշտոնական հանդիպումները ԱՊՀ երկրների գազաթափողովների շրջանակներում՝ Դուշանբեում և Սանկտ Պետերբուրգում, հետո՝ Փաշինյան – Ալիև մեկուկես-ժամյա հանդիպումը, որը կայացավ 2019թ. հունվարի 22-ին Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում: Ընդ որում՝ նշենք, որ այդ հանդիպումներից յուրաքանչյուրից հետո ադրբեջանական կողմի արձագանքներում նկատվել է լավատեսություն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարների առումով: Դա, բնական է, չէր կարող չմտահոգել հայ քաղաքական էլիտային ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում: Այս հաշվով առկա երկյուղները «ցրել» շտապեց ինքը՝ Ն. Փաշինյանը: Ս. թ. հունվարի 25-ին արդեն Մոսկվայում 2019թ. Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի նախագահության հետ կապված՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա

ասաց. «Բազմիցս եմ ասել, որ այդ բանակցություններում ներկայացնում եմ, կարող եմ ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը, այդ բանակցություններում չեմ կարող ներկայացնել Արցախի Հանրապետությունը՝ այն պարզ պատճառով, որ Ղարաբաղի քաղաքացիները չեն մասնակցում Հայաստանի ընտրություններին, այսինքն՝ նրանք ինձ չեն ընտրել որպես վարչապետ: Նրանք ունեն իրենց նախագահին, խորհրդարանը և իրենց կառավարությունը: Այդ պատճառով ես չեմ կարող բանակցություններ վարել Լեռնային Ղարաբաղի անունից, կարող եմ բանակցություններ վարել Հայաստանի Հանրապետության անունից: Ամեն ինչ այդպես էլ տեղի է ունենում: Դա բոլորին հասկանալի է»: Պակաս հետաքրքրական չէ Ն. Փաշինյանի պատասխանը Դավոսում Ի. Ալիևի հետ նրա հանդիպման մասին: Հետաքրքրական՝ այն տեսակետից, որ, ըստ էության, Փաշինյանն իր գրուցակցին ներկայացրել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերում մի ինչ-որ անտեղյակ առաջնորդի դերում, որին ինքը հարկադրված է բան հասկացնել: Այսպես, խոսելով Դավոսում Ի. Ալիևի հետ հանդիպման մասին՝ Ն. Փաշինյանը նշել է, որ «ոչ մի արդյունք չկա, քանի որ դա պարզապես ոչ պաշտոնական շփում է եղել, ոչ թե բանակցություններ: Ոչ Ալիևը, ոչ ես, ոչ էլ որևէ մեկը ինչ-որ արդյունքներ այդ հանդիպումից չի ակնկալել (զարմանալի իրազեկություն Ալիևի հնարավոր ակնկալիքների մասին – Ա. Գ.): Դա պարզապես շփում էր: Մենք խոսել ենք Ղարաբաղյան հակամարտության խնդրից: Այն մասին, թե ինչպես են մեր ժողովուրդներն ընկալում այս խնդիրը: Փաստորեն, սրանք բանակցություններ չեն, այլ ոչ պաշտոնական շփումներ (ավելի պարզ ասած՝ նախագահների խոսքուգրույց – Ա. Գ.): Մեր արտաքին գործերի նախարարները հանդիպում են, աշխատում են դրա վրա, առայժմ ոչ մի կոնկրետ բան ասել չեմ կարող»: ՀՀ վարչապետի այս օպուսից հետո պետք է հիանալ ՀՀ արտաքին գործերի նախարարի համարձակությամբ, որն ի տարբերություն իր բոսի, չլինելով Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար, հաստատված չլինելով Արցախի խորհրդարանի կողմից, այնուամենայնիվ, աշխատում է իր ադրբեջանցի պաշտոնակցի հետ «դրա»՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա: Բայց Հայաստանի վարչապետի այս խոսքերը միանգամայն սպասելի էին Հայաստանում այն պարզ պատճառով, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով մերժվել է դեռևս 1998թ. և դրանց հեղինակի՝ ԼՏՊ-ի համար Հայաստանի նախագահի պաշտոնից հրաժարվելու գին է արժեցել: Նրա իսկ աշակերտը սկզբում ամեն ինչ անում էր, որպեսզի ցույց տա իր անդրօվկիանոսյան խրատատուներին, որ հավատարիմ է այդ կանխադրույթների համաձայն հակամարտության կարգավորմանը: Հիշենք նաև, որ մինևույն ժամանակ նա 1992 – 1994թթ. Արցախի ազգային-ազատագրական պատերազմի առաջնորդների և, առաջին հերթին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ և Հայաստանի Հանրապե-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

տության երկրորդ նախագահ, Արցախի հերոս Ռոբերտ Քոչարյանի անարգման, դեմոնացման և վարկաբեկման կատաղի քարոզարշավ սկսեց: Ոչ առանց Փաշինյանի ջանքերի Հայաստանի և Արցախի պաշտպանական գերատեսչություններում բարձր պաշտոններից զրկվեցին Արցախյան պատերազմի տարիներին (1992 – 1994թթ.) իրենց լավ դրսևորած գեներալները: Նա նաև «ասպատակում» կատարեց ներկայում գործող Արցախի հերոսների հանդեպ և ... հասկացավ, որ իր շրջապատի ստրկամտությունը և նրա կողմից իր բոլոր գործողությունների քաջալերումը բնավ բավարար պայման չեն արցախցի գեներալներին վախեցնելու համար: Քաջարի մարդիկ, ովքեր ազգային-ազատագրական պատերազմի տարիներին ամեն ժամ իրենց աչքերի առջև մահ են տեսել, հարյուր ու հազարավոր ընկերների, հարազատ-բարեկամների մահն ապրել և դրանով հանդերձ չեն երկնչել, ավելին՝ իրենց աննկուն կամքով ու պայքարի արդարացիության համոզմունքով, պայքար, որը, ի տարբերություն ադրբեջանցիների, վարվում է ոչ թե տարածքների, այլ Հայրենիքի համար, հաղթահարել են մահն ու հաղթանակել: Եվ ահա, ինքը՝ Ն. Փաշինյանը, խորապես հասկացել է, որ բնավ ավելի խելացի ու տեղեկացված չէ իր նախորդներից՝ հանձինս Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի, էլ չեմ ասում այն մասին, որ այնքան էլ միամիտ չէ, որպեսզի գրանտատուների ու նրանց թիկունքին կանգնած ուժերի հույսերն արդարացնելու նպատակով վտանգի իր անձնական անվտանգությունը հանուն իրեն նվիրաբերված Հայաստանի վարչապետի պաշտոնի: Կրկնում եմ, այժմ չենք քննարկի սարքովի պետական հեղաշրջման ճարտարապետների թեման, այլ լուր կնշենք այն մասին, որ 2018թ. ապրիլ–մայիսին համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի կողմից «դանայացիների նվերները» մատուցվեցին ոչ թե առանձին վերցրած մարդուն՝ Նիկոլ Փաշինյանին, այլ հայոց պետականությանը: Գուցե սույն գործողությունը հնարավոր դարձավ նաև շնորհիվ Հայաստանի նախկին իշխանությունների անգործության, որոնք այլ նպատակ էին հետապնդում. համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոններին ցույց տալ այն անխախտ ճշմարտությունը, որ Հայաստանում չի գտնվի մեղսունակ որևէ քաղաքական գործիչ, ով, իշխանության տենչից կուրացած, կամ բազմամիլիոնանոց դոլարների ողորմությունից (որոնց անունը Ջորջ Սորոսի գրանտներ է) կուչ եկած՝ իր տգիտության պատճառով շփոթեր Հայրենիք հասկացությունը տարածք հասկացության հետ: Անգամ այն դեպքում, երբ նման մոտեցումը համահունչ է տվյալ դեպքում նրա՝ Նիկոլ Փաշինյանի ներքին համոզմունքներին (նկատի ունեմ Նիկոլ Փաշինյանի 2001թ. մայիսի 22-ի հոդվածը «Հայկական ժամանակ» թերթում՝ «Հողը սիրելով են պահում, իմացե՛ք» վերնագրով), արդի Հայաստանում նման քաղաքականություն վարելը հավասարագոր է գործնականում քաղաքական կամիկաձեփ փիլիսոփայության իրականացմանը: Այս թեման ամփոփելով ստիպված ենք միայն զարմանալ ադրբեջանական կողմի տրտմագին



լացուկոծից, որն իրեն երկար սպասել չտվեց Ղարաբաղյան կարգավորման իր տեսլականի վերաբերյալ Ն. Փաշինյանի վերջին հայտնություններից հետո: Այսպես, ոչ անհայտ Minval.az էլեկտրոնային պորտալը, որը սպասարկում է Ադրբեջանի կառավարությանը, ս. թ. փետրվարի 2-ին հրապարակել է հոդված՝ «Փաշինյանն ընտրում է պատերազմը: Մոսկվայի թելադրանքով» վերնագրով (<https://minval.az/news/123860479>, Նուրանի): Հոդվածի հեղինակը նշում է. «Դեռ վերջերս թե՛ բանակցությունների մասնակիցները՝ Ադրբեջանի ու Հայաստանի արտաքին գործերի նախարարներ էլ մար Մամեդյարովը և Ջոհրաբ Մնացականյանը, թե՛ դիտորդները, թե՛ փորձագետները բանակցությունների առիթով բավական վստահ լավատեսություն էին արտահայտում: Բայց հիմա Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես է գալիս այնպիսի հայտարարություններով, որոնք ոչ միայն գրոյացնում են այդ լավատեսությունը, այլև առհասարակ սպառնում են կործանել բանակցային գործընթացը»: Նիկոլ Վովակիչի՝ իմ նշած մեջբերումներից բացի, ադրբեջանցի մեկնաբան տիկին Նուրանիին տազնապետել են ՀՀ վարչապետի հայտարարություններն այն մասին, թե՛ «Մենք չենք կարող քննարկել «տարածքներ խաղաղության դիմաց» բանաձևը»: Հետո հետևյալ միտքը. «Ես մի քանի անգամ հանդես եմ եկել Ազգային ժողովի ամբիոնից և ասել, թե ինչու ենք մենք բոլորս հարցնում՝ պատրաստ ենք արդյոք փոխզիջումների, թե՞ ոչ: Եվ ո՞վ է ասել, որ մենք ենք հարցի հիմնական սուբյեկտը: Ինչո՞ւ ոչ ոք Ադրբեջանին չի հարցնում՝ պատրաստ են արդյոք նրանք փոխզիջումների: Եվ դրա համար ես բազմիցս հրապարակավ հայտարարել եմ, որ մենք չենք պատասխանի այդ հարցին, քանի դեռ Ադրբեջանը չի պատասխանի դրան»:

Ի տարբերություն Minval.az-ի մեկնաբանի, ուրախալի է փաստել, որ երկրի «ղեկավարման» անցած 9 ամիսներին Ն. Փաշինյանը եկել է այբբենական ճշմարտությունների, որոնք ցայժմ հասու չէին թե՛ իրեն, թե՛ իր քաղաքական խրատատուներին՝ հանձին LSՊ-ի, թե՛ համաշխարհային քաղաքականության որոշակի կենտրոնին, որն ահա արդեն ոչ մեկ տասնամյակ հարյուր միլիոնավոր դոլարներ է ծախսում հայոց պետականության խարխլման վրա՝ ապահովելու համար այն, որ երկրում իշխանության գան հայ ազգային ավանդույթը, բուն հայկական ազգային ինքնությունը կործանողները, որ հրաժարվեն ավանդական քրիստոնեական արժեքներից, օրինակ՝ «Կյանքի խոսք» տոտալիտար աղանդի համակողմանի խրախուսման, ԼԳԲՏ հանրույթի ներկայացուցիչներին հոգատարությամբ և ուշադրությամբ շրջապատելու և այլ նսեմ դրսևորումների միջոցով: Ընդ որում՝ ամենավտանգավորն այն է, որ այս զգվելի արարքները գործող իշխանությունները փորձում են տարածել նաև հանրակրթական դպրոցի վրա՝ անկիրթ վերաբերմունք ցուցաբերելով Հայ Առաքելական եկեղեցու շարքային սպասավորի հանդեպ, որը դեպքի բերումով հանկարծ հայտնվել էր դպրոցում: Խոսքն այն մասին է, որ ՀՀ կրթության նախարարն օրերս

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Արարատի մարզի Այգեստան գյուղի դպրոցում, տեսնելով տեղի քահանա հայր Ղավթին, անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել նրա հանդեպ՝ ասելով. «Դո՞ւ այստեղ ինչ ես անում»:

Կրթության նախարարին շատ ըմբռնելի պատասխան է տվել Արարատի մարզի Բյուրավան գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ հայր Ղազար Պետրոսյանը.

«Լսի՛ր երիտասարդ, բազմաթիվ կարդացածդ գրքերից չկարողացար սովորել այն պարզունակ ճշմարտությունը, որ Հայոց տառերը գրողը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու քահանա է եղել և տառերը գրելու գլխավոր նպատակը եղել է՝ որպեսզի Աստված խոսի հայերեն, այսինքն՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանելը: Ուրեմն՝

1. Հայոց դպրոցի և դպրության հիմնադիրը Հայոց Քահանան է:
2. Հայոց դպրոցների և՛ ուսուցիչներ, և՛ շատ դեպքերում կազմակերպիչները եղել են քահանաները՝ ցայժմ սփյուռքում տեսնում ենք:
3. Հայոց ամենանշանավոր և ամենատաղանդավոր բանաստեղծը՝ Ս.Գրիգոր Նարեկացին քահանա էր:
4. Հայոց պատմահայրը՝ Ս. Մովսես Խորենացին քահանա էր:
5. Հայոց հին և ամենանշանավոր ասղագետը՝ Անանիա Շիրակացին քահանա էր:
6. Հայոց իրավաբանության թագակիրը՝ Մխիթար Գոշը քահանա էր:
7. Հայոց առաջին տպագիր գրքի հեղինակը՝ Հակոբ Մեղապարտը քահանա էր:
8. Հայոց դպրությունը աշխարհին ներկայացնող Մխիթարյան հայրերը՝ բոլորը քահանաներ էին»:

Այսքան ըմբռնելի պատասխանից հետո, թվում է, թե միջադեպն ավարտված է: Բայց չէ: Նախարարի դատապաշտպանի դերում ընդարձակ հարցազրույցով հանդես եկավ նախարարի նախկին տեղակալը, այժմ՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Ն. Փաշինյանի դաշինքից: Չեմ խորանա նրա պատասխանի մանրամասների մեջ: Նպատակը մեկն է. ցանկացած պատրվակով, ցանկացած գնով հանել հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերից «Հայ եկեղեցու պատմություն» առարկան:

Վերադառնալով ադրբեջանական կողմի լալագին արձագանքին Ն. Փաշինյանի վերջին հայտարարություններին՝ այդ նույն հրապարակումից մեջբերենք մեկ այլ հատված. «Հիմա՝ հայտարարությունների նոր շարք, արդեն Փաշինյանի Բեռլին կատարած այցելության ընթացքում: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ համատեղ մամուլի ասուլիսում Փաշինյանն ասաց. «Ինչ վերաբերում է կարգավորմանը, կարծում եմ, որ հանախազահ երկրները և միջազգային հանրությունը հստակ հայտարարել են, որ խնդրի լուծումը հակամարտության մեջ ներքաշված երեք կողմերի հարցն է, և միջազգային հանրությունը չի կարող հակամարտությունը լուծել երեք կողմերի փոխարեն, այլ կարող է միայն ստեղծել պլատֆորմ

երկխոսության և բանակցությունների համար: Ես կարծում եմ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին հաջողվել է ստեղծել այդ պլատֆորմը»: Սրանից հետո ադրբեջանցի մեկնաբանը, չկարողանալով զսպել իրեն, խոսում է ադրբեջանական կողմի ֆիասկոյի մասին, որը, արդեն ակնհայտ է, շատ մեծ հույսեր էր կապել Ն. Փաշինյանի իշխանության գալու հետ: Տիկին Նուրանին Minval.az-ից տրտնջում է. «Իրատես լինենք, երկխոսության ներկա փուլը, որը դեռ մի քանի օր առաջ այդքան բազմախոստում էր թվում, անցնում էր ԱՄՆ մոդերացիայի ներքո՝ հանձին Ջոն Բոլթոնի (այ թե որտեղ է Հայաստանում Նիկոլ Փաշինյանի իշխանության գալու դրդապատճառների բանալին՝ ըստ ամերիկա-ադրբեջանական պատկերացումների Ղարաբաղյան հակամարտության լուծման համար, համաձայն «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևի – Ա. Գ.), և Մոսկվան նախագահի խորհրդականի տարածաշրջան կատարած այցի ու Ղարաբաղի վերաբերյալ նրա հայտարարությունների դեռևս տաք հետքերով ի ցույց դրեց իր դժգոհությունը Վաշինգտոնի կողմից իր, ինչպես համարում են Կրեմլում ու Սմոլենսկյան հրապարակում, «ազդեցության գոտի» ներխուժման առիթով: Եվ հակամարտության լիարժեք լուծումն էլ հազիվ թե մտնում էր Մոսկվայի պլանների մեջ. նրան հարկավոր է հակամարտությունն «աշխատանքային վիճակով» և Բաքվի ու Երևանի վրա ճնշման համար, և իրավիճակի ապակայունացման համար Ռուսաստանին ոչ շահավետ Ադրբեջանի նավթա- և գազատարների հարևանությամբ: Մանավանդ հիմա, երբ «գազային պատերազմը» Եվրոպայում ընթանում է շատ ավելի կոշտ սցենարով»:

Ահա այսպիսի բաներ: Դե, ինչ, պետք է արժանին մատուցել Ն. Փաշինյանին, որն արտաքին քաղաքականությունում իր վայրիվերումներով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերում, Ի. Ալիևի հետ իր խոսքուզրույցներում, ինքն էլ գլխի չընկնելով, ադրբեջանական կողմին մղել է բացահայտելու Ռուսաստանի հանդեպ ափշերոնյան սուլթանի իսկական վերաբերմունքը: Չէ՞ որ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Ադրբեջանի որոշակի ինտերնետ պորտալները, այդ թվում, իհարկե, Minval.az-ը, ափշերոնյան սուլթանի խոսափողներն են:

Ադրբեջանական իշխանությունների հիասթափությունը լրջորեն մտահոգել է նաև գլխավոր միջազգային խառնակչին, այսպես ասենք՝ քաղաքական արկածախնդիր Ջորջ Սորոսին: Ըստ երևույթին, Ի. Ալիևի արտաքին քաղաքական ձախողման մեղքի մի մասը դրվում է նաև ամերիկյան այս ֆիլանտրոպի վրա, որը վերջին տարիներին, կրկնում եմ, ԱՄՆ հարյուրավոր դոլարներ է ներդրել Հայաստանի քաղաքացիների, հատկապես երիտասարդության (որը կոչված է պաշտպանելու Հայաստանն ու Արցախի Հանրապետությունը) գիտակցությունից հայրենասիրության զգացումը, հայկական բազմադարյա քրիստոնեական ավանդույթներին հավատարմությունն արմատախիլ անելու համար: Բայց, դատելով Ն. Փաշինյանի

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

վերջին հայտարարություններից, հայ հանրությունը դեռևս լրիվ չի դեգրադացվել ու չի «հասունացել» Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևն ընդունելու համար: Այդ ինչն՝ հանկարծ հիշեց Սորոսին, կմտածի ընթերցողը: Այսպես, օրերս ամերիկացի միլիարդատեր և «Բաց հասարակություն» ֆոնդի հիմնադիր Ջորջ Սորոսը, ըստ երևույթին, վատ բան նախագգալով, կոչ է արել աջակցել Հայաստանի քաղաքացիական հասարակությանը: «Հայաստանում քաղաքացիական հասարակության հզոր աջակցությունը կենսականորեն կարևոր է երկրի դեմոկրատական ներկայի և ապագայի համար», – գրել է Սորոսը Twitter-ում: Հատկանշական է, որ այս գրառմանը նա կցել է երիտասարդ լրագրողուհի Տ. Խ-ի հոդվածը՝ «Ինչպես ԱՄՆ-ը կարող է աջակցել Հայաստանում երիտասարդ դեմոկրատիային» վերնագրով: Չեմ թաքցնի, ինձ համար հետաքրքիր էր հասկանալ, թե այդ ինչու է պետություններ քանդող Սորոսը հղում կատարում սովորական մի հոդվածի՝ ստանդարտ հանձնարարականներով, որոնց կատարումը, ինչ խոսք, բարիք կարող է բերել: Հարցն այլ բան է: Հայտարարելով այն մասին, որ իր պատկերացմամբ՝ «Հայաստանում երիտասարդ դեմոկրատիային աջակցությունը» հանգեցվում է լոկ կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության և իրավագիտության ինստիտուտների կատարելագործման հանձնարարականներին, Սորոսը շեղում է ընթերցողների ուշադրությունը իր ֆոնդի կողմից սնվող տարատեսակ հիմնադրամների ու հասարակական կազմակերպությունների կործանարար գործունեությունից: Խոսքը տոտալիտար կրոնական աղանդների, ԼԳԲՏ հանրույթի և ապակառուցողական այլ ուժերի ֆինանսավորման մասին է, որոնց գործունեությունը հստակ տեղավորվում է իշխանափոխության ոչ բռնի գործողությունների 198 մեթոդներում, որոնք հանգամանալիորեն նկարագրված են Ջին Շարփի հայտնի աշխատությունում:

Կարծում եմ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերջին հայտարարություններից հետո 2018թ. ապրիլ–մայիսի ձեռակերտ պետական հեղաշրջման ճարտարապետները հանդգցեցին մի ինչ-որ «կարմիր գծի» գոյության մեջ, որը չի հատի անգամ ամենաանսկզբունքային քաղաքական գործիչը, թեկուզև ելնելով սեփական մորթապաշտ շահերից: Ի դեպ, սրանում համոզվեցին նաև որոշակի արտաքին ուժերը, որոնք զուցե և իրոք կարծում էին, թե «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևն այլընտրանք չունի: Նշենք՝ առանց Արցախի Հանրապետության ապագա կարգավիճակի հստակ նշման: Ն. Փաշինյանի հետ կապված փորձարկումը շատ տարիներ հետ զցեց Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումը: Իսկ ամենավտանգավորն այն է, որ սասանեց հայ ժողովրդի հավաքական իմաստության հանդեպ մեր փորձով հաստատված բարեկամների ու դաշնակիցների հավատը: Համոզված եմ, որ ժամանակի ընթացքում այս փորձարկումը խոր հիասթափություն կառաջացնի մեր հարյուր հազարավոր քաղաքացիների մեջ, որոնք, նախկին իշխանություններից ինչ-որ հոգնա-

ծության պատճառով ասեմ, թե հանապազօր սոցիալական ու տնտեսական խնդիրների դանդաղ լուծման հետևանքով, անկեղծորեն փոփոխություններ էին ուզում: Էլ չեմ ասում Հայաստանի անփորձ, բայց իր մղումներում ազնիվ երիտասարդության մասին, որը դարձավ մանրակրկիտ մտածված հիբրիդային պատերազմի զոհը, որն ահա արդեն մեկ տասնամյակ վարվում է Հայաստանի Հանրապետության դեմ: Կարծում եմ, որ տեղին է հիշատակել «Կյանքի խոսք» տոտալիտար կրոնական աղանդի ճնշիչ ազդեցության մասին, որի առանձին թափափուկներ ահա արդեն մի քանի ամիս փորձում են խափանել Հայաստանի, Արցախի Հանրապետության և Սփյուռքի միլիոնավոր հայերի հավատը Հայ Առաքելական սուրբ եկեղեցու հանդեպ, նրա գլխավոր հայրապետ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ի հանդեպ: Կուզենայի հավատալ և հուսալ, որ Նիկոլ Վովակիչը կատարել է իր առաքելությունը՝ ցույց տալով Ղարաբաղյան հակամարտության՝ «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով կարգավորման անիրատեսականությունը՝ առանց Արցախի Հանրապետության կարգավիճակի սահմանման, և հիմա նա, մավրի նման, կարող է հեռանալ: Ինչպես գերմանացի մեծ պոետ Յոհան Ֆրիդրիխ Շիլլերի «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում» պիեսում մավրը (մեր պարագայում՝ Փաշինյանը), որն օգնել էր կոմս Ֆիեսկոյին ապստամբություն կազմակերպել դոժ Դորիայի՝ Ջենովայի բռնակալի դեմ, շուտով հայտնաբերում է, որ արդեն հարկավոր չէ դավադիրներին (մեր պարագայում՝ համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնին, որովհետև հրաժարվեց կատարել նրան տված խոստումները): Մավրը հասկացավ, որ նրանք (դավադիրները) իր մեջ միայն իրենց նպատակներին հասնելու գործիք են տեսել: Մեր օրերին հարմարեցնելով այս սյուժեն՝ նշենք, որ մեր պարագայում «դավադիրների» գլխավոր նպատակների մեջ եղել է, Արցախի Հանրապետության անվտանգության գոտուց հրաժարվելու միջոցով, այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք անխուսափելիորեն կհանգեցնեին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ պատերազմի սանձազերծմանը: Իսկ հետո, օգտագործելով քանիցս փորձարկված տեղեկատվական պատերազմի տեխնոլոգիաները՝ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի սկսման մեղքը կբարդեին Հայաստանի ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի վրա: Սա, անդրօվկիանոսյան ստրատեգների մտահղացմամբ, կստեղծեր պարարտ հող Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական դաշինքի խզման, ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի վարկաբեկման ու այդ կազմակերպություններից Հայաստանի դուրս գալու համար: Դրան կհաջորդեին Գյումրիում ռուսական 102-րդ ռազմակայանի փակումը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության ԱԴԾ Սահմանապահ զորքերի վարչության ռուս սահմանապահների դուրսբերումը հայ-թուրքական և հայ-իրանական պետական սահմանից, Ռուսաստանի ՌՕՌու ռազմաօդային բազայի փակումը «Էրեբունիում»: Այս ամենը չի կատարվելու, այնպես որ ժամանակն է, որպեսզի Ն.Փաշինյանի քաղաքական և ֆինանսական հովա-

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

նավորները հասկանան, որ Նիկոլ Փաշինյանն արեց իր գործը, իհարկե՝ ոչ մինչև վերջ, բայց նա՝ Նիկոլ Փաշինյանը, կարող է հեռանալ:

Հ.Գ. Չէի ցանկանա հողվածս տխուր նոտայով ավարտել: Եվ այսպես, 2019թ. հունվարի 27-ին լրացավ Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախկին նախարար, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի (1990-1995թթ.) պատգամավոր, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության անդամ, պահեստի գնդապետ Լևոն Հակոբի Գալստյանի ծննդյան 80-ամյակը: Նշեմ, որ 1990թ. մայիսի 27-ին ինձ՝ որպես Երևանի քաղաքապետ, հաջողվեց կանխել հայտնի անձանց ստոր սադրանքը (որոնց հետևորդները հիմա իշխում են Հայաստանում), որը կարող էր հանգեցնել մեծ արյունահեղության, շնորհիվ «Սասնա ծռեր» ջոկատի հրամանատար Ռուբեն Գևորգյանի, Կիլիկիայից Մացիկի, Վարդան Հակոբյանի, Մանվել Քոչարյանի և, իհարկե, Երևանի ներքին գործերի քաղաքային վարչության պետ, երջանկահիշատակ Սերգեյ Գուրգենի Աթարբեկյանի պրոֆեսիոնալիզմի: Չէի ցանկանա ավելի մանրամասն կանգ առնել այդ իրադարձությունների վրա: Կարևորն արդյունքն էր. եթե համանման սադրանքների ընթացքում, որոնք վերահսկվում ու սերմանվում էին Խորհրդային Միության փլուզման կորոզիոնացման նույն կենտրոնից, Բաքվում և Թբիլիսիում գոհերի թիվը հաշվվում էր մի քանի հարյուրներով, ապա Հայաստանում մենք կոցրինք մեր 17 համերկրացու, ինչը, իհարկե, շատ մեծ ողբերգություն է մեր ժողովրդի համար: Բնականաբար, 1990թ. մայիսի իրադարձությունների նման «սակավարյուն» ելքը չէր կարող բավարարել նման սադրանքների գաղափարախոսներին, որոնք այն տազնապալի ժամանակներում բռնկվում էին Խորհրդային Հայաստանի այս կամ այն շրջանում ու անհապաղ «մարում»՝ շնորհիվ Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախարար, գնդապետ Լևոն Հակոբի Գալստյանի բարձր պրոֆեսիոնալ, օպերատիվ գործողությունների: Եվ ահա, Լևոն Հակոբովիչի՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» գրասենյակում հավաքված զինակիցներն ու գործընկերները, չնայած իրենց արդեն ոչ երիտասարդ տարիքին, այնուամենայնիվ, պատրանքներ և հույսեր էին տածում, թե գնդապետ Լևոն Հակոբի Գալստյանին Հայաստանի Հանրապետության ղեկավարությունից գոնե մեկը կշնորհավորի փառապանծ 80-ամյակի առիթով: Դե, գոնե դա կհանձնարարվի անել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ, անըմբռնելիորեն ինքնագապություն ու սառնարյունություն դրսևորած գնդապետ Վալերի Օսիպյանին, որը, լինելով Երևան քաղաքի ոստիկանապետի տեղակալը և պատասխանատվություն կրելով իրավակարգի պահպանման համար հանրահավաքների ժամանակ, այդպես էլ չխոչընդոտեց 2018թ. ապրիլի 14-ին Հայաստանի Հանրային ռադիոյի շենքի գրոհին: Նրա տոկունությունը բավականացրեց «անսասանություն» և «չեզոքություն» պահպանել նաև 2018թ. ապրիլի 17-ին ցուցարարների կողմից, որոնց հրահրում էր

Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի շենքի տարածքը, իսկ հետագայում հենց ԱԺ շենքը անխոչընդոտ զավթելիս: Շնորհավորելով գործընկերոջը՝ Վ. Օսիպյանը, կարծում եմ, իր այդ քայլով շատ բան արած կլիներ ինքն իր համար: Ավաղ, նման բան տեղի չունեցավ: Սակայն ում՝ ում, բայց մեզ, որ գիտենք պետության քայքայման տեխնոլոգիան, ինչով զինված են Ն. Փաշինյանի զինակիցները, պետք է լավ հայտնի լիներ, որ շնորհավորանքը խորհրդային միլիցիայի արժանավոր ղեկավարի հոբելյանի առիթով սերունդների հաջորդականության ինքնատիպ դրսևորում կլիներ, մինչդեռ սերունդների հաջորդականության գովազդումը, հիշատակումը այն ամենի, ինչն կազնվացներ խորհրդային միլիցիոների կերպարը, լիովին հակասում են այն դրույթներին, որոնք ներկայացված են ոչ բռնի իշխանավոխության 198 հանձնարարականներում:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ



## ГЕГАМЯНЫ

### О КОРНЯХ РОДА АРТАШЕСА ГЕГАМЯНА

Дворянский род в Ереванском ханстве XVIII-XIX вв. Под их правлением находился ряд деревень Котайкской и Гегамской губерний. Имели должность тысячника армянского пехотного полка Ереванского ханства. Гегамяны – участники национально-освободительного движения. В 1780 г. они от имени жителей Араратской долины обратились к русскому правительству с просьбой освободить их от ханского ига. После неудачного похода русских войск 1804 г. (имеется в виду снятие русскими войсками осады с Эриванской крепости 4 сентября 1804 г. в ходе Русско-персидской войны 1804-1813 гг.) Габриел (прапрадед Арташеса Гегамяна), Ованнес и Барсег Гегамяны вместе со своими подданными – жителями деревень – переселились в Грузию, получили звание русских дворян. Через несколько лет, очутившись в бедственном положении, в основном все вернулись в Армению и заняли прежнее положение. Некоторые же из них остались в Грузии, обосновались в Ахалцихе\*.

#### ГЕГАМЯН ЕГИШЕ (ОВАКИМ)

Родной дядя деда Арташеса Гегамяна

(1840 – 1920 гг.)

Историк, публицист, священник

Детство прошло в деревне Корх (Ахалкалак) и Ахалцихе. Окончил школу Халибян в Феодосии, стал священником. Работал в ахалкалакской приходской школе Месропян и ахалцихской школе Карапетян. Служил инспектором приходских школ Грузино-имеретинской армянской епархии\*\*. Сотрудничал с периодикой: «Айкакан Ашхар», «Арарат», «Мегу

\* Энциклопедия Республики Армения, т. 1, Ереван, стр. 627 – 628 (на арм.яз.).

\*\* Л. В. Матевосян, Эти удивительные армяне из Ахалциха, Межрегиональный библиотечный коллектор, Москва 2010 г., стр. 262 – 264.



Айастани», «Мшак», «Ардзаганк» и др. Круг его научных исследований охватывает народно-освободительное движение армянского народа в конце XIX – начале XX вв., Армянский вопрос.

Изданные труды: «Политические цитаты», вып. 1 – 10 (Баку, 1909 – 1915), «Уроки истории» (Баку, 1915), «Русская бюрократия и армяне». 2-е изд. (1917). В 1876 г. написал биографический очерк «Карапет Багратуни», переизданный в 1879 г. в журнале «Пордз». Отдельной книгой изданной в 1999 г. Институтом истории НАН РА (предисловие и примечания академика А. Мелконяна. Организовал издание Амаяк Анисонян).

Очерк Е. Гегамяна «От Ахалциха до Ани» был напечатан в журнале «Пордз» в 1880 г. В 1879 г. он был в Ани, когда там работал Ов. Кюркчян, чьи фотографии Ани стали первыми в армянской действительности\*.

Егише Гегамян скончался в Тифлисе.

## ГЕГАМЯН МАМИКОН АРТАШЕСОВИЧ

Отец Арташеса Гегамяна

(1918 – 2002 гг.)

Государственный, партийный деятель

Родился в Ахалцихе. Учился в армянской школе. Был председателем учкома, первым секретарем комсомольской организации школы. С отличием окончив школу, в 1937 г. поступил в Ленинградский университет им. Н. К. Крупской. Был избран первым секретарем комсомольской организации. На последнем курсе университета его послали учиться в Высшую партийную школу в Москву. После окончания университета направили в Армению. Работал заведующим отделом агитации и пропаганды Кафанского райкома Компартии Армении, секретарем по кадрам Сталинского райкома Компартии Армении г. Еревана. Затем работал первым секретарем районных комитетов Компартии Армении Апаранского, Артикского районов, председателем исполнительного комитета Совета народных депутатов Мясникянского района г. Еревана, ответственным организатором ЦК Компартии Армении. В 1979 г. М. Гегамян был назначен заместителем председателя правления Айкоопа (Армпотребсоюза) и на этой должности проработал 23 года.

М. Гегамян был избран депутатом Верховного Совета Армянской ССР, награжден Почетными грамотами Верховного Совета Армянской ССР, орденом «Знак почета».

\* Лео. Собрание сочинений. Т. VIII. Ереван, 1985, стр. 202 – 203 (на арм.яз.).

## **А. ГЕГАМЯН**

Супруга М. Гегамяна, Соня (Сандухт) Чаманян-Гегамян – его одноклассница – в 1937 году также с отличием окончила Ахалцихскую среднюю школу. Это был первый выпуск армянской средней школы г. Ахалцихе. С. Чаманян окончила математическое отделение физико-математического факультета Ереванского государственного университета. Работала в школах городов Капан, Маралик, Ленинакан. С 1942 по 1976 г. работала в Ереванской средней школе № 1 им. Степана Шаумяна. Была секретарем парторганизации школы, заместителем председателя профсоюзной организации, директором школы. В 1966 г. решением Верховного Совета Армянской ССР С. Чаманян-Гегамян было присвоено звание Заслуженного учителя Армянской ССР (свидетельство № 1319). Награждена Почетными грамотами Верховного Совета и Министерства просвещения Армянской ССР. Соня Гегамян – персональный пенсионер республиканского значения.

Их сын, Арташес Мамиконович Гегамян, 1949 года рождения, – видная политическая фигура в Армении\*.

\* См.: Л. В. Матевосян. Эти удивительные армяне из Ахалциха. Межрегиональный библиотечный коллектор, Москва, 2010, стр. 262 – 264.

## ԳԵՂԱՄՅԱՆՆԵՐ

### ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՏՈՂՄԻ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազնվականական տոհմ Երևանի խանությունում XVIII–XIX դդ.: Նրանց տնօրինման ներքո են գտնվել մի քանի գյուղեր Կոտայքի և Գեղամա նահանգներում: Ունեցել են Երևանի խանության հայկական հետևակ գնդի հազարապետի պաշտոն: Գեղամյանները եղել են ազգային-ազատագրական շարժման մասնակիցներ: 1780թ. նրանք Արարատյան դաշտավայրի բնակիչների անունից դիմել են ռուսական կառավարությանը՝ խանական լծից իրենց ազատելու խնդրանքով: 1804թ. ռուսական զորքերի անհաջող արշավանքից հետո (խոսքը 1804-1913 թթօ Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում 1804 թ. սեպտեմբերի 4-ին ռուսական զորքերի կողմից Էրիվանի ամրոցի պաշարման հանունը – Ա. Գ.) Գաբրիել (Արտաշես Գեղամյանի ապուլապալը), Հովհաննես և Բարսեղ Գեղամյաններն իրենց հպատակների՝ գյուղերի բնակիչների հետ վերաբնակվել են Վրաստանում, ստացել ռուս ազնվականների կոչում: Մի քանի տարի անց, հայտնվելով աղետալի վիճակում, հիմնականում բոլորը վերադարձել են Հայաստան և զբաղեցրել երբեմնի դիրքը: Նրանց մի մասը մնացել է Վրաստանում, հիմնավորվել Ախալցխայում\*:

#### ԳԵՂԱՄՅԱՆ ԵՂԻՇԵ (ՀՈՎԱԿԻՄ)

Արտաշես Գեղամյանի պապի հարազատ եղբայրը

(1840 – 1920 թթ.)

Պատմաբան, հրապարակագիր, քահանա

Մանկությունն անցել է Կորխ (Ախալքալաք) գյուղում և Ախալցխայում: Ավարտել է Թեոդոսիայի Խալիբյան վարժարանը, դարձել քահանա: Աշխատել է Ախալքալաքի Մեսրոպյան և Ախալցխայի Կարապետյան ծխական դպրոցներում: Եղել է Վրաց-իմերեթական հայոց թեմի ծխական դպրոցների տեսուչ\*\*: Աշխատակցել է «Հայկական Աշխարհ», «Արարատ», «Մեղու Հա-

\* Հայաստանի Հանրապետության հանրագիտարան, հ. 1, Երևան, էջ 627–628:

\*\* Լ. Վ. Մաթևոսյան. Այդ գարնանալի ախալցխահայերը, Մոսկվա, 2010, էջ 262–264 (ռուսերեն):

## Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

յաստանի», «Մշակ», «Արծազանք» և այլ պարբերականների: Նրա գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները XIX դարավերջին և XX դարասկզբին, Հայկական հարցը:

Հեղինակել է «Քաղաքական քաղվածներ», պր. 1 – 10» (Բաքու, 1909-1915), «Պատմության դասեր» (Բաքու, 1915) «Ռուս բյուրոկրատիան և հայերը», 2-րդ հրատ. (1917) աշխատությունները: 1876թ. հրատարակել է «Կարապետ Բագրատունի» կենսագրական ակնարկը, որը վերահրատարակվել է «Փորձ» ամսագրում: Առանձին գրքով տպագրվել է 1999թ.՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կողմից (նախաբանը և ծանոթագրությունները՝ ակադեմիկոս Ա. Մելքոնյան: Հրատարակությունը կազմակերպել է Հնայակ Անիստնյանը):

Ե. Գեղամյանի «Ախալցխայից մինչև Անի» ակնարկը 1880թ. տպագրվել է «Փորձ» ամսագրում: 1879թ. եղել է Անիում, երբ այնտեղ աշխատում էր Հովհ. Քյուրքչյանը, որի Անիի լուսանկարներն առաջինն էին հայ իրականության մեջ\*:

Եղիշե Գեղամյանը վախճանվել է Թիֆլիսում:

## ՄԱՄԻԿՈՆ ԱՐՏԱՇԵՍԻ ԳԵՂԱՄՅԱՆ

Արտաշես Գեղամյանի հայրը

(1918 – 2002 թթ.)

Պետական, կուսակցական գործիչ

Ծնվել է Ախալցխայում: Սովորել է հայկական դպրոցում: Եղել է աշկոմի նախագահ, դպրոցի կոմերիտական կազմակերպության առաջին քարտուղար: Գերազանցությամբ ավարտելով դպրոցը՝ 1937թ. ընդունվել է Լենինգրադի Ն. Կ. Կրուպսկայայի անվան համալսարան: Ընտրվել է կոմերիտական կազմակերպության առաջին քարտուղար: Համալսարանի վերջին կուրսում նրան գործուղել են սովորելու Մոսկվայի Բարձրագույն կուսակցական դպրոցում: Համալսարանն ավարտելուց հետո գործուղվել է Հայաստան: Աշխատել է Կապանի կուսակցության քաղկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, Հայաստանի Կոմկուսի Երևան քաղաքի Ստալինյան շրջկոմի կադրերի գծով քարտուղար, Ապարանի, Արթիկի շրջկոմների առաջին քարտուղար, Երևանի Մյասնիկյան շրջանի ժողովրդական դեպուտատների խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պատասխանատու կազմակերպիչ: 1979թ. նշանակվել է Հայկոոպի վարչության (Հայսպառմիություն) փոխնախագահ և այդ պաշտոնում աշխատել 23 տարի:

\* Լեո. Երկերի ժողովածու, հ. VIII, Երևան, 1985, էջ 202 – 203:

Ս. Գեղամյանն ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, պարզևատրվել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով, «Պատվո նշան» շքանշանով:

Ս. Գեղամյանի կինը՝ Սոնյա (Սանդուխտ) Չամանյան-Գեղամյանը, նրա համադասարանցին, 1937թ. նույնպես գերազանցությամբ ավարտել է Ախալցխայի միջնակարգ դպրոցը: Նրանք Ախալցխա քաղաքի հայկական միջնակարգ դպրոցի առաջին շրջանավարտներն էին: Ս. Չամանյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը: Աշխատել է Կապան, Մարալիկ, Լենինական քաղաքների դպրոցներում: 1942–1976թթ. աշխատել է Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 դպրոցում: Եղել է դպրոցի կուսկազմակերպության քարտուղարը, արհմիութենական կազմակերպության նախագահի տեղակալը, դպրոցի տնօրենը: 1966թ. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ Ս. Չամանյան-Գեղամյանին շնորհվել է Հայկական ԽՍՀ Վաստակավոր ուսուցչի կոչում (վկայական № 1319): Պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լուսավորության նախարարության պատվոգրերով: Սոնյա Գեղամյանը հանրապետական նշանակության անհատական թոշակառու:

Նրանց որդին՝ Արտաշես Մամիկոնի Գեղամյանը, ծնվ. 1949թ., Հայաստանում նշանավոր քաղաքական գործիչ է\*:

\* Տե՛ս Լ. Վ. Մաթևոսյան. Այդ զարմանալի ախալցխահայերը, Մոսկվա, 2010, էջ 262–264 (ռուսերեն):

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԴԱՇԻՆՔԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄՆ Է

ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՇԱՐԿԱԾՔԸ, ԷԶԱԴՐՈՒՄԸ ԵՎ  
ԴԻՋԱՅՆԸ ՄԱՐԻԱՄ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՇԱՊԻԿԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԱՐԱՄ ՌԻՈՒՏՅԱՆԻ

ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՇԱՐԿԱԾՔԸ ՍՈՆՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ՝ ԽՈՆԱՐՀ ՔԱՐԱՌԻՂԱՆՅԱՆ, ՅԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒՄԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՍՐԲԱԳՐԻՉ՝ ԹԱՄԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

АРТАШЕС ГЕГАМЯН

АЛЬТЕРНАТИВА ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОМУ СОЮЗУ  
РОССИИ И АРМЕНИИ – ВОЙНА

КОМПЬЮТЕРНЫЙ НАБОР,  
ПАГИНАЦИЯ И ДИЗАЙН – МАРИАМ ПОГОСЯН

ОФОРМЛЕНИЕ ОБЛОЖКИ – АРАМ УРУТЯН

КОМПЬЮТЕРНЫЙ НАБОР – СОНЯ ГАСПАРЯН

ПЕРЕВОДЧИКИ – ХОНАР КАРАУХЛАНЯН, ЯНА ПЕТРОСЯН

КОРРЕКТОР РУССКОГО ТЕКСТА – ТАМАРА МАРТИРОСЯН